

891 99
Ш-15

16

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

891.99
Ա-15

06 ՄԱՅ 2005
13 MAY 2005

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

ԸՆՏՐ ՅԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ ՅԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԳԻՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄCMXL

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

ԸՆՏՐ ՅԵՐԿԵՐ

ՅԵՐԵՔ ՀԱՏՈՐՈՎ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

- .01. 2013

16907



Гос. Музей библиотека
Ереван

ХАЧАТУР АБОВЬЯН

Избранные сочинения

Том II

АрмГИЗ, Ереван, 1940

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՖՈՆԴԻ



ԽՄԲԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Մեր նախնական ծրագրով ներկա հատորը պետք է ընդգրկեր Աբովյանի միայն չափածոն, այսինքն՝ բանաստեղծությունները, էրգիծական և քարզմանական էրկերը: Սակայն էրկրորդ հատորի նյութերի վրա աշխատելիս ստիպված եղանք խախտել մեր ծրագիրը: Այս հատորից դուրս մնաց մի ընդարձակ և մինչև այժմ անտիպ չափածո դրվածք «Աղատաս խաղը» (մոտ յոթ հազար տող, վորը, սակայն, լույս և տեսնելու առանձին դրքով): Նրա տեղը բռնեց էրբորդ հատորի համար նախատեսված «Մանկավարժություն» բաժինը: Էրբորդ հատորն ամփոփելու յե Աբովյանի Դորպատյան հիշատակարանը, 1829 և 1838 թ. թ. ուղեգրությունները և «Էրգեր» ուսումնասիրությունը «Ազգագրություն» ընդհանուր խորագրի տակ:

10· 8· 39· Ցերևան

Ռ· Ջ·

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



Տպագիր



ԱՂԱՍՈՒ ՍՐՏԻ ՓԱՓԱԳԸ

(Աշըղ Ղարըբի հանգով)

Ցես ի՞նչպես ասեմ՝ ա՛խ՝ իմ Նազլու ջան,
Վոր սրտիս դարդերն քեզ լինի այան։
Ի՞նչ հնարք ունիմ, կամ ի՞նչ զորություն,
Վոր իմանաս դու իմ սրտի լեզուն։

Լիան աչքս տեսնելիս՝ դո՛ւ ես հենց պիտեմ.
Ցողը կաթելիս՝ դու ես ասում եմ.
Վոր ծաղկի հոտի, վարդի թփերի,
Ցերկնքի ցողի, բլբյուլի ձենի
Հետը խառնըված՝ սիրտս քաչում ես,
Վոր հայիլ մնամ քո տեսուն՝ ա՛խ՝ յես։

Վարդի թերթի պես դու բաց ես ելել.
Անմեղ յերեսիդ հրեշտակ ե նստել.

Աչքիդ պայծառ լիան վրես ընկնելիս,
Հոգիս կրակված՝ մոտովդ անցնելիս,
Կարծում եմ, թե յես ել հոգի չունիմ,
Վոր խլես, չտաս, ել ի՞նչպես կապրիմ։

Ա՛խ՝ դու ել վոր ինձ քո սրտիցն հանես,
Ես դառն աշխարքումն ինձ մոխիկ չանես,

Եվ վո՞ր մուխ, խավար ինձ դժար կըլլի,
Ջանց իմ չորացած մարմինս, վոր ինձի
Ցիշեր ու ցերեկ տաբատաբոսի պես
Կառնչի, կմաչի, թե ինձ չպատահես:

Մեկ հով ահղ նստած՝ մեկ սառն ապրըի վրա,
Ջամին վոր փչի յերեսից ու գա,
Մոխիր դառած ըլիմ, նոր հոգի կառնիմ,
Վոր մեկ եվ տեսնիմ քեզ, տամ հոգին իմ:

Երվում եմ, երվում, դու չես իմանում,
Սև որըս յալես, քեզ կարոտ մնում.
Են չի գարգա՝ թե ես ցամի ինձ կտանի,
Վախում եմ մեռնիմ, քեզ այան չըլի:

Մի՛ թողար՝ ես կրակին՝ վոր իմ ջանս եբի,
Մի՛՝ իմ Նապլու ջան՝ ես պինդումն եյի
Մենք չենք պատահիլ: Են տառը գետինն
Ա. մեր վուչ վայը ան հոգի տակին:

Վարդին իր հոտը ի՞նչ պետք կգա,
Թե ինքը ծածկի ու մարդիս չտա,
Բայց ի՞նչ անիրավ՝ նրա անմեղ ծաղիկն
Կրակը կքցի, վոր հավանա մխքն:

Ա.ՂԱՍՈՒ ՍՐՏԻ ՏԽՐՈՒԹՅՈՒՆԸ

Լուսինն ամպերի միջումն լեղ տալով,
Սարերի ծերին չողքը քցելով,
Հազար տերևի, թիվն արանքով
Վոսկու պես ֆռֆռում, վայլում ե լուսով:

Մեկ մուխը ձորում՝ քաշվել եմ, նստել,
Սիրուն ապրըրի ձենին անկաջ դրել.
Ջորս կողմս հովացել, անուշ հոտ բռնել,
Իմ սիրան ա մխայն խավար մնացել:

Ցերաթ ես ահաթին վո՛ր բարի հրեշտակին
Թևերը վռած յերեսիդ: Ու վախ
Սչքերդ իր լիսը աչխարքից ծածկել.
Հոգիդ անուշ քուն մտել, դինջացել:

Կամ թե չե դու ել կանդնել ես դռանն
Ինձ մխքդ բերում՝ Նապլու հրեշտակ ջան:
Ի՞նչ կըլեր, մեկ հով չունչդ ելա բերեր,
Ցերեսովս տար, ու հոգիս տաներ:

Ամավոան եյի լիսը կըացվի,
Բալքի թե արևս ես որ մեր մանի,
Թող ես չոր քարը դերեզմանս ըլի,
Նապլո՛ւ ջան՝ մեկ որ ելա վրես արի:

Խ. Աբովյան, Ընտիր յերկեր—2

1931
42.

ՀԱՄՀ-ՍՕՐԱ

Ա. Գ. Ս Ո Ւ Խ Ա Գ Ը

(Ֆեշիշ Ողու հանգով)

Սար ու ձոր ընկած՝ մեկ չոր թփի տակի
Գետին նայելով՝ մնացել եմ նստած:
Զեռս ծոցումս, դլուխս մեկ լեռ քարի
Տված՝ լալիս եմ, որքա խավարած:

Ամպերն առաջս, արեքն յեղևխս,
Ֆեղ մարիկ ասլով՝ ա՛յ իմ քաղցր Մասիս,
Սգի արտասուքով երված, խորովված,
Յերեսիդ նայիմ, մնամ քարացած:

Ծնո՛ղ, ազգական՝ հեռու ինձանից,
Լուռնին նայելով, ձեր սերն հիշելով:
Յերա՛ք յե՞րբ կըլի, վոր յես ձեզանից
Իմ կարոտս առնիմ, ձեզ Ջան ասելով:

Յերաք ձեր ճառմն մեկ որ ել կընկնի՞մ,
Յերաք ձեր յերեսն մեկ ել կըտեսնի՞մ.
Յերաք ծունկ ծնկի տված՝ ձեզ կաս՞մ,
Ա՛յ իմ խեղճ ծնողք՝ ձեր Ջանին մեռնիմ:

Աչքըս ծով դարձավ՝ ճամփին նայելով:
Մեկ ղուշ՝ վոր ղելխս պախտ ա գալիս,
Թե յե՞րբ մեկ խաբար կհասնի ինձ լարով,
Հոգոց հանելով՝ ասում եմ, լալիս:

Յերաք դետնի վրա դետ սուք եք անում,
Ձեր կորած վորդուն հասրաթ ըլելով.
Թե հողի տակը մտած՝ դինջանում,
Ինձ թողիք, տանջվիմ, ա՛խ, վո՛խ քաշելով:

Ա Ղ Ա Վ Ն Ի Խ Ա Գ Ը : Ֆէշիշ օղու գռեզով

Ախ ու վայ ընկած, մէկ չոր թիփի տակի
Գետին նայելով, մնացել եմ նստած.
Ձեռքս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տված՝ լալիս եմ, որքա խավարած:

Ամպերն առաջս, արեքն յեղևխս,
Ֆէշ մարիկ ասլով՝ ա՛յ իմ քաղցր Մասիս,
Սգի արտասուքով երված, խորովված,
Յերեսիդ նայիմ, մնամ քարացած:

Ծնո՛ղ, ազգական՝ հեռու ինձանից,
Լուռնին նայելով, ձեր սերն հիշելով:
Յերա՛ք յե՞րբ կըլի, վոր յես ձեզանից
Իմ կարոտս առնիմ, ձեզ Ջան ասելով:

Յերաք ձեր ճառմն մեկ որ ել կընկնի՞մ,
Յերաք ձեր յերեսն մեկ ել կըտեսնի՞մ.
Յերաք ծունկ ծնկի տված՝ ձեզ կաս՞մ,
Ա՛յ իմ խեղճ ծնողք՝ ձեր Ջանին մեռնիմ:

Աչքըս ծով դարձավ՝ ճամփին նայելով:
Մեկ ղուշ՝ վոր ղելխս պախտ ա գալիս,
Թե յե՞րբ մեկ խաբար կհասնի ինձ լարով,
Հոգոց հանելով՝ ասում եմ, լալիս:

Յերաք դետնի վրա դետ սուք եք անում,
Ձեր կորած վորդուն հասրաթ ըլելով.
Թե հողի տակը մտած՝ դինջանում,
Ինձ թողիք, տանջվիմ, ա՛խ, վո՛խ քաշելով:

Մի եզ Աբովյանի ինքնագրերից
Սեփականություն ՀԱՍՀ Գրական թանգարանի

Ցերաբ ձեր ամակն՝ ինձ հալալ արիք,
Ցերաբ սուրբ բերնով ձեր ինձ որհնեցի՛ք.
Ծերունի՛ իմ հայր՝ տարաբա՛խտ իմ մայր,
Եվ իմ հավարիս յո՛րը կհասնի աչխար:

Են սուրբ, անարատ կաթնին յես պուրբան.
Ձեր լիս ձեռներին, ձեր անուշ լեզվին.
Մեկ բուռն հողի եվ յո՛րը կըլիմ արժան,
Վոր դամ ձեր հողումն, քնիմ ձեր միջին:

Են ի՞նչ որ եր, վոր ձեր քաղցր ծոցին
Գլուխս ձեր դոչին, աչքս խուփ կամ բաց.
Ձեր սուրբ ձեռի վրա՝ յերեսս բարձին
Կամ խաղում եյի, կամ մնում քնած:

Են ի՞նչ որ եր, վոր մեկ ծառի տակի
Ճոճումն ձեռներս ձեր ճառվի քցած՝
Ձեր սուրբ յերեսին յես համբուր տայի,
Նանիկ ասելով՝ մնայի քնած:

Ո՞ւր են չվաքը, են կանաչ՝ ջրի ափը,
Են խոտն ու ծաղիկն, են դաչտն ու տափը.
Ուր ձեր առաջին ուրախ խաղայի,
Ու ձեր բարի սիրտն խաղով բանայի:

Լալիս՝ դուք լայիք՝ ինձ հետ ցավելով,
Ծիծաղս տեսնելով, կամ ձենս լսելով.
Կանչեյիք: «Արի՛ մոտս՝ Աղասի ջան,
Ցերեսիդ մեռնիմ, քո ջանին դուրբան...»:

Ա՛խ՝ ես խոսքերը ինձ կրակ են դառել.
Լերդս ու թոքս հիմիկ երվում, խորովում:
Ի՞նչ կըլեր, յես են վախտն եյի մեռել,
Ձեր չվաքի տակին՝ ա՛խ, քընել հողումն:

Մեկ բուռն հողն եվ ինձ դհաթ ա էլել,
Ֆարաւիից թե ցած, կամ ջուրը ընկնիմ,
Ձեր սուրբ յերեսը դեռ վոր չեմ տեսել.
Ի՞նչպես, ա՛խ՝ հանդարտ յես հողը մտնիմ:

ԱՂԱՍՄՈՒ ՎԵՐՋԻ ՍՈՒՔԸ

Նապո՛ւ իմ, Նապո՛ւ՝ աննման Նապուս,
Սիրտս խորովի՝ անունդ հիշելով.
Նապո՛ւ իմ, Նապուս, հրաշալի՛ Նապուս,
Աղասին քեզ տա իր յետին բարով:

Սարերի դոշին, ձորերի մէջին,
Վա՛յ դէմին տալով քո խեղճ Աղասին.
Ցերեսիդ դրկված, քո սիրովն մաշված,
Տատրակի նման փչի վըրա նստած:

Լիզեմ հող, դետին, այրիմ, մղկտամ,
Կամիմ որ առաջ՝ ա՛խ՝ վոր հոդիս տամ.
Ցերը մահն մոռանա ստուը թևերովն,
Հոդիս պահանջե, վոր տանի չուտով.

Ես դառն աշխարքիցս՝ ա՛խ՝ ինձ՝ ազատի,
Վոսկերքս դաղանաց կերակուր անի:
Կամ յերը դետի ափն նստած չվարած
Աչքերս նվագին, թմբրած, ատամնած:

Գլորիմ կատաղի դետի փրփրի մոտն,
Մ՛ախ՝ վո՛ւխ քաշելով՝ պարզեմ յես իմ վոտն:
Կամիմ դերեզմանս՝ վոր ես ջուրն ըլի,
Ես ստուը պատանն ինձ հոդը տանի:...

Կամ մեկ քարափի բաշից նայելով,
Աչքս մեր տան ծուխն հանկարծ տեսնելով.
Ջո անուշ յերեսն ինձ փակ մնալով.

Նապո՛ւ իմ, Նապուս՝ անուշ իմ Նապուս,
Թևքիմ ու հանգարդ դա ինձ քուն մահուս:
Ցերեկի աչքիս՝ քե անդունդը խոր
Մո՛տ ե ինձ դրկել, տանիլ իր լին ձոր:...

Նապո՛ւ իմ՝ Նապուս՝ մեկ չունչս ա մնացել
Վոսկերքս քրքրվել, աչքըս խամրել:
Թող մեկ չունչդ առնիմ, յեղե հոդ մտնիմ:
Դժոխքն եղ տանին, յես հանգիստ ըլիմ:

Քե՛զ եմ մնում, քեզ՝ քո Ջանին մեռնիմ,
Հող ու դերեզման յես վըրես ունիմ:
Քանց իմ սառն մարմինն եղ ի՞նչ դերեզման
Ինձ պետքը կգա՝ յերեսի՛դ դուրբան:

Արի՛, ատածդ արա՛, ինձ թաղի՛ր.
Քե՛ր իմ յերեխեքս ու վրես կանդնի՛ր:

Մեկ նրանց տեսնիմ, աչքըս խրխնվես,
Մեկ նրանց ասեմ՝ լեղուս լռվելես.
Մնաք բարով՝ վո՛րդիք՝ աղի՛ս, սիրեկան.
Եղ չե՛ք տեսնել ինձ՝ ա՛խ՝ դուք հավիտյան

Ձեր անբախտ հորը եղ միաք չի բերեք:
Մնա՛ք բարով՝ իմ քաղցր, սիրու՛ն յերեխեք.
Ձեր հոր տեղակ՝ ձեր խեղճ մորն սիրեցե՛ք.
Ու իմ հեռացած հոգին հիշեցե՛ք:—

ԱԶԳԱՍԵՐ ՍԱՐԴԸ ԻՐ ՄԵՌՆԵԼՈՒ ՎԱԽՏԸ

Մնա՛ք բարով, մնա՛ք` անց կացած որեր:
Մոռացի՛ր՝ աշխար՝ քեզ տված ցավեր:
Վորդի՛ք, ընտանի՛ք, ո՞ւր եք դուք լալիս,
Մարմինս թե փշի, սիրե ձեզ հողիս:

Ես համիեն մեկ որ պետք է մենք դնանք,
Մահով են կյանքին հասնինք, դինջանանք:
Բայց մեռնիլ չես վո՛ր շուտ ուզում եյի.
Պետքը գամ ազգիս՝ ա՛խ՝ ասում եյի:

Բայց ո՞ւր իմ մուրազն՝ վոր սիրտս երում եր,
Տանջում, ինձ մաշում, ա՛խ՝ ցերեկ պիշեր:
Թե իմ աշխարքիս ջանս ղուրբան տայի,
Վոր հողի տակին՝ ո՛չ — պետք է փշի:

Աշխարքիս վո՛չ փառքն, վո՛չ են մեծություն
Ցես չեմ ափսոսում, վոր մնացի մաղրուն:
Բայց ի՞նչպես փակեմ աչքս ու ա՛խ չքաշեմ,
Վոր հազար մարքեր հողն պետք է տանիմ:

Վո՛չ յերկար ապրիլն եր իմ ուզածը,
Վո՛չ լավ որ քաշիլն՝ ա՛խ՝ իմ խնդրածը:
Իմ են քաշած չունչն եվ մահ եր աչքիս,
Ցերբ չեյի կարում պետքը դալ ազգիս:

Իշխանություն, թե, կամ փառք ուզեյի,
Թագի, պսակի թե փափագեյի,
Ննաուբ համար միայն, վոր հազար մարդի
Աչքի արտասուքն սրբեմ, վոր չցավի:

Ընկե՛ք հողիս վրա՝ հողիս հիշեցե՛ք
Իմ ազիզ վորդիք՝ ձեր հորն որհնեցե՛ք:
Լիզուս վոր լավի, իմ հողն ձեզ կասի,
Թե յերկինքումն ե՛ս լինձ կտանջի:

Փա՛կ եր աշխարն, ուև՝ իմ քաշած որն,
Վոր ձեռս չհասավ, լինչ ուզեց սիրտս վոր:
Սրարի՛չ իմ տեր՝ թե մարդ չիմանա,
Իմ աղոթքն ե՛ս եր, քեզ լավ հայտնի ա:

Մարդի՛ք, ա՛խ՝ մարդիք՝ դուք յե՞րբ կդարթնիք,
Վոր սիրտ սրտի տաք, մխիթանց քոմակ ըլիք:
Իմանաք, մեր ղրախտն ու կյանքն հենց ե՛ն ա,
Ով խղճի, ազգի ցավը կիմանա:

ԻՄ ՌՈՒԲԿԱՍ ԱՂԱՋԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋԻՆ, 1841 ԹՎԻՆ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ

Ա՛խ սիրտս լիքը վոր ես չատ անգամ
Պատկերիդ աչքս քցում, բարեկամ
Ի՞նչ կրակ ե վառվում միջումս, ինձ կրում,
Թուր մանո՛ւմ սիրտս, լերդս կտրատում:
Են ի՞նչ որ ես, վոր մեր անմեղ վախտին
Սիրտ սրտի ոլած մենք 'ի միասին:
Եյի ինձ պահողն ա՛խ քո սուրբ սերն ա,
Մեկ-մեկ դուշ դուշս հասներ. են ահաճին
Տաներ Աբարիչն ոլած ամանաճին:—
Ցերաթ սուրբ հոգիդ քնած ա, թե զարթուն,
Ցարաթ վոր եքուց տանին ինձ Թաքուն,
Են սառն հողին ոտն, որս խավարի,
Ցերկնքի տակին ձենս եյ քեզ չհասնի.
Ա՛խ՝ կզա՞ս եյա կանդնես ինձ վրա
Ցերբ խավար աչքս կարոտ քեզ մնա.
Եվ սուրբ բերանովդ՝ հոգիս կը հիշե՞ս,
Թե դու եյ սրտիդ անունս կջնջես:
Ապե՛ղ բարեկամ՝ ա՛խ՝ քո դուռն վոր դամ
Ցես ես բոպեյին, կանգնիմ, քարանամ:
Ցերաթ վոր աչքդ բանաս, ինձ տեսնիս,
Եյ չունչ չունենամ, վոր սիրտս առնիս:
Ցերաթ մեկ տխուր աչքով ինձ եյա,
Կնայե՞ս, վոր հոգիս են կողմն խոտնա:
Թե ես աչխարքումն ինձ եյ սիրող կար.
Ցես եյի մենակ՝ մեղավորն ու չար.
Վոր վո՛չ քո սերը լավ ճանաչեցի,
Վո՛չ սառծու ոլած կյանքս վայելեցի:
Սիրտս ինձ համար կրակ եր դառել,
Աչխարքն ինձ համար վաղուց վերջացել,

Ով իր մեռածի հողին եր լալիս,
Ցես իմ սաղ դլխին ծեծում, վայ տալիս,
Մահ եյի ուզում, սուտ դինջատյա,
Ինչ եյի ուզում, մեկ որ չտեսա:
Հոգիս տալիս եյ՝ ցես ձեռս քցել.
Ինչ եյի կանչում, վոր տեսնիմ մեկ եյ:
Բայց ա՛խ՝ իմ լերդս չորացած մնաց,
Հատրաթիս քեզանից չտաս՝ աչքս բաց:
Բարեկա՛մ սիրուն, սիրո՛ւն բարեկամ,
Ի՞նչ կլլի, վոր ա՛խ՝ ցես մեկ դուշ դառնամ,
Կանդնիմ յերեսիդ, դու չունչ քաշելիս,
Բանամ իմ սիրտս, վոր մեկ ցյալս տեսնիս:
Կաթի յերկնային աչքիդ լիսն ինձ վրա
Երևան սիրտս իր ծուխն՝ ինձ տվին տա:
Գարդի ես խավար միտքս՝ վոր ինձ մեկ որ
Վո՛չ մահ ե տալիս, վո՛չ կյանքս առնում, վոր
Կորչիմ, ա՛խ՝ պրծնիմ ես դառն աչխարքիցս,
Կարվի ես չար չվաքն յեղևիցս:
Հոգիս քեզ պահ տամ, ու մարմինս հողին.
Վոր դու բերես հետդ վերջին ահաճին:
Են դինումն եյ թե դժոխքն ինձ տանի.
Ցս սուրբ ապրիքը ինձ մեկ ճար անի.
Թե ցես անարժանս՝ են սուրբ Աբարչի
Պատկերն իմ ձեռով՝ ա՛խ՝ խանդարեցի:
Ցս արդար ձենը, քո սուրբ բերանը
Բալքի ինձ չարա անի են առյանը:
Դո՛ւ ըլիս իմ հոգուս փրկիչն,
Ինչպես ես ահաճին դու ցես իմ մաչիչն:

———

V

***

Ո՞ւմ ասեմ սրտիս դարդերն յես, ա՛խ ո՞ւմ
Լռվել ա լեզուս, վախվխել իմ բերնում.
Լեզուն վոր սրան դարդը յեղ չասի,
Ել ո՞վ կիմանա, ա՛խ, ո՞վ կցավի:

Մեր սրտի դարդը կրակ է ու բոց
Ֆանի վոր պահես, չասես դու այլոց,
Կերվիս, կմաշվիս անդեղ, անդարման,
Մարմինդ քեզ համար կդառնա դերեզման:

Սրտի բալանիքն լեղուն ա, լեղուն,
Բերանը՝ դուռը, աչքը՝ լուսատուն.
Թե վախ կպահես, կսկիծն ու դուսուն
Ֆեղ կխորթոթեն, աչքի լույս սիրուն:

Շունչ վոր չքաշես ու նոր չունչ չառնիս,
Ապրիլ չես կարող՝ հո՛դի՝ կհալվիս,
Ի՞նչպես ես ուզում, վոր մնաս հանդարտ
Թե չասես ուրչին քո ցավերն ու դարան:

***

1

Ռամ սիրտը վոր տխուր ըլի,
Թո՛ղ մանի բաղն, քեֆը բացվի:

Աբեդակը մեր եր մըտել,
Լուսնին իր տեղը բաց արել:
Իրիկնահովն թփերի վրա,
Աստղ ու լուսին յերկնքի վրա:

Ջարման խանումի ձեռիցը
Բռնած՝ դնացինք մենք տանիցը:
Փեղե կարմունչն դողդողալով
Մենք անց կացանք չարչալանքով:

Պողոս ախուն ես հաղաղին
Մխաքն եր քցել իր հին հոգին:
Մեկ ամանով հավող լիքը
Նկել, հասել եր նա դիքը:

Ներան թողինք ու անց կացանք,
Բաղի միջովն եկանք, հասանք
Ջորաքաչի գլխի ծերը,
Աչքընկերս քցեցինք ձորը:

2

Ա՛խ՝ են ձորը, ա՛խ՝ են ձորը,
Ո՞ւմ ասեմ յես նրա չնորը:

Ջարման խանումն, Շողան քիքիրն,
Պետրեն թողած իր մխաքն ու փիքրն,

Ջըրից եյին տալիս, խնդում,
Յես ել նըրանց հետ ծիծաղում:

Անդ լուսինն երծամի պես
Փայլում, խփում ել իր յերես:
Քաղցը հովը, թփերի քովը
Գալիս, գնում, մանում ծովը:

Սիրալս լիքը կայլ նստած՝
Սչքըս ամպին, ձորին քցած.
Ղորղ ա, ծառում, լռում եյի,
Թե ի՞նչ ել հալս, ո՞ւմ ասեյի:

Ջանդվի են քաղցը Փըչալը,
Ծառի, թփի խշըշալը
Վոր չեր ընկնում ականջս, գնում,
Հոգիս հետը հանում, տանում:

Մաքումս ասում եյի, մաշվում.
Յերթալ կնամ՞ յես ես բաղումն:
Մ՛ի՝ քո ձենը՝ քա՛ղցը Ջանդի,
Ո՞ւր գնամ, վոր խելքս չտանի:

Ցերկնքի մուղիկի նըման
Տուռըդ քցած ձորի բերան,
Գնում ես, հասնում դու Արաքը,
Տալիս հազարի մուրազը:

Բանդն ու Մամբռին, Արիհատմին
Տանում, ջրում տուն ու հայաթ:
Մեջք ու քամակ, ծոցդ կանաչ.
Ուր վոր նայես, թե ճախ, թե աջ:

Հազար տեսակ պտուղ պտղատան
Ջարդարել են հայիր, հիման:
Քարափներիդ խորդ յերեսը
Տեսնելիս՝ մարդ կալնում յերեսը:

Ելի քո եդ անուշ ձենը,
Ես քո կանաչ ձորն ու չենը
Սչքըն առնելիս՝ մայիլ մնում,
Գալիս ղրադդ, մոտիդ նստում:

Մ՛ի՝ իմ Ջա՛նդի, քա՛ղցր իմ Ջանդի,
Թո՛ղ՝ սաղ աշխարն չարըդ տանի:

Լեռ քարերին դալդեդ տալիս,
Քարափներըդ սքում են, լալիս՝
Անցվորականն ձենդ առնելիս՝
Ցեղ ե նայում, հոգին տալիս:

Դղրդալով մտնում ես ձորն,
Սառանացնում ել, սար ու խոր.
Քո են սիպտակ քափ, փրփուրըդ
Տեսնողի սիրտն քցում ե հուր:

Քո աննման գավակներըդ,
Են ծառ ու թուփ սիրուն թոռներդ
Կաթըդ ծծում, գլխիդ կանգնած՝
Հով են տալիս, ճիկներն վրաձ:

Ո՞վքեր են քեզ տեսել, գնացել,
Ջա՛նդի՝ քո տեսըդ վայելել:
Մենք ել կերթանք, ուրիշն կգա,
Թաք քո դաշտը գալար մնա:

Մ՛իթե ես ե՞ն տունն, են տեղն չի՞,
Ուր մեծանուն Լչխանազդի
Աղնիվ գավակը Աղամալյան
Լինելին քեզ հովիվ, պաշտպան:

Մ՛ի՝ ո՞ւր են վաստքն, են մեծությյուն,
Ես վեհանձն լչխանությյուն.
Մ՛իթե են տխուր, սրտում մատուռ
Սահակ աղին՝ ա՛խ՝ պահե լուռ:

Ջա՛նդի՝ սքաս, Ջա՛նդի՝ վողբաս,
Իմ արտասուքն ել ա՛ռ, ու հա՛ս.
Աչխարքի աված վայելչությյուն
Կորչի ինչպես քո ջուրն սիրուն:

Շատ աչք պաի, մեկ ել տեսնի
Քեզ ու քո սերն մեկ ել առնի:

ԽՍԱՂ ՌԱՖԱՖՆՊԵԼՈՒ ՎՐԱ

Աշխարքումս ո՞վ ա մնացել
Մեկ տեղ, վոր մենք ել՝ ա՛խ՝ մնանք,
Շատն են եսպես եկել, գնացել,
Մենք ել պետք է՝ մեկ որ գնանք:

Բարեկամի սիրտը՝ ղորդ ա,
Չի՛ համբերում եսպես ցավին.
Բայց նա խելքին պետք է մտիկ տա,
Ջանքի, չմաշի նհաղ իր հոգին:

Ել ես յերկինքն, ես արեգակն՝
Ինչ տեղ նստինք ու վեր կենանք.
Պետք է քցեն շորք ու չվաքն
Միշտ մեր գլխին, ել ո՞ւր մենք լանք:

Լացն ու սուքը թուչն են, լեղի,
Հենց կմաշեն սիրտ ու հոգի,
Վո՛չ գնացողին կանեն մեկ ճար,
Վո՛չ մնացողին կղան հավար:

Թե իրիգուն, թե առավոտ,
Ուր վոր փչե քո քաղցր ողն.
Պետք է հիշենք բարեկամի
Սիրտ անուշն միշտ մեր մեջի:

Շատ զարդ անելով, շատ վչվչալով
Ել ո՞ւր կհասնի, վոր լավ մտածենք:
Թո՛ղ ընկնինք ճամփա միմյանց աղոթքով,
Վորը բարին է, առանից խնդրենք:

Շատ ել վոր մնանք ծռտնկ ծնկի տված,
Ի՞նչ ոգուտ, թե վերջն պետք է բաժանվինք:
Սիրան ըլի մտիկ, լավ խոսք է ասած,
Հետանալով հո մենք մոռանալ չենք:

Սրբեցե՛ք ձեր արտասուքը,
Ապի՛ղ ծնողք՝ քա՛ղցր բարեկամք,
Թո՛ղ ոարն առնի ձեր ցավն ու սուքը.
Մաքիզ պահե՛ք, մեզ չմոռանաք:

Թե գնացողի, թե մնացողի
Սանք սիրով՝ մնա՛ք բարով.
Տա՛նք ու առնենք մենք գոչ գոչի
Վերջի համբույրն անուշ սրտով:

Ինչ սար, ձոր ել վոր մեզ ծածկեն,
Մեզ իրարից խլեն, գրկեն,
Թե աչքներս ել իրար չտեսնի,
Սիրտը մեր սերն հատուտ կպահի:

Ասնե՛նք խոսք, տա՛նք ձեռ ձեռի,
Խմե՛նք ճամփի սալամաթին:
Ո՞վ ա խաբար, թե վո՞ր վախտ
Մեկ ել ոտտ կգանք մենք ես սհաթին:

Մնա՛ք բարով՝ ապի՛ղ սարեր,
Կանա՛չ ձորեր, քա՛ղցր գաչեր,
Լավ բախտավոր գլուխ պահ,
Մեկ ել յեղ գա, ձեզ ա՛խ՝ տեսնի:

ՈՂԲ Ի ՎԵՐԱՁ ԴԱԳԱՂԻ ՍԻՐԵԼԻՈՑ'Ն ԻՄՈՑ ՎԱԼՏՅՐԻ,
1831. ՍԵՊՏ. 14 ԴԵՐՊՏ.

Ո՛չ լռին այս դիշեր գիս մղէ,
Ուր կանգնեալ առ քո դի՝ ցաւալից
Հայեցեալ ի քո դէմս՝ արտամալից,
Մորմոքիմ, առչորիմ 'ի սրտէ:
Աւաղեալ դքո կորուստ թանկագին
Աւաղեալ գիմ օրհաս դառնագին:

Ո՛չ. Արհաւիրք դիշերիս այն սրտի,
Որ սիրեացն զքեզ միշտ և սիրէ,
Որ 'ի կեանս և 'ի մահ զքեզ պահէ
Անմոռաց: Զե՛ն բնաւ զգալի՛:
Այլ քո սէր նազելի դու հոգւոյս,
Ցո՛ւշ բերեալ, տաղնապալիմ ես անբոյժ:...

Տրտմալից այս դիշեր ո՛հ այս ժամ
Ուր վերջինն տեսանիմ ես զքեզ,
Ուր վերջինն բարեաւ մնա՛յն է իմ ընդ քեզ:
Ո՛չ եւցէ 'ի մտացս յարաժամ:
Սուզ եղև իմ ընդ քեզ խնդութիւն,
Այլ երկար կացցէ՛ ինձ այս լալիւն:

Եղիցէ՛ն առաջնորդ քեզ հրեշտակք
Ցայս ուղի անծանօթ վերնական
Ցոր երթաս լի յուսով խնդութեան:
Ծագեսցէ՛ քեզ աստուածոյ լոյս վերնառաք:
Զոր դու վառ 'ի կեանս քո պահեցեր
Զոր դու ջերմ 'ի հոգիդ դանձեցեր:

Ո՛չ եւէր բացց աչօք ի Հայաստան,
Ուր կարօտ քո ձգտիւր ժամ առ ժամ
Զոր անտես սիրեցեր յարաժամ:
Ոչ. քեզ կարօտ Հայրենիք իմ մնան:
Ես տարայց զայս համբառ 'ի հայրենին
Այլ Դու ա՛ռ դէ՛թ գհամբոյր իմ յետին:

ՅԵՏ ՓՈՔՐ ԻՆՉ ՄԻԽԻԹԱՐԵԱՆՑ ԻՄ Ի ՅԱԻՈՑ ՎԱՄՆ ՄԱՏԱՈՒՆ ՀՈՐ ԻՄՈՑ: ՆԿԱՐԱԳՐՈՒՄՆ ՄԱՀԿԱԿԱՑՆ ԱՒՈՒՐՑ ՅԵՎ ԽՆԱՄՈՑ ԾՆՈՂԱՑ՝ ՀՆԾԱՅՑԵԱԼ ՅԻՇԱՏԱԿԻ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՀՈՐ ԻՄՈՑ: 1834. 24 ՆՈՅԵՄԲԵՐԻ Ի ԳՕՐՈՑՏ

Երազք իմ անցին և ես պլուրախալ
Ի վերայ թիվանց հոգմոց մեղմալին.
Վերացեալ գառնամ յայն յարկ մեր խաղալ,
Ուր դու սիրեիր, գրկեիր Ջերմին:

Խղճիկ այն խրճիթ, անպարզ այն սրահ
Երկերթիկ այն տուն, ծխածելի քարեայ,
Լուսահատ անկիւնք, խոռոչք բազմատ,
Յատակ Ի հողոյ, առատատաղ վայտեայ:

Ի տանեաց Ի յորմոց Ի ճեղքաց լուսամտից
Ատ Ի ներքս տեղային, հոսէին, թափէին.
Եւ կարկուտ և հեղեղ և անձրև, ուժգնագին,
Եւ մրրիկ և հոսան, փոթորիկ սաստատային:

Տիւ, գիշեր՝ անծածկելի, և անվախ անխափան,
Մղէին Ի յարկ մեր սոսկաղէմքն այն ընութեան
Գոռալով, վանելով, մռնչելով կատաղաձայն
Խրոխտային, կռուէին, քանդէին զմեր կայան:

Եւ ամպք մեղմընթացք՝ լուսափայլ դիմօք
Ձուէին Ի վերայ գլխոց մեր ատեն
Սրբե լուսին և աստեղք լուսովք
Նայտային անոյշ Ի բարձանց բեմէն:

Ձիկն նոցա ամօք, ժպիտ հոգեմայլ,
Ծիծաղ Ի չրթունս, յայտս փաղաքշութիւն,

Մուտք նոցա քնքուշ, ելք մարմանդափայլ,
Համբայր նոցա քաղցր և խաղ սիրադոյն:

Կապաւաչուրթն, դունագեղ վաստարանն այն երկնից,
Ծաւալէր, բոլորէր լուսացնցուղ պատ զմեօք,
Ջահք և ճրագք՝ անաղօտ փայլէին հրաշագիծ
Ծիր նոցա և ատման չբջարկեալ զմեր սրմռիք:

Եօթներանգ փայփայէր ցօղալից, վարդագեղ
Ծիածանն չքնաղատեսիլ խաղաղարեր նշանն.
Օրհներգք ցանկային ազգայանալ ընդ նորա գեղ
Եւ ազգք պաղձկանալ թէ անցցեն Ի ներքոյ:

Մէթէօրք Ի թռիչս մատ զուշակէին
Ապառեղք ճաճանչօղք հղօր ոգ իշխան,
Մանրաձայտ այն գիծք Ի թիկունս երկնային,
Մանկանցս էին տուեալ խնամածու պաշտպան,

Որոնել, մաղթել զմեր ճակատատաղ վայլ
Ընթարթ հայեցմամբ, անդուլ նայէաք.
Կաթոգին դիմօք, ակնապիշ յառեալ
Ծնրադրեալ լռին երկրպագանէաք.

Ատ թռչունք ճախրէին անվտանգ անխարդախ,
Բատոստեալ ամպաթռիչ կամ ծածկեալ ընդ յարկաւ,
Երգէին, հրճուէին, ծափէին թևաբաղխ,
կամ դուճեալ ածէին զիւր ձագունս ընդ գրկաւ,

Ընդ հիւրէս մանրանշոյլ՝ որ Ի ներքս սիւնաճեմ
Ուղղակի կամ չեղեալ անկանիւր պատաքուստ,
Վահանեալ կռուէաք արկանել ատրճ,
կամ վանել Ի տանէ, կամ առնուաք զփախուստ:

Մերթ Ի պոպս, մերթ Ի բուռս, մերթ միայն
ձերեսօքս
Անցանէր խայտալով ծիծեռնիկն հեզասիրտ.
Մերթ համբոյր, մերթ պաշար, մերթ միայն
քաղցրամօք
Բան լինէ նմա ճամբէաք կեալ ընդ մեզ Ի սէր սերտ:

Զայն բարձեալ ՚ի հեռուստ օդապար ճեմելով
Գայր խմբեալ մեղմասիպ դումարտակ կռնկաց,
՚ի տխուր նոցա ճայն ՚ի նուազ անխոով
Աստ ամէնքս ղպատուհասելք հայհոյք ուշադնաց:

Կարօտեալ հարք և մարք, սիրահար աղայք, կուսանք
Կամէին աստ առնուլ ղիւր սրտի խղճ, վախտագ·
Ամն թառաչ արձակեալ հարցանէր ղիւր զաւակ
Տարակաց: Ամն ճամբէր ողջունիւ ղիւր նամակ:

Սիւն ծխոյ ծծմբակերպ ի թոնրէս կուտակեալ,
Շեղջ առ շեղջ տեղանայր սևագծէր զմեր կայան,
՚ի յերթից, լուսամուխ թխակերպ վերելեալ
Դառնայր ցամպս, ղի կալցէ զսաստ երկնից
բարկութեան:

՚ի առանխս, ուր յեսին չունչ նորա սպառէր,
Ջուէին կառճառել սևազգեստ դունդ զօրաց,
Նոքա խորդ երեսօք և դունով ատրուաբեր,
Սաստէին մեզ մատամբ կալ ի ներքս լռակաց:

Իսկ հրաւառ բոցն վարսիւք ծիրանի
Անդ յանդադար խաղս ընդ տուն և բնակչաց
Մերթ բարձրաթռիչ, մերթ ստորադիմի,
Մերթ լի կայծակամբք, մերթ հանդարտագնաց:

Զպեծս ուռուցեալ կամ չանթս կիզանօղ
Հրոսեալ ՚ի յերկինս, կամ արկեալ զմեօք
Ճոճէր ելանէր կամ դիջեալ ահոխ
Ընդ թեւօք դումարէր զկրակաչեղջն ջերմով:

՚ի յորմոց, պատուհանից ՚ի յանկեանց քառակողմն
Պչրէին, սաստէին և զժանիս կրճտէին,
Այլանդակք դժոխակերպք քաչք և ալք անողորմն
Հուր, ծծումբ, թիւն լեղուի յամենատես թափէին:

Կնճռեալ, խարանկեալ դէմք, ճակատք սևամորթ
Վարսաթաւուճ, ծուէնահեր անդ կացեալ զողունի,
Ընդ թաւախիտ, խուիւս յօնից սաստկասարսուռ բոց
որոտ
Ամպրոպայր: Եւ նոքա բանային զճիրանք:

՚ի կոյտս արհաւրաց նանի ճայնելով
Զիս օրօրէիր հա՛յր զորովագութ
Եւ ՚ի պիրկս անկեալ ծնողական զթով
Համբոյր քո կնքէր զիմ քուն քաղցրանիւթ:

Հազիւ չորչոփեալ ՚ի լուսոյ աւուր,
Զքեզ տեսանէի յիս ընթերակաց
Զի պաղատանօք կամ արտասուաթոր
Հայցել զերկնաւորն լինել ինձ զթած:

Կամ ՚ի զոգս քո առեալ՝ զղուէիր խնդագին
Ամփոփեալ զիմ երես, զձեռս և զոտս ՚ի քո ծոց
Պաչէիր, հրճուէիր սեղմեալ զիս հայրաբար,
Կամ պատեալ ՚ի կուրծ քո՝ հանգչէի ՚ի ցաւոց:

Կարմրաչուրքն, մրայօն, աղուականեայ ծերունի
Թիկնաւէտ, հսկայաբարձ, ուղղաճիպ, յաղթանդամ,
՚ի յականց ՚ի չրթանց տես և խօսք հրաշալի,
Մեղուածոր կաթէին ՚ի հոգիս իմ զեռաթարմ:

Նեղեալ ի ցաւոց դու զորովասիրտ
Համբուրեալ զտեղիս չրթամբք բուժէիր,
՚ի գայթելս անզօր զեռ մատաղամիտ,
Բարձեալ զիս թիկամբք արդահատէիր:

Եւ զեռ քանամեայ սիրտ իմ պատառէր
Փոխել զանկողին առանց քեզ ննջել:
Այլ քո չունչ քո կեանք առաքինասէր
Ո՛չ եառն և [անդ] բիծ ինձ յայտնել:

Մայր, որդի, քոյր, եղբայր, վիճասյ, հարսն միաչաք,
Եւ ուսեալք և դասեալք քերց, տատից, հօրեղբարց
Միաչունչ, միակամ, միաբնակ հաւասար,
Ննջէին յառնէին գրկախառն ընդ միմեանց:

Այլ դու հա՛յր բարեգութ, անխարդախ, անաչառ
Տածէիր ընդ թեւօք զքո ջերմին զերդաստան·
Զցայգ, զցերեկ անհանգիստ, անտրտունջ անդադար
Դու էիր նոցա զլուխ, դու նոցա կերպարան:

Շրջարկեալ զքև զուարթամիտ հոգւով
Լսէաք ուշիւ խրատուդ հոդելից.
Յարղել մեծարել մշտնջանդ սիրով
Զընտանիս, օտարս, զծնօղս մերձակից:

Ի սան թէ արտաքս ընդ արձակ երկնաւ
Ուղղեալ քո պատկառ առ էակս համայն,
Գտանեալ մեզ զիարդ հեշտաչունչ լեզուաւ
Հարկէիր լինել նոցա յանճնական:

Ի ՎԵՐՁՑ ԴԱՄԲԱՐՍԱՆԻ ԲԱԶՄԵՐԱԿԱՑ ՈՒՍՈՒՑՉԻ ԻՄՈՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱԼԱՄՊԱՐՍԵԱՆՑ Ի 1836 Ա.ՄԻ Ի 15 ՄԱՅԻՍԻ Ի ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ

Տապան յառնադէմ, այլ ինձ ցանկալի.
Ո՛չ տեսանել զոս զքիզ՝ նայիմ երեսակ.
Հուր արկեալ անչէջ ցաւոց անճարակ
Մաչեաց զիմ ոգի, որ ասա ամփոփի.
Կարե՞մ լըշամիս հայիլ ես Ի քիզ.
Ձառանց ողբալոյ զօրհասս զառներս:

Յօսեաց սրդ ընդ իս անոյշ իմ զոս Հայր.
Որդին կարոտեալ կացեալ առընթեր.
Նուր քոյ ամփոփին նշխարք երկնառուէր.
Յանկայ զքոյդ լսել ձայն քաղցրաբարբառ
Այլ ո՛հ մեռանին ցանկութիւնք սրտիս.
Ընդ վայր որոնեմ զերկնածնունդ յոստիս:

Հայիմ Ի անեղէն, հայիմ Ի տաճար,
Ուր կենդանահայեաց զէմք քոյ հրեշտակային
Ինձ արձանանան և Ի վայրս մթին:
Հովիտք Ճանդաստանք ձորք և լեռնավայրք,
Ժպտամարք քով զմայլեալ և այժմ ծիծաղին,
Այլ ինձ նոքա մխայն առարկայք սղոչին:

Ա՛ստ էր թաւիեցոց արիւնն՝ որ չիւրոց
Կարէր ներշնչել նոր կենդանութիւն.
Դեառնք այն թանկագին լի բարեօք անհուն.
Ա՛ստ էր արժանի այսպէս կանխակործ.
Ցառոյգ հասակի և յօտար երկրի
Գազանաց լինել զոհ անխոնջադրելի.

Ընչեսցի պիշերն ի ժամանակաց
Կարգէ՝ որ 'ի քուրձս իւր աղջամղջին
Թագուցեալ 'ի մութս զորդիս խաւարին.
Եւ զանմեղն անխնայ ի ձեռս մեղսամած
Զորասցի բազումն, մի՛ տեսցէ նա լոյս
Կենաց՝ քո. զքո եհատ կենաց յայս (հիւս):

Երկինք մշտարդար գայն վրէժ մխիթ°
Յայն սակս չելից, զի նախանձաւոր
Ընաչխարհիկ տեսոյդ սուրբ և փառաւոր
Օր յառաջ կամէր հանել յայս բանդէ
Զքեզ զա'րդ ազգէ, պսակ քոյ դարու
Զի փառակցեսցիս երկնայինոցն դասու:

Այլ կարէ° այս յոյս սփոփել գայն սիրտ՝
Որ ընդ քեզ մխացեալ ընդ քեզ անբաժան
Կամէր կեալ չնչել մխանձն մխաճայն
Իսկ արդ [.....] դառնութեան 'ի հովէդ
Դառնայ ուր երբեմն իւր քաղցր վարդապետ
Փաղաքչէր զղուէր զմանուկն խակամիտ:

Բաժանիմ 'ի քէն ոսկերք սխրալի.
Այլ իմ քայլք կապին հրճունքս պապանձին
Ասել զբարեաւ մնայն տալ զհամբոյր վերջին.
Պահել զկարօտն տեսլեան կրկնակի
Ցայն օր ահաւոր ուր համայն աչխարհ
Պարտուց մխայն կոչէ տալ անդէն համար:

Այլ առաքինիդ և 'ի թիւս անհուն
Յուսամ տեսանել փառօք պսակեալ
Զորդիս սիրելի, անմոռաց պահեալ
Առնել մասնակից հայրենի դիմոյն
Դրկեալ համբուրել և ընդ իւր յաւիտեան
Անքուժ իմ ցաւոց տալ կրկին վախճան:

ԲԱՅԱԹԻՆԵՐ

1

Յերկնքի՛ կանաչ կարմիր.
Ա՛յ սիրուն կանաչ կարմիր.
Լերդս ու Թոքս չորացել են,
Սար ու ձոր կանաչ կարմիր:

2

Դաշտի ծաղկի ոանդեռանդ
Մեզ նման կարճ է որն ու կյանք
Ծաղիկն՝ վոր հոտ չունենա,
Ել ի՞նչ ողուա, ասի՛ք ե, ասի՛ք:

3

Ընկել եմ ա՛խ՝ սարևսար,
Դարման չունիմ, վո՛չ մեկ ճար:
Հեդում եմ դամ քո վոտը,
Առաջս ծուլ, սա՛ր ե սար:

4

Տե՛ս ես դչերի ա՛խ՝ դասքեն,
Մոտդ եկան, քեզ հասկաքե են,
Թռի՛ր դրանց հետ ու արի՛,
Թուրն ինձ խրի՛ր, քեզ դասքեն:

5

Ենդուր համար եմ, ենդուր
Երվոմ, պրծնիմ ա՛խ՝ մեկ որ:
Աչխարքն ինձ տաս, պետքը չի՛,
Թուրդ եմ ուզում, ինձ ե՛ն տուր:

6

Սրախս մի՛ տար, վոր երես,
Ինձ վոխթոխես, խորովես:
Հոդիս ուզիր, յես քեզ տամ. √
Թո՛ղ մեկ տեսնիմ քո երես:

7

Կանաչ են տար ու ձոր,
Ջենս բարակ, սիրտս խոր:
Հոդիս ել տամ, չես լսիլ,
Ի՞նչ ես ընկել տար ու ձոր:

8

Սիրտս կաթել ա արին,
Վ՛ո մարմինն եմ, քո արին,
Ցե՛ղ արի մեկ, աչքով տե՛ս,
Թե սիրելուդ ի՞նչ արին:—

9

Են տանը մեռնիմ, ա՛խ՝ են տան.
Վոր աչքդ բացիր՝ աննման:
Մեկ քուռն հոդիդ եմ կարոտ,
Սաա՛, վոր ինձ՝ ա՛խ՝ ե՛ն տան:—

10

Ո՞վ ա լսել՝ տար տարի
Դիալչի, մոտ գա, ու կպչի:
Վ՛ո տար գլխին յես գուրգան,
Ինձ մի՛ անիլ տարտարի:

11

Գոշիս վրա քարքաչան
Արին, տարան քո նշանն:
Թե տաղ ել հողը մտնիմ,
Ո՞վ կըլի իմ քարքաչանն:—

12

Գեղ վոր տեսա ջրի տալին:
Խելքս թռավ են հաղալին,
Հենց մարդ պետք է հոդին տա,
Վոր չտպանես դու տալին:

13

Վո՛չ ձենս ես դու իմանում,
Վո՛չ չունչս առնում, ինձ տեսնում:
Ենքան դռնեդուռ ընկա,
Բեղնամ ելավ իմ անուն:

14

Ի՞նչ ես տանջվում՝ ա՛յ նաչար,
Վոր չունիս քեզ մեկ հավար:
Մեկ սիրտ վոր դարդ չիմանում,
Հալբաթ վատ է ու նա չար:

15

Ջին ա գալիս տարի գլխին,
Տարի դոշին, քամակին:
Աչքս չցել եմ քո ճամփեդ,
Վա՛յ տալիս՝ իմ չոր գլխին:—

16

Գեղ ի՞նչ արի, կարեցիր
Լեղուդ, ինձմեն քաշվեցիր.
Ի՞նչ ես արել եղ Թուրը,
Մեկ սիրտ ունիմ, կարեցիր:

17

Սիրտս պատկեր չի, քաշեմ,
Թեզ տամ, ինձ էլ չմաշեմ,
Միս ա, թուր էլ խփում ես,
Ի՞նչ անեմ, ա՛խ չի քաշիմ։

18

Ես տեղ չտա մարդիք կան, լի՛ս
Քե՛զ եմ կարոտ, քեզ՝ ա՛խ՝ չես։
Վար դաս, տեսնես ինձ հոդումն,
Յե՞րբոր վրես սուք կանես։

19

Գերեզմանդ մնացել բաց,
Տունն ընկել ա սուք ու լաց։
Դվորն գնում ես, ինձ էլ տա՛ր,
Բա՛ց յերեսդ, աչքդ բաց։

20

Լա՛ց իմ սրտ, ա՛զիզ՝ լա՛ց,
Յերբ դաս, տեսնես ինձ մեռած։
Շատ էլ հասրաթդ քաշեցի,
Ինձ սպանեց սուքն ու լաց։

21

Նի յես էլեք քյահրան ձին,
Քար եմ դառել քո կշտին։
Ի՞նչպես պետք է անցկենաս
Ենչ լես սարը, են խոր ձին։

22

Ա՛խ՝ ձեր բաչին ու ձեր տան
Կարին, աչքերս քեզ տեսան։
Թո՛ղ հոգիս յես մեկ քեզ տամ,
Ուժ ուզենաս, լաչըս տան։

23

Սիրտը սհաթ է, սհաթ.
Վոր թե լարես՝ ա՛խ բեվախտ,
Խարար կըլի։ Թե թողաս
Ու չտեսնես սհաթն սհաթ։

24

Ինձանից՝ դու ձե՛ռք քաշիր.
Կուզես, հոգիս ա՛ռ, քաշվիր,
Մահիս գիրը գըվել ա,
Դո՛ւ էլ սրի՛, ձեռք քաշիր։

25

Գնացի՛ր, ա՛խ՝ յե՛կ սրի,
Յես մեռնում եմ, յե՛կ սրի։
Դուռ իմ յարես կապեցիր,
Են էլ դարդու յեկ սրի։

26

Աչքս ճամփիդ է, սրի՛,
Սրի՛, հոգիս ա՛ռ, սրի՛։
Գյուռնահս յերեսովս չտաս,
Փոչմանել եմ, ինչ սրի։

27

Մի՛ դարդ անիր, սի՛րտ սրա։
Ի՞նչ ես եղումդ, սի՛րտ սրա։
Եղբան մաչվիլն պետքը չի՛,
Ինչ տառում են՝ սի՛րտ, սրա։

28

Բարեկամիդ հետ մեկ տեղ
Թո՛ղ քեզ սպանեն՝ ա՛խ՝ մեկ տեղ։
Այնբարեկամ վոր մեռնիս,
Հողն էլ չի՛ տալ քեզ մեկ տեղ։

29

Ա՛խ սառն ե՛ սառն ես դեռևին,
Ջիգյար չունի, մեր սրտին
Թուր ե խփում, ու տանում,
Մեր թողը տալիս ե՛ս դեռևին։—

30

Ա՛նի, Ա՛նի, ա՛խ՝ Ա՛նի,
Քանդողիդ տունը քանդվի։
Քեզ վոր ապրը չպահեց,
Մեկ սուք անող ի՞նչ անի։—

31

Ա՛խ՝ իմ արևս մտավ մեր,
Մնացի անհեր, անախպեր.
Դու եյիր կյանքս ու արևս,
Դու ել գնացիր՝ ա՛յ իմ մեր։

32

Մնացել եմ մեկ երում,
Ա՛խ քաշելով ինձ սպանում.
Թե չես դարդիս վրա հասնիլ
Ել ո՞ւր ես՝ ա՛խ՝ ինձ երում։

33

Ցերեսդ բա՛ց, ու յե՛դ տար,
Ցերը ուղենաս, հոդիս ա՛ռ։
Թո՛դ մեկ հողը՝ ա՛խ՝ մանիմ,
Ե՛ն վախտը սերդ՝ ել յեդ տա՛ր։

34

Տա՛ր եդ հավին՝ ա՛յ ուրուր,
Աչխարքս դանակ ա ու սուր։
Զոռ մարդի թուրն ա կտրում,
Խեղճն ո՞ւր կորչի, ա՛խ՝ ո՞ւր, ո՞ւր։

35

Գլուխս քցել եմ քարեքար,
Վո՛չ տեր ունիմ, վոչ հավար.
Ախր մեկ ցավիս հասնիս,
Սիրտդ մկամ քա՞ր ե քար։

36

Թե տաս ել ինձ սրի բերնին,
Ելի քո ղուլն եմ, քո գերին,
Հոգիս քեզ մոտ հո կըլի,
Մեռնեմ եդ քո սուրբ բերնին։

37

Գամու ձեռին տարուբեր
Ըլում են ծառն ու ծաղիկներ.
Սիրտս վոր չի՛ դինջանում,
Հա կաց գլուխդ տա՛ր ու բե՛ր։

38

Չեն տաս, չի՛ լսիլ քեզ կարաս.
Թե լիքն ա մեջն, ձեռ չտաս.
Դարդակին դարդդ ել ասես,
Չի լսանալ, ի՞նչ կարաս։

39

Ինձ երեցիր տակետակ,
Աչխարքիցս իմ հիշատակ
Կտրվել ա, փչացել,
Ցես մնացել եմ ծովի տակ։

40

Ծարավ աղբրի ախբրի ա՛խ ակը.
Մեր կանաչ բաղի տակը
Մխոցդ բե՛ր ու ինձ հիշի՛ր
Խավարեց աչքիս ակը։

41

Դուռ իմ ձեռը կապեցիը,
Սրտիս յարեն կապեցիը,
Ինչ արի քեզ, վոր ել յեղ
Սիրաս արեն կապեցիը:

42

Սէջը տալիս ա սևեն,
Վայ իմ գլխեն, արևեն.
Դուռ ել հազիս առել ես,
Տալիս ես գևեն—սևեն:

43

Յերևան կակող ա, յերես,
Գալ չի, վոր Թրի դեմ անես.
Ինչ խոսք ունիս, ինձ ասա՛.
Ջանես ուրշեն ինձ յերես:

44

Վատաբախտ եմ, վատաբախտ
Վո՛չ որ ունի, վո՛չ մեկ բախտ.
Ի՞նչ ես յավրում աղքատի որը
Սև ա, վատ ա բախտն:

45

Սևերես եմ, սևերես,
Տեղն ա, ինչ վոր ինձ ասես.
Ո՞ւր քեզ իմ գարշն ասեցի,
Վոր ինձ մաշես, սև՛ յերես:

46

Ես որ գնացինք բանջարի,
Ռասո եկանք ջրի, սարի.
Գարտակ ման գալն պետքը չի,
Ինելք ունիս, մեկ բան ճարի:

47

Միրքիդ զուրբան՝ այ տերտեր,
Հոյըդ բարդի, չալ բեղեր
Ինելքս տարան՝ բեմուրվաթ,
Գանի՞ կանչեմ՝ ա՛ռ տե՛ր, տեր:

48

Ջարի ձեռ ընկա, չարի,
Թե սպանի ել, ինձ երի,
Ո՞ւմ գնամ ասեմ իմ ցավս,
Ի՞նչ ասեցիը, յես չարի:

49

Վազն ա գինին տալիս վազն,
Վոր չարանա, իմ մուրազն
Կմնա վերտամս, չի գուս գալ,
Թե գաս հետս ել վազելազ:

50

Ինչ վոր ասեն, սի՛րա՝ մի՛ մնար.
Յավդ ներս արա՛, մի՛ սգար.
Մեկ բարեկամ վոր ճարես,
Ել ես լաչումն՝ սի՛րա մի՛ մնար:

51

Ջանս գուս եկավ, սիրտս մնաց.
Նա ել արնով ա լցված.
Ե՛զպես արիր, սիրելիկան՝
Վոր քեզանից սիրտս մնաց:

52

Թե վախտ ունիս, արի՛, ու տե՛ս
Հալըս, Թե ինձ սիրում ես,
Յես վոր գնացի, չե՛ս հասնիլ,
Ապրում ես, վոր ինձ ուտես:

53

Ման եմ գալիս մուքին և մուք,
Քեզ չեմ գտնում ա՛յ անդուք.
Աբեզակն էլ վոր բացվի,
Իմ սիրտս հո մուքին և մուք:

54

Տա՛ր իմ հոգիս, հեռդ տա՛ր,
Ես խոր ձորումն մի՛ Թողար
Ինձ, վոր երվիմ, խորովիմ,
Ղարիբը յերկրում մնամ ոտար:

55

Կարկուտն դիպավ մեր տեղին,
Մեր հանդին, մեր ծաղիկներին.
Ախ՝ քո գարդն եմ միշտ քաշում,
Նրանք լիս չեն տալ իմ տղին:

56

Ինձ ասեցիր քո անում,
Էլ չես գալիս՝ իմ խանում.
Էլ ի՞նչպես սերդ իմանամ,
Վոր եդպես ես ինձ անում:

57

Վո՛չ տուն ունիմ, վո՛չ աման,
Թե վոր գան, ինձ դողանան.
Հացի կարոտ մնացել եմ,
Գիշերս վա՛յ, որս ամա՛ն:

58

Կուզեմ առավիղ Թռչել,
Ճամփեդ կապել ու վախչել.
Վոր Թե արին էլ դու լաս,
Ջուր չդառնիս, աչքդ Թրջել:

59

Ի՞նչ ես երվում տանն ու դռանն,
Իմ աչքի լիս սիրեկան,
Եղ դարդը քեզ ավղը
Հալբաթ կանի մեկ ճար դրան:

60

Մարդիս կյանքն է առ ու տուր,
Մեկ խեր կըդա, մեկ չառըչուռ:
Դու քո ճամփեդ մի՛ ծռիր.
Թե պարտք ունիս ա՛ռ ու տուր:

61

Ջանս քեզ զուրբան Աղա,
Թաղավորի աչք Աղա.
Բաս չե՛ս գիտում՝ վոր սերը
Խոցված սրտի համար աղ ա:

62

Ինչ ցավ ունիս, վե՛ր ածիր.
Քեզ կսպանեն, մի՛ մաչվիր.
Սաղդ քոքիր, սերտդ բա՛ց,
Եղ Փիքրդ Թո՛ղ, վե՛ր, ածի՛ր:

63

Քանի հարուստ ու քոք ես,
Սմենի աչքի լիսն ես,
Ձեռդ պակաս, ձեն չի տալ,
Սաղդ հազար եվ վոր քոքես:

64

Քո յեսիրն եմ՝ խեղճ արի.
Թուրդ սրտիցս յեդ քաշի.
Թո՛ղ հողը մանիմ են վախտը
Կանգնե վրես՝ խե՛ղճ, արի՛:

65

Ինձ թողում են, քեզ տանում
Դուռն յերեսիս հետ անում.
Վոր քո չվաքն էլ չե՛մ տեսնել,
Ել ի՞նչ անեմ ես տանում:

66

Ո՞ւմ ասեմ դարդս՝ վոր լսի,
Ել ցավս ուրչի յեզ չասի.
Թող սիրտս մենակ խավարի,
Հառաչի մնա, մենկ լսի:

67

Ա՛խ՝ ի՞նչ ես էլ թուրզ սրտում,
Հոգիս տալն յես եմ ուզում.
Ջանս վոր հատավ, ինձ մենկ ա,
Կրակում ըլիմ, թե սրտում:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՅՈՒՏ

ԻՐԼԱՔԵՕՆԻՂ

Ո՞ զնայ անապան գ'դիշերեաւ զհոզմով,
Հայրն է այս, ասա հանդերձ իւր որդւով։
Նա կալնու զիւր մանուկ 'ի ձեռին ամբապէս,
Պահպանէ անվտանգ, ըմբռնէ ջերմապէս։

«Ձի՞ ծածկես զդէմս քո սարսափմամբ որդեակ իմ
«Մի՛թէ քեզ էրլքեօնիղ չ'երևի՞ ո՛վ հայր իմ։
«Էրլքեօնիղ աւազիկ 'ի պսակ 'ի ոտան։
«Որդեա՛կ իմ այս սուտեր է մխոյ և մէջան»։

Հրապուրը էրլքեօնիղի առ որդին։

««Ե՛կ առիս ե՛կ ընդիս ո՛րդեակ իմ սիրելի
««Խաղացից ես ընդ քեզ միշտ խաղուք հեչտալի
««Եւ ծաղիկք դունափեղք ի յեզերս՝ որ աստ կան
««Եւ իմ մայր ոչնի աստ զհանդերձս ոսկեղան։

Որդ. «Ո՛վ հայր իմ, ո՛վ հայր իմ և դու զայս ո՞չ լսես,
«Զինչ աստ լինճ խոստանայ էրլքեօնիղ զաղտնապէս։
Հայ. «Կա՛ց հանդիստ որդեա՛կ իմ կա՛ց մնա՛ դու լռին,
Ի խռիւս տերևոց սուլէ հողմն մեղմովին։

Էրլքեօնիղ առ որդին

««Ո՞չ կամիս գալ ընդիս ո՛վ մանուկ դու մատաղ.
««Վասն զո հոգացեն զստերք իմ լուսաչող

«Իմ դառեր ցաւս կազմէն զդիչերեայն քաղցր խնջոյս
«Ի՛ օրօրին ու պարէն և երգէն զերդս անուշ:

Որդ. «Մ՞վ հա՛յր իմ, ո՛վ հա՛յր իմ տեսանե՞ս յայն տեղին
«Ուր դառեր՝ զքեօնիղին անգառին անդ բազմին
«Որդեա՛կ իմ որդեա՛կ իմ տեսանեմ յոյժ կարի
«Ինձ թուի թէ ակերով հնացեալ այն ուսի:

Հր. «Սիրելի ես դու ինձ, քո կազմուած վարելի
«Թէ զալ ասա ո՛չ կամիս, ես ածիլ զքեզ բոնի.
Որդ. «Մ՞վ հայր իմ ո՞վ հայր իմ կա՛յ դու պիս համբակէս,
«Ատանիմ, ատրտամիմ յայն սուտ զառնապէս:

Զարհուրեալ հօր նորա արչաւէ սրընթաց
Կազդուրէ ի ձեռին զմանուկն թուլացած.
Ի վաստակս, ի կորիս հասանէ դուռն իւր,
Ի՛ ի ձեռին տեսանէ անկենդան զմանուկն իւր:

ԵԻԼԵՐ

ԱՍՊԱՏ ՏԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

«Այս սիրտ անբիծ տայ ձեզ նուէր,
«Մ՝ով քաջգ Աստեա զսուրբ սէրն քեռ,
«Զայլ ինն սէր մի՛ պահանջեր,
«Զի այս տայ ինձ վիշտ անձնամեռ.
«Հանդիստ ձեզ խնդրեմ երևիլ
«Հանդիստ դնալ ձեզ տեսանել,
«Զերին աչաց դառն կաթիլ,
«Ոչ կարեմ ես անձին տանել»:

Իսկ նա զայս զոյժ ցաւոց լսէ,
Զինքն անկատէ զառնակսկիծ,
Գրկեալ զնա ուժգին սեղմէ.
Հեծեալ ի ձին տարտամալից
Եւ զայս համբաւ առ իւրան յղէ
Ի Շվեցարիայ իւր Հայրենի
Երթալ ի սուրբ վիրմն ուխտ
Ատեալ պանդխտիլք զնչան խաչի:

Գործք մեծամեծք անդ երևին
Ի ձեռն հզօր, հսկային քաջ.
Անդ տաղաւարտք նորա ճօճին,
Ի կարծրատուն դպս թշնամեաց.
Ուր և անուն տապրեալ ցաւոց
Զմուսուրմանս մաշեալ ցնորէ
Բայց նորային սիրտ յայտ ցաւոց
Ո՛չ ողջանայ, ո՛չ դազարէ:

Իբրև զամ մի տարաւ նա զայս,
Տանել կրկին ո՛չ հանդուրժէ
Հանդչիլ բնաւ, ո՛չ կարէ այլևս
Առ այս յիւրոցն վինքն անջատէ.
Ցեղերս Եօվէ վնաւ մի տեսակ
Ուր առագաստաք վողվոզեյին.
Նաւէ զաղտուկ՝ յիւր սիրեցեալ
Ցաչխարհ ուր չունչք իւր տանէին:

Վտարանդին եկեալ յիւր ղեկակ
Անդ հարկանէ ղդուռն ամրոցին,
Աւա՛ղ բանիւք որոտագին
Դրունք նմա յեռս բանին.
«Կրէ զքօղ դուք զոր խնդրէք՝
«Հարանաւոքեալ երկնաւորին,
«Ցերկիւղ եղև նորայն հարւանիք
«Ուր նա մատոյց վինքն վերին»:

Զհայրենի ամրոց քաղցրիկ
Նա մոռանայ, թողու յամայր,
Այլ ո՛չ յիշէ վիւր ղէնս, վիւր տեղ.
Եւ ո՛չ զձին իւր հաւատար.
Ի Տաղբուրդոյ նա իջանէ,
Ելեալ ՚ի բաց անծանօթի,
Այն վի չքնաղ անդամք նորա,
Ծածկին ի քուրձս բրդենի:

Եւ ո՛չ հեռի յայնմ կողմանց
Շինէ նա վիւր խրճիթ գծուծ,
Ուր ի մէջոյ խորին մայրեաց
Նա առնանէր զվանից չուրջ.
Յառաւօտէ դէտաին եղեալ
Մինչ յերեկոյ նա սպասէր
Զլռին յոյս ի դէմս ածեալ
Անդ առանձին միայն նստէր:

Հայէր ՚ի վեր, ՚ի վանս կոյս
Ժամս բազումս հայէր անթարթ,
Ի լուսամուտ սիրուհւոյն անտի
Մինչ լուսամուտքն բանին յանկարծ

Մինչ սիրուհին վինքն եցոյց
Մինչ դէմք նորա զղջմբիկ, փափուկ,
Զինքն ՚ի խնամս ՚ի ձորն իջոյց
Հրեշտակատիպ, ամբիծ նաղուք:

Ընկղմանի այնուհետև
Լրջին աչացն տալ վոքր ինչ քուն,
Ննջամտեալ թե միւս ևս
Այ՞ս լինիցի առաւօտուն,
Այսպէս նստեալ զաւուրս յոլով
Այսպէս նստեալ զամս երկայն,
Դիտէը ո՛չինչ վիշտ զգալով
Մինչ լուսամուտքն խանկարծ բացան:

Եւ ահա ի միում առաւօտին
Կայր նա անդէն դիակնացեալ
Դէմ յանդիման լուսամտին
Դալուկ, լռին զղէմս արձակեալ:

ԱՂՋԻՆ ԲՈՐՆՀՈԼՄ

Անգութ օրէնք դառապարանէ զամբիծ սիրոյ իմ առարկայ,
Այլ ըս ընդդէմ ո՛վ կարէ հակառակ կալ՝ սի՛րտ դիւրազգայ:

Զի՞նչ օրէնք զոն արբաղնադոյն, քան զընտիրն քոյ զգացմունս:
Զի՞նչ զօրութիւն հզօրագոյն, զգեղեցկութիւն քան զսիրոյն:

Սիրեմ յամայր և սիրեցեալ: Թո՛ղ անազդամ ոգիք զիս կիրս.
Թո՛ղ խառաւխրաք զիմ սրտիս խղճ ընդ նզովիւք զբեացին յերկիրս.

Սուրբ բնութիւն քաղցրատուիթ մա՛յր՝ քոյ բարեկամ փնքուչ ո՛րդի.
Ինոյ առաջի անմեղ, արդար, դու եառուր նմա գսիրտ զգալի:

Ինոյ երկնառուր ձիրք բարերար, զարդարեցին զիմ սիրուհի.
Ինաղցրիկ բնութիւն դու կամեցար ,զի ես գլիլայն իմ սիրեցի:

Եւ քոյ զրոտ ի վերայ մեր ճայթեալ չարար զմեզ չանթահոտ.
Մինչ սիրոյ 'ի գիրկըս խնդալոքեր զմայլէաք մեք սիրահարքս:

Ա՛վ իմ Բորնհոլմ, անոյշ Բորնհոլմ, աւ, քեզ հոգիս անմխիթար,
'Ի ցանկալիդ ճգտի մշտ կողմ. բայց զարտասուս հեղուի ընդ վայր:

Դառնակակիծ ես տանջիմ աստ, հերքեալ ի բաց ո՛չ յաւիտեան.
Բանադրանօք ծնողաց անհաշտ, յեղերաց քոց երկնանման:

Շնչե՞ս արդեօք քաղցր իմ Լիլայ դեռ 'ի կսկիծ քո խոտամբեր.
Թէ 'ի յորճանս փրփրուն ալեաց քոյ դառն գիկեանս եառուր ի նուէր:

Կա՛ց յանդիման լուսամարմին սառուեր չքնաղ դու պատուական
Եւ ես յանդունդս ծովու մթին ընդ քեզ կորեաց 'ի չքուխեան:

———

Ր Ա Ի Ս Ա

Հին բալլադ

Ցաղջամուղջ մթին գիշերային յարեաւ մըրիկ,
Յերեսս երկնից փայլատակէր չոզ սոսկալի,
Որոտաձայն ճայթէին ամպք մատսխալաձիգ երկնապարիկ.
Հեղեղք վերին թօթափէին 'ի ծոց անտառի:

Բնութիւն համայն անշնչացեալ, անձայն, և լուռ.
Համայն առեղծուածք մտեալ լինդ յարկաւ ապահովի.
Բայլատայ միայն, վշտահալած, չդիտելով ո՞ւր,
Թափառէր անդ յաղջամղջին 'ի բացօթի:

Ի վարանման յայս իւր մեռեալ և ապխարշ.
Ո՛չ լսէ գձայն չզղայ գինդիան ճայթմանց երկնից.
Եւ ահագնալուր շաչիւն հողմոց գնորա հոգեմաշ
Հնձեձանս ո՛չ կարեն վակել արտասուալից:

Դալկացեալ դէմք իւրև աչերև խորչակահար.
Շրթունք նորա իւրև ծաղիկ անդ թարշամեալ.
Նեմացեալ աչք նորա քաղցր՝ արտասուատար.
Այլ սիրտ նորա գղայ չկրմին զօրհաս իւր գառն:

Ի ձիւնափայլ լանջաց նորա մերկամարմին՝
Գատուտեալ 'ի սլաք ծառոց անդ վայրենի՝
Հոսի արիւնն վտակ առ վտակ թանձր և չկրմին.
Ի վերայ գէմ գալարեաց անդ խոտոց երկրի:

Յաղին ծովուն խրոխտայր գոռոզ լարճաւանգակ.
Թիկունք լերանց ապաւաժեալ վիմակարկառ.
Վախ գառ 'ի վեր 'ի մէջ նոցա քարակուտակ.
Անդ երանէ 'ի գաղաթ նորա Բախտայ Թշուառ:

Ջօրճանք ծովուն կատաղածօր անդ եվէֆին.
Ի ճաճանչել ճառագայթից հրավառ երկնից.
Մկանունք ալեաց լեռնահասնզոյն աստ թնդային.
Սպառնացեալ ղերկիր համայն ջրասույզ առնել:

Հայէ ի շուրջս ոսկեզօք նորա անդ յամաքին,
Բայց յանդրէն ճայն ազիողորմ լայոյ նորա.
Կառնեալ կրկին ընդ որոտ ալեացն զարհուրագին.
Կսկծալի աղաղակէ աւա՛ղ անձինս, ո՛հ ես կորեայ:

«Կրօնիդ չքօնիդ իմ անդղրամ, այլ թանկագին.
Զմէ՞ հեռացար չինէն խղճոյս վշտահալած.
Ընդէ՞ր թողեր զքոյ Բայիսայ ի սուգ դառնագին.
Մխայն ի մէջ սարսափելի այսոր վայրենեաց:

«Դարձի՛ր առ ես իմ սիրալի ես մոռացայդ.
Ես մոռացայդ, զամենայն և ներեցիդ քեզ:
Այլ դու խորչիս չինէն իրրև ինքնահալած.
Ընդէ՞ր ծանեայ զքեզ անգո՛ւթ տարաբաղդս ես:

«Հայր իմ և մայր իմ սիրէին զիս քնքշագին.
Եւ ես դնոսա սիրէի միշտ զերքան զչաւին.
Յանմեղութեան ի խնդութեան անցանէին.
Ժամք և աւուրք կենաց իմոց մանկահասակ:

«Մինչ յայտնեցար դու ինձ իրրև երկնից հրեշտակ.
Եւ ասացեր հառաչանօք քոյ քաղցր լինձ անդ.
Սիրեմ զքեզ իմ Բայիսայ անհանգուստակ.
Ցոյ բանք եռուն թողուլ զծնողս իմ յաւիտեան:

«Ի հոգեմայլ հրճուանս և ի տաղնապ սրտիս.
Եւ յարտասուս հրավառ՝ սիրոյ եռանդագին.
Անկեալ ի գիրկս քոյ մոռացայ զկեանս աստէն.
Եւ սիրտ իմ նուէր քեզ եռու անդ հեշտագին:

«Հոգի իմ ընդ քոյդ միաւորեալ խայտաբ ցնծայր.
Ցև չնչէի քև իմ բոլոր կենդանութիւն.
Ցաչս քոյ քաղցրիկ արեգականն լոյս ինձ չողայր.
Դու իմ երկինք, դու լինձ պատկեր աստուածային:

«Ցի՞մ ի կենաց ո՛չ զրկեցայ յայնմ իսկ աւուր.
Մինչ զմայլէի ի գիրկս սիրոյ քո սքանչի.
Չի մի՛ տեսից զխաբդախութիւն քոյ դառնաղուբ.
Որ կործանեաց զերջանկութիւն իմ աստ յերկրի:

«Այլ իմ անգութ ճակատագիր այսպէս կնքեաց.
Չի դու զայլ ոք սիրեացես զեր քան զԲայիսայ.
Չի թողցես զիս քոյ սրտակից ի սպառ ի բաց.
Մինչ խորտայի ի քուն իմ թանձր ես աներկեայ:

Մինչ երազով երազէի զիմ Կրօնիդէ.
Եւ ինձ թուէր զրկափարիլ Ջերմին ընդ քեզ.
Ասա՛ղ ես զօդն լինձ զրեցի և ո՛չ զքեզ.
Հեռի չինէն իմ Կրօնիդ տարաբաղդէս:

Անցին երազք իմ, ահաբեկ զարթեայ ի քնոյ.
Ցայնեմ զքեզ. այլ դու լռես մնջին անճայն.
Զքեզ խնդրեմ կարօտակէզ. այլ դու լինձ զքոյ
Փակես զերեսս, ո՛չ դառնես զքեզ յաւիտեան:

Հայս բլուր ամբարձ դիմեմ ահա՛ սրտատոչոր.
Ես տարաբաղդս...: Կրօնիդ անգութ յաչաց իմոց
Անդ ի հեռուստ ընդ Լիւգմիլայի փախչի ի ձորն.
Ցոր տեսեալ միտք իմ ցնորին ի դառն ցաւոց:

Ցայս ասկալի վայրկենէս սկսեալ աղէտակէզ.
Շիւրիմ մաշիմ զտիւ և զգիշեր անմխիթար.
Ամենուրեք զիմ Կրօնիդ խնդրեմ զքեզ.
Այլ դու չկամիս լսել ո՛հ, զիմ ճայն ողեսպառ:

Այժմ քո թշուառ Բայիսայ աստ վերջին անգամ.
Կոչէ զանուն իւր սիրելւոյ ի բացօթի.
Ծարաւէ անճն իմ հանդստեան անբարեկամ.
Ներեա՛... և լե՛ր առանց լինձ երջանիկ յերկրի:

Խորհրտեալ զայս բեկ բեկ ճայնիւ ո՛հ Բայիսայ.
Անկաւ ի ծով թնդաց որոտն ահեղաճայն.
Այսուհետև երկինքն գուշակեցին զկորուստն նմա.
Որոյ անխիղճ ձեռք զրաւեցին զնորայն կեանս:

ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ

(Ի ԼԻՍԱԿՈՑ)

Ի գրգռել պատերազմին Տրոյական՝ Հեկտոր մի ի վախճուն ոգւոցն Պրիամայ, թագաւորին Տրոյացւոց և քաջափոյնս քան զամենեսեան՝ որ հանդիսացեալ յայտ մարտի, քաջութեամբ պատկեցաւ ի կամին հրաժարիլ ի տանէ՝ կին նոր Անդրոմախայ կացեալ առաջի նորա՝ զմանկահասակ տղայն ի գիրկս յորդորէ խնայել զինքն և յորդին իւր, և մի՛ տալ զանձն մահու: Այլ Հեկտոր անխտիր սրտիւ մխիթարեալ զքաղցր ամուսնին իւր, քաջալերէ զնա զիմէ ի պատերազմ, և նահատակի: Հետագայ բանաստեղծութիւնն թարգմանեալ ի Համերոսէ՝ Հայնեըզակին Յունաց՝ նկարագրէ զսեաւարան անջատմանց նորա ի մխիանց և դիւցազնութիւնս յայտ պահու:

Ի ցանկալին հայր հսկայն իւր Հեկտորա.
Եւ ի չերմ սիրտ իւր սեղմելով զամուսինն քաղցր.
Որ գահ, զկոկիծ զգալով՝ յանձն իւր առչորի.
«Քաղցր իմ Հեկտոր արտասուելով նա բարբառի:

«Ընդդէմ մահու երթաս և սրբ թողուլ կամիս
Զողորմելի զայս քոյ զաւակ և զիս այրիս.
Կարէ՞ ապրիլ ո՛հ որ զանձն իւր մատնէ ի մահ.
Հսկայութիւն քաջութիւնն ո՛չ փրկեն զնա:

Զօրք թշնամեաց անդ անհամար, չի՛ք յոյս կենաց.
Եթէ փրկել ձեզ չէ մարթ զնա Աստուածք բարձանց.
Տո՛ւք ինձ այժմէն գաչս իմ փակել ի յաւիտեան.
Դառն է ինձ կեանքս և ոգրալի մինչ ցվախճան:

Վիշտ և սուգ միայն կարճեսցեն զօր իմ ոգրալի.
Հի՞մ այլ ևս ինձ անմխիթար կեալ յաշխարհի:
Ծնօղք սիրելիք զիճին երկրի եղեալ ի զոհ.
Ցաւեա զարձեալ ի Յաքիլէ քաղաք մեր ճոխ.

Ամուսնիքս նախնեաց մերոց: Եւ Աքիլլէս
Մահաթոյն իւր ձեռամբ զրկեալ զիս ի հօրէս
Լացեալ ինքն զախտաղէմ նորա ատեան,
Ցորոյ վերայ կախին վահանն արքայական.

Շողիւն զեղարդն և սպատաւարան ընդ սուսերին.
Ուր ընդ հովանեաւ սրբազան ծառոյն ոսկերքն վիթին.
Զոր օրհատ յայտ տեղւոջ կանդնեաց ինքնին.
Եւ եղբարք իմ յանմեղութեան իւրեանց ներքին:

Կարեան ասաէն յարշալոյս թարմ կենաց իւրեանց,
Զհանաչապարսն ներկեալ արեամբ զմարզագետին.
Ուր խայտալով դուարճանային նոքա ընդ դառանց:

Դառն է մինչ մահն ի մանկութեան և սոսկալին.
Մայր իմ մնաց միայն ինձ աստ յոյս ապաւէն.
Զոր զերութիւն տարաչարչարիկ ձեռաց չինէն.
Ի Հայրենեան վերադարձեալ ի վախճանի.
Աղէտամաչ կնքեաց զիւր կեանս ոգրմելի:

Բայց չէմ այրի մինչ ամուսինն է կենդանի.
Եւ ընդ քեզ իմ կեանք քաղցր իմ Հեկտոր
Թո՛ղ զրաւեսցի.
Դու իմ ծնօղ եղբայր քնքուշ և բարեկամ,
Զքեզ տեսեալ զամենեսեան ես մոտանամ:
Այլ դու մահուամբ քով մեռուցես զնոսա նորոք.
Ո՛հ չիս խնայիս յոզորմելի այրւոյս բողոք:

Սոսկալի է ինձ օրս այս, քաղցր իմ Հեկտոր,
Կա՛ց դու աս խս: Թո՛ղ գօրականք քոյ քաջագօր
Մաքառեսցեն ընդ թշնամեաց, այլ դու կա՛ց մնա՛.
Ի պաշտպանել զքաղաք մեր աստ, զրնակիչս սորա:

Ցե՛ս, ո՞րպէս քաջն Մենելայոս հերոսն Ատրէի,
Այաքս, Իդմէն և Աքայեան հսկայք սրատակինդ,
Մղեն յանդուգն առ դրունս Տրոյեայ մեր սրբազան.
Չէս ամօթիեա՛ և լե՛ր պարսպաց մեր պահապան»:

Հ Ե Կ Տ Ո Ր

Զի՞նչ պատմեացեն զինէն փոխգիտ որդիք՝ 'ասէ
Հսկայն անպարտ և Իլիոնի դստերք համայն.
Մինչ թագեայց աստ: Ո՞չ պահապան ես ինքս եղէ
Ամուռոյ սուրբ՝ ծնողաց մերոց մինչ ցայս վայրկեան:

Ի մանկական աւուրց որ անաւ լնգդիմանալ.
Փայլակնաչող սուսերաց 'ւ'ի ճակատամարտս.
Ծարաւէ մխայն յաղթանակաց նա խնդախեալ.
Նմա խաղք են վտանգ մահու ամենայն արդ:

Մխիթ յանկա՛րծ խաւարեսցն ճառագայթ.
Գործոց իմոց... ո՛չ առ պարապօք, այլ յաստարկէդ.
Մրցանակի պարտի հեղուլ դիւր արիւն՝ դուարթ
Քո ամուսին որում սպասէ այժմ նոր հանդէս:

Եկեսցէ ո՛հ օրն դուշակեալն դառն յօրհասէ.
Օրն սոսկալի և 'ի մոխիր դարձցի Տրոյեայ...
Անկցի Իլիոնն սրբապան, յաւեր մնասցէ.
Յորտակեսցի աչխարհակալն Պրեամայն դահ:
Անկցին որդիք նորա... 'ւ փոխդոյ հղօր Տերութիւն.
Իբրև երազ անցցէ, լռեսցի չուք վտառց մեր:

Բայց ո՛չ փոխդոյ և ո՛չ ազգի մեր կործանումն.
Է այնքան ծանր սրտի իմում և խստամբեր;
Ո՛չ ողբալի մահ ծնողաց իմ թանկագին.
Եւ կամ եղբարցս 'ի ծաղկափթիթ կեանս
թարշամեալ.
Որքան վիճակ քոյ սխրալի իմ ամուսին.
Քոյ հառաչանք վիշտ դերութեան անակընկալ:

Ցաչխարհ օտար թշնամեաց իմոց, ուր սէգ յաղթողն.
Հին պարապաց Տրօյեան, անգութն այն կործանող,
Գոյ ազէտիւք մեծացուսցէ դիւր յաղթանակ.
Ի գարմանել զիւր ճանտ հոգւի չարաւաստակ:

Գնալ ոսկեղէն իւր բաժակաւ քեզ հրամայէ.
Աձել զքնար փրփրածորան Հալբեան յաղթերէ.
Եւ ժողովուրդն քինախնդիր զքոյդ տեսեալ
Թշուառութիւն: Հարցցէ ցքեզ չար խնդութեամբ.
Սա՞ Հեկտորի է ամուսինն, զոր տեսանեմք:

Հոգոց հանցես աղիողորմ՝ դառն արտասուօք.
Լուսացես զկուրծ քոյ... բայց Աստուածք նախ Թո՛զ
բացցեն
Ինձ զճանապարհ 'ի գերեզման: Եւ ի խոր քուն
Ցաւիտենից չկամիմ լսել՝ Թե սիրելիդ
Տանջիս: Մինչ քոյ Հեկտոր ընչէ, ցաւիլ չպարտիս:

Ասացեալ զայս՝ զմանուկն հսկայն կամի գրկել.
Եւ զսքարալի զաւակն սիրով քնքուշ՝ զգուել.
'Ի սոսկալի սաղաւարտէն սարսեալ մանուկն՝
Լայ և զաչս իւր վակէ ձեռամբք իւրովք վախուկ,
Հայլ յորդին քաղցրագութ հայրն ամօք ժպտեալ,
Զսաղաւարտն իւր սեաւ և մեծ ի բաց առեալ.
Զսիրելեան գրկախարեալ ջերմ եռանդեամբ,
Համբուրեալ զնա՝ բարձրացուցեալ գոչէ հայցմամբ:

Ամենիմաստ հայր Աստուածոց, ամենազօր.
Աստուած Յեւէս և դուք ի՛չխոզք երկնից անմահ.
Պահպանեցէ՛ք ընդ հովանեաւ ձերով զանզօր
Մանուկս այս. զի լինի սա Հերոս անահ.
Գերահռչակ ժառանգ ազգի Հեկտոր երկրորդ
Երջանկափայլ ժամանակաց պատուեալ փառօք.
Եւ պսակեալ իւր քաջութեամբ՝ սպառ թշնամեաց.

Անյաղթ մարտիկ զօրական քաջ ամուր ձեռօք.
Անուն սորա հանդիսացի յազգս յազգաց.
Զի պատմեացեն զնմանէ: Սա է որդին.
Սրժանի հօրն և մեծանուն ընտիր ժառանգ.
Անմահ գործովք և քաջութեամբք իւրով անգին.
Եւ խնդութիւն սրտի իւր մօր դառնավիճակ:

Աստգնալ զայս, զսրվին իւր քաղցր նմա յանձնէ.
Զոր առնալ մօրն ՚ի վերին իւր Քրիստ զնա սնդմէ:
Գղուէ ՚ի ծոց իւր զմանուկն խաղայ ընդ նմա.
Բայց արտասուք քնքուշ վայելն յաչս նորա.
Սառանէ սիրան. խառվի յաղմուկս երկնւզալից.
Այլ հսկայն նմա հառաչանօք ձայնէ մեղմիկ:

Անգրամա՛խայ, քաղցր ամուսին իմ արամալից
Ընդէ՞ր սդրաս... ՚ւ անժամանակ քաղես պսպիս.
Քաղցր է ինձ մահս, քան տեսանել զքեզ ՚ի սուգ.
Զի՞րդ կարէ Թշնամին ժանտ բառնալ զիմ կեանս,
Մինչ պահպանեն զիս Աստուածոյ հզօր բազուկք,
Զոր վճռակ ամ առ բազդապիրքն եղեն առհմանս:

Նախ թէ յեռոյ վերջացին զարք ժամանակաց.
Թէ անվհտեր գօրագեան և թէ երկնատ սք,
Նախատանօք և կամ վտանգ բուռն առպանաց.
Եղիցի կեր՝ թողուլ առիս գոհրելեաց ջոկ:


Բայց բա՛ւ է, ե՛րթ իմ նպատկի ՚ի տուն գրուելա՛
Զարմուկ սրտիկ աչխատանօք քնքուշ ձեռացդ.
Ահագնալուր հնչիւն Թմրկաց. չոգ տուսերաց
Զիս յատարէկ կոչէ մարտի սպառազինաց.
Որ կորովին է ամենից, պա՛րտի յաջող.
Շահատակել անդ՝ ուր հզօր գունդն և թշնամեաց:

Վերջին անգամ հայի Հերսան յիւր սնորալին.
Սրբէ զարտօսր նորա, զնէ զսպաւարան մեծ,
Հնազանդի կամաց նորա քնքուշ ամուսինն.
Երթայ ՚ի տուն թափել զարտօսր զատնահեծեծ:
Հայի և հեռուստ ՚ի սիրելին իւր բարեկամ.
Հայի... բայց ա՛խ ո՛չ տեսանէ զնա արդէն.
Ողոց հանելով վուխայ և լոյն իւր մենարան.
Ծածկեալ ախուր ՚ի մթագին ծառոց անդէն:
Անդ ՚ի կակիծս ցաւոց իւրոց խնդրէ ըզմահ.
Զգալով զհարուածս, զոռն իւրոյ ոդրայ զվախճան.
Զոր տեսանէ ընդ միտս իւր ընդդիմակալ.
Զարիւնաներկ մարմին նորա ցցեալ ի նիզակ
Յունաց՝ անդ՝ զոր բերէին մունջ դէպ ՚ի քաղաքն.
Եւ յաւետեան զլոյս իւր վակեաց նմա արեգակն:

———

ՅԻՐԳԻԹԱՔԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՉԱՎԱԼՔ ՊԱՐԱՊ ՄԱՐԴՈՒ ՏԱՇՈՒ ՄԻՏՔ



Ավ չուզենա, իր պա՛րկի
Թերանը փակի, բոց պառկի:

ԵՍ ԳՐՔԻ ՀԱՆՄԻՆ ԽՄԱՑԸ

Գնա՛, իմ խելոք ղևրք՝ գնա՛ մարզամեջ.
Գլուխդ քաշ քցի՛ր, մի՛ նեղանար հեչ:
Ականջդ վակի՛ր, սիրտդ լնի բանի՛ր,
Ինչ ասեն, խոսեն, տա՛ր ու համբերի՛ր:
Ճամփորդի պլխին չատ փորձանք կգա:
Անձրև, ձիւն, կարկուտ՝ հաղիր համիչա:
Դուման ու կայծակ, չոք, բուք ու կրակ
Ամեն տեղ կըլին, ամեն ժամանակ:
Եսպես բանիցը ավ չուտ վախենա,
Ու ճամփի կխոցեն վեր կենա, յեղ գա,
Վոչինչ չի չահվիլ, գարդակ կմնա:
Փորձանքից՝ մարդը՝ լավ չի՝ նեղանա:
Ի՞նչ ես գարել անում, վոր վրեդ խոսին,
Յա քեզ ծագը անեն, յա աչքից քցեն:
Ամենի սրտին գուբ գալ չի ըլել·
Ամենի խաթրը ո՞վ կարա տանիլ:
Աչխարքի բերանն ջմալի բերան:
Առակ ե ասած՝ ո՞ւմ ասես քո բանն:
Հալբաթ մեկ որ էլ արև գուս կգա,
Են վախտն կիմանաես, թե ուզածդ ի՞նչ ա:
Գնա՛, ասեված քեզ բարի ճամփա տա,
Ոչխ տուն էլ մտնիս, բարով տո՛ւր, գնա՛:
Մտքումդ պահի՛ր են վաղի առակին,
Վոր չանես քեզ էլ, ինձ էլ խայտառակ:
Վոր մեկ ծերի մարդ իր ջահել վարդու հետ

Դուռ խիստ, պետ, աշխարհ տեսնել, մեր
ունի իր տուրը։ Ինքն իրեն նստած։
Ընկերական նա ձեռք տալիս մարդու
Ճամփորդին ձեռքի տակ, սատ։
Ինչպես հեռու մի ափ, որտեղ մեր ծնողք
Ապրում էին, ինչպես ամեն ինչ, որ
Ընկած է մեր հոգու խորքում։
Ամեն ինչ, որ մեզ հետ կապված է
Ամենից ուժեղ կապերով։
«Ի՞նչ է նշանակում ապրել»,
Հարցրեց ինքն իրեն Ռոբինզոնը,
Ինչպես ամեն անգամ, երբ մտքերը
Տանում էին նրան հեռու կղզուց։
«Ապրել նշանակում է ունենալ
Ընկերներ, որոնց հետ կարելի է
Խոսել ամեն ինչի մասին, ինչ
Հետաքրքրում է մարդկանց։
Ապրել նշանակում է ունենալ
Հայրենիք, որի համար
Պատրաստ ես զոհվել, եթե
Հարկ լինի։ Ապրել նշանակում է
Ունենալ ընտանիք, որի համար
Ամեն ինչի պատրաստ ես գնալ։
Ապրել նշանակում է ունենալ
Ընկերներ, որոնց հետ
Կարելի է կիսել ամեն ինչ,
Ինչ ունես, ինչ գիտես, ինչ
Կարող ես անել։
Ապրել նշանակում է ունենալ
Ընկերներ, որոնց հետ
Կարելի է կիսել ամեն ինչ,
Ինչ ունես, ինչ գիտես, ինչ
Կարող ես անել։
Ապրել նշանակում է ունենալ
Ընկերներ, որոնց հետ
Կարելի է կիսել ամեն ինչ,
Ինչ ունես, ինչ գիտես, ինչ
Կարող ես անել։

Ապրել նշանակում է ունենալ
Ընկերներ, որոնց հետ
Կարելի է կիսել ամեն ինչ,
Ինչ ունես, ինչ գիտես, ինչ
Կարող ես անել։
Ապրել նշանակում է ունենալ
Ընկերներ, որոնց հետ
Կարելի է կիսել ամեն ինչ,
Ինչ ունես, ինչ գիտես, ինչ
Կարող ես անել։
Ապրել նշանակում է ունենալ
Ընկերներ, որոնց հետ
Կարելի է կիսել ամեն ինչ,
Ինչ ունես, ինչ գիտես, ինչ
Կարող ես անել։

ԱՍՍԱՑՎԱԾՔ ԲԱՆԱՀԱՑՑՔ ԻՆՔՆԱՀԱՐՄԱՐ ՀՈՐԻՆՎԱԾ

Լ Ո Ռ Ը Յ Ի Ց

1

Ցերկու լռությի՝ հալալ ախպոր նման՝
Թուր ու թվանք կապած սար ու ձոր ընկան,
Վար իրանց համար Փոքս անէն, բերեն,
Իրանց ոլորշտան ենգով կերակրեն։
Հենց մտան մեչեն, մեկ ծառի վրա
Տեսան, վոր մեկ չաղ չալ ապամեի կա։
Ընկերի մեկը մյուսին ասեց։
«Տյեպո կա՛ց, ք'յընամ, ապանիցն յալ պյերեմ,
Հլե հես սէրթերին, յես քյըմյատալ յիմ,
Ասյա՝ մե'ր ապյա՝ մեր պյախտը պյաներ,
Շուտով յես քյըքյամ, հես թըվավորյեն
Լյալ հյաչքը պյաներ, մնյա հես ծյառեն։
Մեկ քյեսրյալը յաներ, հյուսներ լյալ պյալպյաթ։
Մըհլիկ քյընամ յիմ, ապու քյեսես լյալ վյատ»։
Նա ուչացալ, մյուսն ել չհամբերեց,
Տրեխը հանեց, մաքսիմը գրեց։
Վար ծառն վեր ըլի ու ձեռալ բռնի։
Ամառ փոքսկանը գես կիսաճամփի,
Ապամին իմաալ, ընաց իր քեֆին։
Լռությու աչքը լաց մնաց, հոգին
Ել չի համբերեց, ասեց բարկացած։
«Տյո չաբամիչ պյուչ, ապու յոր քու հյունյարն
Պյանյայնիլ քյեսես, յի՞ս յեմ հլե նաչյարն։
Չոր ապու հետ պատյիկ առպյովն կլթռչես,
Ձեռս հո՞վ պյաներ, հոր գրես իմախչիս»։—
Ասեց ու պրը՛կ, ծառի ծերիցը

Դուս եկավ, գնաց, աչխաքք տեսնի, յեղ
Ել իր տունը գա: Ինքն իչի նստեց.
Անդանդալով՝ նա վորպին առաջ ջցեց:
Ճամփորթի մեկը ես տեսավ, ասեց:
Ի՞նչպես հեր ա նա, վոր վորդուն թողել
Վատով, լիար ու կես՝ ինքն իչին բազմել:
Աստածը ծերը լսեց, վեր եկավ,
Վորդուն նստացրեց, ինքն առաջ ընկավ:
Մեկն ել են կոզմիցն՝ իր գուանեն վչեց:
«Ցերկուսդ ել նստիք, ի՞նչ բան ա եղ մեծ»:
Սրան ել լսեց լողլոզ հալևորն.
Վտոնեքն ճալոլակ են մեծ միրքավորն:
Հեր ու վորդի վոր իչի վրա բազմած՝
Ճաման քաղաքն, ել մարդ չի մնաց,
Վոր մատով նրանց ցույց չի տա՝ հանկարծ:
Բեզ, միրուք՝ բոլորն լավ սպասելով,
Ծախ ավին քամակիցն, վրեն ծիծաղելով:

Ուղեի վոր ճարը կարվեց, վեր եկավ,
Իչի վոտները կապեց. մեկ վեր լավ
Միջովն անց կացրեց, մեկ տուան իր ուսին
Մեկը իր վորդու՝ դրեց քամակին:

Ֆար ու ձոր բերան, ու աչք բաց արին:
Ճարն վոր կարվեց, ի՞նչ պետք ե անել,
Միրաը չտարավ աչխարքի բաներ:
Հազար ուչունց ու անեծք կարկատավ,
Ելը վեր առավ, քցեց ջուրն՝ լալով:
Գետի ղրաղին կանդնած՝ ուռք արեց՝
«Ավա դառնա հոդիդ՝ ա՛յ իմ եչ»՝ ասեց:
«Ի՞նչ կըլեր, տանից չեկինք դուս յեկել,
Ս.ո՛չ ուրչի լսել, վո՛չ մեր տունն քանդել:
Ինձ տեսնողը՝ թո՛ղ՝ իր գլուխը լա,
Ուրըչի ղնչին հեչ մտիկ չտա»:—
Ամենի խոսքին ականջ դնողը
Գլուխը կկորցնի, յա ելած ղուղը:
Ոչ լայդ չանի, քեզ վերցնի, կարծա,
ուրբլի, վոր խեր բերեն, և պետք է սրանց տեղիցը չարժող չըլի: Բաղի անխելք, անասուած մարդ ենպես ա կարծում, թե ինքը վոզ գաղի հայվանն ինչ հալի կըլի, Թոզ ըլի: Ենպես մարդը իր հայվանի խերը հնչ չի տեսնիլ:

Ես վոր պրծան, բակումն անց եյին կենում, երեխեքը հավ ու ճիվ, վոր տեսան, ուրախացան: Դիվանբեգին ես վոր տեսավ, ասեց: «Կարծեմ, երեխեքը շատ ուրախանան, թե իմ դչերի հացը իրենց ձեռովը տան»: «Հա, հա, ապա չան, ասեց Ցեղխաբեթը, Թոզ, յես տամ»:

«Ինճ եվ հրաման կտա՞ս», հարցրեց Վարդան:

«Շատ բարի, ասեց դիվանբեգին: Ես ուրախությունն ես որ ձերն ա»: Գնաց դոմը, մեկ մեծ խախալ լիքը գարի դուս բերեց ու երեխեքանց առաջին վեր դրեց: Զանգակը, վոր չքաչեց, աչք պետք է ըլեր, վոր թամաշ աներ: Ինչ զալմազալ ընկավ բակը, ո՞վ կարա պատմիլ: Ամեն ղրաղից, պուճախից, Թռչունք դասթա-դասթա դուս թափեցին: Ես կողմիցը մեկ սիրուն աքլոր ուռած-ուռած դուս եկավ ու բոլոր հավերին իմաց արեց, թե հացը քցել են: Են կողմիցը մեկ դաստա որդակ դուս եկավ ընդնգալով ու իր ձենովը հենց դիտես, դանդատ ըլեր անում, վոր չուռավ չեր կարում տեղ հասնիլ: Դեռ կուտ ուտելու տեղը չհասած, մեկ Թարուն ագռավնի տանիցը դուս Թռած եկան, ու ենտեղ կիսվեցին: Ծառերն եվ ես կողմից, են կողմից դալիս եյին, վոր իրենց փայն ձեռ քցեն: Վարդան բարկացավ, ուզում եր քշի:

Դիվանբեգի.— Ընչի՞ յես դեն անում, աչքի լույս:

Վարդան.— Վոր հավերի, բադերի ու ագռավնքանց կուտը չուտեն:

Դիվանբեգի.— Իմ դչերը սոված չեն մնալ, Թե վոր մեկ քանի հատ ես խեղճ կենդանիքն ուտեն: Սրանից զատրու ներանց փայն եվ եմ մեջը քցել, ամեն կուտ ուտելիս մեկ յերկու բուռն եվ ավելի յեմ քցում, վոր ինչ ա, սրանք եվ ապրուստ ճարեն:

Վարդան.— Բեզ ի՞նչ պետքը կդան ծառերը:

Դիվանբեգի.— Ինչպես չի. ներանք ինճ պետքն են գալիս: Բոլոր գրունքը ծառերս Թրթռուկիցը խատակում են: Ասենք պետքն եվ չդան, ի՞նչպես կարան ապրիլ, Թե ուտելիք չունենան: Հենց պետք է ներանց կուտ տամ, վոր ինճ պետք են գալի՞ս:

Ցեղխաբեթ Վարդանին ղրաղ քաշեց ու անկաջումը քչփչաց. «Դու՝ Թե վոր պարոն դիվանբեգին մենակ ներանց կուտ տա, վոր իրան պետքն են գալիս, ուրեմն պետքն եր, վոր մեզ հաց չտար, չունքի մենք ներան պետքը չենք գալիս: Եգ ա խելքդ:

«Իսաւոր մարդ չե՞ս, վոր եսքան կենդանիքը ուրախացնում ես», ասեց Տիգրան:

«Իրավ վոր շատ ուրախանում եմ, վոր եսպես քիչ բանով եսքան հայվանի կշտացնում եմ: Սիրտս չի վերցնում, վոր մեկ մարդ հայվանին, վորքան փոքր եվ վոր ըլի, սոված պապնի: Ես պատճառով, չեմ եվ Թողում, վոր վորդիս դուշ պահի զաֆաղով: Տես, ի՞նչպես դաղարկի՝ փանջարիցը կախ ա մնացել: Ենպես կախ տված Թողել եմ, վոր նա իմանա ու իմ տունը դուշ չբերի: Անասուածություն է հայվանին բանդ քցել, ու իր ազատությունը խլել: Ի՞նչ են արել ես վոզորմելի Թռչունքը, վոր բոլոր իրանց կյանքը բանված մնան, են հո անօրինություն ա, վոր մարդ նրանց խեղճ չգա ու սոված Թողի:

Անցյալ չարաթը Ստեփանս մեկ դուշ բերեց ու խնդրեց, վոր Թոզամ զաֆաղում պահի: Ցես եվ Թողի: Զորս որ պահեց, Թե չե, անխելքը մոռացել եր, վոր ջուր տա ու վոզորմելի հայվանը հոգին տվեց տանջվելով: Են որից սկսած զաֆաղը մնացել ա ենպես դարդակ:

Եսպես՝ դիվանբեգին իր բոլոր հայվանները, վոր ցույց տվեց պըրծավ, գնացին տուն: Եստեղ եվ սուփրեն քցել, հացը հավիր եյին արել: Բիչ եյին կերակրները, ամա համով չինած: Սեղանի վրա մեկ գրաֆիր, մեկ տանտիկին ու դիվանբեգու տղեն եվ եյին նստած:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Հացիցը յեղը դիվանբեգին իր տղին հրամայեց, վոր իր փոքր ղոնաղներին տանի բաղը, հաուղի մոտ ու ձկներին հաց քցի: Սրանք եվ ուրախ-ուրախ հետը գնացին:

Պարոն Տիգրանը մնաց դիվանբեգու մոտ:

«Բախտավոր չե՞ս, ասեց նրան, վոր եսպես ազատ տեղը կենում, ես քաղցր հովը վայելում, ցանում, անկում, չինում ես, ինչպես սիրտդ ուզում ա, եսքան կենդանիքը քեզ են մոտիկ անում ու քեզանից եսպես գոհ են, վոր իրանց պահում ես:

Դիվանբեգի.— Եզպես չուտով մի դաղիր, աչքի լույս, ասեց, դու մենակ իմ ուրախությունն ես տեսնում, ամա...

Տիգրան.— Ամա քո չարչարանքը չեմ տեսնում: Ղորդ ա, ամեն մարդ նեղություն ունի, աշխարքն եսպես ա:

Դիվանբեգի.— Ամա իմ նեղությունը ինճ հալում, մաշում ա:

Տիգրան.— Կարելի յե մեկ ճար անիլ:

Դիվանբեգի.— Կարելի ա, չի եվ կարելի: Ջիանքս, կովերս, ղչերս, բոլոր քեզ դուր եկան, եզպես չի՞:

Տիգրան.— Շատ, չափիցը դուս:

Դիվանբեգի.— Բայց վորդի՞ս:

Տիգրան.— Վորդի՞դ:

Դիվանբեգի.— Հա, վորդիս, իմ Ստեփանը, վոր հետքներս հացի եր նստած:

Տիգրան.— Նրան լավ չտեսա, ի՞նչ ասեմ:

Դիվանբեգի.— Կըլի, վոր չես ուզում իմ սիրտս ցավացնես: Ա՛խ, իմ վորդին, իմ Ստեփանը, առաջ ինչպես լավ եր, խոնարհ, համեստաւոր,

լսող, աբլ, ժլբ, խոտակ, կարդին ու հիմիկ... ախ, լեզուս չորանում ա, խելքս թռչում, ի՞նչ ասեմ, գառնալ ա մեկ թամբալ, պիժ, անկարգ յեղեխա: Մտքից, քնից, անկարգությունից ավելի, ել մխաքը բան չի պակիս:

Տիգրան.— Պատճառն ի՞նչ ա, վոր առաջ լավ եր ու հիմիկ եղպես բիբագի փոխվել ա:

Դիվանբեգի.— Պատճառը՞: Ա՛խ, լեզուս բանո՞ւմ ա, վոր ասեմ (ու խոսքումը ընկավ պարոն Տիգրանի ճառին ու լալով ասեց), Սաենփանս իր մեջը կորցրել ա:

Տիգրան.— Իրավ, ես մեծ ստրատեգություն, մեծ կոկիծ ա ձեզ համար: Յես լսել եմ, վոր շատ պառավական ջան ա ելել:

Դիվանբեգի.— Ա՛խ, պառավական ջան, պառավական մեր, նրա հասը ո՞ւր կըլի: Նրան վոր ունենչի, ինձ համար պինչ իմ բանս եչի անում, հանգիչ գնում, դրեթա դրում, իմ ապրանքի, տան հետ եչի: Սաենփանս նրա աչքի տակին եր ըլում: Տանը, վոր չենչի ըլում, չի թե մենակ նրան եր մտիկ անում, թամուզացնում, կարգի յեր պահում, ձեռը բան եր տալա, պլոխն խրատ գնում, վոր ինձ ու ամեն մարդի սիրեկան ըլի ու ուրախացնի:— Տուն գալիս, ուրախ, ուրախ առաչս եր վազում, գդակս ու վեգս ձեռիցս առնում, պրագ գնում, տանում մոր մոտ (ես վոր ասեց, աչքերն արտասուքը կոխեցին, ել չկարաց լեզուն շարժել, մնաց լուռ կանգնած, ախ քաշեց ու արտասուքը սրբեց) ա՛խ, բերանը բաց արեչ, գնչոտանդչ, մոր մոտ, տեսարակը բերում, ու գրածը չհանց տալիս ու առում, սիրելի հայր, տես յես եմ գրել, լա՞վ չի, հավանո՞ւմ ես, թե չի:

Հիմիկ, վոր տանիցը դուս եմ գալիս, իմ բանին գնում, մնում ա ինքնագլխու, անտեր, իր քեֆին վազվզում ու անկարգ, փիս ապերքանց հետ շրթերը պատառում, կսիլ ա տալիս: Տուն վոր գալիս եմ, ել աչքիս չի երևում, դլուխն առնում կորչում ա:

Տիգրան.— Ախաս, շատ ցավում եմ. մեծ դարդ ե, ատամած ինքը հար անի: Ես բանումը յես շատ բախտավոր եմ, փառք Աստուծ: Իմ երեխաքանց ապիղ մեջը գես կա: Մեկ պառավական, հալալ կամենաիր մարդ ել դառել եմ, վոր նրանց ուսումն ու կրթություն տա:

Սրանք գես բանից խաբարություն չունին, ու եքուց շատ կուրախանան, յերբ նրան ինձ մոտ տեսնին:

Դիվանբեգի.— Ա՛խ, յերանի՛ քեզ, բարեկամ, վոր ես բախտի տերն ես:

Տիգրան.— Թե կուզես, քեզ հետ վայ կանեմ:

Դիվանբեգի.— Ի՞նչպես:

Տիգրան.— Թե Սաենփանիդ ինձ կհանձնես, իմ կնիկը նրան մեր կլսանա, յես նրան հեր, ու իմ վարժապետը նրան ել իմ երեխեքանց հետ ուսումն կտա:

Դիվանբեգի.— Ա՛խ, ես բանը, վոր անես, ել ի՞նչ կուզեմ աչխարքի յերեսին:

Տիգրան.— Ախի՛ր... հավատացնում եմ քեզ, վոր յես հենց սրա համար եմ եկել, վոր քեզ ոաչդարեմ, չունքի լսեցի, վոր ազիդ համար շատ ես նեղանում:

Դիվանբեգի.— Թե վոր ձեզ չարչարի վո՛չ:

Տիգրան.— Ի՞նչ չարչարանք, եղ ի՞նչ խոսք ա: Բաս չարչարանք չի՞ր, վոր իմ տունս ազատեցիր:

Դիվանբեգի.— Եղ մեկ սհաթ քաշեց:

Տիգրան.— Ամա հազար որ պետք ա չարչարվեր, հազար ցավ, կսկիծ տար, նոր տուն պետք ե չինեչի, նոր սկսեչի հացի տեր դառնալ:

Դիվանբեգի.— Բայց վորդիս շատ տարի պետք ե ձեր տունը մնա:

Տիգրան.— Ես փոքր նեղություններն ի՞նչ պետք ե ըլի են նեղության ատաչին, վոր ինձ պրծացրիր: Կարճ, թե ինձ հավատում ես, վորդիդ ինձ տուր, իմ վորդիքանց պես նրան կպահեմ, ու կտեսնես թե ի՞նչ ազա կդառնա:

Դիվանբեգին շատ խոսալուց ու միտք անելուցը յերեը, խոսք ավեց, վոր վորդին նրան տա:

Ես բանումը Սաենփանն ել տուն եկավ: Վարդանն ու Յեղիսաբեթը ուրախ-ուրախ պատմեցին, թե ինչպե՛ս ձիներին հաց եչին քցել ու իրանք ել մտիկ արել, ուրախացել:

«Ամաչ չե՛ս հացը քցեցի, ասեց Յեղիսաբեթ»: Ես վոր տեսան, հացը չյուր ձուկը թռան ջրի յերեսը», ասեց Վարդան, «ու հացը փախցնում եչին», ասեց Յեղիսաբեթ: «Ինձ եր մեզ համար, քեֆ», ասացին յերկուսն ել:

Սաենփան գնաց փանչարի մոտ ու վոչինչ չասեց:

«Պատասխան տուր, ի՞նչ ես լեզուդ փակել, Սաենփան ջան, աչքի լույս, մեր չունես, վոր քեզ պահի, սրանք ունին: Սրանց մերն ուզում ա քեզ մեր դառնա, ու քեզ ինչպես քո լուսահոգի ազիզ մերը: Կուզես, հետըները գնաս, ասա՛»:

Սաենփան ունքերը կիտեց, գլուխը պտտեց:

«Չեմ զարմանում, Սաենփան ջան, վոր դու քո ազիզ հորիցը չես ուզում հեռանաս, ասեց պարոն Տիգրանը, բայց մեր տեղը հեռու չի, մի վախենար: Իրեք սհաթվա ճամփա յե: Բացի անզամ իրար մոտ նստած վախտներս մեկ ել են կտեսնես, վոր ձիու վրա ձեն ա դալիս, թի՛ք, թի՛ք, թի՛ք... կվազես փանչարի մոտը ու կտեսնես, ի՞նչ: Հերս գալիս ա, ձեն կտաս, կվազես առաչը, ճտովը կբնկնես, փա՛ռ, ուրախություն ես ա... մեկ լավ միտք արա՛, թե ճչմարիտ չեմ ասում: Բացի վախտ ել մենք հետըներս կվերցնենք, գե՛, գնանք... ո՞ւր, քո հոր մոտ, ետեզ ելի ուրախություն, ելի քեֆ: Ձե՛ս ուզիլ եսպես անե՞ս»:

Սաենփանը նոմիերը կիտած, ելի գլուխը պտտեց:

«Գիտե՛ս ինչ կա, Սաենփան ջան, ասեց Տիգրան, չունքի յե՛ս ուզում եմ մեզ մոտ կենաս, վնաս չունե, գնանք մեկ քանի որ կաց, թե սիրտ

վեր չի գալ, եկի ձին հազիր, կնստիս, կգաս, քո ձեռն ո՞վ ա բռնում: Ի՞նչ եկ չես անիլ»:

Սահեան եկի դլուխը թափ ավեց սևացած ամպի պես:

«Սրիկ, սրիկ, գնանք, քեզ հո չեն սպանում, ասեց Վարդան, հերդ վոր ուզում ա, դու ինչ խոսք ունիս, հորն ընդդիմություն կանեն, յա խոսքը կկատարի՞ն: Իմ հերն եկ նույնս սիրում ա քեզ, մենք եկ նմանապես, եկ ի՞նչ կուզես: Մեր մերն եկ, վոր տեսնիս, եկ կչտիցը չես ուզիլ հեռանալ: Գնա՛նք»: Ես վոր ասեց, ձեռիցը բռնեց, վոր հեռը տանի, բայց ա՛խ: Սահեան վատը պատին դեմ արեց, ձեռը դուս քաշեց, կպավ վանջարիցն ու գոռաց. «դվորն եկել եք, դենը գնացեք, ինձանից ի՞նչ եք ուզում, չեմ գալիս, չեմ գալիս, զոռի բան չի հա»: Բայց չունքի Վարդան ձեռը բաց չթողեց, վրա թռավ, նրա ձեռն եկ մեկ լավ կծեց, չանգռեց ու արենլվա արեց:

Խեղճ Վարդանը, ճարը վոր կարեց, ձեռը բաց թողեց ու տխուր, տրտում հոր յերեսին նայեց:

Խեղճ դվիանբեգին չատ ամաչեց, վոր վորդին ենպես անկարգ, վատ եր, ու պարոն Տիգրանին ասեց. «Թողեք ես վիս երեխին ինձ մոտ մնա, ու ասեված ձեզ հետ, սրան լավություն անիլն ափսոս ե»:

Պարոն Տիգրանը մի քիչ եկ զրից ավեց ծածուկ, ու երեխեքը վեր առավ, բարով մնա ասեց ու բաղը գնաց:

Աչքը բարին տեսնի, մեկ սիրուն, յերկու ձիով լծած կառեթ, ենտել հազիր կանգնած եր: Ինչի՞ համար ե, հարցրեց: Ինչ եսքան նեղություն տվինք, հերիք չեր:

Դիվանբեգի.— Եղ բերիլ եմ տվել, սիրելի բարեկամ, վոր երեխեքանցովդ նստիս տուն գնաս:

Տիգրան.— Կառեթով ի՞նչ հարկավոր ե, վոտով կերթանք:

Դիվանբեգի.— Ընչի՞ վոտով:

Տիգրան.— Վոր մեր ջանը պայմաններնք: Վարդան, վոտո՞վ կերթաս, թե կառեթով:

Վարդան.— Ցես իմ հորս խոսք եմ տվել, պարոն աղա, վոր իմ ջանը պայմանեմ, վոր ժամանակավ յես եկ ենպես պիտանի մարդ դառնամ, ինչպես դուք: Պետք ե խոսքիս հաստատ մնամ:

Տիգրան.— Դո՞ւ ինչպես ես, Յեղիսաբեթ:

Յեղիսաբեթի սիրտը, յերևում եր, վոր ուզում ա կառեթով գնա: Գլուխը մեկ դհի վրա քաչ քցեց, ժպտաց, միտք արեց ու ասեց, ինչ վոր Վարդանը կարա, յես եկ կարամ:

Տիգրան.— Դու ինքդ լսում ես, աչքի լույս, եկ ի՞նչ ասեմ: Առաջ երեխեքանցս որինակ տվիր, վոր իրանց ջանը պայմանանեն, հիմիկ ուզում ես, վոր եկի նրանց սիրտը խառնես:

Դիվանբեգի.— Սատված վոչ անի, գնացեք, աստված ձեզ հետ: Ես որբոմը կդամ ձեր տեսությունը:

Եսպես իրարից բաժանվեցին, ու պարոն Տիգրանը երեխեքանց հետ ընկավ վոտով ճամփա ու գնաց տուն: Հավեն եկ ենպես սարդ չեր, քամին նստել եր, ձինը յեդ քաշվել, մենակ ճամբեն եր մի քիչ ցեխոտ, ու ես մի քիչ նեղացնում եր նրանց:

Ժամանակը կարճացնելու համար, պատմեց նրանց հերը ճամփին, ինչ վոր դիվանբեգու մոտ տեսել, լսել եյին, ինչպես աշխատավոր մարդ եր, ինչպես տունը ամեն կարգով, սարքով լիքն եր, ինչպես ամենին քոմակ եր անում:

Դիվանբեգին վոր ենպես լավ մարդ ա, ասեց Վարդան, բան նրա տղեն ընչի՞ համար ա ենպես վատ:

Տիգրան.— Դեռ չի սովորել, վոր լավ ըլի:

Վարդան.— Ախր պատճառն ինչ ա, վոր չի սովորել:

Տիգրան.— Ջունքի սովորցնող չունի, նրա մերը մեռել ա, հերը շատ զործ ունի, չի կարում նրան մարիկ տա, վարժապետ չունի տանը, ինչ պետք ե տրած: Ախր, իմ սիրելի վորդիք երեխեն, վոր բարի ծնողաց ու վարժապետի ձեռի տակի չմեծանա, աստված հեռու տանի, ինչ վոր բան ասես, կսովորի, ծուլ կըլի, մուտատ, վիս, իրան ատածի, քաոանկալ:

Ցես եկ չատ բան ունիմ, ու չեմ կարող ամեն սհաթի ձեզ վրա աչք ունենալ, ինչպես վոր կուզեմ: Ախ՝ ի՞նչ լավ բան ա, վոր աստված մեզ՝ ինձ եկ, ձեզ եկ խեղճ ա եկել ու ենպես բաղցր, բարի, սրտացավ մեր ունիք:

«Ու եղպես աստվածատեր, արդար հեր...»

Մեկ ձեն թփի յետևիցը ձեն տվեց, վոր ճամբի վրա յեր: Իսկույն ձեն տվողն եկ լիս ընկավ, ու ընկավ հոր ու վորդոց վզովը: Ես են բարի մերն եր, վոր ասեցինք, վոր առաջներն եր եկել:

Ինչ նրանց սիրտն եր, աստված ամեն մարդի տա: Մերը տան անց կացած բաները պատմեց, յերեխեքը դիվանբեգու մոտ տեսած, լսածը, ինչ վայելել եյին, ինչ սիրուն բան առաջներն եր եկել: Եսպես խոսալով եկան, տուն հասան, ուր վոր հացը հազիր եր: Ճամփեն իշտահները բաց եր արել, հացը վոր կերան, պարկեցին:

ԳԼՈՒԽ ՅՈԹՆԵՐՈՐԴ

Մյուս որն եկ չատ խոսեցին են բարի դիվանբեգուցն ու նրա վատ վորդուցը: «Սահեանին ուզում եյի հետս բերեմ, ասեց Տիգրան, նրան ուսումն տամ, կրթեմ, ու եստով նրա հոր լավության տակիցը դուս դամ, բայց նա, չեր իմանում, թե իրան ոգուտն եմ ասում: Դուք, սիրելի վորդիք, հիմիկ լավ կիմանաք, թե բարի սնունդը ինչ լավ բան ա, ափսոս, վոր զործս չի Թողում ամեն որ ձեզ նայեմ»:

«Մեր մերը հո մեր կշտին ա, ի՞նչ ես զարդ անում», պատասխանեց Յեղիսաբեթ:

«Միչո չե: Շատ վախտ ենպես պատահում ա, վոր վոչ յես եմ ձեզ մոտ ըլում, վոչ ձեր մերը: Ես չատ մեծ ցավ ա մեզ համար: Շատ հեչ

քան ա՝ ենպես վատ բնություն ասանալ, ինչպես Սաենփանը: Կո՞ւզեք, ենպես ըլնք»:

«Ա՛խ, չե՛, չե՛, ասամած մոչ անի, յերկուսն էլ ձեն ավին, մենք կուզենք մոր բարի զավակ ու ձեր սրատմն ըլնենք»:

«Ձես էլ եզ եմ ուզում հենց, ես պատճառով մեկ բարեկամի խնդրել եմ, մոր գա, մեր տանը կենա, ձեզ մրա աչք ունենա, ուսումն տա, մոր իմ բարի զավակ ըլնք, ասածս հասնելի, մարդի դուրեկան»:

«Մեկ բարեկամ մոր մեզ գա տա, մեզ մրա ա՞չք ունենա, հարցրեց վարպան: Ի՞նչ մարդ ա, ա՞լ ա»:

«Ձես էլ նրան կճանաչե՞մ», հարցրեց Յեղիսաբեթ:

Ես խոսքամբ գուսը բաց ելավ, ու մեկ ջահել մարդ նեքան մոտավ: «Ես ա, են բարեկամը, մոր ձեզ իրան պետք է ասմ, ասեց պարոն Տիգրան, ճանաչո՞ւմ եք»:

«Ա՛խ, ես մեր ապիզ պարան Կարապետն ա, ասեցին երեխեքը, մոր քո վոզը գասավ ու բերեց»:

Տիգրան.— Բանըս ես էլ լավ պատճառ չենք ունենալ, մոր ձեր շնորհակալությանը նրան ցույց տաք: Ամեն որ նրա մտա կըլնք, ամեն որ կարող եք՝ ձեր հնազանդությամբը, ձեր նրա կամքը կատարելովը ձեր շնորհակալությանը նշանց տալ:

Վարդան.— Ա՛խքես վրա, սիրելի հայր: Ես կամքիցը չեմ դուս գալ՝ սիրելի պարոն Կարապետ:

Յեղիսաբեթ.— Ձես էլ նմանապես:

Տիգրան.— Են վռակիքը, մոր տա գասավ ու բերեց, զորդ ա, մեզ պետքն ա: Սմա տա մոր ձեզ անունդ ու ուսումն տա, են իմ աչքին ամեն բանից ավելի ա:

«Տեսնում եք, սիրելի երեխեք, ասեց պարոն Կարապետը, մոր ձեր պատվելի հոգը, ինձանից շատ լավ կարծիք ունի: Բայց դուք էլ ճանաչեցեք, են ժամանակը կտեսնեք, ձեր բարեկա՞մն եմ, թե չե: Թե մոր տեսնեք, մոր յես ձեր լավն եմ կամենում, ու ձեզ սիրում եմ, հուբս ունիմ, թե դուք էլ ինձ սիրեք ու ասածս անեք: Գնանք վերի սրճախը, մոր ձեր հոգը ինձ ասվել, մոր իրար հետ ճանաչվինք, իրար սիրա իմանանք»:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

«Սպա Յեղիսաբեթ, ասեց պարոն Կարապետը, յերբ մոր սրճախը մըտան, գուս ու քո ախպերը վերն եկիք գնացել, արի, հմիկ քո ճամփեն պատմի՛ր»:

«Շատ բարի, պարոն Կարապետ», ասեց, ու մի ատ մի պատմեց, ինչ մոր ճամբեն պատահել եր, ու գիվանբեգուս մոտ տեսել, լսել եյին:

«Գեղն ընչի՞ համար գնացիք, են ատա», հարցրեց պարոն Կարապետը:

Յեղիսաբեթ.— Որ պարոն գիվանբեգուն շնորհակալության անենք մեր տունը պրծացնելու խաթեր:

Կարապետ.— Խիստ լավ: Ամեն մարդ պետք է են մարդիցը միշտ շնորհակալ ըլնի, մոր նրանից լավություն ա տեսել, լավությունը մոռացող մարդի կարգում չի: Ել ի՞նչ մարդ կճանաչեք գիվանբեգուցը սավահի, մոր ձեզ լավություն ըլի արել:

Յեղիսաբեթ.— Ձեզ, սիրելի պարոն Կարապետ:

Կարապետ.— Ի՞նձ: Քանի որ ա, մոր ինձ ճանաչում եք, ու ես փոքր ժամանակը յես ձեզ ի՞նչ լավություն կարեյի անել:

Վարդան.— Ախր գուք...

Կարապետ.— Ուզում ես ասել, թե յես ձեր հոր իրեք հարյուր վոսկին գաս, թերի, իրան տվի, եպես չի՞: Սիրելի երեխեք, թե ինձ սիրում եք, կինդրեմ, մոր ես խոսքը էլ բերան չբերեք: Եղ ասելու, խոսելու բան չի: Կտած բանը գանդն ու պահողը մարդ չի: Ել մարդ չե՞ք ճանաչել, մոր ձեզ լավություն ըլի արած:

Վարդան.— Մեր բարի հերը, մեր սիրելի մերը:

Կարապետ.— Ձես էլ եզ կուզեյի խմանալ: Շատ մարդ ձեզ լավության կըլի արած, ու կանի, ամա մեկն ելա են լավությունը ձեզ չի անել, ինչպես ձեր բարի հերը ու սիրելի մերը: Ձեր պատվի ախպորը մի մտիկ արե՛ք, Մանուկին, գեռ ինչպես թուլ ա: Վոչ վոտն ունի, վոչ լեզու, վոչ ուտել կարա, վոչ խմել, հիվանդանա, չի կարող մի խոսք ասել, մեկ բան պատահելիս, չի կարող իր գլուխը պահվել, ինքնիրան հաց էլ չի կարող ուտել, լոլորը ձեր սիրելի ծնողքը պետք է հոգան: Ինչ նրա համար անում են, ձեզ համար էլ են արել: Դուք էլ եյիք մեկ վախտ ենպես պատիկ, ինչպես նա, ու գիտ պատիկ: Դուք ինձ Սաենփանիցը պատմեցիք, թե ինչքան չար, անկարգ եր, գիտե՞ք պատճառն ինչ ա:

Յեղիսաբեթ.— Ջունքի մերը մեռել ա:

Կարապետ.— Հայտնի բան ա: Թե հեր էլ չունենար, ասամած ապսաի, գիտ անկարգ կըլեր: Մեկ մտիկ արե՛ք, թե ի՞նչ թշվառ, վողորմելի երեխեք կըլեյիք, թե ձեր սիրելի հերն ու մերը ձեր հոգը չքաշեյին, ձեզ մտիկ չասեյին, քա սապ չըլեյին: Են ժամանակը ո՞վ ձեզ հաց, շոր կտար, ո՞վ ձեր գարդը կքաշեր, ձեզ սնունդ կտար: Հիմիկ նմանո՞ւմ եք, մոր ձեր ծնողացը շատ, շատ պարտական եք: Ներանցից շատ շնորհակալ պետք է րլիք:

Վարդան.— Ի՞նչպես չենք իմանում, ամա ինչպես անենք, մոր մեր շնորհակալությանը նրանց ցույց տանք:

Կարապետ.— Ի՞նչպես: Եղ չատ հեշտ բան ե: Դուք էլ կարաք իմանալ, մոր լավ մտածեք, թե նրանք ձեզ ի՞նչ լավություն են անում, ինչքան էլ արել են: Ձես ձեզ համար գուսը կգտնեմ բարի վախտ, մոր ձեր շնորհակալությանը նրանց ցույց տաք:

«Ա՛խ, թե կարող ես, հենց ես ոհաթը, հենց ես ոհաթը, մեզ մեկ

համբա նշանց տուք, քո հոգուն զուրբան, վոր գնանք, չնորհակալ ըլինք», ասացին երեխեքը:

«Շատ բարի, ասեց պարոն կարապետը, ուրեմն յես ձեզ մեկ լավ խրատ կտամ: Որը մեկ քանի անգամ գնացիք ձեր հորնը մոր մոտ, ու հարցրիք, թե հո անելու բան չունին, վոր անեք: Եսաով ճամփա կճարեք, վոր նրանց լավությունը վճարեք»:

«Ես խրատը մեր աչքի վրա», ասեցին, ու ինչ ժամանակ նրանից հեռացան, վազեցին չուտով՝ Վարդանը հոր մոտ, Ցեղիսաբեթը՝ մոր մոտ:

«Շատ մեծ լավություն ինձ կանես, ասեց մերը, թե վոր Մանուկի մոտ ենքան կենաս, նրան խաղացնես, ընչանք յես գամ»:

Ցեղիսաբեթ ուրախությունով հանձն առավ: Մերը Մանուկին գնանի վրա պրեց, դուրս գնաց: Հենց հեռացավ, թե չե, Մանուկն ակսեց լալ, հղղալ, ու պառիկ ձեռները մորը յեղևիցը մեկնել: Ցեղիսաբեթ կամեցավ, վոր ձենը կարիլ առ: «Սուս, Մանուկ ջան, ասեց, նանը հենց ես սհաթին կգա, ելի քեզ խոհրը կառնի, միրզ կուտ, կաթը, սուխարի կուտ, լաց մի ըլիլ»: Բայց չե, Մանուկը ձենը չկարեց ու ենքան գոռաց, վոր հ-քեսը, ռանկ-մոանկը թռավ: Բաս ի՞նչ կըլներ, Մանուկը մեկ մատղաշ ե-րեխա յեր ու քվոր ասածիցը մեկ բառ ելա, չեր հասկանում: Ցեղիսաբեթ ես չմտածելով, համբերությունը հատավ, փչէ եր մնացել ինքն ել հեզը լա: Միտքն ընկավ, վոր իր յերեխա վախտը ինքն ել կըլի ենպես գոռացել, ու մերը բոլոր ասրել, համբերել եր: Ես վոր լավ մխոք արեց, ինքն իրան ասեց, ես պատճառավ պետք է չնորհակալ ըլիմ:

Ենպես քիչ քիչ բարկությունը թողեց ու միտք արեց, վոր մեկ հ-նարքով, երեխի ձենը կարիլ առ: Ես բանումը, Սուլթանը, իր հոր չու-նը աչքովն ընկավ, վոր ոթախումը քամակի վրա ձղվել, վեր եր ընկել: «կա՛ց, կա՛ց, լավ ա, վոր միտքս ընկավ, նա ինձ լավ պետքը կդա: Սուլ-թա՛ն, Սուլթա՛ն, ձեն ավեց, արի, արի մեր Մանուկի մոտ: Տես ի՞նչ լավ յերեխա յա»: Շունը գլուխը բարձրացրեց մի քիչ, ել յեղ վեր դրեց վրա-սալով, չունքի ձեռին ուտելու բան չկար: Ցեղիսաբեթ բարկացավ ու պրա պայիմ ձեն ավեց: «Սուլթան, ես սհաթին պաի եսաեղ դաս»: Ճարակատուր վեր կացավ չունը, ու պոչին անելով եկավ Մանուկի մոտ:

Մանուկը աչքերը չռեց, չանը վոր տեսավ, ու ձենը կարեց:

«Սուլթան, ասեց Ցեղիսաբեթ, մեկ պար արի թեղ, վոր մեր Մանու-կը քո հնարքը տեսնի»: Ես խոսքին չունը գլուխը բարձրացրեց, դունչը յեղ արեց, յեղի վոտների վրա կանդնեց ու սկսեց պար գալ: Ցեղիսաբեթ ել սկսեց պար գալ ու հետը խաղ ասիլ, ես վոր տեսավ Մանուկը, սկը-սեց ճկալ, ծիծաղիլ, վոտին գլխին անիլ, չան գլխիցը, վոտիցը բռնիլ, մազիցը ձղիլ ու հաղար տեսակ բան անիլ:

«Շատ լավ բան ես արել Ցեղիսա ջան, ասեց մերը, տուն վոր մտավ: Երեխին եղպես պետք է խաղացրած, վոր չնեղանա, սիրտը բացվի: Ի-նչ լավությունը ինձ ել Մանուկին ել հասավ»:

«Ո՞ւր ես ասում, սիրելի մայր, հարցրեց Ցեղիսաբեթ, վոր իմանամ թե եսպես բանով քո սիրտը կչահեմ, որը հազար բան կանեմ հա: Ինչ ու-զենաս եսաուց դինը, ինձ ասա՛»:

Վարդանն ել հոր մոտ եր գնացել, վոր իմանա, թե անելու բան կա՞, թե չե, վոր իր ծառայությունը նրան ցույց տա:

«Ես Թուղթը տար փոչիը ասեց հերը, վոր գրում եմ»:

Ընչանք հերը Թուղթը կդրեր, մնաց ենտեղ, հենց վոր պրծավ, ասեց՝ չուտով տանի, չի՛ ուշանա ու փոչիը չղնա:

Ուրախ, ուրախ Թուղթն առավ ու դուս թռավ: Հենց իրանց տան յե-զևն հասավ, տեսավ, վոր շատ խալխ կան հավաքված: «Ի՞նչ խաբար ա», հարցրեց մեկին: «Հրեն յերկու արջ են բերում», պատասխանեցին:

«Ա՞րջ, հարցրեց· իմ որումը արջ չեմ տեսել»: Ընկավ խալխի մեջը, վոր գնա արջին տեսնի: Իսկույն միտքն ընկավ, թե փոչիը կերթա ու հոր Թուղթը կմնա, թե վոր ես բանն անի, արջին թողաց ու փոչիը վազեց: Լավ եր, վոր շատ չեր: Թե վոր մի քիչ ուշացել եր, են ա փոչիը կը-վակեյին ու Թուղթը չեյին վեր առնիլ:

Թուղթը տվից, չուտով դուս վազեց, վոր գնա արջերին տեսնի: Բայց ինչ· արջերը անց եյին կացրել: Շատ ցավ ելավ նրան, ղրղ ա, ա-մա վոր միտք արեց, թե հոր Թուղթը տեղ հասցրեց, ու հրամանը չկուա-րեց, ել յեղ սիրտը դինջացավ:

«Արջերին տեսա՞ր», հարցրեց վարժապետը, յերբ վոր տուն եկավ:

«Հեռվանց, պատասխանեց Վարդան: Սմա չմնացի, վոր տեսնեմ, չունքի փոչիը կերթար ու պիրը չեյի հասցնիլ, վոր հերս տվիլ եր»:

Կարապետ·— Զեռդ ինձ տուր վարդան, շատ ապրես, եղավ դու նը-չանց ես տալիս, վոր ուզում ես քո հորը չնորհակալություն անես: Ջուն-քի ով ուզում ա չնորհակալ ըլիլ իր բարերարիցը, պետք է շատ անգամ են բանն ել ձեռաց թողա, վոր սիրտն ուզում ա:

Ես որը շատ ուրախ անցկացրին եսպես: Մնողքը շատ ուրախացան, վոր իրանց վորդիքն եսպես չնորհակալ եյին, վարժապետն ել շատ ուրախ եր, վոր աշակերտքը իր խրատին անկաչ եյին արել, յերեխեքն ել լավ քեֆի եյին, վոր մտածում եյին, թե իրանց ծնողացը չնորհակալություն ցույց տվին ու նրանք ենպես բավական եյին:

Վարժապետին մեկ ուրիշ ուրախություն ել կար, վոր դեռ ինքը չեր պիդում: Հենց տուն մտան, վոր հաց ուտեն, տեսավ, վոր մեկ գոնաղ ել նոր ա եկել: Ես նրա պատավ մերն եր: «Դու եսաե՞ղ», հարցրեց զարմա-ցած:

Մայր·— Բաս ինչպես եյիր իմանում, վոր ինձ մենակ պետք է Թո-ղեյիր, պարոն Տիգրանն ա ինձ հրավիրել:

կարապետ·— Սխ, եսպես բարի մարդ ել կըլի՞:

Մայր·— Հայտնի բան ա, վոր բարի յա, դու դեռ չես պիդում, թե նա ինձ համար ի՞նչ ա արել: Սաղ կես որ կըլի, վոր եսաեղ եմ:

կարապետ·— Ուրեմն լավ ուտացրել, խմացրել կըլի քեզ:

Մայր.— Դրանից դհա ավելի բան ա արել ինձ համար: Ես բարի ասավածաներ կնիկը սկսեց իմ վորպիսությունն իմանալ, ես էլ բոլորը պատմեցի: Վոր իմացավ, թե քաղաքի են կողմն եմ կենում ու են նեզ բուշմանը, տիրեսես սիրալ քաղցր մարիկ արեց ու ասեց. «կարծեմ, քո սիրալն էլ ուզի ապրիլ մտաիկ կենալը»: Ջունքի ես էլ չեի կարող ծածկիլ, ելի խոսքը սկսեց: «Իմ մարդս ես մտաիկ քուչումը մեկ պտաիկ տան ունեի, վոր դու կարող ես մեջումը դինջ կենալ ու քո սիրելի զավակին ամեն որ տեսնիլ: Ինդրում ա, վոր դաս ենաես կենաս: Կուզի՞ս նրա խնդիրը կատարես, թե վոչ»:

«Մ՛ի, ինձպես պատավ կնիկա համար եդպես լավութիյունը անչափ ա, ի՞նչպես չեմ ուզիլ, իմ աչքի լսին մտաիկ կենալ, ամա քրեհն ինչ կլիլ. էլ չիմոզաց, վոր ես խոսքը բերան բերեմ ու ասեց. թե տունը ենպես պատրաստ կա, իմ մարդին հատուկ լավութիյուն կանես, թե դաս միջումը կենաս»:

Ուզում եր դհա ուրիշ բան ասի, պարոն Տիգրանը նեբսև մտավ: Կատաղեց, աչքը արտասուքը լիքը, դնաց առաջ, ձեռը բռնեց, ուզում եր խոսա, բայց պարոն Տիգրանը չիմոզեց, վոր բերանը բաց անի, ու ասեց: «Մեկ բառ ելա չասես, վոր կնեզանամ չաս, սիրելի, դու իմ վորդուցը չնարհակալութիյուն ես ասվորցրել: Բա՞ս հերը անչնորհակալ պետք է մնա: Դու ինձ լավութիյուն կանես էս պետք է մտիկ առ՞մ: Բաս ել ընչո՞վ իմ երեխեքն իմանան, թե չնարհակալութիյունը լավ բան ա, յերը ինձանից ուրիշնակ չեն առնիլ: Սրանից ավելի լավ բան մխաբս չընկավ, վոր քեզ իմ չնարհակալութիյունը ցույց առա, քանց մարդ մտաիկ կենալը: Թե սրանից ազգ էս ու ուրախ, էս ել չաս կուրախանամ իմ միջումը»:

Պարոն Կարապետը տեսավ, վոր չի թողում խոսալ, ձենը կտրեց, ու իր չնարհակալութիյունն ու ուրախութիյունը ենպես ցույց ավեց, վոր պարոն Տիգրանի ձեռը հուսի ավեց ու աչքը սրբեց:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Գիշերը Անուշ բերդպի դռդալով վեր թռավ: Տեսավ, վոր Յեղիսաբեթը լալիս ա, վազեց, դնաց նրա տեղը: Խեղճ երեխեն, աչքերն արտասուքով լիքը, մնացել եր ընկած, հոդոց եր քաշում, լալիս ու ձեն տալիս, մայր, մայր, սիրելի մայր:

Մերը նրան ժամ ավեց ու հարցրեց. «Ի՞նչդ ա, Յեղիսա ջան»:

Ես ձենի վրա, դլուխը բարձրացրեց, աչքերը չռեց ու ենպես դժի պես մոր յերեսին նայեց, հետո դոռաց. «դու յես, մայր»:

Մայր.— Տեսնո՞ւմ չես, վոր յես եմ:

Յեղիսաբեթ.— Դես ասդ ես:

Մայր.— Մ՛յ աղջիկ, դժվե՞լ ես, յերազում ես, չե՞ս տեսնում, վոր սաղ եմ:

Ես վոր լսեց Յեղիսաբեթ, ընկավ մոր ճասվը, հոդոց քաշեց, լաց ելավ ու ասեց. «սիրելի մայր, անուշ մայր, հենց իմանում եյի, թե մուռ ես»:

Յերբվոր մի քիչ չունչ առավ, ելի սկսեց իր խոսքը: «Երազում տեսա, վոր դու մեռել ես, սիրելի մայր, քեզ պաղպղի մեջն եյին գրել, մեկ սիպտակ չոր հաքցրել, ղրաղները սև, պաղպղիդ չորս կողմովը մըռեյին վառել: Սրանից յեդը դպղպղդ ծածկեցին, մեկ սև չոր վրեն քցեցին: Յեվ դուռ տարան: Ա՛խ, ես վոր տեսա, սիրտս ուզում եր պըթռչի: Մտիկ արա՝ ասեցի, ես են մերն ա, վոր քեզ աչքի լսի պես պահել ա, հրես տանում են, ել չես տեսնիլ: Ներան վոչինչ լավութիյուն, չնարհակալութիյուն չարիր չել վոչ ներան կտեսնես, վոչ չնարհակալութիյուն կանես, ես մոքին ենպես զոռացի, մայր, սիրելի մայր:

Ա՛խ, ինչպես պատմեմ քեզ իմ սրտիս ուրախութիյունը, վոր դու դեռ սաղ ես, դեռ քեզ չաս կտեսնեմ, չաս որ չնարհակալ կլինմ»:

Մերը յերեսին պաչ արեց. խնդրեց, վոր սիրտը հանդարտ պահի ու դնաց, վոր փնի: Յեղիսաբեթ ել քաղցր քուն մտավ ու տեսավ ան լիքը նրա աչքը լաց արեց:

Առավոտը պատմեց ախպերն ու վարժապետին իր յերազը: Վարժապետն ելի խրատ ավեց յերկուսին ել, վոր քանի կարան, չնարհակալութիյուն անեն: Նրանց սիրտը չահեն: Թե չե մեկ վոչինչ բան պատճառ ա դառնում մարդիս մեռնելու, են ժամանակը մարդ ափսոսում, դվխին տալիս ա, թե ընչի չի իր բարեբարի, սիրելու լավութիյունն իմացավ ու վճարեց:

Ես վոր ասեց, յերկուսի աչքն ել արտասուքը կտրեց, քիր ու ախպեր ձեռ ձեռի ավին ու խոսք կապեցին, վոր ամեն մեջց պատահելիս, իրանց քաղցր ծնողացը չնարհակալութիյուն ցույց տան:

Յերկուսն ել իրանց խոսքին հաստատ մնացին, ասածներն մեջտ առնում եյին ու չատ ուրախ եյին: Առաջ ծնողքը պետք է հրամայեյին մեկ բան անելիս, հիմիկ ել չեյին թողում, վոր հրամայեն, իրանք եյին դնում անելու բանն անում, իրիկունը մեկը մեկին պատմում եյին, թե են որը ի՞նչ արին, ի՞նչ հրաման կատարեցին, ընչով իրանց չնարհակալութիյունը իրանց ծնողացը ցույց տվին ու յերկուսն ել իրանց արածի վրա ուրախանում եյին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Պարոն Կարապետի մեծ չաֆեն ես եր, վոր միշտ նրանց աչքը բանա, իրանց ծնողաց լավութիյունն իմանան ու չնարհակալ լինեն: Մեկ որ նրանց հետ սեյր դուրս դնալիս, Յեղիսաբեթ մնաց յեդ: «Յեղիսա, ուր մնացիր», ձեն ավեց վարժապետը: Իսկույն վազելով եկավ, չունչը կըտրած ու բուռը բաց արեց. մեջը լիքը մանիշակ եր: «Ես իմ ապիկ մոր

համար եմ քաղել, ասեց ուրախ-ուրախ: Շատ կուրախանա ,որ հետս տանիմ, իրան տամ»:

«Հալբաթ, որ կուրախանա, ասեց պարոն Կարապետը: Մ'ի յես էլ, որ ձեզ պես յերեխա էլի, սիրելիք, իմ մեծ-մեծ ուրախությունն են եր, որ մեկ բան դանիմ, տանիմ հորնը մորս ու նրանք էլ ուրախանան: Ես պատճառով շատ սիրում էլի իմ պատիկ բախչեն: Սաղ դարունքն ու ամառը էնտեղ բանում էլի, փորում, ցանում, ոռկում, ջրում, քոլը քաշում, քախանում, պատրում, քչտում: Բալի վախտ, որ սալեն լիքը սալաթ, կանաչի, լորի չէլի տանում մորս, բալի վախտ, որ փինջով ծաղիկը, անոշ ռեհանը, վարդը, չէլի գնում սեղանի վրա, որ հերս հոտ քաշի, միխիթարվի, ա'խ, չեմ կարող պատմել, թե ինչքան նրանք ուրախանում, ինձ սիրում, որհնում էլին: Ջունքը, ինչ որ տանում էլի, յես էլի բաալամիշ արած ըլում, իմ աչխատանքն եր, իմ ձեռի պտուղը»:

«Ո՞ւմնից սատցար քո բաղչեն», հարցրեց Վարդան:

«Իմ հորիցը», պատասխանեց Կարապետ:

«Գիտես ի՞նչ կա Ցեղիսաբեթ, յես էլ բաբիցը կինդրեմ, որ ինձ էլ մեկ պատիկ բաղչա տա»:

Ցեղիսաբեթ էլ խոսք տվեց, որ խնդրի: Պարոն Կարապետն էլ ասեց, որ բաղչեն չինելիս, նրանց քոմակ անի:

Ես եր, որ նրանք իմացան, մինչև վերջը են էլին խոսում, թե ինչպես պետք է բաղչեն չինեն, ի՞նչ պետք է տնկեն, ցանեն: «Ցես խոտ կցանեմ, չունքի մերս շատ ա սիրում, բոխակ ու կանաչի, չունքի հերս շատ ա սիրում», ասեց Վարդան: Ցեղիսաբեթ մխոք եր անում, որ ծաղիկ ու ռեհան ցանի, որ հորնըմոր համար փունջ կապի:

«Շատ կուրախանամ ու հնորհակալ կըլիմ», ասեց մեկը նրանց յերեվիցը:

Հենց երեսները չուռ տվին... ա'խ, ով Եր, իրանց պատվական հերը: Վարդան աչու ձեռը, Ցեղիսաբեթ ձախու ձեռը բռնեցին ու յերկուսն էլ աղաչանք արին: «Բաբի ջան, մեկ պատիկ բաղչա բաշխիր մեզ, քո չարը տանինք:

Հայր.— Բաղչեն ի՞նչ կանեք:

Վարդան.— Ուզում եմ ցանեմ:

Հայր.— Ի՞նչ:

Վարդան.— Ինչ որ ըլի, խիար, լորի, կանաչի:

Հայր.— Ցե՞րբ ես ուզում խիարը ցանես:

Վարդան.— Վաղը, վաղը:

Հայր.— Վա՞ղը: Որ դուս գան, հո ցուրտը կտանի:

Վարդան.— Մ'ի, սիրելի հայր, դու ինձ ու Ցեղիսաբեթին բաղչեն տուր: Մենք դիտենք, թե ինչպես կցանենք, կպահենք: Ինչ որ չենք դիդում, մեր սիրելի վարժապետը մեզ ցույց կտա: Ինքն էլ ա մեզ խոսք տվել, որ բաղչեն քցելիս, մեզ քոմակ ըլի:

Պարոն Կարապետը հավատացրեց, որ ուրախությունով կանի ես բանը:

«Շատ բարի, ասեց պարոն Տիգրանը, ձեզ բաղչա չի պակսիլ, թե որ աչխատիք ու լավ պահեք: Հենց ես սհաթին իմ բաղն եմ դնում, թե կուզեք, մեկ տեղ ձեզ համար կնչանակեմ»:

«Լա'վ, լա'վ, ձեն տվին երեխեքը, քեֆ, քեֆ են կըլի»: Եսպես վեր-վեր թռչելով գնացին հոր հետ բաղը:

Բաղը, որ մտան, պարոն Տիգրանը մեկ քանի անգամ դես ու դեն գնաց, հետո մեկ տեղ մնաց կանգնած ու ասեց· «սիրելի վորդիք, մտիկ արեք, ետեղանց մինչև պատը ձերն ա, ինչպես կուզեք, ենպես արեք»:

«Շատ չնորհակալ ենք սիրելի հայր», ասացին յերկուսն էլ ու ձեռը համբուրեցին:

Դհա շատ ուրախացան, յերը հերը ջիբիցը գանագան սերմոռենք հանեց ու նրանց բաչխեց: "

«Ես սերմոռենքանց վո՞րը պետք է առաջ ցանած, սիրելի պարոն Կարապետ», հարցրեց Վարդան: «Սալաթն ու կանաչին», պատասխանեց:

Իսկույն կանաչու սերմը վեր առավ ու ուզում եր, որ շաղ տա:

«Եդպես չուտով չի ըլիլ, աչքի լույս, ասեց պարոն Կարապետ: Առաջ պետք է հողը փորած, կոշտերը փչրած, ու մարդ չինած: Ցեղիսաբեթի համար դժվար կըլի: Ցես նրա տեղը կբանիմ, կուզե՞ս, որ քեզ համար էլ փորեմ:

Վարդան պատասխան տալու տեղ, դուս պրծավ, յերկու բահ բերեց, որ պատնըդուս դրած եր, մեկը իր վարժապետին տվեց, մեկն էլ ինքն առավ ձեռը ու սկսեց փորել: Բայց չեր իմանում, վո՞ր բահի վրա դնի, թե բահը վրտի ու հենց քաշի յեր տալիս, ինքն էլ հետն եր կունդիլի տալիս: Հերն ու վարժապետը ծիծաղու թռւլացան: Վարժապետը վերջապես բահը ձեռիցն առավ ու նրան նչանց տվեց, թե ինչպես պետք է բռնի, կամ բանացնի: Վարդան ենպես արեց, ինչպես տեսավ ու քիչ, քիչ բանը հեչսացավ: Հերը թամաչ եր անում: Շատ չքաշեց, մեկ թաքուչակ էլ նա առավ ձեռը, չուբեն հանեց, ու կոշտերը փչրեց, փորածը դղեց:

Մեկ չարեք սհաթ չքաշեց, Վարդան բահը յեղ դրեց ու մեջքն վերեց ու ասեց· «Ա'խ, յես չեյի իմանում, թե դետին փորիլը եսպես դժվար կըլի: Ջանից ընկա, ել չեմ կարող: Վրա ու ձեռս կոտրվում են, բոլոր չանս քրանքում չխպչխպում ա ու հրես ձեռս էլ մրմնջում ա...ես ի՞նչ ա· վա՛յ, արին ա դուս գալիս, ուռել ա, ես հո ինձ կպատնի»:

«Եդ վոչինչ ա, ասեց հերը, մի քիչ փչռել ա, ի՞նչ բան ա: Եդպես ուռիցքը մի չա են ձեռումն են դուս գալիս, որ դեռ բաներու սովոր չի: Ջունքի կաչին կակոզ ա, թե որ մի քիչ բանի, պնդանա, են ժամանակը, եդպես ուռիցք ել չի դուս գալ:

Ես որ բավական աչխատեցիր, սիրելի վորդի, գնանք տուն, դինջացիր: Ամեն որ, որ բանիս, քիչ-քիչ կսովորիս, ու ամեն բանը կիմեց-

ատանա: Հետո դհա չատ գվաթի կունենատ ձեռումդ ու ամեն բանի կդխմատնատ: Մաքո՞մդ ա, ինչ վոր մեկ քանի որից առաջ ուզում եյիր անել: Ատում եյիր ջանդ պնդացնես, վոր մարդի նեղ տեղը պետքը գա: Սկսիր փորիլ, բանիլ, ու բազումը ինչ տեսակ բան կա, սրա: Եղով չատ զորությունդ կճաբես, վոր մեկ որ ուրըշի եվ գժվար տեղը քոմակ անես: Ա՛խ, բազումը բանիլը չատ լավ բան ա, մարդի ջանը սաղ կպահի, գվաթ կըտա, յերանի թե ամեն յերեխա բազումը բաներ: Ղորդ ա, ամենը չեն կարող, չունքի չատ մեկ թվաչափ հող չունի, բայնի եվ ուրիչ պատճառ ունի: Ձես եվ բաղ ունիմ, ամա ենքան ա գործս, վոր չեմ կարող ձեզ եվս ես բանումը պետք գալ: Են երեխեքը, վոր բաղ ունին, ինչպես դուք, ու եղպես լավ վերակացու, վոր ձեզ ցույց կուտա, պետք ե չատ դայրաթով բանին: Շատ ուրախ եմ, վոր սրտով ուզում եք եդ բանը, ու ձեզանից եվ չատ գնորհակալ եմ, իմ սիրելի պարոն Կարապետ, վոր կմնում ես վորպոցս եգպես բանը սովորցնիլ»:

Մյուս որն եվ գնաց Վարդան բաղը բանելու, ու հավատացրեց, վոր մի քիչ հեշատցել եր: Քիչ մինչ ուտումը ամեն բանը հեշատցավ ու Վարդան իրանց հարևան Ավետի վորպուցը չատ գվաթով եր:

Բաղը, վոր փորեցին պրծան, պարոն Կարապետը մարդերը չինեց, ամեն մեկ երեխին մեկ քանի մարդ ավեց ու նրանք եվ սկսեցին ջանիլ: Մյուս որը հենց բաղը մտան թե չե, վազեցին իրանց մարդի մոտ, վոր տեսնին թե ցանածը դուրս ա՞ եկել, թե չե: Վոչինչ չկար: Եսպես ամեն մեկ գնում, նայում եյին ու բան չեյին տեսնում: Վերջը վերջը մեկ որ եվ անձրև եր եկել, հենց վոր մտան են տեղ, Ցեղիսաբեթ վոտին, ձեռին արեց ու ձեն ավեց. «Վարդա՛ն, Վարդա՛ն, չուտ վազիր, ես տեղ արի, իմ սալաթս ծլել ա, տեսնո՞մ ես, ա՛խ, ա՛խ»... «Մեն եվ ա ծլել», ասեց Վարդան: Վազելով գնացին տուն, չեյին ուզում են որը ուրախությունից հաց ուտեն:

Եսպես, քանի սալաթը լարձրանում եր, ենքան նրանք ուրախանում, պվով պախ եյին տալիս, ջուր անում, բազի անգամ ձեռը քաշում վրեն, բազի անգամ հետը խոսում: Հենց, վոր լավ մեծացավ, տեսան, վոր մեկ սալա կարող եյին քաղիլ: Ծածուկ տարան աշխանեն (կուխանեն), տվին, վոր չինեն, հազրեն ու հացի վրա դուս բերեն:

Երեխեքը, հացը վոր ջեջեն, հալար անգամ դուս ու տուն արին, հացի վրա եվ դեմն ուտում, դեմն իրար աչքով եյին անում, ժպտում հորնը մոր երեսին մոխիկ տալիս: Ինորովածն եկավ, սալաթն եվ հետը:

«Ես ինչ նոր բան, սալա՞թ եվ ունենք»: Ցերեխեքը չեյին պիտում, ծիծաղին, թե ամաչին:

Վոր տեսան երեխեքանց ես հալը, խիստն իմացան, վոր նրանց բանն ա: Ծնողքը, մինչև պատիկ Հովհաննեսն համն առան ու չատ դովեցին: Վարդան որթում կերավ, վոր իր որոմը մեկ սալաթ ելա են համը չի տվել, ինչպես իր բհամ բերածը:

Եպես նրանց բաղչեն սաղ ամառը նրանց ուրախությունն եր: Մեկ որ մեկ բան եր ծլում, մեկ որ մեկը հասնում, վոր քաղում, տանում եյին հացի վրա: Բաղի վախտ ծաղիկն եր հասնում, ու նրանք եվ հորնըմոր համար քաղում, վունչ եյին անում, սրանք եվ ձեռըներիցն առնում, ու բախանում, չնորհակալ եյին ըլում, նրանց որհնում, նրանց վարժապետին գովում, պատվում, վոր իրանց երեխեքանցը ենպես աղնիվ լան սովրցնում եր, վոր համ իրանց, համ այլոց ուրախացնում եյին:

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Մեկ որ պարոն Կարապետը իր աշակերտների հետ գնաց, վոր խոտեր հավաքի: Ամեն որ ես բանն անում եյին: Ջե թե մենակ հոտ քաշելու ու փունչ կապելու համար, չե, ուզում եյին, վոր զանազան բուսոց անվանքն ու կերպը սովորին, վոր իրարից ջոկեն: Երեխեքը անչափ ուրախանում եյին ես բանի վրա ու մեկ նոր ծաղիկ, կամ խոտ գտնելիս, ավելի եյին ուրախանում, քանց են քաղցրակեր երեխեքը, վոր իրանց մորբից, կամ տատիցը մեկ կոպ պաթա, կամ հալվա չեն ճարում:

Եպես բուլս հավաքելիս, բերրալի անկաղնները մեկ կառեթի ձեն ընկավ: Հանդիցը վազելով յեկան ճամփի մոտ, վոր տեսնին, թե կառեթումն ո՞վ կա նստած: Կառեթը քիչ քիչ մոտացավ: Վարդանն ասեց, բալքի մեր բարի պարոն դիվանբեգին ա եկողը:

«Նա՛ յա, նա՛ յա, Վարդան, ձեն ավեց Ցեղիսաբեթ, արի՛, արի՛, պարոն Կարապետ, չո՛ւտ, վազի՛ր, մեր ազիզ պարոն դիվանբեգին ա դալիս: Մեզ վոր տեսնի, ի՞նչ կասի, ա՛խ... ա՛խ...

Ցեղիսաբեթի ասածը դոլթվեցավ: Դիվանբեգին ինքն եր, ողեն եվ հետը: Նրանց վոր տեսավ, կառեթը կանդնացրեց, աչքը բաց արեց ու ձեն ավեց, «բարով, բարով, երեխեք ջան, եկե՛ք, եկե՛ք, կառեթումը նստինք, դնանք»: Դեռ նա խոսքը բերանումն ուներ, վոր սրանք վաղեցին, թռան կառեթի մեջը, ձեռը հուվ տվին ու մոռին նստեցին:

«Են ի՞նչ մարդ ա, վոր ձեզ հետ եր», հարցրեց:

«Մեր սիրելի վարժապետ պարոն Կարապետը», պատասխանեցին:

Նրան եվ պետք ե մեզ մոտ կանչենք, ասեց ու կառեթիցը դուս թռավ ու ենքան մնաց, վոր պարոն Կարապետը նի ելավ, նստեց: Ղորդ ա, հինգ մարդի տեղ չկար, ամա դիվանբեգին Ցեղիսաբեթին դոդն առավ ու եսպես ամենն եվ տեղավորվեցին:

Ձիանքը վոտքները վեր կալան, ու չուտով նրանց տեղ հասցրին, տուն բերին: Տանըցիք, եկողները ենքան ուրախացան, վոր եվ չեմ կարող ասիլ: Սահվանն եվ եր բաղի վախտ ունքերը յեղ քաշում, ժպտում:

Բայց Ցեղիսաբեթ կապը կտրել, ենպես բարձր խոսում, պատմում եր, վոր մեծերը իրար խոսքը չեյին հասկանում: Ջունքի դիվանբեգին խոսի, ծաղիկների անունը հարցրել ու նրան գովել եր, վոր նրանց անու-

նը գիտեր, եւ չէր դիմանում, ուզում էր իր բոլոր հնարքը նշանց տա, սանդխտիցը ներքև վազեց, գնաց իր բաղչեն, մեկ մեծ բուռը ծաղիկ քաղեց, բերեց ու իրանց դռնապին ցույց էր տալիս ու առում:

«Սիբելի պարոն դիվանբեգի, սրա անունը նարգիզ ա, սրա անունը ամբուլ, ես մյուսի...:

Մերը բարկացավ, դրադ քաշեց նրան ու ասեց, «վորդի, ուրախությանդ չափ դիր, եղպես չեն անիլ: Անչափ ուրախանալը հիմարություն ա: Ենպես ես բարձր-բարձր խոսում, վոր մարդ բան չի լսում ու հերը ու դիվանբեգին իրար չեն հասկանում: Ինչպես պարծենում, քեզ նշանց ես տալիս, վոր ծաղիկների անունը գիտես: Եդ ի՞նչ բան ա: Պարոն կարապետիցը եղպես բաները սովորել, ու դա մեզ մոտ եղպես պարծենա, չե՞ս նեղանալ: Իմ Ցեղիսա խելոք աղջիկ ա, իմ Ցեղիսին եղպես բան չի պետք է անի: Շատ ուրախություն ա քեզ խարել, դու չես մեղավոր, ուրեմն հանդարտացիր, յերեսիդ մեռնիմ»:

Մերն էլ յեդ գնաց դռնապների մոտ, Ցեղիսաբեթ էլ գնաց ու էլ ենպես բարձր չէր խոսում: Սմա իր ուրախությունը չթողեց, չպակասցրեց: Պարոն դիվանբեգին պատմեց, վոր նրանց համար մեկ պատկերի դիմաց էր բերել հետը, ու կառեթումն էր: Հենց ես լսեց, էլի քամին վեր կացավ, էլի ծուլը ծուլ էլավ ու գոռաց: «Մեկ պատկերի գի՞րք: Մե՞զ համար: Վարդան Ջան, լսո՞ւմ ես: Մեր բարի պարոն դիվանբեգին մեզ համար մեկ պատկերի գիրք ա բերել հետը: Կթողա՞ս, գնամ, բերեմ»: Դեռ ջուղաբը չլսած, ինքն իրան դուռ թռավ: Հենց դուռ գնաց, թե չե, չըրխկ... մեկ թրխկոց եկավ մեծ տանը, հենց իմանաս տասներկու թաս կոտրվեցին:

Բոլորն էլ վախեցան: Աննա դուս գնաց, գնուը, վոր բաց չարեց, աչքերը մնացին ուռած, ութ չայի թասի տակ, հայդան, կաթնաման, հաքարաման, բոլոր գետնի վրա վեր եյին թափած, մեկ գիրք էլ կաթնի մեջ, ու չայի միջումը լղլղում էր: Ղարավաշը դռդը չանն առած՝ մնացել էր կանգնած, Ցեղիսաբեթ կատվի պես դողում էր, ռանկ-մռանկը թռած, սպրթնած, թե հիմիկ վորդի վոր ա, մերը դուս կգա, իրան բեհբութ կանի:«Ես ի՞նչ խաբար ա», հարցրեց մերը:

«Սիբելի մայր, ասեց Ցեղիսաբեթ կիսաբերան, ձենը վորն ընկած, ու լալով, էլ թե անեմ, ի՛նձ... ի՛նձ...»

«Ցես ուզում եմ իմանամ, ասեց մերը, թե ինչ ա պատահել եստեղ»:

Ցեղիսաբեթ լալիս էր, ղարավաշը ջուղաբը ավեց· եսպես պատահեցավ, վոր յես չայը բերում եյի, ինչպես հրամայել եյիր, եսպես դալիս եյի, ուշքս վրաս չեր, Ցեղիսաբեթ բիրադի ենպես դիպավ ինձ, վոր բոլորը ձեռիցս վեր ընկավ: Ինձ վրա չի պետք ե նեղանաք, յես մեղավոր չեմ»:

Աննա ի՞նչ արեց: Ցեղիսաբեթին ծեծե՞ց, կամ սիլլա խիճե՞ց, ղարա-

վաշին բեարուռ արե՞ց: Քավ լիցի, վոչ ես, վոչ են: Նա իրան սովորցրել եր, իր բարկությունը նստացնի: Ենպես հանդարտ գնաց, տոլաբը (գանջինեն) բաց արեց, նոր չայի թասեր հանեց ու հրամայեց, վոր չուտով չայը տան բերի, հետո յերեսը յեդ դարձրեց Ցեղիսաբեթի վրա: «Ցեղիսա, յես քեզ չասացի՞, թե ես ուրախությանը պետք ե չափ դնես: Ով իր ուրախությանը չափ դնիլ չի կարող, նա չի իմանալ, թե ի՞նչ ա անում, ու շատ անգամ մեկ հիմարություն մյուսի յեդևիցը կգործի: Դու ինձ չլսեցիր, տեսնում ես, ինչ պատահեցավ: Ես սհաթին ես կատրանքն հավաքիր, կաթն ու չայն էլ դաստամալով, կամ հին չորով սրբիր: Ղարավաշն ենդուր համար չի եստեղ, վոր...»: «Սիբելի մայր, քո չարը տանիմ, ինձ բաշխիր ես մի անգամը, ասեց Ցեղիսաբեթ, յես ինքս...»:

Աննա էլ մտիկ չարեց ու գնաց դռնապների մոտ: Ցեղիսաբեթ մոր տասծն խոսքն ականջ թոթափիլ կատարեց: Ցեղիսաբեթ մորիցը էլ մեկ պակաս խոսք չիմացավ, ամա սաղ որը նրա ուրախությունը վչացավ: Բոլորն ուրախ եյին, նա տխուր, տրտում, գլուխը քաշ արած: Պատճառ էլ ուներ: Շատ ժամանակ չկար, վոր մտքումը դրել եր մորն շատ ուրախացնի, եսոր ենպես նեղացրել եր իր անչափ ուրախությունովը ու ենքան վնասը տվել, էլ նրա սիրտը բաց կըլի՞ը:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Հացիցը յեդը գնացին պարոն Տիգրանի բաղը ման գալու: Ստեփան, վոր մինչև հիմիկ ենպես լուռ, անսաս իր համար նստած կար, սկսեց բիրդաններր բացվիլ ու վարդանի հետ ենսիրուն բաղի վրա ուրախանալ:

Հերը դրադ քաշեց նրան, ու հարցրեց, ի՞նչպես ես տեսնում եստեղ, Ստեփան, սիրտդ վեր դա՞լիս ա:

Ստեփան·— Շատ լավ, հայր:

Հայր·— Կո՞ւզես եստեղ մնալ:

Ստեփան·— Ջե՛, հայր:

Հայր·— Ջե՞ս ել ուզիլ, վո՛ր մեկ քանի որ ես սիրուն Վարդանի, նրա պատվական ծնողաց ու են բարի պարոն Կարապետի մոտ մնա՞ս: Թե սիրտդ վեր չի դա, ելի կառնիմ ինձ մոտ:

Ստեփան·— Եստեղ չեմ մնալ, չեմ...

Հայր·— Վոր յես հրամայեմ:

Ստեփան·— Ջեմ մնալ, չեմ մնալ, ինչ կուզես, արա:

Ես բանումը պարոն Տիգրանը վրա հասավ, հերը խոսքը կտրեց խուչն, չունքն ամպում եր, վոր վորդին ենպես փիս, անհնազանդ եր: Իրիգնազեմին կառեթը լծեցին, բերին տան դուռն առաջին կանգնացրին: Ստեփան աչքը գցեց կառեթի յետևը, առաջը, տեսավ, վոր չամադանը չկա, վոր կառեթի յետևին կապած եր, «ո՞ւր ե չամադանը», հարցրեց կառեթ քաշողին:

«Ջամադանն եսաեղ պետք է մնա, իմ Ջահել պարոնջ, ասեց: Իսկույն իմացավ, վոր հոր մխքն են ա, վոր իրան նեռնեղ թողա: Ի՞նչ արեց: Իսկույն մոտավ, կառնքումբը ծանրագոգոմ նստեց: Հերը նրանց բարով մնա ասեց, շնորհակալություն արեց ու հարցրեց, «Սահիանս ո՞ր ա»: Ջունքի մեկն էլ չեր սեռել նրան, հենց իմացավ թե գուս ա գնացել, ասեց ես գհա լավ եղավ, լաժանվելիս էլ վոչ նա գարդ կանի, վոչ յես: Իմ կողմանե յերեսին պաչ արա, ու ասա նրան, թե չատով էլի կգամ, նրան կտեսնիմ»: Ես խոսքումբը մեկ էլ պարոն Տիգրանի ձեռքե հուխ տվեց ու կառնքը վեր եղավ:

Հենց գնա վոսի մեկը կառնքումբ, մեկը գետնի վրա յեր, վոր սե-ասավ, թե իր խելոք Սահիանը գող կտավի պես մեկ դյադում կուչ եր եկել, ասղ արել:

Նեղացած էլ յեղ վեր եկավ՝ ու ձեն տվեց, «Սահիանս եսաեղ ա եղել, մենք չենք խաբար, ի՞նչ պետք է արած»:

«Ի՞նչ պետք է արած: Ինձ թող, յես գիտեմ, ինչ կանիմ: Մոտավ կառնքի մեջը ու ասեց: Սիրելի Սահիան, քո են ապիղ հերը քեզ չի ասել, վոր մեզ մոտ պետք է մնա՞ս»:

«Ցես չեմ ուզում», պատասխանեց Սահիան:

«Ցես ո՞ւզում, ասեց, քո ապիղ հորը չես ուզում հնազանդի՞ս: Շատ բարի, չունքի չես ուզում, պետք է անես»: Եվ վոչ խոսաց, վոչ խոսք Հարցրեց, յերկու ձեռով կռնատակիցը վեր քաշեց, կառնքիցը հանեց ու գուղ, տուն ուարավ: Ինչ Սահիանն եր անում, ասաված հետու տանի: Ենպես եր գոռում, Ենպես հարայ ուալիս, բղավում, ճղավում, վոտները թափեթափ ուալիս, վոր բոլոր հարևանները դիմընները վանջարեքանցիցը հանեցին, վոր տեսնին, թե հո մարդ չեն սպանում, յա քերթում:

Բարեկիրա Դիմանբեգին կանծու ուզում եր, վոր գնա, վորդուն հանդրատացնի, պարոն Տիգրանը չթողեց: «Ենպես երեխի դիմին իրաս գնալ չի կարելի, ասեց: Սրան ուրիշ ձեով պետք է ճամփա բերած: Պարոն կարապետին թող, նա սրա տեղը կդանի»: Ենպես ախուր, սիրտը ցավով լիքը կառնքումբը նստեց պարոն դիմանբեգին ու գնաց:

Պարոն կարապետը Սահիանին ուարավ իր սիմաքը: Հենց բաց թողեց, թե չե, կատաղած գազանի պես վրա վազեց, վոր գուռը բաց անի ու փախչի: Բայց պարոն կարապետը ես վազուց վարավուրդ արել, գուռը փակել եր: Ես վոր տեսավ, ձենը սաղ տունը վեր կալավ: Պառերը գոռում եյին՝ Ենպես եր գոռում, վոտները գետնին տալիս:

«Սահիան, հարցրեց պարոն կարապետը, կուզի՞ս ինձ անկաջ անիլ, թե չե»:

«Ջե՛, չե՛, պատասխանեց, չեմ ուզում, ուզում եմ մեր տունը, իմ հոր մոտ գնալ», ասեց ու էլի վոտները քարեքար ավեց, գոռաց:

«Շատ բարի, պատասխանեց պարոն կարապետը, թե չես ուզում անկաջ անիլ, յես էլ հետդ չեմ խոսալ, ինչ կուզես, արա», ասեց ու մեկ սիմաքի վրա նստեց, դիրքն առավ ձեռն ու սկսեց կարդալ:

Սահիան ես վոր տեսավ, դլխիցն սկսեց իր սուքը, քանի վոր գոռ ուներ, գոռաց, հարայ ավեց, վոտները գետնին ծեծեց, Ենպես վոր սաղ տունը տակն ու վեր եր բյում: Պարոն կարապետը ձեն չի ավեց, անսաս իր գիրքն եր կարդում:

Պարոն Տիգրանը գոնիցը լսում եր Սահիանի արածը, վախդանին կանչեց, ձեռին հուխ ավեց ուսուլով ու ասեց. «տես, վորդյակ իմ, բարկությանն ինչ վիս բան ա: Մարդին գազան ա չինում, խելքը գլխիցը հանում»:

Վերջապես Սահիանը չատ գոռալուցը գորությունը հատավ, ձենը փոքն ընկավ, եվ չկարաց գոռալ ու յերը տնքավ, վոր բարկությունը վոչինչ ոգուտ չունի, մեկ սիմաքի վրա նստեց ու քունը տարավ:

Պարոն կարապետը յերկու սիմաք եվ ես կոդմն, են կոդմը դրեց, վոր վեր չընկնի: Գնելու վախտը, վոր Եկավ, չորերը հանեց անսաս ու տեղը դրեց: Սահիան Ենպես խոր քնած եր, վոր սմենին չիմացավ ու անոչ քնեց:

Մյուս որը, վոր քնից վեր կացավ, պարոն Կարապետը տարավ եվ յեղ իր սիմաքը ու սկսեց հետը ծանր խոսալ: «Սիրելի Սահիան, ասեց, քո բարի հերը քեզ բերել ա մեզ մոտ, վոր դու եսաեղ աննզվիս, լավ, խելոք մարդ դառնաս, չունքի ինքը ժամանակ չունի, վոր քեզ մարիկ անի, անունդ տա, վոր դու չար, կոպիտ մարդ չըլիս ժամանակին, ու անունդ չի մնաս, վոր սմենն էլ քեզանից զզվին, յերեսիդ մարիկ չանեն: Ուզես, չուզես պետք է եսաեղ մնաս, քեզ մարիկ չեն անիլ: Դու յերեխա յես, քո հերը քո հերն ա: Երեխեն հոր ասածը պետք է անի: Երեխեն, վոր հորը չլսի, վիս երեխա յե: Փիս յերեխա յես դու: Ես անո՞ւնը կուզես աննենաչ»:

Սահիանը աչքերը չռեց, վոր ես խոսքը լսեց, չունքի վիս բան դես չեր լսել, չե..., «Ցես վիս երեխա ի՞նչպես կըլիմ: Եղպես խոսքը խրնդրիմ, էլ չասես»:

«Ցես էլ եղպես եմ կարծում, ասեց պարոն կարապետը: Գիտեմ, վոր լավ յերեխա յես, ու մեզ մոտ կմնաս, թե վիս Սահիան չես, ասածս կանես: Վարդանի ու Ցեղիսաբեթի հետ լավ կկառավարվիս, չես կռվիլ, չես պիժությն անիլ, ու կաշխատես, վոր քիչ քիչ բան սովորիս. եսպես յես քեզ աչքիս լոի պես կսիրեմ, քո բարեկամ կդառնամ, հավատացիր: Ինչ վոր քո լավն ա, քեզ են կասեմ, քո սիրտն ի՞նչպես կհոտեմ, մեմ յես չա՞ր մարդ եմ. չատ ուրախ կըլիմ վոր բազի վախտ խոսքդ առնիմ, սիրտդ բաց անեմ: Վարդանն ու Ցեղիսեն քեզ քիր ու սիմաքի կդառնան, նրանց հերնըմերը քեզ հերնըմերը, քեզ իրանց վորդու պես կսիրեն, կընդունին: Թե վոր չես լսիլ, ընդդիմություն կանես, կհոգիս, չես խելոքանալ, են ժամանակն էլ կտեսնես, թե ի՞նչ կանենք քեզ հետ:

Ընչանք հիմիկ նոքարի ու ձի պահողի հետ հյիր քնիիլ ման գալիս, ու ուզած անում, նրանց խիում, չլընքներին նստում, ձիու պես ղամչով քշում, ամա յես վոչ ծառա յեմ, վոչ ձի քշող, յես վարժապետ եմ ուպա-բոն Տիգրանի վորդոց աննդողը, ինձ հետ եդպես ոյինչես կարող հանիլ»:

Եսպես Թումդ ձևով Սաեփանի հետ մեկին ելա չեր խոսացել մինչև հիմիկ: Սկսեց դառը լայ ըլիլ, ձեռը ավեց պարոն կարապետին ու ասեց: «Ինդրեմ չբարկանաս, պարոն կարապետ ջան, յես քո սիրտը եկ չեմ չա-բացնիլ, կաշխատիմ, վոր լավ, խելոք տղա գառնամ»:

«Ապռիդ հասուստա կաց, Սաեփան ջան», ասեց պարոն կարապետ ու ճակատին պաչ արեց:

Ես վոր ասեց, հրամայեց նրան, վոր նա յերեսն ու ձեռները լվա-նա, ղլուխը սանդրի, բերանն վողոդի, ինչպես վոր լավ երեխին կպատ-կանի, ու ինքը գնաց վարդանի, Ցեղիսաբեթի հետ մեկ ջոկ սեթան ու ասեց: «Սիրելի երեխեք, դուք ինձ մեկ քանի որից ասաչ խոսք ավիք, վոր ուզում եք պարոն դիվանբեգուն ձեր շնորհակալությունը ցույց տաք: Առածներդ մոքներդ ա՞, թե չե»:

վարդան.— Լավ մոքիս ա:

կարապետ.— Ընչի՞ համար եք ուզում շնորհակալ ըլնիք, ին ել պետո՞ք:

վարդան.— Ենդուր համար, վոր մեր առնը պրծացրեց:

կարապետ.— Ես պետք է չմոռանաք: Բայց ընչով եք ուզում ձեր շնորհակալությունը նչանց տաք:

վարդան.— Մենք կուզենք, վոր նրա սիրտը չահենք:

կարապետ.— Ամբո ընչո՞վ, ընչո՞վ:

Ցեղիսաբեթ.— Յես ուզում եմ նրա համար մեկ չուխա դուլպա դործեմ:

կարապետ.— Եդ չատ լավ բան է, նա չատ կուրախանա, ճշմարիտ ա, բայց նրան քիչ ոդուտ կբերի: Մեկ ապատով կամ հինդ չահով մեկ չուխա լավ դուլբա յին տալիս: Ես ի՞նչ վոդ ա, ենպես ունևոր մարդի համար: Բո դուլբեն դործիր, վնաս չունի: Ցեղիսա ջան: Բո բարեբարը կուրախանա, վոր տեսնի: Բայց յես ձեզ մեկ ուրիշ դուռը նչանց կտամ, վոր նրան մեծ, մեծ լավություն կանեք: Ի՞նչ բանն ա նրա սրտի սիրե-լին ես աշխարքումը: Ցեղիսաբեթ ջան, դիտե՞ս:

Ցեղիսաբեթ.— Լա՛վ: Իր վորդի Սաեփանը:

կարապետ.— Լավ խմացար: Ամեն բարի հոր համար վորդին ամեն-մայ ու դովլաթից թանկ ա ու ազիզ: Ես պատճառով պարոն դիվանբե-գին վոչինչ չի ուզում, յեթե վոչ իր վորդին խելոք, լավ մարդ գառնա: Ես պատճառավ ա նրան մեզ մոտ թողել, չունքի իր գործը չի թողում, վոր վորդուն մարիկ անի, լավ անունդ տա:

Թե վոր Սաեփանը մեզ մոտ իր վատ սովորությունը թողա, խելո-քանա, սրտաչահ, զայրաթով ըլի, հնազանդ մնա, պետք է, վոր նրա հերը-անչափ ուրախանա, ենպես չի՞:

վարդան.— Հայտնի բան է, ամա...

կարապետ.— Ամես վորն ա, ի՞նչ ես ուզում դրանով ասիլ:

վարդան.— Ամա յես չեմ կարծում, թե նա լավանա, չունքի վատ խասիաթ ունի:

կարապետ.— Զեզանից ա կախ սիրելի երեխեք: Նա իր վատ խա-սիաթն ել, իր չարությունն ել կթողա, թե դուք նրան անունդ, մարիֆաթ սովորցնեք:

վարդան.— Մենք... մենք ինչ կարանք անիլ:

կարապետ.— Չենց ես բոպեին ձեզ կասեմ: Դուք պետք է նրան բարի որինակ առաք, ենպես պետք է նրա հետ վարվիք, ինչպես կուզեք, վոր Սաեփան ձեզ հետ վարվի... ու նրա պահպանությունը յերեսով չառաք, համբերեք, առնեք: Միշտ բարի բանից հետը խոսաք, սիրան առնեք: կուզեք անիլ, թե չե:

Յերկուսն ել: Շատ բարի, սիրելի պարոն կարապետ:

կարապետ.— Ուրեմն գնացեք նրա մոտ և քաղցրությամբ բարի լիս ասեցեք:

«Բարի լիս, սիրելի Սաեփան: Ենպես չի, դու պետք է մեզ մոտ մը-նա՞ս, ա՛խ, ես ինչ լավ բան ա: Վորքան ուրախ կըլինք, իրար հետ կխաղանք, ման կգանք: Մենք քո սիրտը բաց կանենք, դու մերը»: Ես վարդանն ասեց: Ցեղիսաբեթն ել իր կողմիցը նրա սիրտն առավ, ասեց, խոսք ավեց ու Սաեփան ես վոր տեսավ, իսկույն սիրով ձեռը նրանց-ավեց: «Թե վոր եդպես կանեք, ընչի՞ չի պետք է ձեզ մոտ մնամ: Մենակ իմ սիրտն ել ա նեղանում»:

Առավոտա նհարն արին, ուրախ, ուրախ ու դնացին դաս առնելու: Սաեփանն ել նստեց հետընները ու անսաս անկաչ արեց:

ԳԼՈՒԽ ՅԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Դասը վոր պրծան, պարոն կարապետն սկսեց Ցեղիսաբեթի հետ խոսք ջոկել: Ցեղիսա, երեկվան չայի թասի բանն ինչպես ելավ, վոր դու կոտրեցիր: Ցեղիսաբեթ կարմրատակեց, աչքերն արտասուքով լցվեց, ձենը փորն ընկավ, սկսեց լալ ու ուզում եր դլուխը դորդի:

«Նհատ տեղն ես դլուխդ արդարացնում, սիրելի երեխա, ասեց պարոն կարապետը: Գիտեմ, վոր դու չեյիր ուզիլ, վոր ես բանը պատահի, ամա դու ել լավ իմանում ես, վոր ես բանը անխելքությունով ես արել, եդ-պես չի՞: Հիմիկ բանը նրա վրա յե, թե են կոտրած չինի թասերի վնասը ո՞վ պետք է քաչի, փողն ո՞վ պետք է տա: Ղարավա՞չը: (Ցեղիսաբեթը հեթեթաց): Նրանից չի կարելի պահանջիլ, չունքի մեզ չունի: Մ՛որդ (Ցեղիսաբեթ դհա ավելի հեթեթաց): Սա հո իսկի մեզ չունի: Ո՞վ պետք է չառնեն քաչի, ի՞նչպես ես կարծում»:

«Յես, յես, իմ աչքը դուս դա, յես պետք է քաչեմ», պատասխանեց:

«Դրաստա ես ասում, իմ սիրելի յեղեխա: Ով, ում վնաս տա, իմը պետք ե, վորքան կարա, վնասի: Սրտով ըլի են վնասը, հիմարությամբ, թե անզգուշությամբ: Միևնույն ե, ինքը պետք ե առանց ասելու, վճասի»:

«Ա՛խ, ինչ կըլեր, վոր ենքան փող ել ունենայի, վոր իմ պարտքից դուս ել յեկել», ասեց Յեղիսաբեթ, հոգոց քաշելով:

«Տեսնենք, ասեց պարոն Կարապետը: Հիմիկ դնա, ինչքան փող ունես, բեր մեկ տեղ կերթանք դուքանը, բալքի նժան ու ոտաս գալիս»:

Յեղիսաբեթ վազեց, բերեն դուս բերեց, մեջումը յերկու վոսկի կար, վոր իր ինքահերն ել ավել, ու մեկ քանի ել ապասի, վոր մերն ել վախտ-վախտ նրան բաշխել դուրս գործելու, կար անելու համար:

Ինչքան Թաս Յեղիսաբեթ կոտրել ել, ելի են ձևովը, են մեծությունովը, միևնույն կերպով նաչիսած Թասեր ասան: Բոլոր գինը Յեղիսաբեթովը

«Իմ սիրելի աղջիկ:

Թե վոր ուզենամ էեզ հետ արդար վարվիմ, պետմ ե վոր էեզսենից իմ կոտրած չինեղենիը թամամ պահանջեմ: Ո՞վ ա կոտրել, չեթե վոչ դու: Բայց չունիմ տեսնում եմ, վոր դու էո հիմարության վրա փոշմանել ես ու ցավում, ես պատճառավ ուզում եմ ես անգամ հետդ կակոզ վարվիմ ու են էո մսխած փողի չերկու վոսկին ել չեդ էեզ եմ տալիս: Միևնակ ապասիէը, վոր խարջել ես, պետմ ե կորցնես: Վոչինչ թան ենպես սրտով չեմ ուզիլ, չեթե վոչ թաէըլի ես կորած ապասիէը սրտիդ ցավ տան, վոր ել մյուս անգամ անզգույշ չըլիս: Եստով չես կարող վոչ էեզ, վոչ ուրիշին մեկ ժամանակ ելա նեղություն տալ: Յես եմ

Էո էեզ սրտով սիրող մերը Անիա»:

Ես դրածի վրա չեր, վոր ենպես արտասունքը աչքը կոխեց:

Հենց հացը պրծան, թե չե, վազեց ընկավ մոր ճտավը, չնորհակալություն արեց չատ նրա դժուարթյան համար ու խոսք տվեց, վոր եստուց դենը ղրկուչ լինի: Մերը վերցրեց նրան, հետը իր ոթախը տարավ. վարդան դնաց հոր մոտ, ու Ստեփան... ուզում եր, վոր ուսուցով գյում ըլի, ծլիվի, դնա դուրը:

Պարոն կարապետը չէթողեց: «Ո՞ւր ; ո՞ւր, Ստեփան, ասեց, արի, արի դնանք հետս, իմ ոթախը»:

Հենց առն մտավ, մնաց ենպես չչկլած, չչմած, չվարած, աչքը չա ես պուճախն եր քցում, չա են, չա չորդանի վրա:

«Ստեփան, ասեց պարոն կարապետը, ընչի՞ չես եղպես չչկլած, ի՞նչ ա պատահել քեզ»:

Ստեփան.— Ցե՞ս, ո՞վ ե չչկլած:

Կարապետ.— Աստ ինձ, ոտտ խոսո՞ղ ես, թե ճշմարտությունը սիրում ես:

Ստեփան.— Ցես ամենևին ստախոս չեմ, աստված վոչ անի:

Կարապետ.— Թե ստախոս չես, չատ բարի. հարցրած բանիս ջուղաբը հաստատ տուր: Ստտ չխոսիս, թե չե կվմանամ: Լավ մտածիր, վոր դու քո վարպետի ու աննդողի հետ ես խոսում, վոր մեկ բան ելա նրանից չի պետք ե թաքցնես: Են մոչը դու չես կերել, վոր ամանումն ունեչի՞. չիդակն ասա. մի վախենար:

Ստեփան.— (Գլուխը կախ քցեց, աչքերը քցեց դետնին):

Կարապետ.— Եդ ջուղաբ չի: Մոչը կերե՞լ ես, թե չես կերել, ես եմ ուզում իմանալ:

Ստեփան.— (Բարակ ձենով, քթի տակին, սկսեց ասիլ) հա, չես եմ կերել, մեղա աստուծո:

Կարապետ.— Տես, ինչպես իմացա: Ամա չես ուզում եչի, վոր դու քո բերնովը խոստովանվիս: Շատ բարի, վոր ասեցիր: Եստով տեսնում եմ, վոր ստախոս չես, չատ ապրիս: Հիմիկ կըլի՞ վոր ասես, թե քեզ ի՞նչն ստիպեց, վոր կերաը:

Ստեփան.— Շատ սոված եչի, փորս կարատում եր:

Կարապետ.— Եսպիսով իրավունք ունի՞ս, վոր ուրիշի մոչն ուտես: Թե եղպես ըլի, հո ամեն աղքատ, ամեն ուզվոր կարող ա փռնիցը հաչ կամ չաղլու վերցնել, ուտիլ, չերբ վոր սոված: Զես պիտի՞լ, վոր ով ուրիշի բանն իրանը դլխու վերցնի, հետը տանի, նրան գող կհամարեն: Բայց դու ենպես չատ սոված ել չեչիր կարող ըլիլ, չունքի, մեկ քանի սհաթից առաջ նհար եչիր արել: Դու լոթի եչիր: Դու դեռ չես սովորել քո աչքածակությունը չափավորես: Ես ա քեզ խարել, վոր իմ մոչը վերցրել, կերել ես:

Ստեփան.— Ես մեկը բաչխիր, սիրելի պարոն կարապետ, թե ել ա-նեմ, են վախտը դու պիտես:

Կարապետ.— Բերնով ասիլը չատ հեչա ա, բանը խոսքը պահիլն ա: Ստեփան, Ստեփան, թե չես սովորիլ քո լաթությունը թարգ անես, քիչ, քիչ կղառնաս փորի գերի, հետո մրգի հետ կընկնիս, վերջը վատ մարդ կղառնաս: Քո աչքածակությունը քեզ կխարի, քիչ, քիչ քո ուտելիքը քեզ դուր չեն գալ, կսկսես ամեն բանի ձեռ տալ, ինչ վոր տեսնիս, ու տիրոջ ուշի, ու վերջ ամենայնի ինչ ձեռիցդ գա, կանես, ինչ վատ բան աես, կգործես, վոր քո փորիդ խաթրն առնիս, ես տեսնողը կամ լսողը ի՞նչ կասի, մեկ լավ մլոք արա քեզ ու քեզ:

Հիմիկ ես տեղ կաց, ու դու ինքդ միտք արա, թե քո արածի բանն ինչպես ա:

Պարոն կարապետը նրան թողեց ու դնաց մյուս աշակերտներին դասնի:

Հենց վարդանը տեսավ նրան, թե չե, հարցրեց, «ի՞նչպես եր, Ստեփա՞նը չի կերել ձեր մոչը:

Յեղիսաբեթ ել են հարցրեց:

«Սիրելի երեխեք, ասեց, չատ ցավում եմ, վոր ասեմ, ամա ի՞նչ անեմ, ղորդ ա, Ստեփանն ա կերել մոչը: Ամա նա ենքան բաց սիրտ ուներ, վոր իր բերնովը իր արածը խոստովանվեցավ: Թե նրան ինչ պետք ե անեմ, չես գիտեմ: Բայց հմիկ բանն ես ա, թե դուք ինչպես պետք ե վարվիք նրա հետ»:

«Թուհ, չատ գարչելի բան ա, ասեց Վարդան. եստուց դենը ել նրա հետ խոսիլն ել ավսոս ա»:

«Բայց գրանով մկամ նա կլավանա, վոր եդպես անենք, հարցրեց պարոն կարապետը: Մեր սիրելի բարեկամի վորդուն պետք ե լավացնենք, ճամփա բերենք, լավ մարդ չինենք, թե չե քաչվելով, պակասությունը չերեսը տալով, անարգելով ինչ կղառնա: Նա դհա ավելի կվատանա, մեր ձեռն ել վոչինչ չի ընկնիլ: Ես պատճառավ պետք ե նրան խեղճ գաճի. նրա համար ցավինի: Ընչի համար ա նա ենպես վոր-

դերի դառել: Ջունքի մերը վաղուց մեռել ա, հերն էլ ժամանակ չի ունեցել, որ նրան մոխիկ անի, նա ի՞նչ մեղավոր ա եռում: Ես որ լավ միտք անենք, չի՞ պետք ցավինք: Մեր սիրան ի՞նչպես չի պետք է մրմնջա: Ես պատճառավ, սիրելի երեխեք, խնդրում եմ, որ նրան չանարգեք, սրածը յերեսովը չտաք, ելի սիրով հետը վարվիք, ինչպես մինչև ես որ, ելի նրա սիրտը չահեք, եղպիսով, եղպիսով, հույս ունիմ, որ նա քիչ քիչ ինքնիրան վոչմանի, ամաչի ու լավանա: Ինչ պակասություն էլ որ մարդ ունենա, քանի որ չասենք ու նրան դովենք, դհա կլավանա: Լավ մարդին վատ ասելով պտա կվատացնենք»: Երեխեքը խոսք տվին, որ ենպես անեն:

Ես միջոցովը Ստեփան էլ իր աչքածակության վրա մտածել եր լավ: Հանկարծ միտքն ընկավ, որ Ցեղիսաբեթ իր կոտրած էնեղենի դիմր ինքն եր վճարել: Մտքումն ասեց, որ քո կերած մուչի հախն էլ դու պետք է վճարես: Ուսուլով եկավ, պարոն Կարապետի փեշիցը բռնեց, քաշեց ու ասեց: «Ա՛ռ, սիրելի պարոն Կարապետ, ա՛ռ քո մուչի դինը, որ յես վերցրի ու կերա»:

«Ջունքի իմ մուչի դինը, որ դու քեղըդլխու վեր ես առել ու կերել ես, վճարում ես, եղ հեսաբի բան է, ասեց պարոն Կարապետը, ես պատճառով յես էլ քո փողը վեր կառնիմ: Բայց եքուց առավոտ յես քո փողը, քո աչքի առաջին մեկ աղքատի կբաչխեմ, որ չիմանաս, թե ենդուր համար եմ քիզանից փող առնում, որ ինձ ցավ է ըլում մուչի ոտինը: Քո մասին եմ չաս նեղանում, Ստեփան Ջան, քո՛: Թե եղ լոթուվթյունը չծոդաս չուտով, աստված հետու տանի, ժամանակով չաս վատ մարդ կըդառնաս ու դլխիդ հազար մի փորձանք կդա»:

Ես որ ասեց, սհաթը խլեց, դասի վախտն եր, ես պատճառավ պարոն Կարապետը խոսքը կարեց:

Յերեկոյին յերեխեքը դլխին հավաքվեցին ու խնդրեցին, որ նրանց մեկ պատմություն անի: Նա էլ նրանց խնդիրը լսեց ու ես պատմությունն արեց·

«Մեկ որ վարժատանը ելած վախտս մեկ ազիզ բարեկամի հետ դըննացի ման գալու: Գնացինք մոտիկ մեչեն, մեկ չվաք տեղ դտանք, մեկ մեծ կաղնի ծառի տակի նստեցինք ու իրար պատմեցինք, ինչ որ անցկացած չաբաթը սովորել եյինք: Ես բանումը մեկ քրքրված, կարտաված աղքատ տեսավ մեզ, եկավ մեզ մոտ ու լալով, աղի արտասանքով աղաչանք արեց, որ նրան վողորմություն տանք:

Բարեկամս ենպես սուր նրա յերեսին մոխիկ արեց ու ասեց, թե որ դրուսը մեզ կատես, թե ի՛նչ ա քեղ ետ տեղը քցել, քեզ մեկ վոսկի կըբաչխեմ: Սմա ճչմարիտ ասա, չխաբես:

«Իմ վողորմած պարոննեը, սկսեց աղքատն ասիլ, ասելած ինձ պատժի թե սուտ ասեմ: Ցես վաճառական եյի, Ն· քաղաքիցը, ու հարյուր հիսուն հազար մանեթի կարողություն ունեյի: Թուրքերն եկան ենպես թալանեցին ինձ, որ չասլիկս մնաց հաքիս ու տունս ել կրակ տվին: Իսկույն մեկ քանի կտոր չոր ձեռք քցեցի, դլուխս տտա, կորա ու ուրտեղ եյի, որ վառք աստուծո իմ կյանքս ելա ազատեցի: Տեսեք, իմ վողորմած ազիք, ես պատճառավ եմ եսպես թշվառացել, որվեն հացին հատրաթ մնացել»: Հայլիք, հայլիք, ասեց բարեկամս, քիսեն հանեց ու մեկ չահլ իրան տվեց:

Աղքատը նրա յերեսին մոխիկ արեց ու ասեց, իմ ազիզ ազա, ափսոսում եմ, որ ինձ չես հավատում, հրես իմ բաչպորդը, առ կարդա:

Հազար բաչպորդ ել որ նչանց տաս, ելի չեմ հավատալ, ասեց բարեկամս, թմղված: Սուտ ես, ինչպես Հուդեն: Դու Փլան քաղաքիցը չի՞ս: Անունդ Մարտիրոս չի՞, ա՞մեն ես ուզում խաբի:

Աղքատի ջանը դող ընկավ, դեղնեց, սպրթնեց, կտավ դառավ, ու սարսափելով հարցրեց, ուրեմն դու ինձ ճանաչո՞ւմ ես:

Ի՞նչպես չեմ ճանաչում, ասեց բարեկամս, քեզ ել կճանաչեմ, քո տանըցիքն ել: Հմիկ քո պատմությունն ուղիղ ատա, մեկ վոսկի ել կբաչխեմ:

«Աչքիս վրա, չունքի եղպես ա, ասեց աղքատը լալով, յես ել կանեմ: Սա, իմ աչքը դուս գա, ես իմ պատիժն ա, իմ հախն ա, ինձ վոչ Թուրքերը թալանեցին, վոչ վորձանք ա պատահել, վոչ ել հիվանդությունն ա ինձ ես տեղը քցել: Ցես, յես իմխ եմ իմ թշվառության պատճառը: Ցես իմ ձեռովը իմ տունս քանդեցի:

Մերս, որ մեռավ (ես խոսքումը սկսեց դլխին ծեծիլ, դոռալ, լայ ընել), ինձ համար վեց հազար մանեթ յեղ քցեց, որ ենդով կարող եյի լավ ապրիլ, լավ որ քաչիլ, թե յես ել աշխատել եյի, չանիս չափա տըվել, ու չափով կացել, ավելի խարչ չարել: Բայց ախ, հողը կենա ես դլխիս, աշխատելու տեղը, վող դաղելու փոխը, սկսեցի աչք ածիլ, թե ինչ տեղ մեկ լավ թիքա կա, որ առնիմ ուտեմ: Ով քիսեն եր լցնում, յես իմս ամեն որ դարդակում, ու փորիս, ես անիրավ փորիս գուլուգ ածում: Միս, ձուկը, հաց, պանիր, մեր յերկրից դուս եկած դինին ու պտուղը ել աչքս չեյին դալիս: Մեկին տասը դովթալաք ատլիս եյի ու ուրիչ յերկրի կերակուր, խմիչք, թանկ-թանկ առնում, փորս անուչացնում, բերանս քաղցրացնում: Մեկ քանի հայվարտ մարդիկ ել քիսիս բերանը ճանաչել եյին, վորտեղ դնում եյի, թողի պես հետս քավում, գալիս եյին: Հացը տեսնելիս, սիրտս խառնում եր: Դրուչկա նստիլն, մեծարք տալն ու անիլը, բաղը դնալն ու դողվանիլը, թուղթ խաղալն ու մյուս բաներըը՝ ել չեմ ասում:

Եսպես փող քիչ-քիչ պոչը կապեց, տուրը կտրեց, յես մնացի դադակ: Սկսեցի պարտքին դուռ անիլ, ժամանակն անցկացավ, վաղեն թամամեց, պարտատերերը դուռս կտրեցին, իրանց փողն ուզեցին, ու չունքի ել տալու ճար չունեյի, սկսեցին տուն, տեղ, դուքան, բաղ, ջազայ դավթիլ ու ինձ դառ ու դարդակ դուս անիլ: Մեկ քանի ժամանակ բարեկամներս ինձ պահեցին, սրանք ել դղվեցին վերջն ու ձեռըները ինձանից

քաշեցին: Եսպես մնացի չիմ չիլաս չոլումն ընկած ու հիմիկ եսպես աղքատ եմ դառել, ու դռնեդուռ ընկել: Ա՛խ, վոր իմ լուսահոգի մերն իմանա, ի՞նչ կասի, ի՞նչ իմ գլխին վայ կտա»:

Բարեկամս.— Մինչև հիմա ճշմարիտնասեցիր: Մեկ քանի բան եղ ունիմ հարցնելու: Են եղ ուղիղ խոստովանվիր: Ինչ ժամանակ յերկու հազար մանեթը մսխեցիր, բաս չի՞ մտածեցիր, թե են չորս հազարն եղ կվչացնա, ընչի՞ չի քո վորաստիրությունդ բաց թողիր:

Աղջատը.—Հազար անգամ միտք արի, ու մտքումս դրի, վոր ես ճամբիցը յեղ դառնամ: Բայց ախ, չար սովորությունն ինձ հաղթել եր, եղ չեր ըլում, չեյի կարում դիմանալ: Հենց մեկ նոր թանկ բան գալիս եր քաղաքը, առաջին առնողը յես եյի: Վորտեղ մեկ լավ թիքա կար, դես յիրեսը չլվացած բերիլ կտայի:

Բարեկամ.— Աստա ինձ, ի՞նչպես սովորեցիր եղ փորի դուլուզը:

Աղջատ.— Երեխա վախտս: Հենց բալի, գիլաս, տանձ, խնձոր, չամիչ, խուրմա, բաղամ աչքովս ե րընկնում, են սհաթին վաղում եյի մոբը մոտ ու ուզում եյի: Մերս եղ ինձ չատ սիրելուցը չե չեր ասում: Եսպիսով, եսպիսով քիչ քիչ ենպես խարաբ ելա, վոր մինչև ոչքիս սիրած, սրտիս ուզած բանը չտայլին, տունը տակ ու վեր կանեյի:

Բարեկամ.— Վոր տեսնում եյիր, թե եղպես բանը սիրում ես, ընչի՞ չեյիր մեկ բանի կպչում, չանիդ չաֆա տալիս, վոր ենքան դադես, վոր քո քեֆդ արամիչ անիս:

Աղջատ.— Ա՛խ, աղա ջան: Տեսնում եմ, վոր դու չափավոր ես ապրել մինչև ես որ, ու չես իմանում, թե չատակերությունն ինչպես ա մարդի չանիցը քցում, փչացնում: Լիքը փորը չի կարող բան տավորիլ: Յերեխա եյի, վոր ես իմացա: Փորս միչա չամչով, խուրմով, բաղամով, չաքարով ու զանազան մրգով լիքն եր ըլում: Եսպես լիքը փորով, վոր վարժատունն եյի գնում, իսկույն քունս տանում եր, յես եղ քնում եյի, վարժապետս եղ դաս կամ դրելու բան ուզիս, տանում, տանը վեր եյի քցում, եղ յեդ խոր քուն մանում: Եսպես քիչ քիչ դառա թամբալ իշի մեկը: Ես ծուլությունն ա, վոր ենպես ա սրտումս քոքտալել, հասատալվել, վոր մատս մեկ բանի վրա դնելիս, հոգիս եղ հետն եմ ուզում տամ: Հիմիկ իմացա՞ր, իմ ազիզ աղա, պատմությունս: Ա՛խ, ամեն ջահել տղի կուզեյի ասել, ինձ տեսեք, ձեր գլուխը լացեք, բանի կարաք դայրաք արեք:

Բարեկամ.— Առ, խեղճ Մարտիրոս, առ ես վոսկիքը, վոր քեզ խոստացա, լավ սիրտս երվում, կսկծում ա, ամա ինչ պետք ե սրած: Տար քեզ համար չոր կարիլ տուր: Թե եղ բնությունը կքողաս, առ գայրաթ կանես քիչ քիչ, դհա ավելի քոմակ կանեմ քեզ, բալքի աստված տալիս ա, քեզ եղ վորտմելի հալիցը ազատում եմ: Ամա բանը քեղանից ա կախ:

Աղջատ.— Աստված քեզ արև ու կյանք տա, աղա ջան: Սուրբ Մարիամ աստվածածինը քեզ ըմբրով կչատացնի: Կերթամ, չոր կառնիմ, քեզ կորհնեմ ու գայրաթ կանեմ, վոր կարդի գամ, լավ մարդ դառնամ: Ասեց, դլուխ տվեց ու որհնելով սկսեց դնալ:

Բարեկամ.— Տեսնինք, տեսնինք, աստված տա, վոր ասածս անկաջուդրդ մնա, յեսևիցը ձեն տվեց:

Ուրախ, ուրախ փողն առավ ու դնաց: Յես իմ բարեկամի ձեռին հուշ տվի ու խնդրեցի, վոր ես վորտրմելի մարդուն ազատի:

Ես ինձ համար չատ հեշտ բան ա, ասեց, թե նա ինքն իրան ազատի, չունքի նրա տանըցիքը լավ կճանաչեմ: Բայց են մարդիքը, վոր յերեխությունից սկսած փորի հետ ընկած ու չատակեր են, չատ գժվար է ազատել: Հավատա ինձ, նա իր համար չոր չի առնիլ: Վոր գոնաղխանա վոր հասնի, ենտեղ կմոխի իր փորը: Յեսևիցը դնանք, տեսնենք ինչ կանի, կվիճանաս, վոր դրուստն եմ ասում:

Մենք նրա յեսևիցը բուսուն բանեցինք, դնացինք: Մտանք մեկ գոնաղխանա, բարեկամս ասեց, վոր նա ենտեղ կըլի անպատճառ:

Նա ճշմարիտն եր ասում: Տեսանք, վոր մեր մուրացկան Մարտիրոսը են տեղ, մեկ ոթախում նստած, մեկ աման ճուկը մչրել եր, ու ուրում եր, վոր մեկ հնդուհավի խորոված կուրկ, վոր առաջին դրած եր: Մտին մեկ չուչա էլ դինի կար դրած, վոր կեսը են ա դարդակել եր: Հենց մեղ տեսավ, տեղիցը վեր կացավ ու քթի տակին մեկ քանի խոսք փնթփնթաց, վոր իր գլուխն արդարացնի: Բարեկամս անկաջ չի դրեց, ու ասեց, «քո գլխին քար էլ աղան, յեսևիցդ դուռնա էլ վչչեն, քեղ քյար չանիլ, աստված քեղ հետ»:

Դրուստն ես ասում, պատասխան տվեց վորտրմելին, ինչ վատ քնություն վոր մարդ յերեխա ժամանակն ա սովորում, նրան մեծության ժամանակն էլ ճար չի ըլիլ: Յես են անբախտ, աստծո յերեսից ընկած մարդն եմ, վոր ինձ էլ դեղ ու դարման չի քոմակ անիլ: Վոչ տուն ունիմ, վոչ տեղ, վոչ մեկ ծածկոց, վոչ բարեկամ: Աստված գլխիս ենպես չի բարկացել, վոր ինձ մեկ դուռը բաց անի: Թե մեկ հիվանդություն էլ պատահի, պետք է մեկ պատի տակ հայվանի պես սատկիմ ու վոտիցս բունեն ջհանդամներոնց անեն: Մի նեղանաք, աղա ջան, դուք լավություն արիք, յես չիմացա: Իմ աչքս գոռանա, ինձ լավություն անիլը տեղն ա՞: Աստված հոգիս էլ չի առնում, վոր պրծնեմ ես սև որիցը»:

Ախ երեխեք ջան, աստված հեռու տանի, գդուչ կացեք, քաղցը բան չսիրեք: Ես վորտրմելին ինչպես վոր ասել եր, ենպես պատահեցավ: Մեկ տարուց յեղը մեկ գիշեր եյի ես հալին ընկել եր մեկ հորի մեջ ու տեղն ու տեղը փեսացել: Ներա փորը նրան քցեց ես հորը, ես հալը, աստված վոչ նչանց տա»:

Երեխեքը ես խոսքի վրա ենպես ցավեցան, ենպես սիրտները մրմըջեցավ, վոր յերկար ժամանակ էլ չեյին կարում խոսալ: Վերջապես Յեղիսաբեթ սկսեց հարցնել. «սիրելի պարոն կարապետ, բաս ի՞նչ պետք է արած, վոր մարդ լոթություն չանի, իր գլուխը պահի»: «Ես որտով ես

հարցնում, ասեց վարժապետը, սիրելի Ցեղիսա, թե հենց ենպես»:

«Սրտո՛վ, սրտո՛վ, պատասխանեց: Ախր եղպես մուտատա բան կըլի՞, վոր մարդ իր լոթուքյունը չթողա, են հալն ընկնի»:

«Ցես քեզ կարող եմ, վոր մեկ լավ խրատ տամ, ասեց պարոն Կարապետ, թե ինչպես պետք է ախպա, վոր քաղցը բան չատ չսիրես ու փուրի դերի չդառնաս: Բայց բարի խրատն ի՞նչ ոգուտ, վոր կատարող չըլի»:

«Ա՛խ, մենք քո խրատը ի՞նչպես չենք կատարիլ, սիրելի պարոն Կարապետ», ասեցին երեխեքը ու Ստեփանն էլ հենց ես խոսքը բերնիցը հանեց թե չէ, աչքը արտասունքը լցվեց ու մնաց ենպես չվարած:

Մյուս որը երեխեքը հավաքվեցին դպրին ու աղաչանք արին, վոր իրանց են խրատն ասի, վոր անցկացած իրիկունը խոստացել եր: Հենց ես խոսքումը մեկ աղջիկ ոտն մտավ, մեկ աման մոչով լիքը ձեռին նըրան ավեց, վոր մերը ուղարկել եր: Պարոն Կարապետը երեխեքանցը քաղցըր յերեսով մոխկ արեց ու ասեց. «կուղե՞ք ես որ իմ պոնաղ ըլիք»:

«Ընչի՞ չենք ուղիլ, վոր ձեր կամքն ըլի», ասացին: «Իրա՞վ, չունքի եղպես ա, Ցեղիսա՛, դնա իրեք թաս բեր»: Թասերը բերեց. նա էլ մոչը վեր առավ, իրեք բաժին արեց, նրանց տվեց, իրան համար վոչինչ չպահեց: Եսպես նրանց բերանը քաղցրացավ, ենպես լիսահով կերան երեխեքը մոչը, վոր էլ միտք չարին թե վարժապետը ի՞նչ խրատ եր տվել: Լավ եր, վոր Վարդանի միտքն ընկավ: «Պարոն Կարապե՛տ, պարոն Կարապե՛տ, չի մոռանաս, ինչ խրատ մեզ կամենում եյիր տալ»:

Կարապետ.— Ցես իմ խրատը տվի, պրծա, հիմիկ դուք դիտեք:

Վարդան.— Են բարի խրատը՞ յես վոր չեմ լսել:

Կարապետ.— Դու հո լսեցիր, Ցեղիսա:

Ցեղիսաքեթ.— Բնավ չեմ իմացել:

Ստեփան.— Ցես էլ նմանապես չեմ լսել:

Կարապետ.— Ասենք թե չեք լսել, հո տեսաք:

Վաղդան.— Ի՞նչպես, մենք չենք հասկանում:

Կարապետ.— Վոր եղպես ա, անկաչ արեք, յես ձեզ կասեմ: Ցես ինքըս էլ մոչը չատ կսիրեմ, իմ մերն էլ դիտի էս, էս պատճառավ ա ինձ վախտ վախտ ուղարկում: Հենց եսդուր համար, վոր յես մոչ չատ եմ սիրում, չատ անգամ ղրաղ եմ դնում ու չեմ ուտում, վոր ինձ հաղթեմ: Ջունքի թե վոր ամեն վախտ մոչ ուտեյի, յերը վոր ձեռս ընկներ, են ժամանակը, են ցանկությունը իմ միջումը կվատներ, վոր ամեն սհաթի, ինչ տեղ վոր ինձ ռաստ գար, իսկույն վրա կթռչեյի, կուտեյի, էլ չեյի հարցնիլ, թե ո՞ւմն ա: Դուք էլ եսպես պետք է անեք, սիրելի երեխեք, ու ձեզ հաղթեք, հասկացո՞ք, թե չե»:

«Շատ լավ, ասեց Ստեփան, ինչ սհաթի վոր մոչ ընկնի ձեռս, էլ չեմ ուտիլ»:

«Դու ասածս չհասկացար, սիրելի Ստեփան, ասեց պարոն Կարապետը: Ջե թե մենակ մոչը լավ համ ունի, հազար տեսակ կերակուր ու ուտելիք կան, վոր չատ համով են: Ես կերակրներիցը պետք է մարդ մեկ որ եսուց, մեկ որ ենդուց ձեռք քաշի: Եսով կարելի յա իր լոթուքյունը հաղթիլ, ու վերջ ժամանակի մարդ վոչ փորի դերի կդառնա, վոչ փորձանքի կպատահի»:

«Ես մեկ դժվար բան չի», ասեց Վարդան: «Եղ հո մեկ խալի պես բան ա», ասեց Ցեղիսա: «Ցես էլ կարող եմ եղ անիլ», ասեց Ստեփան: «Տեսնինք», ասեց պարոն Կարապետը:

Իրիկնահացի վրա, իրավ, վոր իր աչքովը տեսավ:

Ցեղիսաբեթին իր սիրած կերակուրը տվին— խորոված ձուկը: Աչքը մնաց բաց, վոր տեսավ, մեկ աման վեր առավ, վոր առաջին դրած եր, ձեռը ջոգեց չանգալին, վոր մեկ խորոված ձկան քամակի լոխի ու առաջը քաշի, իսկույն պարոն Կարապետի առածը միտքը ընկավ, չանգալը վեր դրեց ու ամանը ղրաղ դրեց:

Պարոն Կարապետը, վոր տեսավ սիրտը փառավորվեց. մերն էլ տեսավ, զարմացավ, չունքի բանից խաբարուքյուն չուներ, ու հարցրեց վախվախելով, «Ցեղիսաբեթ ջան, ընչի՞ չես ուտում, հիվանդ չե՞ս հո, ի՞նչ ա պատճառը»:

«Ինչ հիվանդություն, ասեց ուրախ, ուրախ, ես որ չեմ ուզում ձուկն ուտեմ»:

Մերը ձենը կտրեց ու մտքումը կսկիծում եր, թե չըլիմ են որը մեկ անկարդություն ըլի արած, վարժապետը բարկացած ըլի վրեն, ու հրամայել ըլի իրիկնահաց չուտի: Հենց վոր հացը վեր քաշեցին, իսկույն պարոն Կարապետին ղրաղ քաշեց մերը, ու հարցրեց, թե ինչ պատճառավ չի են որը ձուկը կերել: Նա բանի դորությունը պատմեց, ու մերն էլ չատ ուրախացավ, վոր ենպես բարի խրատը լսել ու պահել եր աղջիկը:

Մյուս երեխեքն էլ եսպես արին ու վախտ վախտ են կերակրները վոր իրանց սիրտն ուզում եր, առաջներիցը ղրաղ եյին դնում: Հետո իրանք եյին հավատացնում, թե եսպես բանը հեչ դժար չեր: «Ցես չեյի կարծում, ասեց մեկ որ Ստեփանը պարոն Կարապետին, վոր են բանը, վոր սիրտս սիրում եր, կարողանայի աչքիցս հեռացնել, թե չե առաջ ժամանակը ինչ բան աչքս տեսներ պետք է վոր ուտեյի, թե չե ինձ կբռպանեյի, վոր չտային: Հիմիկ վոր եսպես սկսեցի, քիչ քիչ բաղի բանից ձեռք քաշիլ, տեսնում եմ, վոր չատ հեշտ ա: Ինչ ուզենաս, բեր հիմիկ առաջս, էլ ինձ չես կարող խաբիլ, վոր չուզենամ չեմ ուտիլ»:

Պարոն Կարապետը երեխեքանցը խոխան առավ, համբուրեց ու ասեց, «հիմիկ յերկու անսամ ենքան սիրելի յեք ինձ, ձեզ ունենամ, լավ է, քանց բոլոր թագավորությունը աչխարքիս, հիմիկ ճշմարիտ մարդ եք: Անասունն ա ենպես մեկ խոռակ տեսնելուն պես, սիրտը դնում, վրա թըռչում, վոր ուտի, բանական մարդը ենպես պետք է իր բնությունը կորցրի, սանձի, վոր աչքը սիրած բանն էլ տեսնելիս, ձեռը չի տա, թե խմանա, անպատչաճ է»:

Դ·հա չաո քան ունիմ ձեզ ասելու, սիրելի երեխաք, ասեց պարոն Կարապետը: Ով իր վորի յեուևիցը կընկնի, ինչ վոր ձեռն ընկնի, ինքը մենակ կուտի, ու ել ենքան չի մտածիլ, վոր աղքատների սիրտն ել առնի: Բայց ով իրան ցանկությանը չափ ունի դրած, նա կարող է վոր միշտ մեկ քան ել յեդ քցի, վոր խղճի ու անճարի քոմակ անի: Եաոուր վրա ձեզ մեկ պատմություն կասեմ, անկալ արեք:

«Մեկ ջահել տղա, անունը Մարկոս, ինքը հարուստ մարդի վորդի, ուղարկեցին համալսարանը (ունիվերսիտետը), վոր ուսումն առնի, ու ամեն տարի շաո փող եյին ուղարկում հերնմարը: Ենքան փող նա իր գլխի ու փորի վրա յեր խարջում: Որը հինգ, վեց սեսակ կերակուր ուտում, մեծարք անում, ղոնաղներ կանչում, քեֆ անում, ենպես, վոր են ուղարկած փողը հերիք եյ չեր գալիս: Շաո անգամ աղքատ մարդ ուսաո գալիս, վոր վոզորմություն եր խնդրում, նա յերեսը յեդ եր դարձնում ու ասում, թե ձեռին փող չունի: Դրուսան ել եր ասում, չունքի բոլոր ձեռի ելած փողը քաղցր բաների յեր տալիս, ուրիշ տեղ խարջում, իր քեֆի հետևին:

Մեկ որ ել դնաց ղոնաղխանեն, վոր իր ճաչվա հացն ուտի: Բոզբաշ ասես, տանդակած հավ, ձուկը, պախրի խորոված, հնդու հավ, խոխոջ, փախլավա, աստծո ամեն բարությունը ու մեկ չուչա ել լավ կախեթու դինի առաջը դրին, վոր անոշ անի: Հենց բողբաշն սկսեց ուտիլ, փոշմին եկավ ու հետո ել մեկ ճամփորթ, վոր ցրտի ձեռիցը սառել, մեկ սուճախում կուչ եր յեկել:

«Ի՞նչ կուտես, վոր բերեմ ուտես», հարցրեց նրան տան նոքարը:

«Ցե՛ռ, պատասխանեց ճամփորթը· վոչինչ, խնդրեմ մեկ կոր հաց ու մի թաս ել ջուր բերես ինձ համար: Դեռ հարյուր քառասուն վերստ ճամփա ունիմ վոր մեր տունը հասնիմ, ու ձեռիս փողն ել պակսել ա»:

Մարկոս գդալը ձեռն առավ, վոր բողբաշն ուտի, ճամփորթը, վոր հնարես չեր դողում, վրթվրթում, սիրտը ցավեց, խնկուն գդալը վեր դրեց ու մխաք արեց: Իմ խղճմտանքն ինչպես կվերցնի, վոր են խեղճ ճամփորդը հնաեղ սառած, չորացած ընկած ըլի, յես եստեղ քեֆի անեմ, նա ջուր ու ցամաք հաց ուտի: Աչքն արտասունքը լցվեց, ես վոր միաք արեց: Դնաց վանջարի մոտ, աչքերը սրբեց: Փոքր վոր սիրտը նստեց, դնաց ճամփորթի մոտ, ձեռը բռնեց ու ասեց. «Աչքի՛ լուս, ես ցուրտ, ղիամաթ վախտին վոր դուք ճամփա յեք դուս եկել, եսպես տաք կերակուրը ձեղ ավելի հարկավոր է, քանց ինձ: Խնդրեմ իմ խաթեր ես սերն ինձ անեք, ու ես կերակրներդը վայելեք, վոր ինձ համար բերիլ եմ տվել»:

Պարկեշտ ճամփորդը սկիզբը չեր ուզում, ամա չունքի վոր շաո խընդրեց, հանձն առավ նա ել ու նստեց հացի: Մարկոս՝ կանգնած մեկ ել

թամաշ արեց, տեսավ, թե ինչ իշտահով հացն ուտում ա, դուս եկավ, դնաց տան սիրոջ մոտ, կերակուրների փողը տվեց ու թամբահ արեց, վոր ինչ կերակուր իր համար սսել եր, նրան տային:

Հենց վոր տուն եկավ, ճամփին մեկ հաց եր առել, են կերավ պըրծավ ու ոթախումբ տխուր, տրտում դես ուդեն դնաց: Մարկոս, Մարկոս, ինքն իրան ասում եր, Մարկոս, դու մինչև ես որ լավ մարդ չես եղել, մինչև ես որ փողդ հենց քո քեֆի համար ես խարջել ու մեկ աղքատի ելա փայ չես տվել: Ջանըսի՞ն կարող եյիր մինչև ես որ պահիլ, քանըսի՞ սիրտն առնիլ, յարեն սաղացնիլ, աչքի արտասունքը ցամաքացնիլ, քանըսի՞ արել, ա՛խ, ինչ վոր ընկել ա ձեռքդ, քո քեֆի, քո ուտել խմելու վրա յես խարջել, քո փորը կշտացրել, բաս ասսված ես կվերցնի՞: Եաոուց դենը ել չի պետք ե ըլի: Ձե՛, չե՛, ես ճամբիցը պետք ե հեռանաս:—

Ես ասեց ու վաղեց, սնդուկը բաց արեց, մեկ քանի վոսկի հանեց ու ել յեդ չտապով դնաց ղոնաղխանեն, վոր ճամփորթին դտնի: Լավ եր, վոր ես բոպեին եկավ, թե վոր մեկ չարեք սհաթ ել յեդի յեր յեկել, ճամփորթը փոշմով կերթար, ել չեր վրա հասնիլ:

Հենց Մարկոսին տեսավ, թե չե, վաղեց առաջը, ձեռը բռնեց ու ասեց, «հազար բերան չնորհակալություն»:

«Դուք սխալ եք, սիրելի բարեկամ, պատասխանեց, յես չեմ եկել, վոր ինձանից չնորհակալ ըլիք··· ձեր ճամբի փողը պակսում ա··· ես լավություն ել ինձ արեք, ու ես մեկ քանի չահին վեր առեք ձեղ ճամփի խարջի: Ես վոր ասեց, փողը ձեռը դրեց··· «ես չաո է, չաո է», ասեց ճամփորթը, բայց ընչանք նա իր խոսքը թամամ կաներ, Մարկոս ո՞վ պիտի թե վոր քուչեն ընկած դնում եր:

Ճամփորթը մնաց տեղն ու տեղը սառած, կանգնած: Աչքերիցը արտասունքը թափել, դնում եյին: «Ա՛խ, տեր աստված, հիմիկ տեսնում եմ, վոր ես աչխարքումը լավ մարդ ելի դտնվում ա: Թե ես աստվածասեր մարդը չեր եղել, յես կորած եյի: Մեկ քանի ապաո յեր մնացել քիսումս: Սրանով ի՞նչպես պետք ե տուն հասնեյի: Վատով էլ, վոր դնայի ելի փողս հերիք չեր գալ, վոր բարդա ու չորերս ելա տանիլ տայի ու ինձ էլ պահեյի: Հիմիկ, փառք աստծո ամեն դարտից, ցավից պրծա ու կարող եմ իմ հորնըմոր մոտ դնալ: Բոլորն էլ կուրախանան, վոր լսեն ես պատվական մարդի արած լավությունը ու սրան կորհնեն»:

Ձիանը հազիր եր, ես ասեց ու սելումը նստեց: Փոշթը Մարկոսի վանջարի տակումն անցկացավ:

Հենց դանգակի ձենն իմացավ, վանջարի արանքումը մտիկ տվեց ու տեսավ, վոր ճամփորթը դեմը դնում, դեմը աչքեր ներ սրբում, յա ձեռները բարձրացնում, յերկինքին նայում, յերեսին խաչ հանում:

«Ախ, ձեն տվեց Մարկոս, չաո ուրախություն եմ տեսել իմ որու-

մը, չատ լավ կյանք քաշել, դորդ ա, ինչ քեֆ ասես արել եմ, կերել, խմել, պար եկել, ու հաղար բան արել, բայց եսպես ուրախություն բը-նամ, բնավ չեմ տեսել, վոր հիմիկ տեսնում եմ, չունքի խմանում եմ, վոր մեկ մարդի սիրտն առել, ուրախացրել, ազատել եմ... Հենց խմանում եմ, թե ես սհաթին դրախտում եմ: Աչխարքի թագավորությունն էլ աչքս չի պալիս: Ա՛խ, մարդի լավություն անելը ինչ լավ բան ա էլել: Տեր աստ-ված, թե վոր ինձ կյանք տալու կես, հենց ենդուր հաշտ տուր, վոր եստուց դենը միշտ լավություն անեմ:

Զե՛, չե՛, ինչ ճամբով գնում եյի մինչև ես որ, են ճամբիցը պետք է յեղ գառնաս, յեղ գառնամ»:

Իրավ վոր վոխվեց· նրա սեղանի խարջը մինչև ես որ, չարաթը չորս մանեթ եր նստում, դիմին իրեք մանեթ, ի միասին յոթը մանեթ: Հիմը-կուց դենը մեկ ուրիշ գոնաղխանում սկսեց հաց ուտիլ վոր չարաթը մի մանեթ եր նստում: Գինի էլ ամեն որ չեր խմում, չայի, գարֆի տեղ չատ անգամ կաթն եր խմում: Եսպեսով չարաթը բավական վող յեղ եր քցում: Դրուչկա նստիլ, կարթ խաղալ, հո ենպես եր ատում, ինչպես ոձի յաղու:

Ցեղ քցած վողը ամեն չարաթ որ անդուվի մեչ եր գնում: Ինչ սը-հաթի վոր մեկ տեղ, մեկ խեղճ, աղքատ մարդ եր տեսնում, խնդուն դա-յիս, ես վողիցը հանում եր, նրան պահպանում: Չեմ կարող պատմիլ, թե ինչքան լավություն եր անում:

Մեկ որինակ եստեղ պատմեմ: են ամառը խիստ չատ խալխ հարինք եր ընկել, մեռնում եր: Շատը իրանց մահը տեսան, որ եր ըլում, վոր չորսը հինգը գնում եր: Հանգստարանը նրա տանիցը մոտ եր, ու նա էլ ես իր աչքովը միշտ տեսնում եր: Ընչո՞վ են մեռել, հարցնում եր, հա-րընքով, տանտերը ջուդաբ եր տալիս:

Մեկ որ էլ սեյր եր գնում, պարոն հեքիմ Սոլոմոնը ռաստ եկավ, սկսեցին զրից տալով գնալ, հենց ես սհաթին մեկ մեռլի լաչ տանում եյին, վոր Թաղեն: «Տեսնիս ես խեղճ երեխեն ընչո՞վ ա մեռել», հարցրեց պարոն Մարկոսը:

«Հարընքով», պատասխանեց հեքիմը:

«Սիրտ ընչի՞ յես Թողում, պարոն հեքիմ աղա, վոր եսքան մարդ հա-րընքով մեռնում ա»:

«Իմ մեղը չի, պատասխանեց հեքիմը, ասելած էլ գիտի: Ամեն հիվան-դի վրա գնում եմ, վորտեղ վոր ինձ կանչում են ու ինչքան ձեռիցս գա-լիս ա լավ խրատ եմ գրում, ամա ի՞նչ անես գեղի վողը չունիմ, վոր տամ, ենպես էլ ինչ կերակուր հարկավոր ա, ենքան կարողություն չու-նիմ, վոր չինիլ տամ: Սրանից ի՞նչ ոգուտ գուս կդա, վոր յես գեղ եմ գրում ու կերակուրը նշանակում, ինչ վոր ուտելու յեն վող չունեն վո-ղոմելիքը, վոր առնեն, ասածս կատարեն, վոր ճար ըլի: Տասը հիվան-

դից ութը աղքատությունից են մեռնում, հավատացիր ինձ, լավ իմա-նում եմ, ամա ձեռիս ճար չկա»:

«Աղքատությունի՞ց են մեռնում վողորմելիքը, ասեց պարոն Մարկո-սը ու խելիմ վախտ ենպես լուռ դնաց, հետո ելի ասեց, աղքատությու-նի՞ց են մեռնում հարընքով: Պարոն հեքիմ աղա, խնդրեմ ինձ ես լա-վություն անեք, ու ով վոր հարընքով հիվանդ ե ու ձեղանից ճար կու-դի դեղ դրեք ու ինչ կերակուր հարկավոր ա տալ տաք: Ինչ դինն ա, դրեցեք, կես կվճարեմ: Թե վողս կհատնի, են ժամանակը աստված վողոր-մած ե, հալբաթ մեկ դուռը բաց կըլի նրանց համար»:

Հեքիմը՝ ինչ վոր ասել եր, արեց ու տատներկու մարդի մահվիցը պըր-ծացրեց:

Եստուց դենը ինչ վախտ վոր Մարկոսը հեքիմի հետ դուրս կգար ման գալու, հեքիմը նրան մեկ որ մեկ հալուրի, մեկ որ մեկ յերեխայի նշանց կտար, ու կասեր, սրան դու յես մահից ազատել: Ա՛խ ես լսելիս, հենց իմանում եր սաղ աշխարքը իրանն ա»:

Երեխեքանց սիրտը չարժեց չատ ես պատմության վրա, ու ամենն էլ մաքըներումը դրին, վոր իրանց բերնիցը կորչեն, ու հետեղ, ենտեղ խեղճ մարդի լավություն անեն:

Հենց մյուս որը նրանց ուզածը պատահեցավ· իրանց վարժապետի հետ գնացին բաղը: Ճամփին մեկ հինիկ ռաստ եկավ նրանց ու ձեռին բալի ու-ներ: «Կհրամայի՞ք, վոր մեկ փոքր առնինք», հարցրին:

«Ընչի՞ չի», ասեց վարժապետը: Կնկանը ասեց, վոր մեկ ֆունտ քա-չի, մեկ սալայի մեչ դնի, մեկ կես սհաթից յեղը գա, իր սալեն տանի:

Հենց վոր առան, Թայթի տվին, վոր չուտով հասնին բաղը, չուն-քի բանը պետք ե ուտելին:

Հենց բաղի դուռը բաց արին, տեսան, վոր մեկ աղքատ հինիկ, անունը Մագդաղ, չորս երեխեն ղլխին արած նստած առավոտվա հացն ուտում եր, վոր չոր հաց եր ու դարդակ ջուր:

«Բարի լույս Մագդաղ, ասեց պարոն Կարապետը, դեռ ելի սուք ես անում մարդիկ մեռնելու վրա՞»:

Մագդաղ·— Ջանի չունչս բերնումս ա, սուքն իմ աչքիցս, ախն իմ բեր-նիցը կկարվի՞: Ջանի վոր նա մեռել ա, վոչ պահող ունինք, վոչ երեխեքս հեր: Լավ ե, վոր աղա Տիգրանն էլ ա ինձ խղճում, իր բաղումը ձեռս բան ա տալիս, վոր ապրիմ: Եստով ելա ղլուխս կիառավարեմ:

Կարապետ·— Երեխեքդ մկամ կարո՞ւմ են աչխատիլ:

Մագդաղ·— Ինչքան կարող են: Վահանը ծառեր ա տնկել, Մարիամ ջրում ա, Բարսեղը քոլը քաչում, և իմ պստիկ Սալոմեն էլ մեկ պստիկ սելով քոլը դուս ա տանում, դեն ածում:

Կարապետ·— Շատ սիրուն: Ճաչին ի՞նչ պետք է ուտես քո երեխե-քանցովը:

Մագդաղ.— Ինչ վոր առվոտն ունեյինք: Ջուր ու հաց: Իրիկունը, վոր տուն դնանք, ուզում եմ, վոր սրանց համար կաթնով յափեմ:

Կարապետ.— Մնաս բարով, սիրելի մայրիկ, աստված վորդիքդ քեզ բաշխի: Աչխատիր, վոր նրանք բան անեն, են ժամանակը նեղություն չեն քաշիլ:

Ես ասեց պարոն Կարապետն ու հեռացավ: Երեխեքը դլխին հավաքվեցին, ու ասացին: «Սիրելի պարոն Կարապետ, կարո՞ղ եմ, կհրամայե՞ք, խնդրում եմ Թողեք....

Կարապետ.— Ջեմ իմանում, ինչ եք ուզում: Թող մեկն ասի, վոր իմանամ: Վարդան, ի՞նչ ես կամենում:

«Ուզում եմ, իմ բալա են աղքատ կնկանը տամ»: «Ցես ել եղ եմ ուզում, յես ել եղ եմ ուզում», ասեցին են մյուսները:

«Ցես ել եղ եմ ուզում», ասեց պարոն Կարապետը: «Սաեփան ջան, ես բալը վերցրու, տար են խեղճ կնկանը տուր ու ասա, ես բալը մեկ մարդ քեզ ուղարկեց»:

«Ա՛խ, եսպես բարի մարդիկ ել կըլինե», ասեց են կնիկը, երեխեքն ես վոր տեսան, սկսեցին մոր չորս կողմովը դես ու դեն վազիլ ու ուրախ ուրախ բալը իրանց դդակն ու գոգնոցն ածիլ:

Սաեփանը վազելով դնաց իր ընկերների մոտ, ու պատմեց, թե ինչպես երեխեքն ուրախացան բալի վրա:

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Սաեփան վոր յեղ դարձավ, Վարդան ու Ցեղիսա նրան տարան իրանց մարդերը ու իրանց ցանած, անկած կանաչին ու պողընները նչանց տըվին: Վարդան մեկ մեծ աման լիքը սալաթ քաղեց, Ցեղիսա ուհան ու սամլթի, չունքի սրանց հոտը մերը չատ եր սիրում:

Ծաղկները դեռ չեյին հասել, վոր քաղի:

Սաեփանի սիրտը դնաց, ես վոր տեսավ, վազեց, մեկ գանակ բերեց, վոր մի փիչ ել ինքը քաղի, հենց են ոհաթին միտքն ընկավ, վոր ինքը հող չունեը, վորտեղա՞նց պետք ե քաղեր, ու ուրըչի բանին ել ձեռը տալը, դիտեր վոր մեղք ա: Խռոված, ջգրված, իր ընկերներիցը բաժանվեց, դանակը դեն քցեց, դնաց մեկ ղրաղ ու սկսեց լալ:

Ցեղիսաբեթ ես վոր տեսավ, պարոն Կարապետին նչանց տվեց:

«Ի՞նչդ ա պակաս», հարցրեց վարժապետը: Բայց Սաեփանը քամակը նրան արեց ու ջուղար չի տվեց: Ցեղիսա ու Վարդան դնացին մոտը ու հարցրին նրան, բայց վոչինչ չիմացան: Սրանից ղայրու, չունքի Վարդան ձեռը նրա ճտովն եր քցել, վոր նրանից մեկ խոսք իմանա, Սաեփան ենպես ջգրված, բարկացած եր, վոր նրան բրթեց, դեն քցեց:

Կարապետ.— Թողե՛ք, Թողե՛ք, սիրելիք, դրանից հեռու կացեք, դա իր գռեն ա ուզում նչանց տա: Դրա մտքումը մեկ բան կա, չի գիտում,

թե ինչպես ուզածը ձեռք բերի, լաց ե ըլում, վինթվինթում, բրթում, ու ուզում ա, վոր մենք իրան խնդրենք, վոր իր ուզածը մեզ ասի: Բայց դա սխալվում ա: Եզպիսին վոր զոռով ա ուզում բանը առաջ տանի, ենքան կանիմ, վոր սրտի հերսը թողա ու կակղի:

Ցեղիսաբեթ պարոն Կարապետի անիաչումը ասեց, թե նա ել ա ուզում հող ունենա: Բայց պարոն Կարապետը մատը բարձրացրեց ու հրամայեց, վոր սուս կենա:

«Ով ինձանից բան ուզիլ կամենում ա, պետք ե ինձ ասի ու խնդրի են մասին: Զոռով ինձանից վոչվոք բան չի ճարիլ: Եկեք, դնանք, Թողեք եղ զոռ անողին: Գնանք տուն: Ինչ վախտ փորը սովի, են ժամանակը ինքը կգա մեր յեղևկը»: Իրավ, վոր փեսը վերցրեց, վոր դնա, Ցեղիսա ել դնաց, ամա վարդան մեկ ել վազեց Սաեփանի մոտ, ու ասեց, «սիրելի, խելքդ ղլուխդ հավաքիր, դնա պարոն Կարապետի մոտ ու քո բերելի, նովըդ ասա, ինչ պակասություն ունես: Ճչմարիտ նա հանաք չի անիլ, ու քեզ եսառել կկորցա, թեկուզ իրեք որ ել սոված մնաս»:

Սաեփանը տեսավ, վոր բանը պինդ ա, ու սրանց մոտ ենպես չի, ինչպես իր հոր տանը, վոր մեկ բան ուզելիս տուն ու տեղը կրակ եր տալիս ու ասածն անում: Իսկույն աչքերը սրբեց, իր վերակացվի յեսևիցը վազեց, ձեռը բռնեց ու ասեց· «սիրելի պարոն Կարապետ, չի՞ ըլի, վոր ինձ ել մի կտոր հող տաս, վոր չինեմ»:

«Եստուր համար եյիր լալիս, ամոթ քեզ, ախր վոր ուզածդ եդ եր, ընչի՞ չեյիր հենց են ոհաթին ասում: Ուրեմն ես քեզ իրաս ըլի, Սաեփան ջան, վոր մեկ բան ուզելիս, ել զոռով չուզես: Զոռով մեր տանը վոչինչ չես առանալ: Հիմիկ չունքի հերսդ վեր ես ղրկել ու խնդրում ես, կաենեմ, քո խնդիրը տեղ կհասցնեմ»:

Ես ասեց ու սկսեց երեխեքանց հետ բաղումը դես ու դեն ընկնիլ, ամեն տեղ աչքն ածիլ, վոր տեսնի, թե ինչ տեղ կա ենպես հարմար հող, վոր նրան տա: Տեղ չկար բնավ: «Եստոնք լոլոր պարոն Տիգրանինն ա, վոր առաջուց ինքը ցանել, տնկել ա: Ես տեղն ել վարդանինն ա, են տեղը Ցեղիսաբեթինը: Հենց ես մեկ կտոր տեղն ա մնացել դարդակ, վոր քոլակալել, ու քարով, հողով լցվել ա: Հույս ունիմ, վոր պարոն Տիգրանը ես տեղը քեզ կտա, թե իրան խնդրես: Ամա լավ միտք արա, տես թե ենքան, սիրտ, համբերություն ունես, վոր ես քոլը, ախպը, ջանջալը սրբես, խոտակես, վոր մեկ բանի պետք դա՞»:

Սաեփան անկաչի տակը քորեց ու քուցին անելով, ասեց, «ես չատ դժար ա ու չատ ջաֆա կուզի: Են աղքատ կնկանը վոզ կատա, նա ինձ համար կսրբի, կչինի մեկ որվա միջումը ու ինձ կտա»:

«Եդ կարող ես անել, ընչի՞ չի, պատասխանեց պարոն Կարապետը, ամա ի՞նչպես ես կարծում, դու ել քո մարդերի վրա ենպես կուրախանաս, ինչպես վարդանը, վոր ինքն իր ձեռովն ա չինել»:

«Չալըթի, վոր ենպես չեմ ուրախանալ, ասեց Սաեփանը: Ինչ պետք

ե աբած. մարդ պետք ե սիրաը պինդ բռնի, յես ել կսկսեմ ձեռք տալ», ասեց ու մեկ պառիկ սել բերեց ու ախպը դուս տարավ, վոր ուզած տեղն վրա յեր: Վարդան ել քոմակ արեց, ու կես ակաթ չքաշեց, տեսավ, վոր են տեղի չաա վայն խտակվեց, ել ինչ, ենպես նա յեր ուրախ, թագավորն ել չեր:

Պարոն Կարապետը ես վոր տեսավ, Սահականին մոտը կանչեց, ձեռը գլուխը քաց ու ասեց, «Քե Եպես Ջանիդ Ջաֆա կաաս, ու բանիդ հաստատ կըլիս, դու ինքդ կտեսնիս, վոր քո դայրաթովը եապես մեկ զաղարկ չել տեղը չուտով կչինվի, պատդ կաա, դու ել կուրախանաս, տեսնող, լսողն ել»:

Սահականն ես խրատը անկաջումը պահեց, որը կես ակաթ իր տեղի վրա աչխատեց ու տատն երկու որից յեղը իրեք մարդ գլուխ ունկով, վոր ցանեց ել: Վերջի սերտևը հենց ցանեց, պրծավ, վրա թռավ, իր վարժապետի ճտովն ընկալ ու ասեց. «Շատ չնորհակալ եմ ձեր բարի խրատի համար: Հիմիկ տեսնում եմ, վոր մարդ, յերթե իր բանին հաստատ կենա, ինչ դժվար բան ել վոր ըլի, գլուխ կտանի»:

ԳԼՈՒԽ ՅՈԹՆՅԵՎՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Բաղիցը տուն գնալիս, ելի են աղքատ կնկանը պատահեցան, վոր նրա երեխեքանցը բալը ավել եյին, ու սրանց վոր տեսան, չատ քաղցրությամբ գլուխ տվին:

«Դուք չատ լավ արիք, ասեց պարոն Կարապետը, վոր ձեր բալը ես երեխեքանցը տվիք, սիրելի երեխեք: Թե մենակ դուք եյիք կերել, ես ուրախություն չեյիք ունենալ, բալի հետ ուրախությունն ել կերթար: Բայց չունքի վոր աղքատի յեք նրանով մխիթարել, են ժամանակը ես ուրախությունը հավիտյանս հավիտենից ձեր սրտիցը չի գնալ: Քանի ձեր արածը ձեր միաքն ընկնի, ենքան ձեր սիրտը կմխիթարվի, կհովանա, յավուրյուն ես համն ուքի»:

Են ժամանակից սկսած, իրանց համար սովորություն եյին արել երեխեքը, վոր ամեն չաբաթ յա ես կերակուրը, յա են՝ իրանց բերնիցը կտրեն, վոր աղքատի տան:

Բալ, տանձ, խնձոր, վարդալա, չաքարլամա, միրգ ծախելիս, որդ ա՝ բաղի վախտ առնում եյին, ամա չատ անգամ յերեխաները չուտ եյին ապես, անցկենում ու իրանց խարջուղը մեկ անդուկ քցում, պահում:

Պարոն Կարապետը մեկ աղքատի տեսնելիս իսկույն երեխեքանցը հարցնում եր, թե ինչքան վոդ են յեդ քցել իրանց աղքատի խաղինումը, վոր մեկ չոր, կամ ուտելիք, կամ դեղ առնի, ներանց տա: Ջունքի, վոր շատ ու քիչ, միչտ վոդ դանվում եր, եսպես աղքատի վայը միչտ դուս եր գալիս: Բաղի հիվանդի համար դեղ եյին առնում, սիրտը չահում, մահից աղատում, բաղի աղքատ յերեխի համար չոր եյին կարիք տալիս,

վոան ու գլուխը նորում, բաղի անճար ճամփորդի քոմակ եյին անում, վոր ճամփից յեղ չընկնի, դնա, տեղ հասնի: Վո՞ր մեկն ասեմ, վոր մեկը թողամ: Ներանց տունը հայր Աբրահամի տունն եր դառել: Վորքան պակասում եր, ենքան լցվում եր: Չալար աչք, վոր արտասունք եյին չափում, հենց են եյին խնդրում ասելածանից, վոր նրանց արև միչտ պայծառ մնա, նրանց կյանքը յերկար ըլի: Մի՛ խոսք, բաղի մարդ կանչ թե տալով տալով, ծովն ել կհատնի: Բայց չէ: Որը մեկ թաս դինի պակաս խմի մարդ, մեկ տեսակ կերակուր չարաթը պակաս իր տանը պատրաստի, մեկ հագուստ ավել կտրի, ընկած ներանց աոաջը, գնում եր: Հենց սրանց տեսավ, թե չէ, չնորհակալու աղջիկը վազեց ջրի ափը, ու ուզում եր, վոր մեկ քանի ծաղիկ քաղի, ներանց թավալա անի: Սրանք ել, վոր տեսան նրան, չատ ուրախացան: Ախա՜... վողորմելի երեխեն հենց մեկ փոքր ջրի վրա կռացավ, ձեռը մեկնեց, վոր մեկ լավ ծաղիկ քաղի, ել իրան չի կարաց բռնել, ու ջուրն ընկավ: Բոլորն ել ընկան ջրի ափը, վոր նրան ազատեն, չկարացին: Կատաղած դեսը վողորմելուն քաշեց մեջը ու պլորելով տարավ: Սրանց ձեռիցը ել վոչինչ չեկավ: Գոռացին, հարայ տվին, ինչքան զորություն ունեյին: «Ոգնեցե՛ք, ճար արե՛ք, հա՛սեք, դնա՛ց, մեռա՛վ, հարա՛յ, դա՛ա»: Ես ձենը, վոր լսացան, չատ մարդ հավաքվեց, ամա մեկին ելա սիրտ չարեց, վոր են ջրատար աղջկանն ազատի:

Սահական տեսավ, վոր մեկ գեղջի ա գալիս, նետի պես գնաց առաջը ու ձեն տվեց:— Ա՛յ աստվածասեր մարդ: Հասիր, քոմակ արա, մեկ աղջիկ ջրումը... ընկել... յերկու վոտկի կաաս... Ի՞նչ տեղ, ի՞նչ տեղ, կանչեց քաջասիրտ մարդը: Տեղը նրան չհանց տվին: Հենց են րոպեին չուխան գեն քցեց, չրըխպ, ընկավ ջրի մեջը, ու... յերկու վայրկյան չքաշեց, աղջկանը դուս քաշեց, ափը բերեց: Բոլոր տեսնողները ձեն արին: Աֆարիմ աղամարդ: Ամա,— ներանց ուրախությունը ջուր դառավ, վոր տեսան թե են խեղճ աղջկա բերնումն ել չունչ չի կար, ներանց խնդությունը սուգ դառավ, ու ամենն ել սկսեցին լալ:

«Լավով ի՞նչ կըլի», ասեց պարոն Կարապետը, գեղջուկ ձեռիցն են մեռած աղջկանն առավ, մեկ մոտիկ տուն տարավ: Վարդանին հեռվից տեսնելուն ուղարկեց և աղջկանը յորղան, դոշակի մեջ պառկացրեց: Հենքի՝ն ել եկավ ու մեկ չարեք ակաթ չքաշեց, աղջիկը ել յեդ չունչն եկավ

ու վոտին կանգնեց: Նրանց ուրախությունը ո՞վ կարա պատմել: Աղջկա հերնըմերը, վոր ես բանն իմացել, եկել եյին, արտասրնքումը վողողվել եյին; ենքան լաց եյին ելել: Պարոն Կարապետի աչակերտների աչքերիցը հո արին եր վեր թափում: Երեխեն ավին հորնըմորը ու ուզում եյին քաշվիլ, ես սհաթին գեղըցին պարոն Կարապետի աչքումն ընկավ:

«Գեղըցու յերկու վոսկին ավի՞լ ես լրան, Ստեփան», հարցրեց:

«Ա՛խ, ինձ բաչխիր, սիրելի պարոն Կարապետ, յերկու վոսկին ինձ ո՞վ ա տվել... կսկծու, վախու...»:

«Ինչ վոր չենք կարող անիլ, ասեց պարոն Կարապետը թե դրատան ասես չի պետք է խոստանանք, ամա ես անդամ լրավոնք ունիս, չունքի մեկ յերեխա մահից պրծացրիր, ու անպատճառ, յերը ըլի, պետք է հետևիս, վոր նրա յերկու վոսկին տաս, վոր խոստացար»:

«Իմ հերը...» ասեց Ստեփան...

Բայց պարոն Կարապետը խոսքը բերնումը կիսատ թողալ ավեց, ջիբիցը քիսեն հանեց, ու գեղըցու յերկու վոսկին ինքը տվեց:

Նա էլ վեր առավ ու ասեց. «չատ չնորհակալ եմ, իմ բարի տեր, հազար անդամ չնորհակալ եմ: Ցես ես անմեղ աղջկա ազատվելու վրա ենքան եմ ուրախ, վոր եղ վոսկիքը ամենևին չեյի վերցնիլ, ամա ի՞նչ անեմ, իմ սիրելի պարոն, կնիկ, վորդիք ունիմ, ինքս էլ չքավոր, աղքատ: Սրանց ձեռիցը ենքան խեր չի գալիս, իմ դատումն էլ հո ենքան չի, վոր աչքըներս մի բան տեսնի»:

Կարապետ.— Ե՞ս ինչ ա, վոր սրա համար խոսում ես: Մեկ վոչինչ բան չի, առ: Ի՛ս արածը, ենքան ա, վոր քեզ դհա չատ վարձ տալ պետք է, ամա ի՞նչ գոչալ լուղնորդ ես:

Գեղըցի.— Ի՞նչ ասիլ կուզի: Թե չե ինչպես կարեյի ջուրն ընկնիլ ու ես յերեխեն պրծացնիլ:

Կարապետ.— Շատ ուրախ եմ, վոր քեզ պես կորիչ, բարի մարդին ռաստ եկանք: Թե չե մենք վոչինչ չեյինք կարող անիլ, յերե վոչ գոռալ, հարայ տալ, ու ինչքան մարդ էլ, վոր ենտեղ կային, նրանք էլ վոչինչ չեյին կարող անիլ: Ցե թե մենակ նրանք, սաղ քաղաքն էլ, վոր հավաք-վեր, հենց են ա, սուր ու չիվան կանեյին ու ձեռքները իրար կկպցնեյին, Դու, դու միայն կարեյիր ազատիլ: Ճշմարիտ ասած, բան քո սիրտը քո արածի չի ուրախանում:

Գեղըցի.— Էլ ասիլ կուզի՞: Հենց դիտեմ, աշխարքն իմն ա:

Կարապետ.— Լոզ տալն ի՞նչ տեղ ես սովորել:

Գեղըցի.— Իմ ազիզ ազա, յես ինքս Քանաքեռ եմ ծնվիլ: Յերեխա ժամանակս քանաքցի երեխեքանց հետ կերթայինք միշտ Ջանդիի վրա, յա ջաղացի դլուխը ու սաղ որը, որդաքի պես ջրումը պախտ եյինք տալիս: Նրանցից եմ ես լեզը սովորել:

Կարապետ.— Շատ, չատ լավ ես արել, լեզը սովորի մարդ եապես բանի համար: Անունդ ի՞նչ ա:

Գեղըցի.— Ավետիք, քեզ ծառա:

Կարապետ.— Վո՞րտեղ ես կենում:

Գեղըցի.— Բազազխանի մոտին, միջի թաղումը:

Կարապետ.— Գնա, աստված քեզ հետ, գնա, քո ողուշաղի հետ մեկ լավ քեֆ արա:

Պարոն Կարապետը երեխեքն առավ ու տուն գնաց:

Ամենն էլ չուտ-չուտ եյին գնում ես որ, վոր առաջ ինքը ես խաբարը տանը պատմի: Դեռ պարոն Տիգրանի տանիցը մեկ քանի վոտը հեռու եյին, վոր Ստեփան թե առավ, լեզապատառ տուն ընկավ ու դռանը Աննին տեսավ կանգնած:

«Սիրելի մայր, սիրելի մայր»,— ձեն տվեց...

«Ինչ ասելու յես, իմացել եմ, աչքի լույս, իմ ազիզ Ստեփան, ասեց ու երեխին խտխտն առավ, համբուրեց, սիրեց, վողջագուրեց, հիմիկ տասն ենքան ինձ քաղցր ես, սիրելի յես, վոր ենքան զայրաթ ես արել, են խեղճ աղջկանը ազատել: Աստված քեզ հազար տեսակ դրա վարձը տա»:

Բոլորն էլ գնացին սեղանատունը, ու հացն էլ պատրաստ եր: Հայտնի լան է, վոր ես որ էլ վոչընչից չեյին խոսալ, յերե վոչ են վորձանքիցը, վոր ենպես բախտավոր անց եր կացել:

«Սմեն բան լավ,— ամա պարոն Կարապետի յերկու վոսկին ո՞վ պետք է վճարի, վոր գեղըցուն տվեց», ասեց Յեղիսաբեթ:

Ստեփան.— Հորս կդրեմ ու նա անպատճառ կտա:

Յեղիսաբեթ.— Հավատում եմ, ամա յես ենպես եմ կարծում, թե լավ կըլի, վոր մենք էլ փայ ունենանք եդ խերումը: Վարդան, դու ի՞նչ մտքի յես:

Վարդան.— Ցես էլ հենց եդ մտքին եմ: Թե մեր խաչինեն մի քիչ հուվի տանք, բաղի վախտ էլ բերաններիցս մեկ զատ կտրենք, եդ փողն էլ չուտով կթամամի, մենք էլ փայ կունենանք:

«Ա՛խ, ինչպես ա սիրտս մխիթարվում, վառավորվում, իմ ազիզ պահած, իմ սիրելի յերեխեք, ասեց մերը, վոր դուք եդպես զայրաթ եք անում, վոր ուրըչին լավություն անեք: Ամա թե ենքան ժամանակը, վոր պետք է յերկու վոսկին մոտ անեք, մեկ ուրիշ աղքատ մարդ էլ զա մեր դուռը, ու ձեզանից վողորմություն խնդրի, էլ չեք կարող նրան ոգնիլ, ու ազքատը պետք է ձեզանից սրտամոտ գնա, ձեզ չորհնի: Լավ կըլի, ուրեմն, վոր ես մեկ անդամը ինձ թողաք, յես են յերկու վոսկին վճարեմ, վոր դուք մարդ պատահելիս, ու ձեզանից ոգնություն խնդրելիս կարողանաք տալ: Ես ձեր յերկու վոսկին, սիրելի պարոն Կարապետ, վոր մախել եք: Շատ չնորհակալ եմ, վոր եդպես բանի համար նրանց ձեռն ես բռնիլ»:

«Լավ ա, ինչ խելոք կնիկ ունիմ, ասեց պարոն Տիգրանը, եդ վոր դու ուզում ես վարձք անիլ, յես չե՞մ ուզիլ: Անկարելի բան է: Ես էլ քեզ յերկու վոսկի իմ կողմիցը, պարոն Կարապետ, խնդրեմ քո ձեռովը ու-

դարկես են դեղըցուն, ու ասես, թե մեկ բաբեկամ մարդ ա ուզարկել ինդրեմ անունս չասա, թե ինձ կսիրես»:

Վարդան.— Ա՛խ, չես էլ կուզեյի լողա տալ սովորիլ:

Ստեփան.— Բաս չես ի՞նչպես կուզեյի:

Կարապետ.— Ի՞նչ պատճառավ:

Վարդան.— Վոր ջուր ընկած մարդի ապառեմ:

Կարապետ.— Եղ չաս լավ բան է, հենց ձեզ համար էլ չաս հարկավոր ա, սիրելի երեխեք, վոր ասոված վոչ անի, թե ջուրն ընկնիք, կարողանաք ձեր ղլուխը պրծացնիլ: Ամա... վայ են երեխին, վոր ինքը մինակ գնա ջրի վրա: Սիրաս արնով լցվում ա, վոր մխոքս ա ընկնում անցյալ որվա մեկ տասը տարեկան երեխի խեղդվիլը: Նա էլ եդպես ուղեցել եր լողա տա, մոտին մեծ մարդ չեր եղել, ընկնելն ու ջրի տանիլը մեկ եր եղել: Ինչ նրա հորնըմոր հալն եր, ասոված վոչ չհանց տա: Յերեք ահավիկ յեդը, նրա լաչը հանեցին: Են վարդի պես կարմիր երեխեն կտավ եր դառել, աչքերը բաց մնացել, փորն ուռել, պռոշները կապտել: Տեսնողի ղլխին կրակ եր վեր թափում: Են մեկ վորովն ունեյին նրա անճար, վողորմելի ծնողքը: Ախ, ի՞նչ եյին անում նրանք, քարերն էլ հեծկլտերը սուք եյին անում: Թե եսոսւր համար կուզեք լողանալը, լավն են ա, վոր խակի անունն էլ չտաք, ու ձեր ծնողաց սիրտը ամեն ահաթի ջրի վրա դնալիս կրակ քցեք:

Վարդան.— Ա՛խ, եղ ի՞նչ ասեցիք, մխա վրես սրտում ա, ջուրը միամ եդպես կատաղած ա:

Կարապետ.— Միամ ձեր աչքովը չտեսա՞ք եսոր:

Յեղիսաբեթ.— Ձե՛, չե՛, Վարդան ջան, վոր եդպես ա, էլ ջրի չուղիս մոտենաս, թե չե առաչ յես ջուրը կընկնիմ, թե քո ղլխիդ մի բան դա:

Կարապետ.— Սիրելիք, ամեն բան իր խերն էլ ունի, իր չարն էլ: Ելի չուտով մոռացաք, թե են հասարակ դեղըցին հենց ես որ ձեր աչքի առաչին ի՞նչ լավություն արեց: Հազար մարդ ավել էյինք կանդնած, մեր մեկն ելա չկարաց վոտը ջուրը դնի, ու են մարդը վոր չեր եղել, հմիկ ինչ կըլներ մեր հալն էլ, են աղչկա ծնողացն էլ: Բանը պետք է առաչ մարդ լավ միտք անի, յեղո խոռա: Յես ձեզ են պատմությունն էնդուր համար արի, վոր ձեզ ու ձեզ չի գնաք ջրի մոտ, մինչև լավ լող տալ չսովորիք, չվարժվիք, չմեծանաք:

Վարդան.— Լավ, վոր ուզենանք սովորիլ, ո՞վ կսովորցնի մեզ: Դուք գիտե՞ք լող տալ:

Կարապետ.— Ա՛խ ափոսս՝ յես չեմ սովորել:

Վարդան.— Բաս էլ ո՞վ կսովորցնի մեզ, մեր հերն էլ չգիտի:

Կարապետ.— Թե հավես ունիք, վոր սովորիք ու ազեն էլ հրամեն կտա, են ժամանակը յես ձեզ համար ուստա կճարեմ:

Տիգրան.— Ի՞նչ հրաման տալ կուզի: Իմ երեխեքանց տերը դուք եք:

Ղորդ ա, յես չեմ սովորել լող տալ, չունքի երեխա վախտս մեկի չտեսա լողանալիս, բայց չատ սրտով կուզեյի, վոր գիտենայի, բայց չունքի իմ ժամանակն անց ա կացել, կուզեմ, վոր երեխեքս ելա լավ գիտենան, վոր իրանց գլխին էլ պետքը գան, ուրըշին էլ:

Կարապետ.— Շատ բարի, եղ իմ վղիս, ուստան էլ կճարեմ, սովրեցնել էլ կտամ:

Են խոսքի վրա, ուսուլով վեր կացավ, քաշվեց ու մեկ խելիմ վախտից յեդը էլի եկավ ու խարարը բերեց, թե լողանալու վարպետն եկել ա:

«Յես իմացա, ասեց Ստեփան, թե ո՞վ է: Կուզե՞ս ասեմ»:

«Ա՛խ, յես էլ իմացա, ձեն տվեց Վարդանը: Նրա անունը իրեք վանկ ա: Սաղ անունը կնչանակի բարի խարար տալ: Իմացա՞, թե չէ քո չանին մեռնիմ, ապա ասա»:

Էլ ո՞վ կըլեր: Վարդանի ասածն էլ եր Ավետիքը, Ստեփանինն էլ:

Բայց պարոն կարապետը ժպտեցավ ու ասեց, «հիմիկ հլա դասի վախտն ա, գնանք, մեր բանը տեսնինք, իրիկունը վոր հասնի, են ժամանակը ձեզ կասեմ, թե ո՞ւմ կարծիքն ա ղորդ: Վեր կացեք, գնանք»:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՎՑԱՍԱՆԵՐՈՐԴ

Իրավ, վոր նրանց ասածն եր: Իրիկնապահին Ավետիքն եկավ, ու պարոն կարապետը, Վարդանն ու Ստեփանը հետը գնացին մեկ տեղ, վոր տեղ վոր Ավետիքի ասության դյորա վրնաս չեր պատահիլ:

Հենց են բոպեյին ուղում եյին երեխեքը չորքները հանեն ու ջուրն ընկնին:

«Մի չտապիք, սիրելի երեխեք, ասեց պարոն կարապետը, եդպես չուտով չեմ թողալ ձեզ վոր ջուրը մտնիք: Առաչ յես պետք է լող տալ սովորիմ, հետո դուք»:

Ավետիքը պարոն կարապետին առավ ձեռն, ջուրն ընկավ ու նրան նչանց ավեց, ամեն հունարը, վոր լողանալիս հարկավոր է դործ ածիլ:

Մյուս որերն էլի եսպես իրիկնապահին դալիս եր Ավետիք, ընչանք, վոր պարոն կարապետը նրա դասը լավ սովորեց, ենպես վոր ութ որից յեդը որինավոր լողանում եր:

Հիմիկ էլ սրեն (հերթը) Վարդանինն ու Ստեփանինն եր: Սրանք դհա հեչա ու չուտով սովորեցին լող տալը, չունքի պատիկ եյին: Ջահել ժամանակը շատ բան կարելի յա դիա ավելի հեշտ սովորիլ, քանց մեծ ժամանակը:

Մեկ քանի չաբաթից յեդը լող տալը երեխեքանց համար հասուկ քեֆ եր: Որդաքի պես ջրի տակովն եյին ըլում, մեկ վայրկյանիցը յեդը մեկ ուրիշ տեղ եյին ղլխընները հանում, մեկ քամակի վրա եյին լող տալիս, մեկ կոխքի վրա, մեկ փորի վրա, մեկ նստած, մեկ տկլոր, մեկ էլ չորքերը հաքընների: «Էլ ամենևին ջրից չեմ վախենում, ասեց Վարդան: Թե ջուրն

քնկնեմ. եսառաց դենը, լոզ տալով կպրծնեմ: Հուլա ունիմ, վոր չատ անգամ երեխա ել հանեմ»:

Շուտով իմացան տաղ քաղաքումը, թե պարոն Կարապետի աշակերտները ինչպես լավ լոզ տալ էլին սովորել: Շատը ծիծաղում ու խեղճ վարժապետին բամբասում, անարգում էլին, անխելք, դիժ, թեթև ոգմին էլին կանչում, բայց ով վոր փորձ առած, եփված մարդ եր, նրա արածը չատ գովում եր: Շուտով անթիվ երեխեք հավաքվեցին դեպի դրացը, վոր նրանց լոզ տալը տեսնին, վազեցին, դնացին իրանց ծնողաց մոտ ու աչքանք էլին անում, վոր իրանց ել լոզալ սովորցնիլ տան: Շատ հեր իր վորդու խնդիրը կատարեց ու Ավետիք դառավ նրանց ուսուցն:

ԳԼՈՒԽ ՔԱՆԵՐՈՐԴ

Ինչ ժամանակ պարոն Կարապետի աշակերտքը լոզ տալը լավ սովորեցին, պարոն Տիգրանը տեսավ, վոր ել Ավետիք էլի հարկավոր, վողը տվեց պարոն Կարապետին, վոր նրան տա իր դաս տալու համար: «Թե հարմար եք տեսնում ասեց, կանչենք բաղումը, մեկ իրիկնահաց ել տանք»: Պարոն Կարապետը համաձայնեց: Վերջի դասն էլ, վոր պարոն Ավետիքը տվեց, հետևները վերցրին տարան բաղը, ուր վոր խոռակ, դինի, ամեն բան հազիր եր անիլ տվել պարոն Տիգրանը:

Պարոն Կարապետը ամենի վայն իր առաջը դրեց, հենց սկսեցին ձեռքները հացին տան, տեսան, վոր դուռը սաստիկ ծեծում են:

Ավետիքը բաղի դուռը հենց բաց արեց, մեկ աղջիկ լեզապատառ, չունչը կտրած, ներս ընկավ ու հարցրեց: «Պարոն...Կարապետը...Եսառեղ ա՞: Շո՛ւտ..., չո՛ւտ, ճար ունիս, տես, պարոն Կարապետ..., արի՛, արի, դնանք, մերդ մահվան դուռն ա ընկել»:

«Ի՞մ մերը», ասեց պարոն Կարապետ, դդակն ու փետը վեր առավ ու ասեց, «սիրելի երեխեք, յես ձեղ թողում եմ, ամա չուտով էլի կգամ»:

Երեխեքը չատ տխրեցան ես խաբարի վրա, ու վարդան չկարաց էլ արտասուքը բռնի, չունքի պարոն Կարապետի մորը, իր լավության ու բարեսրտության համար՝ չատ եր սիրում: «Ի՞նչ եք նեղանում, սիրելի երեխեք, ասեց Ավետիքը, սիրտներդ դինջացրեք, մենք ամենս էլ պետք ե մեռնինք: Կարապետի մերը պատավել, վախտն անց ա կացրել, երեխեքն էլ մեծացել ա, հիմիկ վախտն ա վոր դնա, դինջանա: Յես վաղուց էլի մտածում, վոր ես որերումը մեկ մարդ պետք ե մեռնի: Անցկացած յերեքչաբթի որը, իրիկունը մթնով հանդիցը գալիս էլի, լսեցի, վոր բայղուշը գոռում եր: Ենպես, վոր մտերս բիզ բիզ ելան»:

«Մկամ, վոր բայղուշը գոռա, հենց պետք ե մարդ մեռնի՞: Եդ էլ նոր ենք իմանում», ասեցին երեխեքը:

«Բաս ի՞նչ, ասեց Ավետիքը, դեռ հլա ինչ գիտեք: Հայտնի բան ա, վոր մարդ պետք ե մեռնի, ասեց Ստեփան, թե բայղուշը ձեն տա: Մեր նոքարն ա ինձ ասել»:

«Դեռ ես ինչ ա, սկսեց էլի Ավետիքն ասել: Երեկ իրիկուն մթնով դերեզմանատան մոտովն անց կենալիս, ենպես մեկ դղրդուց, դալմաղալ ե՞ մացա, վոր հենց իմանաս, թե սաղ դեմունը տակն ու վեր ա ըլում: Ե՛, իմ սիրելի երեխեք, եսպես բանիցը դուք ի՞նչ կհասկանաք: Գիշերը, վոր գալիս ա, մտնում եք տեղներդ ու անաստ ձեզ համար քնում, բայց դեղի մարդը, վոր միշտ դռանն ու բաց տեղ ա ըլում, լավ գիտի, թե աշխարքումն ի՞նչ բան կա:

Մեկ անգամ Լոռու ձորերումը ճամփա եյինք բայ անում, են բաներն եմ իմացել, են բաներն եմ իմացել, տեսել, վոր միաս վրես սրսռում ա, քանի միաս ա ընկնում: Բազի գիշեր ձորումը նստած տեղս, տեսնում գալի, վոր մեկ գաղան դաս սարերի վրա պտտում, բերնիցը կրակ եր թափում: Են ձենը, են գալմաղալն ու գոռոնի ձենն եր գալիս, որ ասում հեռու տանի: Հենց իմանաս սաղ գիմոքը քանգվում ըլի: Մեկ որ էլ եսպես, լռնակ գիշերը մեկ քանգված վանքի մոտ կանգնած եյի: Կհավատաք, հավատացեք, չեք հավատալ, դուք գիտեք: Մեկ էլ են տեսա, վոր մեկ ձիավոր լիս ընկավ, գլուխ չուներ, ու եսպես դես ու դեն ձին չափ եր քցում. ընչանք, վոր տասնևրկու ահաթը խփեց: Ես ձենի վրա գյում եր քցում. ընչանք, վոր տասնևրկու ահաթը խփեց: Ես ձենի վրա գյում եր քցում: Ես ի՞նչ բան եր, ինձ ու ինձ մլաք եյի անում: Մյուս որը, վո՞չ ինձ, իմացա սրա զորությունը: Հենց յերկինքը բացվեց, Թրխկ, Թրխկ, հեռու տեղից սկսեցին դյուլլա քցել, վեր կացանք, տեսանք, վոր չորս կողմներս դողն ու հարամին եկել, բռնել են: Ինչքան կարեյինք, մենք էլ մեր Թադարեքը տեսանք: Դուշմանը վրա տվեց, են կոտրածն ու արինհեղությունն ելավ, վոր ես որ էլ միտքս գալիս, խելքս գլխիցս Թռչում ա: Ճարվա վախտն հարամին քաշվեց, գնաց ու սաղ ձորը մեյդանով լցվել եր: Ենքան ձիավոր ու մարդ կար տանից գլխի, վոր վոչ Թիվ կար, վոչ հեսաբ:

Մեկ որ էլ մեկ դերեզմանի մոտով անց կենալիս, մեկ սիրուն չալ Թուլա տեսա, վոր վնկվնկում եր, վեր առա, տարա տուն, եքսի որը, վոր լիսը բացվեց, տեսա մեկ մեծ ոլու տանս փռված: Ինչ պետք ե ասեյի, մնացել եյի տարակուսած: Հենց իրիկունն ելավ, ելի Թուլա դառավ, վղիցը բռնեցի ու տարա, ել յեղ իր տեղը բաց Թողի: Մեռելը չուն եր դառել»:

Ավետիքը նրանց գլուխը լցրեց ես տեսակ ալին ոյին պատմություններով, վորը սատանից, վորը քաշկից, վորը սարից, վորը ձորից, ու երեխեքն էլ բերանները բաց մնացել եյին անկայ դրած: Նա գիտ չատ կպատմեր, յեթե տասը ահաթը չեր խփել:

«Սիրելի երեխեք, հիմիկ տուն գնալու վախտն ա, վեր կացեք, գընանք: Տասնմեկ ահաթին դռանը մնալ, մարդի գարգանդը գալիս ա, ու ինչ խաթա տսես կպատահի: Զունքի սատանեն հենց ես վախտն ա կատաղում»: Երեխեքանց չանը գող ընկավ, գնալիս, մեկը նրա ես վեչիցն

եր սարսափելով կսկել, մեկը են ու հենց մեկ զարթ-ձուռ աչքընեռովն եր ընկնում թե չե, աչքընները սևանում, տեղն ու տեղը հալչում եյին: Հենց իմանում եյին, սար ու ձոր դել ա դառել, իրենց պետք ե ուտի: Հենց քաղքին մոտացան թե չե, Վարդան լսեց, վոր մեկ կատու մլավում ա: «Ես ի՞նչ ձեն ա, Սվետիք», ասացին երեխեքը զարմանելով:

Սուս... սուս արեց ու էլ վոչինչ չխոսաց: Վերջապես եկան, տուն հասան, վոչ սև մարդ եր նրանց վախացրել, վոչ չան Թուլա, վոչ էլ սիպտակ կնիկ: Պարոն Կարապետը դեռ տուն չեր եկել: Հորը պատմեցին թե նա ի՞նչի խաթեր եր իրանց բաղումը Թողել, բարի պիշեր խնդրեցին, ու շուտով վազեցին, մտան տեղընները, յորղանը մինչև անկաղնները քաշեցին երեսներին, վոր տանըմեկ ահաթը խլելիս ձենը չի լսեն:

Մյուս որը բառնց եկավ պարոն Կարապետը: Աչքերը ուռել եյին շատ լալուցը: Ցեղխաբեթի դնաց առաջը: «Մորդ քեֆն ի՞նչպես ա», հարցրեց երեխեն:

«Շատ, շատ լավ, պատասխանեց պարոն Կարապետը: Ամեն դառը ցավից, չարչարանքից պրծավ, ու ետուց դենը հանգիստ կքնի, էլ չի նեղանալ... ա՛խ, ասածո մոտ գնացողը, էլ ի՞նչպես կնեղանա: Նա մեռավ, պրծավ... բայց յես... ա՛խ, իմ ասղս թեքվեց, շատ բան եմ կորցրել, շատ: Դատաստանըդ քաղցր ըլի, այ իմ մեր, յերբոր էլ ի՞նչ ոեղ իրար շատ: Դատաստանըդ քաղցր ըլի, այ իմ մեր, յերբոր էլ ի՞նչ ոեղ իրար կտեսնենք: Ցերբոր քո վրդու ձենը էլ քո անկաղը կհասնի՞: Ա՛խ, Ցեղխաբեթ ջան, ենպես մեր քիչ կդոնվի», ասեց ու ախլուման էլ յեդ աչքերին դրեց:

Սրտի կսկիծը էլ չկողեց, խոսքը չարունակվի, ու Ցեղխաբեթի աչքերից էլ արտասունքը սկսեցին քուլա քուլա վեր թափիլ:

Պարոն Կարապետը պարոն Տիգրանիցը խնդրեց, վոր իրան Թող տա, մինչև մորը Թաղիլը իրանց տանը մնա, չունքի դեռ շատ բան կար կարդ քցելու, դնաց Վարդանի ու Ցեղխաբեթի մոտ, նրանց խոհան առավ, դռչին կպցրեց ու առանց մեկ խոսք ասելու, դուս ելավ:

Երեխեքը ես անդամ մնացին պարոն Տիգրանի ապով. ու սկսեցին ինչ դաս, վոր վարժապետը ավել եր, դրիլ, սերտիլ:

Շատ էլ ուղեցին, վոր Սվետիքի ասած հրաչքը նրան պատմեն, ամա վախ չճարեցին: Սաղ առավոտը հերնըմերը իրանց բանին եյին, ճաշին էլ ուրիշ մարդիք յեկան ու ընչանք տասը սհաթը մնացին: Երեխեքը առանց իրանց պատմություններն անելու, տեղընները մոտան, քնեցին:

Հենց ճրագը հանդցրին թե չե, բիրդանբիր տանիցը դուս Թռան, տանդուխտը ներքև վազեցին, լեղապատառ ենպես ընկան պարոն Տիգրանի քնելու սթախը, վոր սա էլ մնաց ապռած:

Հենց են եր ուղում, վոր քնի: Ես վոր տեսավ, զարհուրեց ու հարցրեց, թե ի՞նչ խաբար ա:

«Ախ, սիրելի հայր, ասեց Վարդան, մենք էլ չենք կարող մեր ա-Թախտը քնել»:

Տիգրան.— Ախը ընչի՞ խաթեր:

Վարդան.— Սատանեն, սատանեն ենտեղ ա մտել:

Տիգրան.— Ի՞նչ սատանա, յերազում չես հո:

Վարդան.— Ֆո գլուխը գիտենա, յերազում չեմ, Սոեփանն էլ տեսավ:

Տիգրան.— Ախը ի՞նչ տեսավ:

Վարդան.— Մեկ սատանա, պարոն Կարապետի մերը:

Տիգրան.— Ախտված նրա հոդին լուսավորի, նա էլ չի դառնալ: Եկեք, դնանք ձեր ոթախը, տեսնինք ի՞նչ կա:

Վարդան.— Ա՛խ, սիրելի հայր, քո Ջանին մեռնիմ, Թեկուզ վոր սպանես ինձ, չեմ գալ:

«Յես էլ չեմ գալ», ասեց Սոեփանը:

«Անկարելի ա, պետք ե գաք, ասեց պարոն Տիգրան: Ինձանից գնա, սատանա փախչում են, յես նրանց աչքի հանողն եմ, մի վախենաք, եկեք»:

Գնացին հետը, ամա սիրտընները չուր եր դառել, ու տերևի պես դողդողում եյին:

«Դե՛, եկեք, նչանց տվեք ինձ, ո՞ւր ե պարոն Կարապետի մերը», ասեց:

«Ո՞վ ա խաբար, ո՞ւր ա կորել, ասեց Սոեփան, ամա մենք ետեղ չենք կարող մնալ: Հենց դուռ դուս գնաս ելի կգա»:

Պարոն Տիգրան ես խոսքի վրա ճրագը հանգցրեց. ու տունը խավարեց, մենակ լիանկաի լիսը վանջարովն ընկած լիս եր տալիս:

Հանկարծ երեխեքն վեր Թռան ու դռացին, հրեն, հրեն պուճախումը կանգնած ե: Իրավ, վոր ենտեղ մեկ սիպտակ բան եր յերևում:

Պարոն Տիգրանը մոտ գնաց, ասեց, բարի իրիկուն, իմ քույր Սանդուխտ ու ձեռը տարավ ու Սանդուխտին դլխի ծերը հանեց:

«Ես էլ ձեր պարոն Կարապետի մերը, ասեց, ձեռընեդ բերեք, բերենեցեք»:

Վախվախելով ձեռընները մոտ տարան ու բռնեցին: Պարոն Կարապետի մերը վոչ այլ ինչ եր, յեթե վոչ մեկ չապիկ, վոր պարոն Կարապետը դուս գնալիս աթոռի վրա Թողել եր:

«Ջեմ իմանում, Թե ի՞նչ տեղից ա հանկարծ ձեր դլուխը մտել, վոր սատանա յեք տեսնում: Վարդան ջան, առաջ հո եսպես բան չդիտեյիր, եղ վորդիա՞ց ա միտդ ընկել: Իսկույն տեղընեդ մտեք, պարկեցեք»: «Շատ լավ, ասեց Սոեփան, Թե վոր դու էլ մեզ մոտ մնաս»:

«Աչքիս վրա», ասեց ու ենքան ենտեղ մնաց, մինչև նրանք քուն մոտան:

Մյուս որը մեր պստիկ սատանա տեսնողներին մոտը կանչեց պարոն Տիգրան, ու սկսեց հետընները իրիկվան պատահմունքի վրա խոսիլ: «Ես ինչպես բան ա, վոր Վարդան ջան, դու եդպես ահ ես քցել սիրտդ»:

«Ա՛խ, սիրելի հայր, պատասխանեց, Սվետիքը ենքան սատանի պատմություններ արեց մեզ, վոր մութն ընկնելիս, էլ սիրտ չեմ անում, դըռ-

նիցը դուս գամ»: Ես վոր ասեց, սկսեց Ավետըքի բոլոր ասած բանները ինչ պատմել մի առ մի:

Տիգրան.— Բոլորին էլ հավատացե՞լ ես:

Վարդան.— Ընչի՞ չպետք էլի հավատալ: Վարմապետս նրա պոմառանությունը չատ ա արել, վոր չատ լավ, հալալ մարդ ա:

Ստեփան.— Եգոպես ա, մեր նոքարն էլ լավ, հալալ մարդ եր, ու եգոպես պատմություն չատ եր անում:

Տիգրան.— Դուք էլ չատ հալալ մարդ եք ու ինձի պատմեցիք ինձ, թե պարոն Կարապետի մորը տեսաք, ու ասածներդ ճշմարիտ չէր: Ուրեմն ի՞նչպես պետք է արած:

Ստեփան.— Մենք լավ չէինք տեսել:

Տիգրան.— Ենդուր համար լավ չէիք տեսել, չունքի վախտմ էիք: Վախլուկ մարդը ինչ տեղ վոր վոչինչ էլ չկա, հենց իմանում ա, թե վորձանքով լիքն ա:

Վարդան.— Ավետիքը հո վախլուկ չէր, ինչպես ընկավ ջրի մեջը ու Նանասան հանեց:

Տիգրան.— Հավատում եմ, վոր թշնամի պատահելիս էլ, նա վոչինչ բանից չէր վախենում, բայց սատանից, դևից միչա վախում ա, ենդուր հարմար ա նրա աչքին ենպես բան երևում: Ինչ վոր ինձ պատմել եք, չատ բնական է: Թե բայդուշը գոռացել ա, վոչինչ զարմանք չէ: Ագռավն էլ ա գոռում, ու մյուս պշերն էլ: Ընչի չէ պետք է բայդուշն էլ գոռա: Թե բայդուշը գոռալիս միչա մարդ ա մեռնում, եդ էլ բնական է: Տարին բոլոր մարդ ա մեռնում, հայտնի բան ա, վոր բայդուշը գոռալիս էլ կպատահի, վոր մարդ մեռնի: Վոր պնդա ման գալու, լավ վարմապետ արա, թե սրբեկն ինչպես ա ձեն հանում: Թե տեսնես մեկին խոսալիս, մոքումդ պահիր, մեկ քանի որվան մեջը տես, մարդ կմեռնի՞, թե չէ: Բայց սրանով չէ պետք է խոթվիլ ու ասել, թե մարդ ենդուր համար մեռնալ, չունքի սրբեկը խոսաց: Հավը չի՞ կակուտում, աքլորը չի՞ խոսում, չունը չի՞ հաչում: Ամեն կենդանի պետք ա իր ձենը հանի, բերանը հո չի կարող փակել:

Վարդան.— Բաս են չար ֆոթսկանի բանն ինչպես ա:

Տիգրան.— Նրա ձենն էլ կարես լսել, առավել աշնանը: Սրանք վոչ այլ չեն, լեթե վոչ կռլունկ դշերի գոռոցն, կամ բայերը, վոր յերկնքի յերեսին ձեն տալով թռչում, գնում են: Թե պշերն ա պատահում, մարդ նրանց չի տեսնում, տամ նրանց ձենը չատ պարզ լսում ա, վախկոտ մարդիքը ենքան ձեն են բիրտդի լսում, ու վոչինչ չեն տեսնում, ու չեն իմանում, թե նոքան ձենը ի՞նչ տեղից ա գալիս, կարծում են թե սատանեքն են խոսում:

Վարդան.— Բաս են Թրըխկիթրըխկոցը ու գմըդմբոցը, ի՞նչ գոռ ա, վոր պշերը պերեզմանոցան մոտ գալիս ա:

Տիգրան.— Գիշերը ինչ տեղ ասես Թրխկիթրխկում էլ ա, դրըմբդըմբում էլ: Թե ուզենա մարդ իմանալ, ի՞նչ տեղից ա գալիս ես ձենը, էն ժամանակը կարելի չէ իմանալ, թե ենտեղ մեկ կենդանի պետք է ըլի: Կարելի չէ թե մուկը, չա կատու, չա մեկ ուրիշ չանասկար ծոած ըլի ենտեղ ու ենպես ձեն ըլի հանում: Ու չունքի միչտ մեռնող ա ըլում, էլի կըլի, թեկուզ պերեզմանոցանը ձեն գա, թե չէ:

Վարդան.— կարող ես ինձ ասել, սիրելի հայր, թե են անդլուխ ձիավորն ո՞վ ա:

Տիգրան.— Մեկ սաղ սալամաթ ձիավոր: Կարելի չա են գումանի մեկը ըլի ելած, ու չորերը փոխած, յերես, ղլուխ կտրած, վոր տեսնողը սիրտը վախ ընկնի, ու եսպես ձորումը ման կըլեր գալիս, վոր իմանա թե ինչ տեղից պետք է վրա տան, վոր սրանք չիմանան: Տես, ինչ սատանի պատմություն վոր անում են, եսպես մեկ բան կա մի՞ջումը: Թե վոր մարդ լավ քննի ու իմանա, կտեսնի միչա, վոր չատ բնական բան եր տեսածը: Հավատացիք ինձ, սիրելի երեխեք, վոր դև, սատանա, քաչք մեկ տեղ ելա, չկա: Եսպես վախլուկ, ոամիկ մարդիքն են եգպես բանը մոտածում:

Վարդան.— Բաս են գուռնա, նաղարեն, են պար գալն ի՞նչ ա, վոր բացի ձորում, երում, տեսնվում, լսվում ա:

Տիգրան.— Ի՞նչ գուռնա, ի՞նչ գաս: Գամին մանում քարափների ա-նքը, ծառերի մեջը ու եսպես ձեն ա հանիլ տալիս: Գամի ելած վախտը չե՞ս լսում մեր վանջարիքը, գանգերը, ինչ ձեն են հանում, ինչպես են վզվզում, ծվում, հենց պիտես, թե իրավ վոր նաղրախանա ըլին ածում: Մարդ պիչերն էլ վախենում ա, ես բաներն էլ վոր իմանում ա, են ժամանակն աչքին հազար մեկ տեսակ բան ա յերևում:

Ստեփան.— Բաս վոր ասում են, լիա վեր եկավ, ամպիցը վիչապ եր կախ ելել, են ի՞նչ գաս ա:

Տիգրան.— Սիրելի Ստեփան, ամեն առավոտ լիա ա վեր գալիս, ամեն որ արեգակը դուս գալիս չենք զարմանում: Գիչերը կըլի, վոր կամ ամպ ա վեր գալիս կամ յերկինքն ամպած ժամանակին լիանկակի լիսը մեկ տեղից, ամպի մի՞ջից դուս ա գալիս, ընկնում մեկ ուղի վրա, մարդ տեսնելիս, հենց իմանում ա, թե լիա ա վեր գալիս:

Ամպիցն էլ, վոր վիչապ ա յերևում, հեչ զարմանք չի: Ամպն ու բուղը մեկ ա: Ինչպես բուղը բարձրանալիս կերպ կերպ ձև ա առնում, յա ձգվում, յա վոլորվում, յա մարդի ղլխին նման ա ըլում, յա ծառի, ենպես էլ ամպը: Գամին դես ու դեն տանելով ամպին, ինչ ձև ասես նրան փոխում ա: Բաղի վախտ հենց իմանում ենք արդ կա յերկնքումը, բաղի վախտ ուղտ, բաղի վախտ ծառ, տուն, քաղաք: Աչխարքումն ենպես տեղ կա, վոր ամպին մտիկ անելիս, առաջիդ մեկ, սաղ քաղաք ա յերևում: Տուն, յեկեղեցիք, քուչեք, մարդիք ենպես են գալիս աչքիդ առաջը, վոր էլ չես կարում իմանալ, թե ես քաղաք չի, ամպ ա: Սրա պատճառը լուսն ու գամին ա: Վոչ քաղաքը տեղից ժամ կգա, վոչ ծառ ու ուղտ, ու յերկնքումը՝ առաջինը քաղաք չինող ծառ անկողն ո՞վ ա, յերկրորդ էլ՝

Նրանք ինչպես կարան կենդան թարձր տեղը մնալ, վոր մեկ պատիկ քարն էլ չի մնում, իսկույն վոր քցում ենք, էլ չեդ վեր ա ընկնում:

Անկաչ արևք, ձեզ մեկ պատմություն ասեմ: Մեկ անդամ գեղջիկը մեկ տեղ վար ու ցանք անելիս տեսան, վոր բիրաղի Թողը աշխարքը բռնեց:

Հենց խելքի վախտ անցկացավ, տեսան, վոր յերկինքիցը հազար ավել գառակ վեր ընկավ: Գեղջոնց աչքերը մնաց սառած: Փառք աստծո, վոր յերկնքումը գերձիկ էլ կա, ասեցին գեղջիկը, հալբաթ մաշեկար, քուրքչի էլ կըլի, էլ ի՞նչ գարտ ունինք: Մեռելի չորերը Թող տերտերները տանին, ելի կարիլ կտանք: Ի՞նչ եք ծիծաղում, ձեզ վոր պատահեր եդպես չեյի՞ք կարծիլ:

Վարդան.— Շատ լավ, տեսնք Թե յերկնքումը փեչաքար չկա, բան են գառակները ինչ տեղից կիկան:

Տիգրան.— Լսեցեք ասեմ: Գեղջիկը հենց լմացան Թե իրանք սուրբ են, վոր աստված նրանց են վաղորմություն արեց ու ենպես կարծեցին, Թե վար ու ցանք անիլ էլ պետք չի, չունքի աստծո աչքը ենպես քաղցր եր նրանց վրա: Գազիկները մատունքի պես հավաքեցին, վորը ծոցը դրեց, վորը ջերը, վորը սելի միջին, վորն էլ գլխին: Ու բահները ուսընդերին դրած, վար ու ցանք Թողին ու ուրախ ուրախ ճամփա ընկան, վոր Աս լավ խաբարը գեղը տանին: Բայց քո դուշմանը՝ հենց սարի գլուխը նիեյան, տեսան, վոր մեկ գառթա սազդաթ Թվանքներն ուսընդերին, գլխաբաց գալիս են: Են ի՞նչ վնաս ունի: Մեր գեղջիկը իրանց ճամփեն բռնեցին, գնացին ու հենց մոտեցան Թե չե, տուր ու դմբոցը վեր ելավ: Սազդաթները իրանց գառակները տեսան ու յեդ եյին ուզում, գեղջիկը իրանց յերկնքից յեկած վաղորմությունը չեյին ուզում տան: Վերջը, վերջը մեկ լավ բաբաթ քոթակ ուտելուց յեդը իրանց տվին:

Վարդան.— Ընչի՞, յես չեյի տալ, նրանք հո խլիլ չեյին: Ախ են սազդաթի մեկը վոր ձեռս ընկնի, հոգին կհանեմ:

Տիգրան.— Սիրելի վորդի, ախր իրանց դդակն եր, ինչպես չեյին տալ: Ճամին եր գլխներիցը Թոցրել ու յերկինքը հանել: Թե չե դդակն ով կուա յերկնքումը: Ենպես էլ ամեն բանը պետք է իմանանք, ու չհավատանք առանց պատճառի:

Ստեփան.— Ինչ կուզես ասա, գիշերը, վոր մարդ վոր գերեզմանատունը մանի, սաղ չի դուս գալ:

Տիգրան.— Բաս վոր եղպես ա, կացեք, յես ձեզ մեկ պատմություն էլ անեմ:

Մեկ քանի մեծ մարդ, ձեզ նման պատիկ վոչ, մեկտեղ նստած գիշերը քեֆ եյին անում ու գրից տալիս: Խոսքը ընկավ եսպես բանի վրա, ու ասեցին վոր ինչ կարիչ մարդ էլ ըլի, գիշերը գերեզմանատունը չի կարող մանիլ: Մեռելները սազ սազ կուտեն նրան:

Ղոչաղ հայր մեկը մարչ եկավ, վոր գնա: (Տեսնենք, Թե մարդ ա, յեդ կգա, ասացին յերեխեքը, հուսար գնալը չի, յեդ գյուղ ա): Են գերեզմանատան մեկ քանդված տուն կար գետնի տակին, ենտեղ պետք է գնար ումեկ ցից ենտեղ ցցեր: Հենց մեր ղոչաղ հայը ներս մտավ ու ուզում եր ցիցը ցցի, մեկ էլ են տեսավ, վոր մեկը քամակիցը Թռավ ուսն ու գալչի ձենով ասեց: Դու ո՞ւր ես յեկել եստեղ: (Ահա՛, ահա՛, իր հախն ա, ասացին յերեխեքը): Մեր ղոչաղ տղեն ցիցը վեր դրեց, անսաս վեր կացավ, ու մեր մեռելին վոտի տակը քցեց: Ենպես եր գրեկացնում, վոր բոչկի ձեն եր հանում: Մեռա՛, մեռա՛, աստված կսիրես ինձ մի սպանիլ, դուսաց մեր հրաչքը: Մեր տղեն լավ վոր բանը տեսավ, նրան ենտեղ վեր ընկած Թողեց ու յեդ գարձավ: (Ամա սիրտ ա հա, ասացին): Ընկերները, վոր տեսան նրան, խելքները գնաց, ենպես եր խեղճի ոանդ մոանդը Թըռել: Ձեյին հավատում, վոր նա իր տեսածը պատմեց: Ճրագ վառեցին, գնացին են տեղ, աչքդ բարին տեսնի: Չե Թե մեռել եր ընկածը, հարիսած սազդաթ եր, ճամփին մոլորվել, մտել եր ենտեղ, վոր քնի, գինու քեֆը գլխից դուս գա:

Հիմիկ իմացաք, Թե շատ բան ինչպես ա պատահում, ախր մեռելը Թե կարենա վեր կենալ, յա մեկ բան անիլ, բաս ընչի չի մեր տանն էլ մեկ բան անում, վոր ենքան լալիս, յերկու, իրեք որ էլ պահում ենք: Կենդանուցը, վոր չի վախենում մարդ, մեռելիցը ընչի՞ պետք է վախենա:

Ստեփան.— Հիմիկ իմացա ասածդ, ամա ենպես քար սիրտ ամեն մարդ չի ունենալ:

Տիգրան.— Հայտնի բան ա, եղ ա, վոր շատ մարդ սիրտ չի անում բանի գործությունն իմանա, հենց իմանում ա հրաչք ա տեսնում, կամ քաջք:

Վարդան.— Դու ինչպես գիտես, սիրելի հայր, վոր սատանա, քաջք չկա:

Տիգրան.— Լսիր ասեմ: Ցես ու են մարդիկը, վոր եդպես բանի չեն հավատում, ամենևին չեն էլ տեսնում: Ամա են մարդիկը, վոր վախկոտ են, ու չուտով ամեն բանի հավատալ գիտեն, նրանք ամեն գրաղում, պուճախում եդպես բանը տեսնում են: Թե դուք էլ, սիրելի երեխեք, ձեր վախկոտությունը չթողաք, դուք էլ ամեն տեղ եդպես բաներ կտեսնիք: Ամեն մեկ գարդակ ծառի գոթուկ, ամեն մեկ սև կատու, ամեն մեկ գարիբ մարդ, կամ մեկ ձեն, Թըրխկոց, վոր գիշերը տեսնիք, կամ լսեք, հենց կիմանաք Թե սատանա կե: Ամա Թե խելք ունենաք, ու տեսած, լսած բաները լավ քննեք, կտեսնիք, վոր վոչ սատանա կա, վոչ վոչինչ: Հենց ձեր միտքն եր ձեզ խաբում:

Հենց պարոն Կարապետն էլ տուն յեկավ, էլ ես բանի վրա սկսեց խոսալ, մինչև իր աշակերտների մտքիցը եսպես գարդակ բաները հանեց ու նրանց վախը վոչնչացրեց: Մութը վոր ընկնում եր, մեկ սրան եր բանի գրկում, մեկ նրան, վոր փոթխվին ու սիրտները պնդանա: Իրանք էլ

աեսան, վոր վոչինչ չկա, ու ենդուց դենը, ուր ասես, մեն մենակ գնում, դալիս եյին:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅԵՎՄԻՅԵՐՈՐԴ

Պարոն կարապետը հենց իր բարի մոր մահվան կսկիծը մի քիչ սրտից հանեց թե չե, եյլե իր գործն սկսեց ու իր աշակերտների հետ գնաց դաշտը, վոր բույս հավաքի:

Մենկ մեծ դասթա խոտ, ծաղիկ հետները տուն բերին ու սեղանի վրա դրին: Պարոն կարապետը մեկ բույս հանեց, անունը իշակաթնուկ, սկսեց նրանց են բույսի կաթի վորպիսությունը, տերևների ձևը, ծաղկի դրությունը, ծաղկի միջի սերմի տեղը ու նրա պիտանավորությունը տեղը տեղին պատմել: Ամա ես անգամ վոչինչ ուրախություն չեյավ նրան: Երեխեքը միշտ ամեն բանի վրա համ չատ հանդարտ եյին, համ չատ ուշ ու միտքը վրդնները: Ես անգամ հենց մեկ մյուսի անկաջումը փսփսում, մյուսին բզբզում, աչքով անում, վոտով խփում ու ծիծաղում եր: Հենց վոր ասեց, թե են բույսի անունը իշակաթնուկ ա, մեկ մեկի յերեսին մտիկ տվին ու ծիծաղեցին: Ես մեր հարևանի իշի կաթն է, ասկ Ստեփան Վարդանին, եյլ ինչ գարդ ունինք վոր իշի կաթն եյլ ա խոտերի միջին անուն ճարել:

Յեղիսաբեթ ես բանին չհամբերեց ու ձեն տվեց, «պարոն կարապետ, ասածած կվերցնի, վոր սրանք եսպես չարություն են անում ու անկաջ չեն դնում»:

«Երեխեք, ասեց պարոն կարապետ, ես որ ձեր ուշ ու միտքը քամուն եք տվել: Ձեզ հետ բան չի կարելի չինիլ: Անկաջ չեք դնում: Եյլ ի՞նչ կսովորիք: Ստեփան են բուսի անունն ի՞նչ եր, վոր վրեն եղքան ծիծաղում եք»:

Ստեփան.— Ինչ ասեմ, մեր դոմումն եյլ ունինք նրա անունը, ի՞նչ ասելու անուն ա, վոր ասեմ:

Կարապետ.— Ցես ուզում եմ, վոր ասես:

Ստեփան.— Իշի կաթը՞, եյլ ուրիշ բան կա՞:

Կարապետ.— Դրուստ չես ասում: Լավ միտք արա:

Ստեփան.— Շատ լավ, կաց, միտք անեմ, հետո ասեմ: Նակաթ եսպես չի՞ը:

Կարապետ.— Սկրելի, միտքդ հավաքիր, եղ բաւի վրա, վոր մեկն եյլ դնես, հո շան կաթը կդառնա, ընչի յես եղպես անխելք խոսում: Յեղիսաբեթ դուռ ասա՞:

Յեղիսաբեթ.— Իշակաթնուկ: (Ես ասելիս աիպարը վոտով խփեց ու աչքով արեց):

Ստեփան.— Ամա անուն են դրել հա՛, լսողի փորը ցավ կընկնի ծիծաղու:

Կարապետ.— Աչքի լույս, ես որ քո ուշ ու միտքը խաղումն ա, ասածս մեկ անկաջովդ մտնում, մյուսովը դուս ա գալիս, ի՞նչ պետք ա արած: Ձեր խաթրն եմ պահում, թե չե չատ կնեղանայի: Ես վոր ասեց, սկսեց են խոտն ու ծաղկները մեկ մեկ վեր առնիլ, կարդով մեկ յերկար տախտակի վրա դասիլ ու նրանց անուններն վրընները գրիլ: Ես վոր գլուխը քաշ արած ես չեր անում, յերեխեքը ծիծաղու առտը բռնել, եյլ չեյին դինջանում:

Ես վոր պրծավ, սկսեց երեխեքանցը են անուններն հարցնիլ, ախը ի՞նչ կկմանային, վոր չեյին անկաջ դրել: Պարոն կարապետը չատ նեղացավ, բոլորն եյլ հավաքեց ու վանջարովը դուս ածեց, հետո նրանց ասեց, վոր մյուս որը, ամենն եյլ ինչ վոր իշակաթնուկի վրա լսել եյին, պրեյին, բերեյին, իրան ցույց տային: Ցես ենպես եմ կարծում, վոր ձեր դրածը բանի նման չի ըլիլ, չունքի ուշքներդ վրընները չեր եսոր:

Մյուս որը դրածները բերին, ամա ինչպես վոր պարոն կարապետն ասել եր, ենպես եյավ: Յեղիսաբեթ ու Ստեփան ուրիշ անուն եյին տվել, ու չատ սխալ եյին գրել, թեև պարոն կարապետը անունը տախտակի վրա դրել եյ եր, վոր տեսնին: Վարդանի դրածը մի քիչ լավ եր, ամա եյլի պակասություն չատ ուներ:

Պարոն կարապետը դրածները յեդ տվեց ու ասեց. «առաջ ինչպես ի-մի ձեր դրածը տեսնում, ուրախանում, ես որ են ուրախությունը խարաբ արիք ու սիրտս չատ կոտրեցիք: Առաջ ենպես եյիք ամեն բանը գրում, ինչպես ձեզ ասել եյի, ու քիչ սխալ եր ըլում միջումը: Ես որ բոլորն եյլ սխալ եք գրել: Զգիտեմ պատճառն ի՞նչ ա: Ուրիշ վախտ ի՞նչպես խելոք անկաջ եյիք դնում, ու եյլ ուրիշ բան չեյիք անում, իմ ասածն եյիք լսում: Բայց երեկ ասածս քամին եր տանում, ձեր ուշ ու միտքն եյա հո, ո՞վ ա խաբար, վոր սարի ծերին եյին ման գալիս: Թե եսպես կերթա, վոչինչ չեք սովորիլ: Հացի նստելիս մարդ պետք է բերանը բաց անի, վոր իր վայ ուտելիքը վայելի, թե վոչ սոված կմնա, թեկուզ սաղ սեղանը կեքակրով լիքն ըլի: Դասի ժամանակն եյլ աշակերտը պետք է լավ վարվուրդ անի, ինչ վոր վարժապետն ասում ա: Թե վոչ, մարդ կմնա տգետ, անուսումն, խի, թեկուզ վոր վարժապետը հազար լավ բան եյլ ասի»:

Երեխեքը տեսան վոր պարոն կարապետի ասածը դրուստ ա, իրանց հավաքեցին, մտքըներումը գրին, վոր մյուս անգամ զգույշ ըլին, հանդարտ մնան ու ասածին անկաջ դնեն: Ասածներին հասատատ եյլ մնացին:

Հենց են որը, ճաշից յեդը դաս առնելիս, յերևաց, վոր նրանք հասատատ կամենում եյին վարժապետի ասածին անկաջ դնել: Պարոն կարապետը Աֆրիկի տեղաթուղթը (կարտը) առաջներին դրեց, ամեն ծովերի անունը նրանց ասեց, ամեն գլխավոր գետերի, յերկրների, վոր ենտեղ կային: Ես վոր պրծավ մեկ քանոն (լինեյկա) առավ ձեռն ու ինքը... Նրանց անուններն վրա յեր գնում, յերեխեքն ասում եյին: Մեկ քանի անգամ վոր եսպես կրկնեցին, հետո ասեց նրանց, «սիրելի երեխեք, տեսնում, թե

ձեղանից վորդ եք լավ անկաջ արել, մեկ էլ տեղաթղթին նայեցեք, ու ինչ վոր ասեմ, են արեք»:

Ներանք հնազես արին:

«Հիմիկ տեսնիմ, ելի սկսեց իր խոսքը, թե ո՞վ ինձ կաճ կարդով են բոլոր ծովերը, գետերն ու լերկրները, ինչպես վոր յես ցույց տվի»:

«Յես, յես, սիրելի պարոն Կարապետ, յես կասեմ, ձեն տվին ամենն էլ: Յես բոլորը գիտեմ»:

Առաջ Յեղիսաբեթ ասեց, հետո Վարդան ու Ներանից յեղը Ստեփան: Բոլորն էլ լավ ասեցին, մենակ Ստեփանը մի քիչ կմկմում էր: «Տեսեք, սիրելիք, ասեց, բանին, վոր լավ անկաջ դնեք, հասկես լավ կըլի: Հիմիկ ինչ վոր սովորեցիք, մեկ քանի անգամ էլ տանը կրկնեցեք ձեր մտքումը, էլ թե մոռանաք, յես ըլիմ պարտական»:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՎԵՐԿՈՒԵՐՈՐԴ

«Ես որ էլ ուրիչ բան սկսենք, ասեց պարոն Կարապետը: Կուզեմ, վոր տեղաթուղթը չուռ տամ, կարո՞ղ եք ելի կարդով Ասիու ծովերի, գետերի, լերկրների անուննները ասիլ»:

Երեխեքը պատասխան տվին, վոր կարող են: Վարդանն սկսեց ու չատ լավ ասեց:

Սրանից յեղը Յեղիսաբեթ սկսեց, սա էլ լավ գիտեր: Մինակ կարմիր ծով ասելու տեղը, Պարսից ծովածոցի անունը տվեց: Ստեփանն էլ լավ պրծավ: Մեկ քանի տեղ, ղորդ ա, սխալվեց, ամա պարոն Կարապետը սըրանով էլ բավականացավ, չունքի դիտեր, վոր նա դեռ ենքան վարժվել չի: «Դուք տեսնում եք, իմ սիրելի երեխեք, թե ինչքան լավ բան ա անկաջ դնիլը: Մարդ իր տեսածն ու լսածն լավ հասկանում ա, իմանում ա ու յերևակայությունն էլ իր միջումն պահում»:

«Յերևակայությունն ինչ զոռ ա, հարցրեց Յեղիսաբեթ, մեր դըրխումն ա թե սրտումը»:

«Նա հոդու են զորությունն ա, վոր հիմիկ եղպես վարժել, կրթել եք: Սրանով ենք մեր իմացած բաները էլ յեղ մտքներս բերում:

Կարո՞ղ ես Ստեփան, հորդ մտքդ բերիլ»:

«Հալբաթ վոր, ասեց Ստեփան: Նա էլ ենպես մեծ ա, ինչպես դուք, աչքերը կապույտ, քիթը կռացած, մաղը դեղնադույն, ու չուխեն մոխրառանգ ե»:

«Շատ լավ նկարագրեցիր, չատ ապրիս: Հենց իմանում էիր, թե հերըդ առաջիդ կանգնած ըլի, հասկես չի՞: Ենպես, ինչ ժամանակ լավ անկաջ դնենք ամեն բանի, ինչ վոր տեսնում, լսում ենք ու մեղ լավ վարժենք, վոր ես բաները ելի մտքներս բերենք, են ժամանակը չատ հեշտ կըլի, մեր տեսած, լսած բաներն, ելի ուրըչին յեղ պատմենք: Վոր իմանում թե ուրախ կըլիք, մեկ անգամ ձեզ հետ կերթամ ճամփա, վոր հետո կարողանաք դրեք մի առ մի ինչ վոր տեսնիք»:

«Ախ, եղ ի՞նչ լավ բան ասեցիր, սիրելի պարոն Կարապետ, յերանի թե հենց ես որ գնայինք»:

Յեղիսաբեթի դլուխը կախ արեց ու հարցրեց, «ինձ էլ կտանիք, թե չէ»:

«Թե հերնըմերդ հրամայեն, ինչի՞ չի», ասեց պարոն Կարապետը:

Ծնողքն էլ հրաման տվին: Մյուս որը ընկան ճամփա ու իրիկունը քեֆընները քոթ, էլ յեղ տուն եկան:

Մյուս որը պարոն Կարապետն ասեց, վոր յերեխեքը իրանց աչքի տեսած բաները դրեխին: Վարդան ես նեղքաի բանն եր դրել:

«Ոդոստոսի մեկին, պարոն Կարապետը իմ քվոր ու մեր բարեկամ Ստեփանի հետ գնաց Եջմիածին: Մեր չուն Սուլթանն էլ եր մեղ հետ: Հենց հանդը հասանք մեր չունը մեկ ալապարակ տեսավ ու յեռեիցն ընկավ վոր բանի: Պարոն Կարապետը չվացրեց, ամա Սուլթանը անկաջ չարեց: Յեղ յեկած վախտը պարոն Կարապետը փետով մեկ քանի անգամ խփեց նրան: Յեղիսաբեթ ճամփին մեկ խոտ գտավ, անունը կանեփ: Սրա վրա շատ ուրախացանք, չունքի դեռ չեյինք տեսել: Փարաքար գեղի մոտ մեկ թուղթ տանող ռաստ եկավ, պողը փչեց ու ես խաղը կանչեց: Ուրախացեք, ձեր կյանքը վայելեցեք: Ես ձենը չատ դուրեկան եր: Մենք նրան բարի լիս ասեցինք: Փարաքարի միջովը մեկ պտիկ ջուր ա գնում, մեջը կարմրախեժ ձկնով լիքը: Գեղի չորս կողմը մեկ հին բերդ կա չինած: Շատ բաղ, բաղաթ էլ կա: Միջներումը ինչ տեսակ ծառ ասես, կա: Տները բոլոր ցխից են չինված, կտրները տափակ, պատերը ցած, հայաթներն առաջներին: Յեկեղեցու գլխին մեկ պտիկ խաչ կա, աստվածածնի անունովն ա չինած: Յերեսուն տուն կան գեղումը: Բոլորն էլ հայ են ու չատ աշխատասեր մարդ են: Ինչ պտուղ ասես, գինի, բրինձ, բամբակ, միջիցը դուս ա գալիս»:

«Գեղի դռանը մեկ կատու կար նստած, Սուլթանը գնաց, վոր բանի: Կատուն յեղի վոտների վրա կանգնեց ու ենպես չանդեց Սուլթանի դունչը, վոր պոչը փորի տակը քաշեց, վնգաց ու փախավ: Մեկ դարմանատան տակի Ստեփանը մեկ խոտ գտավ, տերևը բաղ, ծաղիկը մուգ դեղին: Պարոն Կարապետը անունը մեզ ասեց, յեղեշնակ եր: Գեղումը կալերը կատում էին: Վաղեցինք, գնացինք կամի վրա նստեցինք ու յեղները քշեցինք: Գեղըցի յերեխեք տկլոր, տկլոր, շատի ձեռին հաց հեռվանց կանդնել մեզ մոխիկ էլին տալիս: Վորն էլ ուզում եր, մեզ չարացնի, մատով աչքերը յեղ եր ճոթռում, մեզ բո՛ կանչում: Հենց մոտանում էինք, դորդի պես փախչում, դյուռմ էլին ըլում: Կաթն ու մածուն բերիլ տալ տվինք, կերանք: Խիստ շատ համով եր: Ինչքան արինք, փող չի վեր առան: Ենպես լավ խալխ էլին: Պատերին հենց գիտես, դյուլով խփել ըլին, ենքան աշխար եր կպցրած: Որը շատ չոք եր անում, գնացինք, մեկ հով տեղ նստեցինք, դիջացանք» և այլն:

Փարոն Կարապետը վարպանի դրածին խիստ չատ հավանեց ու ասեց, վոր նրա յերեւակայությունը չատ լավ կարգով ու իսկակ ա, ամեն բանը նրա մխաքը բերել, ինչ վոր տեսել խմացել ես:

Ստեփանն ու Յեղիսաբեթ քիչ բան էլին վարավուրդ արել, ու են էլ կարդին չէլին պատմել: Յեղիսաբեթ չատ ու կատվի կռիվը մեկ ուրիչ տեղ ես նշանակել: Ստեփան էլ պատմել ես, թե Փարաքար չատ ճիավոր ես տեսել, վոր ճշմարիտ չէք:

«Ինչ վոր նատեղ դրել ես, ճշմարիտ չե, ասեց վարժապետը: Ինչ վոր տեսնիք, կամ լսեք, լավ վարավուրդ արեք, վոր էլ յեկ կարդին մխաքը ներըդ բերեք: Թե չե քիչ, քիչ կղառնաք ատախտա, վոր կամենաք էլ վոչ: Ինչ վոր պատմելու ըլի ժարդ, ենպես պետք է պատմի, ինչպես վոր իր աչքով տեսել ա, են էլ կարգին: Մեկ բանն ատաչ չի պետք է քցի, մեկ բանը յեդը»:

Ես վոր պրծան, պարոն Կարապետը սկսեց էլի տեղաթղթի վրա Աբու-ծովբի, պետերի, յերկրների անուննները հարցնել: Վոչինչ չիմացան: Հենց իրանց յերեսին էլ մաչուր ես, վոր չէլին պիտուի, չունքի չատ տխուր էլին:

Փարոն Կարապետը մեկ քիչ վախտ լուռ նատեց, հետո դնաց մեկ ծոպ բերեց ու Յեղիսաբեթին ասեց, վոր տանի ջուր լցնի:

«Մա՞ղը ջուր լցնեմ, ասեց զարմանալով Յեղիսաբեթ: Ի՞նչպես կարող եմ, հազար տարի էլ, վոր մեջը ջուր լցնեմ, էլի իրոր վեր կթափի, կերթա»:

«Եդ էլ ենպես ա, ինչպես ինձ համար ձեր պլուխը: Մեկ քանի որից առաջ վորքան անուն սովորցրի ձեզ, ամա են քան ա մնացել ձեր գլխին, վորքան Յեղիսաբեթի ջուրը ես մաղումը: Ինչ վոր ուզում եք պատի ժամանակը միտքներումդ պահեք, պետք է բերան անեք, չատ ասեք, էլ յեկ կրկնեք: Ետոով ձեր հիշողությունն ենպես կկրթեք, վոր վերջ ժամանակը էլ դժվարություն չեք ունենա բան սերտելումը»:

Ես պատճառով բոլոր Աբուցը ասած անուննները գրիլ տվեց, վոր բերան աննն ու մյուս որն ասեն: Ետպես էլ մյուս որն անիլ տվեց ու ուրբոր չատացրեց: Սկիզբը դժվարանում էլին, քիչ քիչ ենպես հեչատցավ, վոր նրանց խալ գառավ: Սրանից յեդը թե վոր սովորածները գիտում էլին, չատ ուրախանում էլին ու իրանց իրանց ատում էլին՝ վառք ատծու, հիմիկ էլ մաղ չի մեր գլուխը: Յեղիսաբեթ էլ ես լավ վարավուրդ անում, բայլ վախտ Ստեփանից էլ ես լավ, թեև մեկ քանի ժամանակից սկսած, դասի ժամանակը դյուլպա յեր գործում: Փարոն Կարապետը վարավուրդ արեց, վոր դյուլպա գործելումը մեկ բան պետք է ըլի: «Ընչի՞ յես ես մեկ քանի որը նպես դայրաթով դյուլպա գործում»: Յեղիսաբեթ ծիծաղեց ու գլուխը քաչ քցեց:

Կարապետ.— Չի՞ կարելի իմանալ:

Յեղիսաբեթ.— Չեմ ուզում ասիլ:

Ուր
[illegible]

Պարոն Կարապետը վարպանի դրածին խիստ շատ հավանեց ու ասեց, որ նրա յերևակայությունը շատ լավ կարգով ու իսկապես ա, ամեն բանը նրա միտքը բերել, ինչ որ տեսել խմացել ես:

Ստեփանն ու Յեղիսաբեթ քիչ բան էլին վարպետություն արել, ու են էլ կարդին չէլին պատմել: Յեղիսաբեթ չան ու կատվի կռիվը մեկ ուրիշ տեղ էր նշանակել: Ստեփան էլ պատմել էր, թե փարաքար շատ ձիավոր էր տեսել, որ ճշմարիտ չէր:

«Ինչ որ եստեղ դրել ես, ճշմարիտ չէ, ասեց վարժապետը: Ինչ որ տեսնիք, կամ լսեք, լավ վարավուրդ արեք, որ էլ յեկ կարդին միտքը ներըդ բերեք: Թե չե քիչ, քիչ կդառնաք սուսխոս, որ կամենաք էլ ոչ: Ինչ որ պատմելու ըլի մարդ, ենպես պետք է պատմի, ինչպես որ իր աչքով տեսել ա, են էլ կարդին: Մեկ բանն առաջ չի պետք է քցի, մեկ բանը յեղը»:

Ես որ պրծան, պարոն Կարապետը սկսեց էլի տեղաթղթի վրա Աբու-ծովերի, դետերի, յերկրների անուններըը հարցնել: Վոչինչ չիմացան: Հենց իրանց յերեսից էլ մաշուր եր, որ չէլին պիտուն, չունքի շատ տխուր էլին:

Պարոն Կարապետը մեկ քիչ վախտ լուռ նստեց, հետո դնաց մեկ մատ բերեց ու Յեղիսաբեթին ասեց, որ տանի ջուր լցնի:

«Մա՞ղը ջուր լցնեմ, ասեց զարմանալով Յեղիսաբեթ: Ի՞նչպես կարող եմ, հազար տարի էլ, որ մեջը ջուր լցնեմ, էլի բոլոր վեր կթափի, կերթա»:

«Եդ էլ ենպես ա, ինչպես ինձ համար ձեր դլուխը: Մեկ քանի որից առաջ վորքան անուն սովորցրի ձեզ, ամա ենքան ա մնացել ձեր դլխին, վորքան Յեղիսաբեթի ջուրը ես մաղումը: Ինչ որ ուզում եք դասի ժամանակը միտքներումդ պահեք, պետք է բերան անեք, շատ ասեք, էլ յեկ կրկնեք: Եսոսով ձեր հիշողությունն ենպես կկրթեք, որ վերջ ժամանակը էլ դժվարություն չեք ունենա բան սերտելումը»:

Ես պատճառով բոլոր Աբուցը ասած անուններըը դրիլ ավեց, որ բերան անեն ու մյուս որն ասեն: Եսպես էլ մյուս որն անիլ տվեց ու տրեցոր չատացրեց: Սկիզբը դժվարանում էլին, քիչ քիչ ենպես հեշտացավ, որ նրանց խաղ գառավ: Սրանից յեդը թե որ սովորածներըը գիտում էլին, շատ ուրախանում էլին ու իրանց իրանց ասում էլին՝ փառք աստծու, հիմիկ էլ մաղ չի մեր դլուխը: Յեղիսաբեթ էլ եր լավ վարավուրդ անում, բայց վախտ Ստեփանիցն էլ եր լավ, թեև մեկ քանի ժամանակից սկսած, դասի ժամանակը դյուլպա չեր գործում: Պարոն Կարապետը վարավուրդ արեց, որ դյուլպա գործելումը մեկ բան պետք է լիի: «Ընչի՞ չես ես մեկ քանի որը եղպես դայրաթով դյուլպա գործում»: Յեղիսաբեթ ծիծաղեց ու դլուխը քաչ քցեց:

Կարապետ.— Չի՞ կարելի իմանալ:

Յեղիսաբեթ.— Չեմ ուզում ասիլ:

Учитель

Ученикъ

Учитель

Ученикъ

Учитель

Ученикъ

Կարապետ.— Պատճառը չեմ հասկանում, թե ինչի՞ չես ասում: Հերդ կամ մերդ ղաղաղա՞ յեն արել, վոր ինձ չասես:

Յեղիսաբեք.— Ձե՛, ձեզ կասեմ, ամա ես տղերքը չպետք է իմանան:

Պարոն Կարապետին ղրաղ քաշեց ու անկաջումը փափաց: «Իմ հոր համար եմ դործում, եկող չարաթ նրա ծննդյան որն ա»:

Կարապետ.— Շատ լավ ես անում, ամա ի՞նչ պատճառավ չպետք է սրանց էլ ասած:

Յեղիսաբեք.— Դրանց բերնոմը լոբի չի թրջվիլ, էլ յեդ կասեն:

Կարապետ.— Վարդա՛ն, Ստեփա՛ն, Յեղիսաբեթն ասում ա, թե դուք փակ բերան չուներք:

Վարդան.— Ինձանից սատանեն էլ բան չի իմանալ:

Կարապետ.— Հավատում եմ: Ջունքի թե խորհուրդ չպահեք, շատ վատ երևթեք կըլիք: Թե վոր ես տհաթս Ստեփանին կամ Վարդանին պահ տալի, ու նրանք էլ հիմարությամբ ձեռնե ձեռը քցելին ու կորցնելին, են ժամանակը ամեն մարդ դիտի, վոր շատ վատ բան կըլի: Ենպես էլ շատ վատ բան ա, վոր թե մեկ մարդ ինձ իր խորհուրդն ասի, յես բերան բերան քցեմ: Ենպես մարդը արժան չի, վոր բարով էլ ասան: Լսած խորհուրդը ու տված խոսքը մարդ ենպես պետք է պահի, ինչպես իր մարմինն ու արինը: Հավատո՞ւմ ես, թե չե, Վարդան:

Վարդան.— Շատ լավ հավատում եմ:

Կարապետ.— Ուրեմն թե մեկ մարդ քեղ հավատա ու ծածուկ մեկ խորհուրդ ասի, թե ես բանն արել եմ, կամ ուղում եմ անել, պետք է խոսքը սրտումդ պահե՞ս, թե դնաս փողոցի միջումը կանդնես ասես:

Վարդան.— Ասոված մի արասցե, միտս վոր կարեն չեմ ասիլ:

Կարապետ.— Ընչի՞:

Վարդան.— Ջունքի նա ինձ հավատում ա, վոր ասում ա, յես ինչպես պետք է նրան վընաս տամ:

Կարապետ.— Բայց թե վոր մեկն ասի քեղ, թե ուղում ա քո հարևանին վնաս տա, են ժամանակն էլ պետք է լուռ կենա՞ս:

Վարդան.— Ասոված վոչ անի, իմ հարևանի վնասն իմն ա, յես վոր նրան չպահեմ, քոմակ չանեմ, նա էլ ինձ քոմակ չի անիլ: Ընկեր ընկերին ենպես պետք է պահի ու թասիբը քաշի, ինչպես իր դլխի, իր ջանի:

Կարապետ.— Ուրեմն, թե վոր մեկ մարդ մեզ մեկ խորհուրդ ասի, թե ուղում ա, ուրըչին վնաս տա, էլ չի պետք է լուռ կենանք, պետք է հայտնենք: Ամա թե խորհուրդը բարի յա, պետք է սուրբ պահենք: Հիմի բանն ենդուր վրա յա, թե Յեղիսաբեթի խորհուրդը բարի՞ յա, թե չե: Ուրըչին հո վնաս չի դալ: Ինչ կասես Յեղիսաբեթ ջան:

Յեղիսաբեք.— Դու լավ դիտես, վոր իմ խորհուրդը մեկին ելա վընաս չի տալ, էլ ո՞ւր ես հարցնում:

Կարապետ.— Ուրեմն յես ենպես եմ կարծում, վոր լավ կըլի քո խորհուրդն ես տղերքանցն ասես:

Ինչ ժամանակ Վարդանն ու Սահական խոսք ավին, վոր Յեղիսաբեթի առածը իրանց սրտումը պահեն, ուրըշի չասեն, նա էլ իր խորհուրդը նրանց ասեց:

Ես վոր լսեցին, նրանք էլ ուզեցին իրանց բարի հորը մեկ պատ փեշքաչ անեն. պարոն Կարապետին ասեցին, սա էլ համանեց: Հլա դեռ չեյին գիտում, թե ինչ պետք է բաչխեն: Վերջ ամենայնի Վարդանը մտքում դրեց վոր մեկ թուխթանաման բաչխի, Սահական էլ ուզեց, վոր մեկ սհաթի պննվել փեշքաչ անի:

Շատ բարի, ասեց պարոն Կարապետը, ամա ինչ վոր տալու յեք, ո՞ւր եք չինել:

Ինչ ժամանակ, վոր ուտին, պլխին արին, ու ասացին, վոր պետք է ծախու առնին, են ժամանակը պարոն Կարապետը դլուխը պատեց ու ասեց, «թե դուք չեք չինել ձեր տալու բանները, լավ է, վոր չառաք: Ի՞նչ ուբախություն ձեր հոր համար, վոր եսպես մանր բաներն էլ առնիք: Նա ենքան փող ունի, վոր ինքն էլ կարա առնել: Թե վոր դուք չինած ըլիք, եղ ուրիչ բան է: Եսոով կլիմանա նա, վոր դուք մեկ բան եք սովորել: Զունքի երեխեքը վոչինչ բանով իրանց ծնողաց սիրտը չեն կարող չահիլ, թե վոչ նրանով, վոր գայրաթով սովորին ու իրանց բանին մուգայիթ ըլին»:

Երեխեքը շատ ախրեցին ու Վարդան շատ վոր նեղացավ, ասեց էլ՝ «ուրեմն մեր տվիլ հորը մենք չենք կարող մեկ բան էլա փեշքաչ անիլ, չունքի վոչինչ չենք սովորել»:

«Ի՞նչ: Վոչինչ չե՞ք սովորել, ասեց պարոն Կարապետը, վոչի՞նչ: Յես եյի ձեր վարժապետը, ու դուք վոչինչ չեք սովորել ինձ մոտ: Եվ ուր եմ մնում ձեր տանը, լավն են ա, վոր ձեղանից հեռանամ»:

«Յես հո եղպես չեյի ասում: Մենք չենք սովորել, վոր մեկ բան չինենք, ու մեր հորը տանք», ասեց Վարդան:

«Յես հո չասեցի, թե երեխեքը հենց են ժամանակը իրանց ծնողաց սիրտը կուբախացնեն, յերը վոր նրանց բան բաչխեն: Յես ասեցի, թե վոր նրանց ցույց տան, թե որեցոր լավանում, որեցոր բան են սովորում: Ուրեմն, թե իրավ ինձ մոտ բան եք սովորել, ձեր հորը իր ծննդյան որը ցույց տվեք»:

«Ի՞նչպես անենք», հարցրեց Սահական:

«Յես ձեզ կասեմ», պատասխանեց պարոն Կարապետը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՎԵՐԵՔԵՈՐԴ

Նա էլ իրավ վոր ասեց, ու երեխեքը սկսեցին ղայրաթ անիլ, վոր բարի հորը ուբախացնեն, վոր նրանց էնպես լավ վարժապետ եր բռնել ու վերակացու:

Ծննդյան որը հասավ, ու ուբախ սրտով կատարեցին, առանց մեծ խարջ անելու: Հենց հերը իր քնելու ոթախիքը դուս եկավ թե չե, Աննա չայը բերեց ու հետը Յեղիսաբեթի Վարդանի ու Սահականի դրած գիրը: Պարոն Տիգրանը բաց արեց, կարդաց ու աչքերիցը արտասուքն սկսեցին թափիլ: Սահականի գիրը ես եր.

«Սիրելի հայր:

Ճշմարիտ, դու իմ հերն ես: Դու յես կրթիլ տալիս: Յես առաջ ինչպես պազան, չար յերեխա եյի, ու վոչինչ չեյի սովորել: Դու ինձ հետ ինչպես քո վորդու հետ ես վարվում, ինձ ուսուցն, մարիֆաթ տալ տալիս: Շատ բան պիտեմ հիմիկ, վոր առաջ չեյի գիտում, ու եվ ենպես չար չեմ, ինչպես առաջ: Սիրելի հայր՝ յես կուզեմ, վոր միշտ լավանամ ու չատ բան սովորիմ, վոր ուբախանաս: Մնաս բարով: Ապրիս յերկար ու ուբախ: Թե ինձը սհաթը խփի, արի պարոն Կարապետի ոթախը ու տես, թե ի՞նչ ենք սովորել: Յես եմ քո ընորհապարտ վորդի Սահական»:

Ինն սհաթի իրեք չարեքը վոր անցկացավ, պարոն Տիգրանը հաղրվեց, վոր հիմա հետ պարոն Կարապետի ոթախը գնա: Հենց ուզեցան, վոր դուռ գնան, հանկարծ մեկ գոնաղ եկավ: Ես եկողը Սահականի հերն եր: Պարոն Տիգրանին, վոր դրկեց, համբուրեց, տանը ընորհավորեց, պրծավ, խկուչն հարցրեց: «Տղես ո՞ւր է»:

«Կաեանիս, համբերիր», ասեց պարոն Տիգրանը ու ձեռիցը բռնեց, պարոն Կարապետի ոթախը տարավ: Իրեք երեխեքն էլ մեկ սեղանի վրա նստած եյին: Պարոն Կարապետը գնաց պարոն Տիգրանի առաջը, վոր նրան մեկ բան ասի, հենց բերանը բաց արեց թե չե, ձենը մնաց փորումը: Զունքի Սահականի աչքը հենց հորն առավ թե չե, նետի պես թռավ առաջը, ընկավ ճտուն, լաց ելավ ու ասեց, «իմ տվիլ, իմ տվիլ, սիրելի հայր»:

Մեկ քանի վախտից հետո սկսեց պարոն Կարապետը, ուզածն ասիլ: Պարոն Տիգրանի ձեռը հուպ տվեց ու ասեց, «լարի հայր, քո սիրելի վորդիքը յերկար մտոք եյին անում, թե քո ծննդյան որը, ինչ պետք է փեշքաչ անեյին քեզ, վոր դու եվ ուբախանաս, նրանց որհնես, սիրես: Վերջ ամենայնի մտոք արին, վոր իրանց բարի հերը վոչինչ բանի վրա ենքան չի ուբախանալ, թե վոչ, վոր տեսնի թե վորդիքը բան են սովորել: Ինդրում եմ, ուրեմն, վոր ինձ հրաման տաս, վոր քո աչքի առաջին, սրանց հետ մեկ վոքը հարցափորձություն անեմ, վոր տեսնես, ինչ են սովորել»:

«Շատ կուբախանամ, ասեց պարոն Տիգրանը, ու չնորհակալ կըլիմ»:

Եսոուց յերը խնդրեց պարոն Տիգրանիցը, վոր մեկ անվանի կենդանու անուն ասի, վոր են կողմերը գոնվում եյին: Նա էլ լապլապի անունը տվեց:

Յեղիսաբեթին ասեց վարժապետը, վոր ես դչի ամեն նչանները, վորպիսությունը, վոտից բռնած մինչև կատուցը պատմի: Սահականն էլ պետք է լապլապին ու սկզին համեմատեր ու ասեր, թե ինչով են ես յերկու կենդանիքը իրար նման ու ինչո՞վ զանազան: Վարդանն էլ պետք է ասեր,

թե նրա ուսելիքը ի՞նչ ա, ինչպես ա ապրում ու մարդի ի՞նչ ոգուտ ա բերում:

Պարոն Տիգրանի կնիկն էլ կարմրախեժ ձկան, ու պարոն դիվանբեգին պարի անուններըը տվին, որ եսպես պատմեն: Ինչ ժամանակ ես հարց-մունքը պրծան, Ստեփան գնաց, մեկ մեծ դասթա բույս բերեց, որ մեկ որ առաջ հավաքել էին: Պարոն կարապետը մեկը մեկի քամակիցը են բույսըը բարձրացրեց ու երեխեքը պետք է նրանց անուններն ասեին, ու բաղի անդամ են նշաններն էլ դռնեին, ընչով որ նրանք իրար նման էին, կամ զանազան:

Սրանից յեղն էլ տեղաթուղթը բերին Ամերիկու. վարդան յերեսը չուռ տվեց ու են յերկրների անունը տվեց, որ եատեղ կան: Ցեղիսաբեթ յերեսի դեսերին ասեց, կարգով, ու Ստեփան բոլոր մայրաքաղաքներինը:

Նրանք պատմեցին էլ, թե ինչ կենդանիք կան ենտեղ, ի՞նչ բույսը, որ ենտեղ բուսանում են, ի՞նչ հանքայինք կան, որ են յերկրումը գըտնվում են, ու յերկրի բնակիչքն ի՞նչ են չինում, ինչ փեշաղի տեր են:

Սրանից յեղը սկսեցին թվաբանությունիցը բան ասել ու դրելու տեսակը մոտ բերին. երեխեքանց ծնողքը չատ ուրախացան, որ տեսան, թե նրանք իչպես դայրաթով ե եղել ու ենքան բան էլին սովորել:

Պարոն Տիգրանը հենց լմացավ, թե քննությունը (եզամին) պրծան, բայց պարոն կարապետը խնդրեց, որ իրան երեխեքանցն էլ հրամայի, որ բան հարցընեն: Դեռ ես խոսքը չեր պրծել, որ Ցեղիսաբեթ դուրս պրծավ դռնով ու իր փոքր ախպեր Հովհաննեսին հետը բերեց: Դե, սիրելի Հովհաննես, նչանց տուր մեր հորը, ինչ սովորել ես: Իսկույն կռնատակիցը մեկ այբենարան հանեց ու կարդաց:

Պատիկ երեխեն թե որ չատ խաղա,
Կամ դլուխը կկոտրի, կամ վոտը կկաղա,
Որ նստինք, ասինք աղա չեմ աղա,
Մեր հացն ո՞վ կանի ջաղացն ու կաղա:
Տանձը ինքն իրան բերանդ չի ընկնիլ,
Որ տակին նստիս, տեղիդ չես չարժիլ:
Ո՞վ դայրաթ չանի կմնա սոված,
Վերջ ժամանակին դռնեն դուռ ընկած:

Ծնողքը զարմացան ու հարցրին. «Հովհաննես, ո՞վ ա քեզ կարդալ սովորցրել»: «Սա, իմ քիրը, սա յեր իմ վարժապետը»:

Իրավ, որ նա յեր նրան կարդալը սովորցրել, պարոն կարապետի ձեռի տակին:

Հենց ես դասը հարցրին, վարդանը ձեռիցը բռնեց ու տարավ մեկ սեղանի մոտ, որ վրեն քառասուն տեսակ ավելի զանազան բուսեր կային: Վարդանը մեկ մեկ բարձրացրեց ու Հովհաննեսը անուններըը ասեց: Հետո վարդանը անուններն ասեց ու նա բուսերը դռավ ու հանեց:

«Դուք ձեր մարիֆաթով ու ձեր ուսմունքով անչափ ուրախացրիք ինձ իմ ծննդյան որը, սիրելի երեխեք, ասեց պարոն Տիգրանը: Լավ հոր համար քանց ես էլ մեծ ուրախություն չի ըլիլ, որ վորդիքը խելոք ըլլին, ու իրանց ուսմանը մուղայիթ: Ու ումնի՞ց եմ չնորհակալ, ո՞ւմն եմ պարտական սրա համար, Ձեզ, սիրելի, աչքի լույս, պարոն Կարապետ», ասեց ու նրան դրկեց:

«Բաս չի՞ս, ասեց պարոն դիվանբեգին, բաս չի՞ս... բառ չեմ գտնում վոր իմ չնորհակալությունը արտիցս հանեմ, ասեմ: Դուք իմ վորդիս ենպես սառցաք, վոր ջանավարի նման մեկ զադ եր, հիմար, տգետ, անտաշ, ու ձեռքի տակին այժմ մարդ ա դառել, լավացել, ժրացել ա: Հավիտյան իմ կյանքս ձեզ պարտական ե, իմ ազիզ պարոն Կարապետ»:

«Ձեր դովելովը չատ եք ամաչացնում ինձ, ասեց պարոն Կարապետը: Դուք յերկուսդ էլ ձեր աչքերի լիսը ինձ տվիք, բաս չես ինչպե՞ս չպատճի ինձ պահ տված անգին քարը պահպանել, թե վոր լավ մարդ եյի ուզում ըլիլ»: Ես խոսքն ասեց ու հեռացավ:

Երեխեքն էլ եյին ուզում հետը դուռ դնան, պարոն դիվանբեգին նրանց թողնց ու ասեց. «Գիտե՞ք, սիրելի երեխեք, թե ո՞ւմն եք պարտական, վոր ես մեկ կես տարվա միջումը եսքան բան եք սովորել»:

«Սիրելի պարոն Կարապետին», ասացին բոլորն էլ:

«Չմոռանաք ուրեմն, սիրելի երեխեք, ասեց, ինչ վոր ես ձեզ համար անում ա, դուք վոչինչ բանով չեք կարող վճարիլ: Աչխատեցեք, չանք ածեք, վոր նրան հնազանդ ըլիք, սիրան առնեք, ձեր բանին մուղայիթ ըլիք, վոր նա ավելի նեղություն չքաշի:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՎԶՈՐՍԵՐՈՐԴ

Աննա դուս ելավ ու գնաց աչխանեն (կուխնեն), որ տեսնի թե ասածն արել, կերակուրը պատրաստե՞լ են, թե չէ: Ինչպես սիրան ուզել եր, ենպես եյին արել: Սուփրեն բաց արին, ասածո ամեն բարություն ենտեղ կար: Փախլավա ասես, չաքարլամա, գաթա, ինչ վոր ասես կար: Սրանցից յեղը յերկու տեսակ խորոված բերին, ձուկը, հալվա, դինի և այլն:

Մեկ քանի բարեկամ, սիրելի էլ եկել եյին, վոր պարոն Տիգրանի տոնը չնորհավորեն: Ամենն էլ հիմիկ հացի նստեցին ու չատ ուրախ եյին: Պարոն Տիգրանը պատմեց նրանց, ինչ վոր մինչև ցայսօր գլխին եկել եր, չար, թե բարի, ու ինչպես ամենն էլ անց եր կացել: Ամենիցը յերկար են վորճանքը պատմեց, վոր քիչ եր մնացել նրա տունն երթի, ու ասեց, թե ինչպես պարոն դիվանբեգին ազատեց:

Հացիցը յեղը սկսեցին կենձանաթասը խմել: Պարոն դիվանբեգին թասը ձեռն առավ ու ձեն տվեց. «Աստված մեր բարեկամ, սիրելի Տիգրանին շատ որ, շատ ժամանակ ուրախ սրտով, բաց աչքով ես տեսնի արժանի

անի: Աստված նրան շատ կարողություն ու կյանք տա, որ միշտ ղայրաքով ըլի, ու իր վորդվոց ուրախությունը տեսնի»:

Եսպես ամեն մեկ ղոնաղ նրա կենդանաթաղը խմեց, ու նրան լավ որ ու արև խնդրեց:

Եսպես քեֆընները ուրախ վախտին էլ երեխեքանցը մոկ անող չելավ, ինչպես ամեն որ: Նրանք էլ իրանց մաքի ղրած բոները մոռացան ու ըսկսեցին ամեն կերակրիցն էլ կուշա վորով ուտիլ: Մանավանդ Յեղիսաբեթ, ինչքան մինչև ես որ կերել եր, յերկու ենքան կերավ: Ա՛խ, յերանի թե չեր արել:

Իրիկնապահին սկսեց ասիլ, թե վորը ցավում ա, ու խնդրեց մորիցը՝ վոր նրան չուտ թողա, դնա քնի: Մերն էլ թողաց:

Շորերը հանելիս ենպես մեկ սաղ դող ընկավ ջանը, վոր ատամները չրըխկչըրխկում էյին: Ես պատճառավ վպեց, տեղը մտավ, յորղանը քաշեց ղլխին, ու ենպես կարծեց, թե սրանով լավ կըլի: Ամա չլավացավ: Մինչև վերջը յորղանը ղեն եր քցում, ու դես ու դեն պտռվում, ճղվում: Վերջապես, ինչ ժամանակ ղարաուլի ձենն եկավ, տեղիցը բիրդի վեր թռավ ու սիրտը յես յեկավ:

Ինձ մերը վոր սաղ որը ենքան տանջվել, բեզարել ու հիմիկ ենպես անուչ քուն եր մտել, ես ձենը վոր լսեց, վեր թռավ, վոր աղջկա-նը քոմակ անի, ղարավաշին էլ վերկացրեց, չայ չինել տվեց ու հիվանդին տվեց: Յերկու սհաթին դիչերվա ամեն բանն էլ անցկացավ, ամենն էլ գնացին իրանց տեղը, ու մինչև առավոտը քաղցր քուն մտան:

Ես առավոտը ենպես քաղցր չեր, ինչպես մյուս անցկացածները: Յերկնաբեթի ղլուխն եր շատ սաստիկ ցավում: Վարդանի ու Ստեփանի ղլուխն էլ եր դժժում, սրտները խառնում: Եկան, վոր դաս առնին, շատ քեֆքեֆ էյին ու նեղացած: Պարոն կարապետը մեկ քանի հարցմունք արեքեֆ էյին ու նեղացած: Պարոն կարապետը մեկ քանի հարցմունք արեց, ինչ վոր առաջ սովորել էյին, մեկը սարիցն եր խոսում, մեկը ձորից, էյին խմանում, թե ինչպես մխաք անեն: «Ընչի՞ցն ա, հարցրեց պարոն կարապետը, վոր ես որն եզպես խառնըված քնահարամ ու բներեք եք»:

«Յես էլ չեմ իմանում, պատասխանեց Ստեփանը: Ես ղիչեր շատ անհանգիստ քնեցի, ու առավոտա հացը լսկի դուր չեկավ»:

«Յես ձեզ ասեմ պատճառը, սիրելի երեխեք, երեղվա հացն ա մեղավորը: Յերեկ շատ կերակրներ կային, քանց ուրիչ ժամանակ, լավ բան էլ չինած, եփած էյին, նրանց համը ձեզ խարեց ու դուք էլ շատ փեցը դուս կերաք: Եստով ձեր ստամոքսը խարաբ եք արել, ու ձեր ախորժակը չատ տաքացել ա: Ել ի՞նչ կոդտի ձեզ պակաս խոսք ասիլը: Մխմելին

դըն եւ թողեց, եւ մարդի յերեսի չեր մոխիկ անում, վոր ջանին ջաֆա չտա: Նմանապես շատ հպարտացավ, ու եւ մարդ չեր կարում հետը խոսալ, չունքի շատ ուռիլ, խմիլը սիրտը խառնում եյին: Վերջը գամլա ընկավ, ինչ ուներ, չուներ, ծախել, կերել եր, հինգ տարի մնաց ես դռռը տանջանքի միջումը, ու եսպես չոփ գառած հոդին տվեց:

Մեռնելուցը մեկ քանի որ առաջ խնդրեց, վոր բերեն նրան ես քարճր տեղը, արեգակի մեր մռնելուն թամաշ արեց ու լացն եկավ: Ախ, ինչ լավ մարդ եյի մեկ քանի տարուց առաջ, ինչ ժամանակ չափավոր եյի ապրում: Բանի, քանի մարդու լավություն եյի անում, ինչպես աղ, սալամաթ, ինչպես ուրախ եյի ու բախտավոր: Ուտիլ, խմիլն եր հիմիկ իմ մեծ բանը, մեկ մարդի լավություն եվ չարի, ու յես եվ ես հալն եմ ընկել, աչխարքն ինձ համար քանդվիլ պետք եր են որը, վոր ձեռս վիզ եկավ: Իմ դաղումն ինձ լավ պահում եր, եվ ինչ կանեյի: Անիծվի շատակերությունը, վոր եսպես ինձ սպանեց: Ինչ կանեյի չինն ու շատ ուտիլը, խմիլը, վոր վերջս ես պետք է ըլեր: Ելի ենպես դողդողալով տուն էի, վոր չունեցած, չունեցածը, ծախեցին, վոր պարտքը տան: Նրա չափազանցությունը նրան ես տեղը քցեց, իրան սաղ, սաղ հողը տարավ, ու վողորմելի ընտանիքը որեն հացին կարոտ՝ մնացին դռներն մուրացկան:

Երեխեքը խոհուն լմացան, թե ինչ մաքով ա իրանց պարոն Կարապետն ես ասում, ու մաքներումը դրին, վոր եսուց դենը չափավոր ուտեն, չափավոր նստին, վերկենան:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Արեգակը դեռ չեր հասել յերկնքի մեջտեղը, վոր նրանք յափաշ, յափաշ սկսեցին եվ յեդ տուն դնալ: Ճանապարհին ենպես բան պատահեցավ, վոր նրանց բոլորին եվ թաքրար նեղացրեց: Պարոն Կարապետը վարցավ, վոր նրանց բոլորին եվ թաքրար նեղացրեց: Ստեփանը մնացել դանի ու Ցեղխաբեթի հետ առաջ եր ընկել, դնացել: Ստեփանը մնացել եր յեդ, վոր մեկ ճիճու կաը, են տեսներ: Հանկարծ պարոն Կարապետը եր յեդ, վոր մեկ ճիճու կաը, են տեսներ: Հանկարծ պարոն Կարապետը եր յեդ, վոր կռիվ ա ընկել ու հենց ես եր իմանում, վոր ասում եյին—հիմար, դիժ, դու չատ հիմար ես:

Ցերեսը վոր չուռ տվեց, տեսավ վոր Ստեփան յերկու քուչի տղերքանց հետ կռիվ ա բաց արել: Ինչ խարար ա, ձեն տվեց, են տղերքը Ստեփան վազելով եկավ պարոն Կարապետի մոտ, յերեսը բարկությունից կրակի պես վառվել եր:

«Ինչ ա պատահել», հարցրեց պարոն Կարապետը:

Ստեփան.— Ինչ պետք է պատահի: Ենտեղ ինձ համար անտաս կանդնած եյի, յերկու հայվարա տղա եկան ու ինձ հիմար կանչեցին:

Կարապետ.— Դու ինչ արիր:

Ստեփան.— Ցես եվ նրանց ուշունց տվի:

Կարապետ.— Լա՛վ: Ուրեմն են տղերքը լավ արին, վոր քեզ պակաս խոսք ասացին:

Ստեփան.— Եվ ինչ ասիլ կուզի: Գանց են եվ վատ բան կըլեր:

Կարապետ.— Դու պակաս խոսք ասեցիր, ուրեմն գո արածն եվ վատ ա:

Ստեփան.— Բաս ձենս կտրեյի, չի՞, առաջ նրանք ասացին, յես ինչպես պետք է համբերեյի:

Ես խոսքումը Ստեփանի հերն եկավ, վրա հասավ: Պարոն Կարապետը Ստեփանին հրամայեց, ձենը կտրի ու հոր հետ սկսեց խոսալ: «Պարոն աղա, ասեց, դիտեմ, վոր շատ մարդիք, ձեր ձեռի տակին ըլողներիցը կռիվ են քցում ու հետո ձեր մոտ գալիս, վոր դուք նրանց գատաստանն անեք: Ցես եվ եմ ուզում ձեզ ենպես մի մեկ կռիվ հայտնեմ, խնդրում եմ, վոր իմ գատաստանն անես: Մեկ յերեխա գնաց ման գալու, յերկու յերեխա նրան պատահեցան ու ասեցին, դու հիմար տղա յես: Ինչպես երեխեք պետք է ելած ըլին նրանք»: «Ավետս են յերեխին, վոր պակաս խոսք լսեց, պատասխանեց դիվանբեգին, բայց են յերկու յերեխի յերեխին հեչ մոխիկ անելու չի, վոր նրան անկարգ խոսք են ասել: Իմ կարծիքն ես ա, ու ամեն խելոք մարդ եվ, ես կասի: Մեկ մարդ, վոր ինքը ենքան տխմար ըլի, վոր ուրըշին պակաս խոսք ասի, ինչանակի իրանն ա են խոսքն ասում, իրանն ա անպատիվ անում, չունքի ինքն իրան նչանց ա տալիս, վոր չատ բոի, կոպիտ, անսռունդ մարդ պետք է ըլիլ: Մյուսին ենպես պակաս խոսքը բնավ չի կպչիլ: Նա ելի են կմնա, ինչ վոր եր: Ցես, ինչպես վոր տեսնում ես, դուզ բոյ ունիմ, թե վոր ինձ ասող ըլի, անդամալույծ, վրեն կծիծաղիմ: Հազար անգամ եվ ինձ անդամալույծ կանչեմ, չի՞ ելի դուզ կմնամ: Թե մեկ յերեխա խելոք ըլի, ինքը ինչ վնաս ունի, վոր նրան հայվարա մարդի մեկը հիմար կանչի»:

Բայց թե վոր են յերեխեն, վորին վոր պակաս խոսք ասեն, ինքն եվ յեդ դառնա, մյուսին ասի, են ժամանակը ինչ պետք է արած», եվ յեդ հարցրեց պարոն Կարապետը:

«Ենպես երեխեն դհա վատ ա, ասեց դիվանբեգին: Իմ գատաստանը միշտ եսպես եմ կտրում: Ինչ պեղըցի, վոր մեկի պակաս խոսք ա ասում, պատժում եմ նրան, բայց թե մյուսն եվ ա խոսքը յեդ դարձրած ըլում, են վախտը յերկուսին եվ պատժում եմ: Անցկացած չաբաթը հենց եդպես մեկ բան պատահեցավ: Մեկ պեղըցի գանգատ արեց, թե իր հարևանը նրան հարամզադա յա ասել: Կանչիլ տվի, իմացա, վոր սա եվ նրան ա ասել: Ցերկուսին եվ պատժեցի: Գանգատողն ղորդ ա, ասում եր, թե նա առաջ ե իրան պակաս խոսք ասել, ու ինչպես համբերեր, վոր ինքը համալ մարդ ըլելով, ենպես խոսքը լսեր ու լուռ կենար: Ինչ ասեց, չի մըտիկ արի, ելի պատժեցի, ու ասեցի: Թե դու հալալ մարդ ես, դրանով քեզ ինչ կպակսի, թե մեկը քեզ վատ խոսք ասի: Դու սիպտակ ես, եդպես չի՞: Ցես վոր քեզ սև կանչեմ, իմ ասութունովը կսևանա՞ս: Ասում

ես, թե չեմ կարող համբերել, շատ բարի: Կգայիր ինձ մոտ, գանգատ կանեիր, թե ձեր դատաստանը կկարելի: Դրանով ի՞նչ իրավունք կճարես, վոր դու էլ պակաս խոսք ասես: Թե վոր ուրիշ մարդիկ կարծեին, թե դու հարամզադա մարդ ես, չունքի քո հարևանը քեզ նեղես ա ասել, բաս ի՞նչ կասեն հիմիկ, վոր իմանան, թե դու էլ նրան ես պակաս խոսք ասել: Ցերկուսիդ էլ հարամզադա կասեն են ժամանակը»:

Սահվան ես լսելիս գլուխը կախ եր գցել, ձենը կարել: Պարոն Կարապետը չուզեցավ, վոր նրա հոր սիրտը կոտրի, վոչինչ չասեց, լինչ վոր անց եր կացել, ու խոսքը ծռեց, ուրիշ բանի վրա գցեց:

Հենց տուն հասան, թե չե, հացը հազիր եր: Բոզբաշը վոր կերան, պրծան, դիվանբեգու ծառան եկավ, ասեց թե ճիանը հազիր են:

Մեկ քանի թիւքա էլ կերավ, տեղիցը վեր կացավ, ու կուզեր նրանց բարով մնա ասի ու գնա: Ամենն էլ խնդրեցին, վոր մեկ կես սհաթ էլա մնա: «Ցերկար չեմ կարող մնալ, շատ հարկավոր գործ ունիմ», ասեց: «Կես սհաթը մեկ շատ ժամանակ չի, ի՞նչ բան ա, վոր չես ուզում եսոր մեր խաթրն առնիս», ասաց պարոն Տիգրանի կնիկը:

Նա ժպտեցավ ու ասեց, «իրավ կուզե՞ք, վոր նոքարս կես սհաթ արեզակի տակին երվի, ու ճիանս բղեղի ձևին տանջվին, չարչարվին, վոր կես մի քիչ ժամանակ էլ ձեզ պես սիրելյաց հետ նստիմ, քեֆ անեմ: Նոքարս մկամ մարդ չի՞, մազմին չունի, ու ի՞նչ իրավունք ա, վոր իմ ճիանս տարին տասներկու ամիս ինձ համար տանջվին, ու կես նրանց արևումը կանգնացնեմ նհամ տեղը նեղացնիմ ու իմ քեֆիս նայիմ: Յես վոր իմ նոքարի ու հայվանի ղաղրը չիմանամ, նրանք էլ ինձ չեն ենպես վոր իմ նոքարի ու հայվանի ղաղրը չիմանամ, նրանք էլ ինձ չեն ենպես պետքը գալ: Իմ ապրուստս նրանցով է, նրանց ինչպես կթողամ, վոր նեղանան»:

«Գնա, դնա, աստված ձեզ հետ, ինչպես կուզեմ, վոր ձեզ դլխից հանեմ, ձեր նոքարին ու ճիանոնցը նեղացնես»:

Դիվանբեգին ամենի էլ ճառվն ընկավ, բարովեց և գնաց:

Երեխեքը շատ սրտով կուզեյին, վոր մեկ քանի որ էլ մնացել եր իրանց մոտ. ու շատ ախորեցան, յերբ վոր գնաց: Սահվանը ամենիցը տրտում եր: Ախը ի՞նչպես չի ախրեր: Մեկ յերեխա, վոր իր հորը սիրի, սիրտը ինչպես կտանի, յերբ վոր նրանից հեռանա:

Պարոն Կարապետը վարավուրդ արեց: «Ցեսնում եմ, վոր շատ տխուր եք, սիրելի երեխեք, գնանք ինձ մոտ, օթախս, ձեզ մեկ պատմություն կասեմ, ձեր սիրտը կբացվի»:

Ինչպես ասեց, նրանք էլ վերկացան, հետը գնացին, ու նա էլ ես պատմությունն ասեց:—

«Քանաքեռ գեղումը մեկ քահանա կար, անունը տեր Հարություն: Շատ արդար, բարի ու ղայրաթով մարդ եր ու գեղըցոնցը ամեն կիրագի որը լավ լավ բաներ եր ասում, նրանք էլ ես պատճառավ շատ սիրում

եյին նրան: Նրա դյալուրը ենքան քիչ եր, վոր անջախ եր իր ողուշագի ուտել, խմելն ու հաքուստը ձեռք բերում: Բայց նա մեկ որ չեր տրտընջում: Սաղ որը իր բանին եր կենում ու իրիկունը յերբ վոր գալիս եր իր ողուշագի մեջը, ենպես եր ուրախ, վոր նրա քեֆը են մարդիքն էլ չունեյին, վոր մեջտ խորոված ու փլավ եյին ուտում, վրեն էլ գինի խմում: Ես ուրախությունն էլ չմնաց նրան: Նրա ազիզ կոդակիցը (կնիկը) մեռավ ու յերկու մանր երեխեք թողեց, վոր հիմիկ ինքը պետք եր նրանց դարդը քաշել: Նրանց մեկի անունը Վահան եր, մյուսինը Հովսեփ: Սրա վրա շատ դարտ արեց ու իրեք ամիս չքաշեց, ինքն էլ հիվանդացավ ու մեռավ: Մեռնելուցը մեկ քանի սհաթ առաջ երեխեքանցը մոտը բերել տվեց ու ասեց լալով: «Իմ սիրելի վորդիք, տեսնում եք, վոր յես մեռնում եմ, էլ վոչ մեր կունենաք, վոչ հեր. ձեր տերն այսուհետև աստված պետք է ըլի ու բարի մարդիք: Ձեզ համար մալ, դոլվաթ չկարացի յեղ քցել. ամա իմ վերջին խնդիրքն այժմ ես ա, ձեր բանին միշտ ուղիղ կացեք, ով ձեզ նհամ տեղը նեղացնի, տարեք համբերությամբ, եսպեսով ձեր որը յավ անց կկենա»: Վահան ու Հովսեփ մնացին անհեր, անմեր, մեկ մարդ էլ չկար, վոր նրանց ապրուստ տա:

Հենց խեղճ հոր մարմինը գերեզման գրին, աչքընեերը կալան ու սուք անելով յեղ գառան տուն:

«Ի՞նչ պետք է անենք, ասեց Վահան. ի՞նչ, սիրելի յեղբայր, էլ վոչ հեր ունինք, վոչ մեր, աշխարքը մեզ համար քանդվից, գնաց»:

«Ա՛խ, թե վոր մեծ ելա ըլեյինք, ո՞վ դարդ կաներ, մենք մեր գլուխը կարող եյինք պահել, ասեց Հովսեփ: Ա՛խ լիս պառնաք, այ հերնըմեր, ի՞նչ կըլեր, վոր մեզ չեյիք բերել»:

Ես խոսքումը տան դուռը սաստիկ ծեծեցին, «ներս եկեք, ավ եք», ասեց Հովսեփը:

Դուռը բաց ելավ... «իմ Վահան, իմ Հովսեփ», դռնովը ձեն տվին ու իսկույն յերկու մարդ նեքսև եկան, յերեխեքանցը խառեցին, համբուրեցին, ու հետները ենպես եյին լալիս, վոր մարդի սիրտ երվում, փոթոթվում եր:

Ես եկողները նրանց հոր ախպերքն եյին: Երեխեքը, վոր ենպես հեկեկում չեյին ու ասում, թե հերնըմերը չունինք, մենը մեկ երեխին ասեց, մյուսը մյուսին, վոր խառել եյին, «յես քեզ հեր կըլիմ, իմ կնիկը քեզ մեր, դարդ մի անիր, յերեսիդ մեռնիմ»:

Մեկ քանի որ էլ ենտեղ մնացին, վոր ամեն բանը կարդ քցեն, ինչ վոր մնացել եր, ու նրանց էլ հետները վեր առան, տուն գնացին: Վահան մնաց մեկ հորաքրոջ մոտ, Հովսեփ՝ մյուս:

Մեկ քանի որ էլ, վոր տանը մնացին, նրանց վարժառուները ուղարկեցին: Վախվախելով մտան ներս, գլուխները տխուր կախ արին ու մտիկ եյին անում, վոր մյուս աշակերտները նրանց մեկ բան ասեն, մեկ տեղ նշանց տան, մեկ քաղցր աչքով ելա մտիկ անեն նրանց: Բայց շատ սը-

խալվեցին, սրանք ենպես լավ անունդ առած երեխեք չէյին: Մեկին ելա առաջները չեկավ, մեկին ելա մեկ տեղ ցույց էի տվեց նրանց, վոր նըստին: Ենպես մնացին վոտի վրա կանգնած: Նրանք էլ պլուխ պլխի դրին, իրար բոթեցին, իրար անկաշում վախացին ու ծիծաղացին: Ես սհաթին վարժապետը ներս մտավ, նրանց մյուս երեխեքանց առաջին կանգնացրեց ու խրատեց, վոր նրանց հետ սիրով վարվին, քոմակ անեն, ու տեղները նստացրեց:

Վարժապետի խրատը, ծիծաղը մի քիչ կտրեց: Հենց վահան ու Հովսեփ սկսեցին կարդալ, ծիծաղի պարկը թաքրար լաց արին: Ցերկուսն էլ բառն իստակ չէյին կարում բերանիցը հանիլ: Վահան չէր կարում ր դիրը պարզ ասել, ու Հովսեփ էլ կակազում էր: Հենց Վահան սկսեց կարդիրը պարզ ասել, ու Հովսեփ էլ կակազում էր: Հենց Վահան սկսեց կարդալ· «Ջմեյը անձև չէլ գալիս», նրանց քեֆն եկավ, ամա քեֆ, քեֆ դալ· «Ջմեյը անձև չէլ գալիս», նրանց քեֆն եկավ, ամա քեֆ, քեֆ են ժամանակն էր, յերբ Հովսեփ սկսեց ասիլ «ձը-ձը-ձը-մե-մե-մե-ոը անձ-անձ րև չը-չը-չը-էի դը-դը-դը գալիս»: Են չար աշակերտքը մեկ մեկի բոթեցին, վոտով խփեցին, իրար անկաշում վախացին: Հենց վարժապետը դուս գնաց, սկսեցին են նոր եկածներին աշկարա ծաղր առնիլ: Մեկը Վահանին խնդրեց, վոր անձրև բառը մեկ էլ ասի, հենց նա բերանը բաց արեց, մյուսները սկսեցին բարձր ձենով հռհռալ, քրքրալ: Մեկ դրադում էլ Հովսեփի թահր՝ ձը-ձը-ձը էյին անում ու խրխնջում: Վահան ենպես չարացավ, ու մեկ տղի, վոր իրան ամենիցը չատ եր ծաղր անում, ենպես սաստիկ խփեց յերեսին, վոր արինը քթիցը շռռալով վեր թափեց: Նրա հանին եր: Բայց մյուս աշակերտքը վրա թափեցին, ծեծեցին նրան ու մազիցը բռնած դես ու դեն էյին քաշ տալիս: Նրա բախտիցը մեկ քաղաքացի եկավ, ու նրան նրանց ձեռիցն ազատեց: Քաղաքացին գնաց վարժապետին մեծին դանդատ արեց ու խնդրեց, վոր նրանց ես չարության համար պատժի:

Եսպես անջան մի անջան իրանց մուրազին հասան: Քանի մարդկերանց սիրտը տեղն ընկավ: Են գոված, զարմանալի Հնդստանը դտան: Բայց վորթուգալացիք չուռով տեսան, վոր եսպես յերկիր չեն կարող առնել: Հետևները վերցրած իրեք նավերի մեկը փշացել եր ու են տարած ուրունք մուրունքովը, բուժուժովը ու խուրմա մուրմա բանևրովը, վոր աչքի խատելու գաաեր էլին, վոչինչ առըտուր էլ չէլին կարող անել: Ջունքի հյնդստանցիք ենպես սպաս խալթ չէլին, ինչպես նեգերք, լավ ապրուստ, լավ նստել վեր կենալ ունեչին, քաղաքները չեն, պայծատ, ֆարբրիկա, առըտուր, յերկրագործություն առնեն տեղ ու նրանց թագավորը չատ հիանալի վաճքի մեջում: Ալժիրացի մեկ վաճառական դտան եասեղ, չատ ուրախացան, վոր յեվրոպացի տեսան, վոր առենեքին չէլին մոտենալ: Գամա ես վաճառականի ձեռովը կալկաթայի թագավորին, վոր Գամորին էլին կանչում, մոտ դնաց ու չատ հասուստ հույս ունեը, վոր սրանց ու վորթուգալացոց մեջը մեկ կապակցություն կըգցեն, վոր եսոսց դենը առըտուրը բացվի, բայց ենսեղի եղող մահմեդականքը, վոր վախեցան, թե ես իրանց առըտուրին վնաս կըբերի, նախանձու ես միաբանությունը քանդեցին ու թագավորի սիրտը ահ գցեցին, թե սրանք ևկել են, վոր իրանց յերկիրն առնեն, ենպես, վոր Գամա չատ ուրախ եր, վոր գլուխը պրծացրեց ու իր նավերովն ենսեղից փախավ: Շուռով եկավ Մելինդա, Աֆրիկու ծերովը ավեց ու եկավ էլ յեդ Յեվրոպա: Սեպտեմբերի 14-ին 1499-ին մոտավ Տայեո գետը, վոր Լիսաբոնի մոտովն է անց կենում: Սրանից առաջ, քանի նավը դոնվել ա, մեկն էլա եսպես ծանր, դժար ճամբա չի քաշել ծովով:

ԱՄԵՐԻԿՈՒ ԳՏՆՎԻԼԸ ԿՈԼՈՒՄԲՈՍԻ ՁԵՌՈՎԸ

Դեռ Հնդստանու ծովի ճամփեն վորթուգալացիք չէլին պտել, վոր յոթանասուն տարի քաշեց, վոր մեկ վորձված, սրտոտ մարդի սրտումը են միաքը ծագեցավ, վոր Հնդստան դնալու համար պետա կարճ, պետ ուղիղ ճամփա պետք է ըլի ծովով: Ասենք թե ես ճամբեն կարճ չեր, բայց սրա ոգուտն են էլավ, վոր նոր նոր աշխարներ լիա քցեցին:

Ես անվանի, ես անմահ մարդը՝ Խրիստոֆ Կոլումբոսն եր: Նա իր ծնունդը Գենվա քաղաքումն եր առել, վոր Իտալիա յե, բայց Փորթուգալ Պերեստրելո նավապետի աղջկա հետ պսակվել, վոր են Արևմտյան Աֆրիկու ղրաղին ծովով մոն գալիս, շատ եր դոնվել ու շատ բաներ լսած

յել: Կոլումբոս յերեխա ժամանակին սկսած նավավարության համար հոգին տալիս եր, բայց չեր ուզում, վոր հասարակ նավչի դառնա: Եզուբ համար շատ աշխատում եր, ամեն յերկրի անունը, վորպիսությունը սովորի ու շատ հավեսով ընկել եր աշխարհագրության ու աստղաբաշխության յուսկյը ու յերկրաչափության ու պատկերահանության եղ եր սովորում: Տասնըչորս տարեկան եր ինչ ծով, ինչ նավահանգիստ ասես, վոր Միջերկրական ծովի վրա կա, մտել դուս եր եկել ու ինդլիզների հետ մինչև Իսլանդ ասած կղզին էլ եր հասել, վոր ձուկը վորսան: Փորթուգալ՝ սկսեց իր անոր թղթերը լավ քննության կարդալ, միաք անել, ինչ վոր նա ես ծովերի վրա դրել եր: Հետո ինքն էլ դնաց Մադեյրա, Կանարիա և Ազորի կղզիքը՝ վոր նոր գտել էլին: Ենպես միաք անելով, մտն գալով, մտքումը ծագեցավ, թե վոր մարդ Յեվրոպիուցը հենց թուչ արևմտյան կողմի վրա ծովով դնա, պետք է վոր էլի Հնդստան դուս գա: Ջունքի, են ժամանակն էլ քիչ թե չատ՝ իմանում էլին, վոր մեր յերկիրը բոլորակ ձև ունի: Ես բոլորակ յերկրի վրա, ինչպես վոր առաջման ճանապարհորդքը գրել էլին, Հնդստան արևելյան կողմն եր ու չատ մեծ աշխարհ, բայց մեկ մարդ ելա դեռ չկր իմացել, թե նրա արևելյան կողմումն ինչ կա: Ո՞վ գիտի, ենպես եր միաք անում Կոլումբոս, բալքի թե Հնդստանի արևելյան կողմը Յեվրոպիո արևմտյան կողմիցը հեռու չի, բալքի թե հենց կպած էլ են իրար: Դիցուք թե կպած էլ չըլին, ասում եր, էլի վոր մարդ արևմտյան կողմի վրա դնա Յեվրոպիուցը, պետք է վոր Հնդստան հասնի ծովով: Ես միաքը դհա ավելի նրա մեջումը հաստատվեց, յերբ վոր խարալ բերին, թե վորթուգալցի նավչիքը ծովի յերեսին, Ազորի կղզու մոտ, ենպես վեհ են դտել, վոր տեսնված չի, չատ ճարտար չինած է, դամիչ էլին դտել: Մեկ անդամ էլ յերկու մեռելի լաչ էլին ջրից հանել, վոր ամենևին ուրիչ տեսակ պատկեր, մարմին ունեչին, ու արևմտյան կողմիցն էլին ջրի յերեսին գալիս: Կոլումբոս իր կարծիքը ուրիչ խելոք մարդկերանց էլ հայտնեց ու նրանք էլ հավանություն տվին:

Ես պատճառավ ավելի սիքիա իր քաղաքին իմաց արեց, վոր իրան մեկ քանի նավ տան, վոր դնա, ես նոր ճամբեն դտնի, բայց իր ազգն ու իր քաղաքացիքը վրեն ծիծաղեցին ու ասեցին, վոր խելքը տանիլ ա տվել: Մի՛չա եսպես ա աշխարքի բանը, մարդ իր յերկրի ու ազգի միջումը պատիվ չունի:

Ես վոր իմացավ, իր միաքը՝ Հովհան Բ. վորթուգալացոց թագավորին հայտնեց: Սրանք էլ խորհուրդ արին, ու խորամանկությունով հենց վոր նրա միաքն իմացան, իրանք սկսեցին թաքուն մարդ ուղարկիլ նավով, վոր դնա են ճամփեն դտնի: Սրանք էլ դնացին, մեն յեկան ու յեկ յեկան, ասեցին՝ թե ամենևին յերկրի նշան չկա: Կոլումբոս ես գալբությունը վոր իմացավ, չատ նեղացավ, ու ենպես վիրավոր սրտով դնաց Սպանիա 1484 թվին: Ես ժամանակին Սպանիա՝ մեկ թագավոր Արագոնիա ասած՝ նահանգումն եր նստած՝ անունը Ֆերդինանդ. մեկ թագուհի՝

Կաստիլիա՝ անունը Իզաբելլա: Կոլումբոսի ասածն վրա սկսեցին յերկար միաք անել: Բայց Սպանիա են ժամանակին վոչ նավեր ունեք, վոչ նավավարության եյին հասկանում, վոչ աշխարագրություն, ու արաբների հետ են քան կռիվ ունեյին, վոր իրանց եյ եր փող հարկավոր: Հինգ տարի վողորմելի Կոլումբոսը Սպանիա եսպես քաշ եկավ, տեսավ վոր ձևը վոչինչ չի ընկնում, միաք արեց, վոր դնա Անգլիա: Եսպես հուսահատած վոր չեկավ մեկ որ մեկ վանք, են վանքի վանահայրը, վոր Կոլումբոսի չատ բարեկամն եր ու Իզաբելլա թագուհու աչքին սիրելի, նրան սիրատվեց վոր մնա ու խոստացավ վոր նրա բանը չինի: Իրեք տարի եյ եռ

ցավ, Կոլումբոս սկսեց են կղզին Սպանիս թագավորի անունով վերցնել: Գոապաչանների չի սազ գալ, ասում էին, որ յերկիր ունենան իրանց ձեռին: Բրնատնայաք մեայն իրավունք ունին: Սրանք որ եկան, ենտեղի բնակիչն էլ ճղռալով, գոռալով, հավաքվեցին նրանց դիմին, ու ենպես բոի, ասում էին, որ հենց իմանում էին թե սպանիացիք մարդ չեն: Մոտանում, ձեռն էին տալիս ու էլ յեղ փախչում, հետու տեղ կանդնում մռիկ տալիս: Բոլորն էլ, մարդ, կնիկ, մեծ, պստիկ, չիսկ չիլաղ էին, լաչրնները կարմիր պղնձի գույն ուներ, ու խոտալիս էլ, ենպես կապ ու կոուր էին բառը բերնընիցը հանում, որ ամենևին խոսքի նման չեր: Հավեն ենպես լավ եր, դեսինն ենպես պաղարեր, որ ինչ ուզում էին, կար: Կերածնները բոլոր պտուղ եր. մեկ բանի եղա ձեռը չէին տալիս, չէին աշխատում, որ ու ցանք չէին դիտում, տավար պահիլ, ձուկը բռնիլ, գուշ, անասուն վորսալ բնավ ախթ չեր: Ենպես մեծ, գորեղ գազաններ էլ չիային ենտեղ, որ մարդ կարողանար վորսի համար բանացնել: Ես պատճառավ մեկին եղա իր աթիլ մեկ բան չուներ, ում ձեռն ինչ ընկնում եր, են եր ուտում, յերբ սովում եր, ինչտեղ հասնում եր, են տեղ եր քնում, ծառի տակին, Ջրի ղրաղին: Սիրաբները ուրախ, իրենք ժիր, գվրախ, Ջանրները սազ:

Կոլումբոս նրանց են կոչա լեզվի պյորա ես կղզու անունը Գվանահանի դրեց, ես որ էլ ես անունն ունի: Կոլումբոս տեսավ, որ նստեղ Հնդստանու ախն ու մարդարիտ, խաղինա չիար: Ես պատճառավ էլ յեղ ծավ մտավ ու հարավային կողմի վրա դնաց: Ջունքի որ ես կղզացիքը տեսան, որ սպանիացիք վոսկու յեն ման գալիս ու իրանց անկալի ու քթի վրա ինչ որ կար ուզում էին որ գոռով պոկեն, նրանց գույց տվին, որ ենտեղ դնան, ինչտեղ ես վոսկին կար: Սրանք էլ դնալով, դնալով Կուբա կղզին հասան, որ Կոլումբոս հենց լմացավ՝ թե են ա Հնդստանի աշխարհն է: Մեկ ղրաղից մյուս ղրաղն ընկավ, պտիտ եկավ ու ամեն տեղ տեսավ, որ չատ պտղալից հող ունի, ամա եկի վար ու յանքի նշան չիար: Վայրենի ազգերը նախքի պես Թուի էլած, ես կղզիից են կղզին էին վազում, խաղում, խնդում, ձեն տալիս, ծղատում, վաբշներիցը մինչև գլխընները չիսի չիսկա: Ինչ ժամանակ սրանց էլ վոսկի գեմ արին, ձեռով լմաց արին, որ արևելյան կողմը դնան: Բաղի տեղից էլ քարն ենպես էին քցում, ինչպես կարկուտ: Կոլումբոս սրանց էլ Թողեց ու են կողմի վրա դնաց: Հիսպանիոլա ասած կղզին էլ ես անդամ դտավ, որ հիմիկ անունը Սանկտ Դոմինգո յեն դրել: Ենտեղ էլ եկի ենպես՝ յերկիրը պաղատու, հողը, ջուրը լավ, բայց մարդիքը սկզոր ու վայրենի, անշոր, անբան: Բայց սրանք իրանց միջումը գեղ գեղ էին բաժանված, ամեն գեղն իր գլխավորն ուներ, որ քացիք էին կանչում: Ես գլխավորներն մեկը հրամայեց, որ իրան մեկ տախտակի վրա դրած՝ Կոլումբոսի մոտ տանին, եկի ենպես սկզոր, վոտ ու գլուխը բաց: Ջետով, քանով լմաց արեց, որ բաղի վախտ են մռիկ տեղերիցը թշնամի վար

բնիքը ծառի քոքում նստած՝ գալիս, իրանց վրա յեն տալիս ու իր մարդկերանցը տանում, որ ուտեն: Կոլումբոս էլ նշանով լմաց արեց, որ նա ուզում ա մեկ բերդ շինի ենտեղ, ու իրանցից մեկ մարդ Թողա, որ նրանց պահեն: Վայրենիքը ես որ լմացան, դոռացին ձեն տվին ու թախտիթյունից ու վեռա, քար, խկուն ամեն տեղից սկսեցին հավաքիլ: Ինչ որ վրընները վռսկի ունեցին, ուրախ, ուրախ յեղ էին անում, նրանց տալիս, տեղը ուրանք, բժժժ, ասեղ, տիկին ու ես տեսակ բաներ տանում: Յերբ հարցրին, թե վռսկին ի՞նչ տեղից են առանում, հարավային կողմը գույց տվին: Ես բանելու ժամանակին մեկ սպանիացի հանքրվեր մեկ թվանք քցեց: Մեկ րոպեի միջում բոլորն էլ դյում եյան: Նի էյան պախրի պես սարերի ղլուխն ու ենտեղից ծղրտրդ էյին անում: Վերջը եկի քիչ քիչ մոա եկան, տեսան որ են թվանքը մարդակեր չի:

Կոլումբոս տեսավ, որ էլ աստջ չի կարող դնալ, ջունքի մեկ նավը ջարդվել, մյուսն էլիր մարդկերանց մեկը՝ Պինցոն անուն, առել, Թաքուն վախել եր, որ դնա վռսկու աշխարը գտնի: Նրան մեկ նավ եր մնացել, են էլ ամենիցը վատքրը: Ես նավովը ուզեցավ, որ յեղ գառնա Սպանիա, որ խաբար տանի: Են նոր շինած բերդումը յեռետուն ութ մարդ Թողից, ինչպես որ կարդն եր, խրատ տվից նրանց, որ են վայրենի խալխի հետ լավ, սիրով կառավարվին ու հունվարի 4-ին 1493-ին ընկավ ճամփա, որ գա Յեվրոպա:

Վրա իրեք որը՝ ես տեղից որը դուս եկավ, են իր անհավատարիմ Պինցոն անուն մարդին ոտստ եկավ, վորը վոչինչ չեր գտել ու հիմիկ էլ ուզում եր, որ դնա Յեվրոպա ու ավելի սքիմա ինքը տանի նոր գտած աշխարների խաբարը: Կոլումբոսին, որ տեսավ, Թողություն խնդրեց ու սա էլ մեծահոգությամբ ներեց նրան: Հենց ես ահագին ովկիանոսի մեջ տեղը՝ ենպես մեկ քամի, ենպես մեկ Փրթինա վեր կացավ, են սլեկոծություն եր, որ ասաված վոչ նշանց տա: Մահը հազար անգամ եկավ աչքները առաջը, ու էլ յեղ հետացավ: Ամեն րոպեի սպասում էյին, թե վռսկու որ ա, իրանց մաշված նավերը խոր կերթան, տակով կըլին: Կոլումբոս, որ ես սարսափելի միջոցին էլ՝ իր միտքը չի կորցրեց, սկսեց իր գտած յերկրների պատմությունը մաղաղաթի վրա կարճ գրել, մեկ բնի մեջ դրեց, չորս կողմը գաչիմ գմռեց, չինեց, որ ջուր չմանի ու ծովը քցեց, որ թե ինքը խեղդվի էլ, բալքի թե ես Թուղթը ծովը տանի, ղրաղ քցի ու կարծիանան մարդիք լմանալ՝ թե ինչ աշխարներ կան: Բայց աստծո աչքը նրա վրա քաղցր եր, յերկինքը փիչ փիչ պարզեց ու հունվարի 15-ին հասան Սյոր ասած կղզյաց մոտը: Վեց չաբաթ ենտեղ կացան, որ իրանց խարաբ եղած նավերը չինիլ տան: Ես տեղից էլ վոր գուս եկավ, էլի մեկ Փրթինա վեր կացավ ու նրան տարավ Տալո ասած գետի բերանը քցեց: 14-ին մարտի հասան Լիսաբոն քաղաքը, որ իրանք ամենևին չէյին ուզում: Հովհաննես Բ. Թագավորն փորթուգալացոց հրամայեց, որ Կոլումբոսին իր մոտ կանչեն, հետը խոսաց ու չատ յավեցավ,

վոր ենպես սրտապնդ նավապետի խոսքին տասը տարուց առաջ անկաջ չարեց:

Հանդես են որն եր, վոր Կոլումբոս Սպանիո Պալոս ասած ամին եկավ, վոր մարտի 15–ին եր: Աչխարհ ամենայն դուս թափեց ծովի ափը: Հազաջ հազար բերան նրա անունը տալիս, գոլում, յերդում, ցնծում էյին: Ջանգահները սկսեցին քաչել, Թոփ թվանք քցել, ու հենց բանիր՝ քիչ եր մնացել նրան վոտի տակ տային, յերբ նավիցը դուս եկավ ու մեկ մոտիկ վանք կար հնտեղ մոտավ, վոր աստրծուն փառաբանություն անի: Թագավորը վոր են ժամանակը Բարցելոնա գավառումն եր, վոր Սպանիո արևելյան կողմն ա: Ես պատճառավ Կոլումբոս Սպանիո միջովը պետք է անց կենար, վորտեղ ասես՝ կամար էյին չինել, գավիթ կանգնացրել, զորք, մեծ, փոքր, ամեն քաղաքից եկ առաջն էյին դուս գալիս, ու յերդելով, հանիսավ, զանգակ ածելով էյին ներս տանում: Թագավորն ու թագուհին հո եկ չէյին իմանում, թե ի՞նչ պատիվ, ինչ պատկ, ինչ մեծություն տան նրան: Սաղ Սպանիա իրարոցով դիպավ, վոր նոր գտած աչխարհների խաբարն իմացան: Թագուհին, վոր նրան ներս բերին, իր բոլոր թագավորական զարդը հագին, թախտ վրա նստած ենպես նրան ընդունավ: Մոտիկ մեկ աթոռ կար դրած, վոր նրան նստացրին ու քանի նա իր պատմությունն անում եր, ենքան թագուհու ու իր մեծամեծաց խելքը հետը գնում եր: Սրանից դենը Կոլումբոս եկ թագուհուցը չհեռացավ, միշտ հետն եր ման գալիս:

Փոքր միջոցում հազար հինգ հարյուր մարդ հավաքվեցան, վոր Կոլումբոսի հետ գնան նոր աչխարհները: Կարծում էյին, թե ես անգամ վոտկու աչխարը պետք է գնան: Ախ, վոսկին ո՞ւմ գլուխը չի ծռել: Թագավորը տասնյոթը նավ պատրաստել տվեց, փեչաքարներ, մազանչիք հագիր արեց, Կոլումբոս եկ սերմօրենք, բուլյոք, անասունք ժողովեց, վոր հետը տանի, ու հույս ուներ, վոր են պտղատու յերկրներումը չատ լավ բհամ կդան: Ես միջոցումը փափին եկ չմոռացան...ենպես քոռը քոռ հավատում էյին են ժամանակը, թե աչխարքիս յերեսին ասուծո տեղապահը նա յե... խնդրեցին նրանից, վոր ինչ յերկիր, վոր գտել են ու պետք է նոր եկ դըրնին, իրանց բաչխի, ինչպես ասուծո փոխանորդ: Փորթուգալացիք եկ էյին եսպես արել, յերբ սկսեցին յերկրներ լիս քցել: Փորթուգալացիք վոր իմացան ես բանը, սկսեցին փափի մոտ Սպանիո հակառակը խոսիլ, ու փափը եկ բանն եսպես վճռեց, վոր ինչ վոր Ացորի կղզյացը դենը Արևմտյան կողմը՝ հազար ութ հարյուր քառասուն վերստ հետու՝ յերկիր գտնեն, փորթուգալացոցն ըլի, նրանից դենը՝ սպանիացոց: Ես պատճառավ մնաց Բրազիլիա ասած ահագին տերությունը, վոր Հարավային Ամերիկա յե, փորթուգալացոց ձեռին:

Սեպտեմբերի 23–ին 1493–ին Կոլումբոս եկ յեդ ճամփա ընկավ ու ես անգամ մի քիչ հարավային կողմի վրա դնաց: Նոյեմբերի 2–ին մեկ քանի նոր կղզի եկ հիմիկ գտավ, ինչպես Քարայբա կղզիը, Դոմինիգ, Գվադալուպ, Փորտորիկո ու եկ ուրիշները: Բոլորի բնակիչքն եկ չատ գաղանարար ազգեր էյին, իրանց թշնամուն սպանում, միսն ուտում էյին: Շատ անգամ ուզեցան, վոր քարով, փետով նրանց նավը ջարդեն, իրանց բռնեն, մխրձներն ուտեն, բայց Թոփի ու թվանքի դյուլլեն չքնաղաց: Կոլումբոսի մարքիզը են իր Հիսպանիոլա Թողած մարդիքը չէյին գնացել, չուտով նավը քշեց ենտեղ, վոր մեկ խարաբ խմանա: Նոյեմբերի 22–ին եկավ, տեղ հասավ: Բայց խելքը գլխիցը Թռավ, ինչ ժամանակ տեսավ, վոր վոչ մարդ կա, վոչ բերդ: Սպանիացիք ուղեցել էյին, վոր գուռով նրանցից վոսկի առանան, սրանք եկ, ճարքները կտրվել եր, վրա էյին Թափել, նրանց սպանել, բերդը քանդել, իրանք եկ կղզու մեջի կողմը փախել: Կոլումբոս եկի նորեն մեկ հարմար տեղ չկտեց, բերդ չինիլ սկսեց, մարդ դրեց մեջը, ու ես տեղի անունը Իզաբելլա դրեց իր Թագուհու պատվի խաթեր: Ես վոր տեսան հետի եկած սպանիացիքը, խիստ չատ նեղացան: Նրանք ենպես էյին կարծել, թե վոսկին հողի պես ցրված ա եստեղ, ի՞նչ մխրք կանչին, թե պետք է տուն չինեն, վար ու ցանք անեն, ու չանքներին չափ տան: Մեկ վոքր վոսկու Թող Սպանիոլա գտան, ամա ի՞նչ պետք է ըլը: Ֆերդինանդ Թագավորի աչքն եկ ճամփին եր, վոր ես անգամ վոսկին նավերով պետք է գար... բայց դու վոչ մեռնիս... Ես պատճառավ վողորմելի Կոլումբոս եկ ճարը կտրվեց, սկսեց են վայրենի ազգերին գոռ ածել, վոր վոսկի հավաքեն իրանց միջումն ու խարջ տան: Նրանք չէյին ուզում տալ, բայց մեկ քանի Թոփի դյուլլի ձեն վոր չիմացան, լեղիքը պատռեց: Ես հերիք չեր, կատաղած մեծ մեծ չները վոր բաց չքողին ու նրանց վրա քիս տվին, իրանք տկլոր, ձեռներին վոչինչ չունեյին, ենպես էյին կարատում, ինչպես գելը գառին: Եսպով վախեցան ու սկսեցին դլխըներքը քարեքար տալ, վոր ուզածները ձեռք բերեն: Ախ, ո՞վ եսպես բանխմանա ու ենպես անողորմ, ազահ մարդքերանց դլխին նզովք չկարդա: Բայց նրանց ի՞նչ: Վոչ մեն եր իրանցը, վոչ արինը, ու են խեղճ, դինի խալխը, վոր մինչև եսոր Թագավորի պես էյին ապրել, սկսեցին արին Թափել ու իրանց սև որը լալ:

Կոլումբոս սրանց Թողնց ու են կողմը գնաց, վոր ցույց էյին տալիս, թե վոսկի կա, ամպնքն հարավ, ու Յամայկա կղզին գտավ: Ես ճանապարհին հիվանդացավ, վրի մարդիքը ուտելիք չունեյին. ես պատճառավ վոր ելի Հիսպանիոլա յեդ եկավ, տեսավ, վոր աչխարքն իրարոցով ապրել: Նրա մարդիքն սկսել էյին առաջվան պես խեղճ խալխին չարչարիլ, սրանք եկ նրանց էյին միս ու արին արել, ու չատն եկ խռոված, նեղացած, եկ յեդ Սպանիա յեր գնացել: Շատ վախտ չքաչեց, Սպանիացը մեկ մեծավոր եկավ ու ինչ գանգատ վոր Կոլումբոսի վրա արին, գրեց ու Թագավորի գուռը ուղարկեց: Կոլումբոս անմեղ եր, կարող եր մեծավորին սպանիլ եկ տալ, բայց ելի նրա մեծահոգությունը չքողաց, են հոսավը, վոր ճշմարտությունը չի կորչիլ: Կոլումբոս ես բանիս վրա, իչխա-

նուիրյունը ավեց իր Բարդուղիմեոս ախպորը ու ինքը Թայթի գնաց եվ յեղ Սպանիա:

Սպանիա վոր իմացան նրա գալու պատճառը, շատ նեղացան: Թագավորն ու Թագուհին եվ շատ ամաչեցին, վոր նրա սրած լավութիյունը եսպես վոսկ սակ էլին ավել, բայց ինքն եվ տեսավ, վոր չար լեզուն իր յաղուն ենպես եր Թափել, վոր չուտով չեր կարելի նրանց սիրտը սադացնել: Յերկու տարի եսպես նրան էստեղ քաշ ավին, բանն էսոր, եքուց քցելով, ու վերջ ամենայնի յերկու անպիտան նավ ու մեկ քանի չար ավազակ, Թողից վախած մարդիկ եվ հետը դրին, վոր գնա, ելի նոր աշխար գտնի:

Ես անգամ 1496-ին սկսեց ելի ավելի հարավ կողմի վրա գնալ: Շատ կարելի յեր, վոր Բրազիլիա գտներ, բայց քամին ենպես հանդարտ եր, ու չոքը ենպես աստիկ, վոր բոլոր դինու, ջրի բոչկերը արագեցին, ուտելիքները վոչնչացավ ու նա եվ ճարը կտրվեց, Արևմտքի վրա գնաց, ու եկավ Տրինիդադ ասած կղզին հասավ, ուր վոր Որինոքո ասած գետը Ծովն ա մտնում: Նավը, վոր ես դեսի ջրի չատությունը վոր տեսավ կոլումբոս, ասեց, վոր ենպես մեծ գետ փոքրը կղզում չի ըլիլ ու սկսեց ծովի ղրադովը պատիլ: Եոտավ իմացավ, վոր ցամաք յերկիրը գտել ա: Բայց չունքի, կարծեց, վոր ես իր ուզած Հնդստանը չի ըլիլ, հենց իմացավ, Թե ջուրքի մեկանց կենալու տեղ գտնի: Ելի հիվանդությունը չանն առավ, մարդիքն սկսեցին տրանջալ, նա եվ վոր չարեն կարվեց, եվ յեղ Հիսպանիոլա գնաց: Հենց վոր հասավ, եվ ուրախության պատճառ չեր մնացել ենտեղ: Ախպերը քաշվել եր Ս. Դոմինիգո, վոր մեկ նոր քաղաք շինի: Մեկ սպանիացի եվ մյուսների սերտը խոռվություն եր քցել, վոր յերկու կոլումբոսիցն եվ ձեռ վերցնեն: «Ես գենովացիքը (այսինքն Կոլումբոսք) են են ուզում, ասում էլին, վոր վայրենի ազգին խնայեն, մեզ սպանիացոցս յեսիր չինեն, եոտուր համար չեն Թողում, վոր սրանց ձեռ տանք»: Իրեք նավ, պաչարով լիքը՝ պահեցին իրանց մոտ և Կոլումբոսի ախպերը՝ կղզու մյուս կողմումը՝ սովու մեռնում եր:

Եսպես դառավ Կոլումբոս բանի դորությունը: Շատ նեղություն քաշեց, մինչև նրանց դինջացրեց: Իրան եվ էլին ուզում դավաճանությունով սպանեն: Ինչ վոր անց եր կացել, մի առ մի Թագավորին գրեց: Թշնամիքըն եվ գրեցին: Աշխարքի բանն եսպես ա, վոր լավ մարդին քիչ լավ ուզող կըլի: Թագավորի սիրտը մեկ անգամ ծռվել եր: Կոլումբոսին եվ չեր հավատում: Ինչ վոր ասացին լսեց: Մեկ սպանիացի պղծվական՝ անունը Ֆրանց դե Բովադիլլա ուղարկեցին, վոր քննություն անի: Թե վոր տեսնի, Թե Կոլումբոսը հանցավոր ե, իշխանությունից հանի, ինքը տեղը նստի:

Հենց Բովադիլլա Հիսպանիոլա հասավ Թե չե, առանց քննության կո-

լումբոսի տունն ու մուլքը խլեց, հրամայեց ամեն մարդի, վոր իրան կուռակալ ճանաչեն, Կոլումբոսին մեկ Թուղթ ուղարկեց, վոր իշխանությունից ընկած ե: Ես Թուղթը ինքն եր առաջուց չինել: Ես վոր պրծավ, հետո դառաստան նստեց, ուր ասես մոտը բերիլ տվեց, վոր նրա վրա դանգատ անեն, բայց Կոլումբոս ինչպես ամեն ժամանակ, են դժար վորձանքների մեջին եվ, իր հանգարտությունը չեր կորցնում ու իր մարդքերանցը եստավ եր ապատում մահի ձեռիցը, եսպես եվ հիմիկ մեկ խոսք, մեկ ծանր չուղաբ ելա նրա բերնիցը դուս չեկավ ու ինդրեց հանգստությամբ, վոր իրան եվ խոսացնեն: Բայց Բովադիլլա առանց մեկ խոսք հարցնելու, առանց նրա յերեսը տեսնելու, հրամայեց, վոր նրան եվ, նրա յերկու ախպորն եվ բռնով դնեն ու ամեն մեկը ջոկ ջոկ նավերով Յեվրոպա տանին: Ես եր նրա վերջի պարգևը, ես եր են յերեւելի մարդի ապրած գործքի վարձը: Աշխարն եսպես ա լավություն իմանում: Իմացողն եվ, ի՞նչ սրտով լավություն անի ես յերկրի յերեսին: Բայց չե, լավությունը մարդին, աշխարին չենք անում: Մեղ ենք անում, մեր սիրտը պետք ե ուրախանա, աշխարն իմանա չիմանա, մեծահոդի անձը եդ չի պետք ե հարցնի:

Ով վոր արդար սպանիացին եր, սիրտը չեր տանում, վոր նրան ես հալին տեսնի ու իր մեջումը շատ նեղանում եր: Հենց նավերը մի քիչ յերկրիցը հեռացան, սկսեց նավապետը Կոլումբոսին շատ խոնարհություն մոտանալ, ու ուզում եր, վոր բոլով վոռներիցը վերցնի: Կոլումբոս չհոգաց ու ասեց, Թող մնա, վոր բոլոր Սպանիա տեսնի, Թե իրանց Թագավորը նոր աշխարհ գտնողին ինչ վարձ ա տվել: Եսպես եվ ելավ: Յաղ Սպանիա իրարոցով դիպավ, վոր լսեց նրա եսպես գալը: Թագավորն ու Թագուհին ամոթու խոսքը հանել տվին, վող ուղարկեցին, վոր ելի իր պատվովը գարգարվի, ու իրանց մոտ գնա: Կոլումբոսը, վոր եկավ, ամենի աչքի լուսն ցավ եր տալիս նրան տեսնելիս: Լուռ, տամ սիրտը արինը կոխած, ենպես մոտացավ, ու ընկավ Թագավորի Թախտի առաջը: Յերկար ժամանակ վոչ գլուխն եր բարձրացնում, վոչ ձենը հանում: Թագուհին եվ, մինչև՝ չկարաց արտասուքը բռնի: Գեղդանդեկ Թագուհին վոր գլուխը վեր քաշեց, Կոլումբոս իր են բնական հանդարտ սրտով ըսկսեց ենպես խոսքեր տալ, ենպես իր անմեղությունը ցույց տալ, վոր լսողի գլխին կրակ եր վառում: Թագավորն եվ, Թագուհին եվ իմացան, վոր խաբվել են, Թողություն խնդրեցին, են անիրավ Բովադիլլին իշխանությունից քցեցին, նորեն եվ պատիվ տվին Կոլումբոսին, բայց են առաջվան կապակցությունը, վոր նրա հետ արել էլին, մեկին ելա միտքը չեր բերում ու նրան Սպանիա Թողին ու 1500 Թվին մեկ ուրիշ կուսակալ ուղարկեցին նոր գտած աշխարհը, անունը Ովանդոն: Սիրտը նեղացած Կոլումբոս Թագավորի գանիցը հեռացավ ու իր բոլովը, ուր վոր գնում եր, հետն եր տանում ու ենպես կարզադրեց, վոր մեռնելիս՝ հետո դերեզմանը գնեն:

Երկու տարի քիմի եպես պարապ ման եկավ: Սրանից հետո էլի են հին հավեսը Կոլումբոսի սրտումը պարթեցավ, վոր են նոր դատած աշխարհին ծովի ճամբա գտնի Հնդստան գնալու համար: Կրկին եկավ Թագվորի մոտը: Ֆերդինանդի աչքը չեր վերցնում, վոր վորթուգալացիք են ժամանակին Հնդստան ենքան նոր նոր աշխարհներ էլին գտնում, ամուն ճարում, չորս մլջակ նավ ավեց նրան, ու մայիսի 9-ին 1502-ին Կոլումբոս էլ յեդ ծովը մտավ: Նավերի մեկը հենց առաջի չարթին խախտվեցավ, ես պատճառավ էլի Հիսպանիոլա դնաց, վոր ամենեքին չեր ուզում: Բայց չկամ կուպակալն Ովանդո չթողեց, վոր ցամաքը դուս գա: Կոլումբոսի ճարը վոր կտրվեց, ընկավ ծովի յերեսը, վոր են առաջին տեսած ցամաք աշխարհը գտնի: Դրացիաս ո Դիոս ասած սարաքթի կողմը ավեց ու արևմտյան կողմի վրա ճամփեն բռնեց, բայց վոչինչ չգտավ: Մթաքն են եր, վոր ես սիրուն յերկրումը չենուքթյուն քցի, բայց նրա աչքամակ սպանիացիքը, վոր հենց վողի, վոսկու էլին ման գալիս, անկաջ չարին: Ճարակատար ես կողմն էլ շուռով թողեց, ու հազար վորճանչարին: Ճարակատար ես կողմն էլ շուռով թողեց, ու հազար վորճանքով եկավ հունիսի 14-ին 1503-ին Ցամայկա կղզին հասավ: Նավերի մեկը խոպան վոչնչացել եր, մյուսներն էլ ենպես էլին ձեռից ընկել, վոր էլ չենելու հույս չկար: Յեթե ասաված մեկ ոսար նավ չեր ուղարկել ես կոդ-ները, պետք է վոր են անվանի, են բազմերախտ աշխարի գտնողը ես տեղ, ենպես գաղան ազգերի մլջումը իր մահը գտներ:

Եսատր մեկ ճարը անելու խաթեր, նրա մարդկերանցից յերկուսը, մեկն սպանիացի, անունը Մենդեց, մյուսն իտալացի՝ անունը Ֆրիեսխի, յերկուսն քաջ, պատվական մարդիք, մաքըներումը դրին, վոր իրանց պըտրաստեն փոք

հոր դերեզմանի ու աշխատութեան խաթեր. քավ լեցի. ենդուր համար, վոր մեկ մեծ տեղից աղջիկ եր առել:

Ես նոր գտած աշխարհների լիակատար պատմութիւնը վերջը մեկ փըլորենցացի (իտալացի) ազնվական գրեց, Յեվրոպա բերեց, անունը վեսպուչիոս Ամերիկուս, վոր 1497 թվին չատ անգամ դնաց ենտեղ ու եկավ: Ջունքի յեվրոպացիք նրա գրածների իմացան ես աշխարհների վորոշութիւնը, ես պատճառավ քիչ քիչ սովորութիւն ընկավ նրանց մեջը, վոր նրանց անունը Ամերիկու աշխար էլին կանչում կամ Ամերիկա, ես եր, վոր մնաց ու մնաց: Բայց թե իրավունքով խոսինք, պետք եր Կոլումբիա կանչել: Բայց առաջ չէլին մտածում, վոր մեկ ջոկ անուն տան, չունքի ենպես կարծում էլին, ինչպես Կոլումբոս, թե ես աշխարները Հընդըստանի մասն են, ես պատճառով են ես որ ել՝ են Հարավային ու Հյուսիսային Ամերիկու մէջի ելած կղզիներին Արևմտյան Հընդստան ասում, չունքի Հնդստան ման գալովը գտան: Բայց իսկ Հնդստանը՝ վոր Ասիա մէջումն ա ու հարավային կողմն, անունները էհասնելու խաթեր, Արևվելյան Հնդստան կամ Ոստինդիա յեն կանչում:

ԱՄԵՐԻԿԱ ԵԼԻ ՆՈՐ ՆՈՐ ԱՇԽԱՐՇՆԵՐ ԵՆ ԼԻՍ ՔՑՈՒՄ

Առաջին ճանապարհը աշխարհի չորս կողմովը

Եստուց դենը՝ հենց բոնիր, թե ամեն տարի Ամերիկա՝ նոր նոր աշխարներ էլին լիս քցում: Դեռ Կոլումբոս կենդանի յեր, վոր 1500 թվին՝ եմանվել Թագավորն Փորթուգալի նավեր պատրաստիլ ավեց, վոր ես նոր գտած ճամփովը գնան Հնդստան ու իր նավապետ Պեդրո Ալվարեց Քաբրալին հրաման արեց, վոր վորքան կարելի յե Բարիհուսա ասրաքիթը, վոր անց կենա, ջանք անի, արևմտյան կողմի վրա գնա: Նա ել եսպես արեց ու Բրազիլիա գտավ, վոր Հարավային Ամերիկու մեծ Թագավորութեան մեկն ա: Փորթուգալցիք ես ահագին ազդութիւնը բանի տեղ չըքցեցին սկիզբը: Գնացինը՝ դորդ ա, պղպաոու յեր չատ, բայց վոսկի, արծաթ ու ուրիշ թանկագին բաներ չէկային. ես պատճառավ սկիզբը ենպես դող, ավազակ մարդիք ուղարկեցին ենտեղ, վոր չենութիւն պղեն: Բայց յերբ վոր քչած ջհուդները չաքարի գործ անկեցին ու ենպես լավ գոյացավ, հետո ազդութեան աչքը բաց ելավ, ու սկսեցին բանագետ մարդիկ ուղարկիլ, վոր քննեն: Սրանից ել հետո նոր քաղաքներ չինեցին ու յերկրի բարեկիրթ ազգի սիրտը վերջապես, բանով գրավեցին, վոր մշակութիւն անեն, ու եսպեսութիւնով՝ ինչ վոր եստեղ գտնում, կամ տրնկում էլին, մեկին տասը, քսան ոգուտ էլին տենում: Դեռ ավելի բարձրացավ ես յերկրի անունը, յերբ վոր 1695 թվին վոսկի ու 1730 թվին ալմաղ ել գտան եստեղ, են ալմաղը, վոր աշխարքի յերեսին մեկ տեղ ելա

չկա: Բացի սրանից Բրազիլիա, ենպես Թանկագին նկրկի վրա, խոտ ե տալիս, վոր տարինը քսան, յերեսուն միլիոնի հենց սրանցից ե ծախվում: Ենպես, վոր վորթուգալցիք եսպես ճոխ աշխարհ չունին ու 1808-ին ակսած, նրանց Թագավորներն եստեղ էլին կենում, բայց հիմիկ իրան համար ջոկ տերութիւն ա դարձել:

Բայց սպանիացիք, վորովհետև իրանց ուզած վոսկու աշխարը դեռ չէլին գտել, անդադրմատրար չարչարում տանջում էլին են վորդրմեղի անմեղ ազգերին, վոր իրանց համար մշակութիւն անեն, վարեն, ցանեն, վոր սրանից ելա ոգուտ ստանան: Ամենից ավելի չաքարի գործին էլին եստեղ տարածել, վոր ես որ ել ենտեղանց հարստութեան աղբյուրը ես յե: Բայց խեղճ ամերիկացիքը են զորութիւնը ու սովորութիւնը չունեյին, վոր ես ջաֆին գործան ու սաղ սաղ մաչվում, մեռնում էլին չարչարանքի ձեռիցը: Ենպես վոր Հիսպանիոլա միայն, վոր մեկ միլիոն բընակիչ ուներ, մեկ քանի տարուցը յերեք կես չմնաց, բոլորը չարդվեցին: Ով վոր ել սպանիացոցը չեր ուզում հնազանդի, ստուպած հետու տանի, լինչ նրա գլխին էլին բերում: Շները կատաղացնում, նրանց տկլոր ջանքի վրա էլին անում, վորին թրով էլին սպցան անում, վորին թվանքով ու նրանց անճար Թագավորներին հո կենդանի կրակն էլին գործում, կամաց կամաց երում, խորովում, վոր մյուսներին խրատ լիլ: Ու եսպես անորեն գործքերը վարվի հոգևորականքն էլին անում, վոր նրանց հավատ բերեն, են քրիստոսի սուրբ հավատի վարդապետք ու քահանեքը, վոր մեզ խրատում ե մարդասիրութիւն, թշնամասիրութիւն: Ո՛, ի՞նչ չեն արել սրբանք Յեվրոպա, թե Ասիա, թե Ամերիկա, վոր ինչ ա, իրանց իշխանութիւնը գործանա, մեծանա:

Բայց ամենն եսպես չէլին: Շատը իր գեղեցիկ պաչատնի, իր սուրբ հարդի գործութիւնը եսպես վոտի տակ չեր գցում: Մանավանդ սրանցից մեկը, անունը Լաս Քազաս, ել չկարաց ես անորենութիւնը համբերիլ, սկսեց ընդդիմանալ: Ինչքան գերի ուներ ինքը, բոլորին ել ազատեց, բայց չունքի Ամերիկա նրա խոսքին անկաչ չարին, չատ անգամ եկավ Սպանիա, ու ջանք արեց, վոր Թագավորի ու իր մեծամեծաց սիրտը չարժի: Թե վոր ժամանակ նրա խոսքին լսում էլին, ել յեզ սկսում էլին են չահասեր, վոսկու գերի սպանիացիքը, Թագավորի դռան մարդկանցը կաշառք տալ ու իրանց ուզածն անիլ: Նրանց դաղանութիւնը չեր թողնում, վոր սրա ես աղնիվ խորհուրդը առաջ գնա: Ես վախտերն եր, վոր սովորութիւն ընկավ Աֆրիկուցը են սև նեգերներին յեսիր անիլ բերիլ Ամերիկա, վոր նրանց համար բանին: Ջունքի սրանք ավելի ջանով էլին: Ես առտուրը, վոր յեվրոպացոց համար հավիտյանս հավիտենից ամոթ կմնա, ենպես չահավետ ելավ, վոր տարինը ութսուն հազար հոգի եսպես վոչխարի պես Աֆրիկուցը բռնում, բերում եստեղ, ծախում էլին: Ասում են՝ թե ես խորհուրդը Լաս Քազաս տվեց, բայց սուտ ե: Նրանից առաջ ել ես բանը կար, ու են աղնիվ մարդը ես անորեն գործքումը ամենևին անմեղ ե:

Բալբոա անուն մեկ կարիչ, խելոք, բայց պազանարարս մարդ սկսեց ավելի սիքիա հասկ մեկ քաղաք գնել, անուն դրեց Ս· Մարիա: Հասկ-ղից սկսեց են վսկու աչխարը գնալ, վոր վայրենիքը ցույց էլին տալիս: Հաջյուը իննսուն գլխներից ձեռ վեր առած մարդիկ էլ ընկան սրա յեռևից: Լեզու չի կարող պատմել սրանց ճանապարհի դժվարությունն ու չարչարանքը: Վորտեղ գնում էլին, շատ տեղ ջմջմեն ծովի պես եր կանգնած, մեչիքը հնգես էլին Թանձր, վոր անցկենալ չեր լսում, բարձր սարեր, անհուն ձորեր, անթիվ ոձ ու թունավոր ջանավար մկնքնեքը լիքը, ինչ պատմ ասես, վոր հասկ չկար: Ոձի չատը սասը քսան գալ յերկենության ուներ: Ես սարսափելի ճամփեն անցկացան ու վերջ ամենայնի հնգես մեկ բարձր սարի գլուխ հասան ու վոր մտիկ չարին, սաասկներին տեսան, վոր մեկ անհուն ծով բաց էլավ, Ամերիկացը արևմտի կողմը: Ես էլ մեկ նոր գյուտ եր: Կոլումբոս էլ եր կարծում, վոր ես Հնդստան չի ու մեկ ճամփա պետք է ըլի, վոր նրանից Հնդստան մտիկ պետք է ըլեր: Բալբոա սարիցը վեր եկավ, Թուրն ու գալհանը ձեռին մըտավ ծովը ու ենքան գնաց, վոր ջուրը գոչին հասավ, հետո ես ծովին էլ Սպանիո Թագավորի անունովը վեր առավ 1513 թվին: Նմանապես չատ վսկի ու մարգարիտ գտավ հասկ ու հասով քիչ քիչ հաստատվում եր, վոր հարավի վրա վսկու աչխար պետք է ըլի: Ես քաչ մարդին էլ ենգես չըվարճատրեցին ինչպես հարկն եր: Մեկ վախտուկ մարդ կուսակալ ուղարկեցին ու Բալբոա գործ ա, խոնարհեց էլ նրան, բայց էլի գլուխը կորիլ ավեց անօրենը, ու են քաչությամբ բաց արած ճամփեն էլ գնացող չելավ:

Եղ միջոցումը մեկ քանի նավ էլ հյուսիսի կողմը գնացին Կուբա ասած կղզուցը, 1519 թվին: Սրանց գլխավորն եր անվանին, Հսկայասիրտըն՝ Ֆերդինանդ Կորտես: Նա գնաց հասավ Մեխսիկո ասած տերությունը, տեսավ վոր շատ բնակիչք կային ու մեծ լուսավորություն էլ ունեին: Նա հետը վեց հարյուր մարդ ուներ, սասնիրեք թվանք, սասնըվեց ձի ու սասնըչորս մանր թուխեր, տեսած յերկրումը՝ իրեք միլիոնից ավելի խալխ կային, են էլ կարիչ, կրթած, լուսավորված: Մեկ տեղից էլա նրան գնություն չեր հասնելու, չունքի կուբի կուսակալը, վոր անունը վելասկես եր, ուզում եր, վոր են աված իշխանությունն էլ ձեռիցն առնի, չունքի տեսավ, վոր շատ խելք ունի, ինքը չեր կարծում ես, ու նախանձոտ մարդի աչքին խելոքը միշտ կասկածավոր կըլի: Կորտեսը բանը մնաց իր վրա, ինքը պետք է իր չարեն տեսներ: Առաջ հլա գնացին ասաց, վոր իրան զորապետ Ջոկեն: Սրանից յեղը հրամայեց գնացին, վոր բոլոր նավերը Ջախջխուրթ անեն, վոր էլ յեդ դառնալու ճար չունենան, յա մեռնին, յա են յերկիրն առնին: Ես վոր պրծավ, սկսեց մտնել են աչխարհը ու քաղաքի վրա գնալ: Քանի աչխարհն ստեղծվել ա, կարելի յե թե եսպես բան տեսնըված, լսված չի: Մրջմե պես, չանավարի պես ամեն տեղից սկսեցին վայրենիքը կատաղած վրա թափիլ, բայց անհաղթելին, հանճարեղն Կորտես ենգես բան աբեց, ենգես ահ քցեց նըրանց սիրտը, են հնարքները բանացրեց, վոր մեքսիկացիք չեյին պիդում, մա՞րդ են տեսնում, թե ատաված: Հենց լմանում էլին, յերկինքից են վեր եկել: Երանց թագավորը վոր առաջը չի դուս եկավ, ձիանը զաթաթով կանգնացրեց, մուղիկեն փչիլ ավեց, մեկ քանի էլ Թոփ քցիլ ավեց ու սկսեց առաջ խաղալ: Մեքսիկացոց լեզին չուր կտրեց: Ձիանը վոր չեյին փռնչացնում, խրխնջում, վոռնելը պետնին տալիս, հենց լմացան, թե սրանք էլ մեկ ուրիչ գոյացություն են: Ահ ու զորը չանըներն ընկած՝ ազաչեցին, թե ընչի՞ համար են ենգես բարկացել ես նոր ատավածքը (այսինքն ձիանքը), անիրավ սպանիացիք պատասխանեցին, թե բավական ակն ու մարգարիտ, վոսկի, արծաթ չեն բերել, ենդուր համար: Ես վոր լսեցին, չվաներքը լիքը վոսկի, չավահրեղեն բերին, աաաչներքը ածեցին:

Եսպեսությունով են ահը քցեց նրանց սիրտը, վոր էլ չեյին կարում ձեն հանել: Թագավորը շատ կամեցավ Կորտեցի սիրտը մեծամեծ փեչքաչներով առնի, բայց չելավ: Ջորքը քաչեց Կորտես ու քաղաքի վրա գնաց: Թագավորը դեռ չեր լմանում, թշնամու պես ընդունի նրան, թե բարեկամի: Թագավորին լրան էլ յեսիր արեց, էլի ձեն տվող չելավ: Են ա բոլոր աերությունը պետք է զավթեր, վոր բերդի խաբար եկավ, թե վելասքես կուսակալը զոնդան ա ուղարկել, վոր Կորտեցին բռնեն, տանեին իր մոտ: Էլ ի՞նչ սրտի կըլեր վողջմտելին: Շատ էլ մարդ ուղարկեց, ասպարեց, վոր չանեն, սպանիացին սպանիացու արին չթափի, են վայրենի ազգերը վոր լմանան, մեծ վնաս դուս կգա, էլ նրանց չեյին հավատալ, բայց խոսքին անկաչ չարին: Են զոնչունի մեծավորը ուզում եր, վոր ինքը փառքի ու իշխանության տիրանա: Բայց Կորտես ճարահատուն, հենց դուս չեկավ զորաց առաջը, մյուս զոնչունի չատն էլ փախան եկան նրա ձեռի տակը: Սրանց էլ վեր առավ ու էլի քաղաքի վրա գնաց, բայց ի՞նչ: Սաղ քաղաքը ծովի պես ծփում եր, ենգես դառնացել, չարացել են մեքսիկացիք, չունքի մեկ սպանիացի աֆիցեր հետները լավ չեր յա գնացել, նեղացրել եր խալխին: Ինչ հնարք էլ, վոր բանացրեց Կորտես, նրանց թագավորին, վոր զերի յեր արել, հրամայեց, վոր խնդրի, խալխը դինջանա, չելավ, իրանց թագավորն էլ հենց մի քանները մատավ, թե չե քարն ու նետը կարկտի պես էլին գլխին ածում, չունքի իրանց թողել, ենգես անիրավի յեր իր գլուխը տվել: Քարը դիպավ վողջմտելու գլխին ու մեկ քանի որից հետո մեռավ: Կորտես չատ մարդ էլ կոտորիլ տվեց ու ենգես քաղաքիցը դուս եկավ: Փախչելիս կարելի յե՝ թե բոլորին էլ Ջախջխուրթ անեին, ամա Կորտեցի աժդահա սիրտն եր, վոր նրանց ազատեց: Են սասիկ կավի միջումը, մահն աչքի առակն առավ, վրա Թռավ, նրանց բայրաղը խլեց: Հաղար մարդ ավելի ես գիտեց, են գիտեց ուղում էլին, վոր սաղ սաղ ուտեն նրան, ամա նա ասլանի պես մեջքնիրը ճոթռեց ու բայրաղը փախցրեց: Մեքսիկացիք ենգես էլին հավատում, թե իրանց բայրաղը, վոր կորչի, իրանց վերջն ա, իրանց թագավորու-

Թյունն էլ չի կարող կանգնել: Ես պատճառավ գլխըներն առան, կորան, ոպանիացիք ենպես էյին կարծում, թե յերկինքեցն ա հրեշտակ վեր եկել, նրանց հալածում, չունքի մեկ քանի հոգի էյին մնացել, բայց Քորտեցի սիրտը սար եր, էլի վոր մի քիչ գինջացան, էլի քաղաքի վրա յերեխ գընաց: Մեկ քանի յարալու մարդով, խելքի ժամանակ էլ կոխի ավեց ու 1521-ին, ոգոստոսի 13-ին քաղաքն առավ: Կրակի բոցի ծերը յերկինքն եր հասել: Ծալիկ են վայրենի դուռցն ու հարայ հրացը քարեր, սարեր լացացնում էյին: Մեկ քանի չահել իշխանի վորդիք նի էյին ելել մեկ բուրջ ու քարով, նետով, գեռ էլի չէյին Թոզում, վոր սպանիացիք գինջանան: Քորտեց Թուրը հանեց, վերև գնաց: Հենց գլուխը հասավ բրջի, նրանցից իրեքը ենպես գլխներըը կախ եկան, վոր սաքի Թե վոռնեքն են ուզում ընկնին: Հենց մոռացան Թե չե բիրզանքիր նրան խատեցին, ու ուզում էյին, վոր հետները վեր քցեն: Բայց Քորտեց ես բոպեյի էլ միտքը, ուշքը չի կորցրեց, վոռնները մեկ պատե գեմ ավեց, ու նրանց քացով, Թվանքով իրանից գեն քցեց: Ենպես, վոր գլխըների վրա պռովելով, ներքև էյին ընկնում: Քորտեց զարմացած վերևիցը ձեն ավեց, «քանի վոր աշխատքըս աշխարք ա գառել, եսպես տղամարդիք գեռ քիչ կըլին եյած, ու չեն էլ ըլել»:

Ես եր նրանց վերջի ապավենը, Քորտեց ես էլ առավ: Սպանիացիք հենց իմանում էյին, Թե նրանց աներոմը վոսկին կիսուկ կիսուկ կըլի, հենց վոր տեսան, գատ չի յերևում, կրակն էյին գրել վողորմելի խալխին, ե-րում էյին, վոր իրանց խաղինի տեղն ասեն, դաղում, չամփրում, Թիքա, Թիքա էյին անում նրանց եսաուր համար: Ներանց նոր Թագավորին էլ տկլորացրին, վոռ ու ձեռը կապեցին, ու իրան մեկ բարեկամի հետ Թեժ, անձողի կրակի վրա կանգնացրին. վոչինչ ասելու բան չուներ վողորմելին, ու անսաս կանգնել, երվում եր: Նրա խեղճ ընկերը լալիս, դոռում եր: «Սիրելի, ինչ ես եսքան մրմնջում, ասեց Թագավորը, լալով, դոռալով վոչինչ չենք սառնալ, լավն են ա համբերենք: Հասալած բալքի եսպես եր կամեցել, յես հո վարդի վրա չեմ կանգնած: Բաս յես մի ու ա-րին չե՞մ, ընչի՞ չեմ ձեն հանում»: Քորտեց վոր չատ խիստ սիրտ ել ուներ, վոր վրա հասավ ու խեղճերի հալը տեսավ, աչքի լսին ցավ ավեց, վոր Թագավորին են որն էյին քցել ու հրամայեց խսկույն, վոր նրանց ազատեն: Քորտեցին իր առած յերկրների վրա կուսակալ կարգեցին, չավիցը դուս Թունդ եր ու խիստ չատ նեղություն եր տալիս խալխին, վոր հնազանդ մնան: Բայց նա էլ՝ ինչքան ոդուտ Սպանիո բերեց, ենպես նրա գործն էլ չիմացան: Վերջը, իր բոլոր առած յերկրները ձեռիցը խլեցին, իրան էլ գուս արին: Տխուր, սիրտը ցավով լիքը՝ քաշվեց հյուսիսի կողմը ու Կալիֆոռնիա առած՝ կիսակղզին գտավ: Վաթսուն յերկու տարեկան գարդու, կսկծու մեռավ 1547 Թվին դեկտեմբերի 2-ին, վոր իր Թագավորը կարլ Ե. նրան ենպես անլրավարար գրկեց:

Մեքսիկու առնելու ժամանակը են ճանապարհը, վոր ուզում էյին

գանին, դնան Հնդստան, վերջ ամենայնի գտան: Ֆերդինանդ Մագելան անունով մեկ պորթուգալացի լիս քցեց ու իր անունը հավիտյանս հավիտենից Թողեց անմահ: Ոգոստոսի 20-ին 1519-ին Սպանիո Սեվիլլա քաղաքիցը դուս եկավ հասավ Հարավային Ամերիկու ղրաղը ու ինչ տեղ վոր ծովի քունջ կար, բոլորը ման եկավ: Հունվարի 12-ին 1520-ին եկավ հասավ Լափլատա ասած գետի բերանը, վոր ենքան լեն ա, վոր նրան գետ չէյին համարում, կարծում էյին Թե ծովանեղուց ե, ու նրա միջովը հենց իմանում էյին՝ Թե կարելի յեր Հնդստան գնալ: Ես տեղից սկսած՝ առաջը ենպես քարափներ եկան, ենպես վատ հավա յեր անում, վոր գիշեր ցերեկ մահը հազար անգամ առաջն եր գալիս, գնում: Ջունքի հավասարադծիցը (այսինքն յերկրի կեսիցը) դենը՝ են ժամանակն ա ձմեռն սկսում, յերբ մեր կողմը վերջանում ա: Ու են կողմը ձմեռն ավելի սաստիկ ա, քամին ավելի գառն ա, քանց հյուսիսային կողմը, ու ամառն էլ չատ կարճ ա: Մագելան տեսավ, վոր ճար չկա, մնաց Ամերիկա, վոր ձմեռն անցկենաս ու հինգ ամիս մնաց ենտեղ: Նրանք, վոր մնացին եստեղ ենպես մեկ տեսակ խալխ եկավ առաջները, վոր ամեն մեկը մեկ սաժեն (իրեք գազ) բոյ ուներ, ու դհա ավելի: Յերեսները կարմրացրած ունեյին, աչքըների ղրաղը դեղին խաղ քաշած, ամեն մեկ թչի վրա մեկ սրտի նման խալ ունեյին կարած: Շորըները մորթի յեր, նետ ու անեզ բանացնիլը խիստ լավ գիտեյին: Ենպես վոր մեծ էյին, ենպես էլ չատ էյին ուտում: Մագելան նրանցից յերկուսը բռնել, կամենում եր հետը Յեվրոպա բերի տեսնելու խաթեր: Սըրանցից ամեն մեկը որը մեկ մեծ քթոց լիքը բաքսմաթ (սուխարի) եր ուտում, մեկ Թունդի ջուրը՝ մեկ չնչով եր խմում: Մուկը սաղ սաղ, հում էյին ուտում, կաշին էլ չէյին քաշում: Ինչ ընկնում եր ձեռները, սաղ սաղ էյին կուլ տալիս: Մագելան ես ազգի անունը Փատագոնիէ դրեց, այնքան մեծահասակ, վոր ես որ էլ ես անունն ունեին:

Ինչպես կոլումբոս ու Գամա, ենպես էլ Մագելան չատ նեղություն քաշեց իր մարդկերանց ձեռիցը: Պատագոնիա խոսքը մին էյին արել, վոր նրան սպանեն, վոր իրանց ավազակի պես ենպես քարի, ծովի մեջն եր քցել, իրանց աշխարքիցը հեռացրել, վոր սովի ու ցրտերի ձեռիցը մեռնեյին: Ես խորհուրդը լիս ընկավ, ու Մագելան երկուսին սպանել տվեց: Վերջապես հոկտեմբերի 21-ին հասան մեկ ծովանեղուց, չորս կողմը բարձր սարերով բռնած, գլխըները ձնուտը Թաղված, ու ջուրն էլ չատ խոր: Բոլորն էլ կարծում էյին, վոր եստեղից էլ դուս գալու ճար չի լինի: Բայց քաչասիրան Մագելան նավը քշեց մեջը: Յերեսուն որ դես ու դեն պտուեց միջին, վերջը մեկ-մեծ ծով դուս եկավ առաջը: Նրա ուրախությունը էլ ասիլ չի լինի: Բոլորն էլ լաց էյան, ես վոր տեսան, ու են ծովանեղուցի ծերի անունը Մուրազատու դրին, ծովանեղուցի անունը Պատագոնիա ծովանեղուց ասացին: Բայց վերջը գտնողի անունը դրին ու ես որ էլ Մագելանի ծովանեղուց են կանչում:

Հինգ նավիցը, վոր Մագելանը հետը վերցրել եր, մեկը ջնջացել եր,

մարդիկը պրծել էին։ Մեկն էլ խայտառակությամբ ձեռ էր դարձել, որ նախապատերազմյան ամիսներին կորել էր։ Են իրենցից էլ մեկն էկավ Յեվրոպա։ Նոյեմբերի 28–ին են ծովանեղուկները դուս էկան, ու ընկան են ափապին ծովի ջրերը ու հենց իմանում էին, թե չուռավ Հնդստան կհասնին։ Բայց ինչպես էին խաբվել։ Իրենք ամիս ու քսան որ մնացին լաց ծովի ջրերին պատելով, հավեն չատ լավ էր, բայց վոչինչ տեղ ցամաքի նշան չկարերևու։ Կղզի ոսատ էկան, են էլ անմարդաբնակ։ Հետքները պաչալ չունեին։ Են սուխարին էլ, որ ուտում էլին, հատ չէր, մոխիր էր, են էլ ձիճուն մեջը լիքը, հոտած փխած։ Ջուրը փխել, պարչկի հատ էր տալիս, բայց են էլ ենքան չէլին ուտանում, որ աչքընները մի լան տեսնի։ Ամեն մեկին որը լրիվ չորս մսխալ ջուր ու հատ անջախ էր բնկնում։ Կամեննամեկին որը լրիվ չորս մսխալ ջուր ու հատ անջախ էր բնկնում։ Կամեննատանք կալին, վեր էլին բերում, ուտում։ Մագելանի բնկերի մեկը, անունը Պիգաֆետտա էսպես ա պատմում, թե «են կաշվի կտորտանքն էլ էնպես էլին արեգակիցը, քամուցը չորացել, որ չորս հինգ որ ծովն էջինք դնում, որ կակղին, հետո հանում, կրակի վրա խորոված, ենպես էլինք ուտում, են էլ ամենքիս չէր հասնում։ Շատ անգամ վետ էլինք ուտելու, ու ատչեղները չափարի պես ուտում։ Մուկը, ճիճուն կամ ուրիշ կենդանիքը, հո անմահական ուտելիք էլին մեզ համար, թե որ ձեռք էլինք քցել։ Մեկ մկան գինը, մեկ վոսկի էր, բայց ո՞վ կտար։ Բոլորս էլ հիվանդացանք, հետին չունչըն ընկանք։ Տատն լինը մարդ սովամահ։ Քիչ եր մնացել, որ սրանց մարմինն ուտեյինք։ Զեմ կարծում, թե մեկանիկ յեղը մեկն էլա ես ճամփովը կերթա»։ Իրավ, որ վաթսուն տարի անց կացավ, մեկն էլա սիրտ չարեց։ Վորչ ամենայնի մեկ ինպլիկ, անունը Պրաֆե, ես ճամփովն անցկացավ։

Ես ծովի անունը Հանդարտ գրին, չունքի լինչքան ժամանակ, որ նրա վրա էլին, մեկ քամի մեկ ֆրինա չեր պատահել։ Բայց ուրիշ նավապետներին էսպես չի պատահեցավ, նրանք չատ անդամ վատնդի, վորձանքի մեջն են ընկել ես ծովի վրա, հատուկ համար ես անունը գոհել, այժմ Մեծ ովկիանոս են կանչում, չունքի մեկ ծով էլա ենքան բաց տեղ չունի, որ ցամաք չերի, լինչպես սա։ Վերջապես մարտի 6–ին 1521–ին մեկ տեղ չատ կղզիք տեսան իրար մոտ։ Ո՞վ նրանց ուրախությունը կարող է պատմել։ Գետեղմանիցը, մարդ որ էլի նոր աշխատ դուս գա, սիրտը ի՞նչ հալի կերի, են հանգիստ եր նրանց սիրտը։ Բայց ես ուրախությունն էլ չերկար չմնաց, չունքի բնակիչքը ենպես գող, ավազակ էլին, որ նավերի մեխերն էլ, ցերեկը լուսով, նրանց աչքի առաջին, առաջով էլին ուտում հանեն ու չերը վրա էլին հանում թե բոնեն, ձկան պես թռչում, ջուրն ընկնում, ծովի տակովն ըլում ու հետու տեղ դուս գալիս, վրըներն էլ ճիծաղում էլին։ Շատ անգամ չորերի կռճակները, գվինների գդակը ապռավի պես վրա էլին թռչում, որ պոկեն, վախչին։ Մեկիցը պրծնում ենյին, մյուսն եր գալիս։ Եսպես վոչ պիչերն էլին հանգստություն տալիս, վոչ ցերեկը։ Ես պատճառավ ես կղզյաց անունը Գողի կղզի գրին (Լադրոնի)։ 15–ին մարտի մեկ ուրիշ կղզի դնացին, որ բնակիչքը հանգարտ էլին ու դուս էկան ցամաքը։ Պարզ ջուրը, ուլման ուլման պաղնելքը, մանավանդ քոքոս ատած պատուղը, ու սիրուն ուրախ հավին, չատ չուռավ ատոզջացրին հիվանդներին։ Մագելան Եստեղից Ֆիլիպյան ատած կղզիքը գնաց, որ ինքը գրեց ես անունը, իրանց թագավորի անունովը։ Բայց Եստեղ պետք եր ենպես քաշխարհս, անվանի մարդը, որ ահագին ծովեր, քարափներ, սով ու մահը վռոի տակ եր ուխել, իր մահը գտնել։ Կռիվ պատահեց նրանց ու են վայրենի խալխի մեջը, ուլին նրան, սպանեցին ապրիլի 27–ին 1521–ին։ Մնացած քիչ մարդիկն էլ ուրենցին Եստեղից դուս գալ, ճամփա ընկնել ու յերկու նավով, նոյեմբերի 8–ին էկան հատան Բորնեո ատած մեծ կղզին, Եստեղից էլ Թիդորը կղզին գնացին, որ Հնդստանից հետու չեն ու լավ հիլ, դարչին, մխիթակ Եստեղանից է դուս գալիս։ Ծագկի թագավորն, ասում են, ես տեղ ա։ Ամեն մեկ տերը պաղ ու կես լենուկյուն ու ենքան էլ յերկենություն ունի, այսինքն ծագկի տերը, լավ աչք պտի, որ Եսպես հիանալի ծագիկը տեսնի։ Ես կղզյաց մեջին տեսան, որ ուրիշ փորթուգալցիք էլ կան։ Վո՞րքան կզարմանայինք սրանք, որ տեսան, թե արևելյան կողմից են գալիս։ Բայց փոխանակ ուրախանալու, իրար պատահելու, սկսեցին իրար հետ թշնամություն քցել։ Հայ ըլեր, յե՞րբ կաներ։ Ի՞նչքան ապիկ եհայոց հոգին, որ ղարիբ տեղը իրար չան չեն թասիր անել։ Մեկ նավի մարդիկը, որ խարար եր եղել, անճարացած՝ զվիրները ալին նրանց ձեռը։ Մյուս նավը, որ պեռ քիչ լավ եր մնացել, չեր սախադվել, հետը միխակ, գարչին վերցրեց ու չուռավ յեղ գատավ Յեվրոպա ու սեպտեմբերի 7–ին 1522–ին եկավ Սպանիա։ Առաջին ճանապարհորդությունը աշխարհիս չորս կողմովը ես եր։ Կարզացողը լավ կիմանա, թե ինչ ուրախություն եր յեվրոպացոց համար, յերը ես խարարն իմացան։ Յերկու հարյուր յերեսուն յոթը մարդից, որ Մագելան հետը վերցրել եր, ատանյոթը եկան Պիգաֆետտի հետ, սրանց չատն էլ խիստ հիվանդ եր։

Վերջապես 1529–ին սպանիացիք են իրանց ուղած վոսկու աշխարքը ձեռք բերին, որ է Փերու։ Են կարիչ, խատասիրտ մարդը, որ թե ջրով, թե ցամաքով հազար տեսակ չարչարանք քաշեց ու հատեղ հասավ, Ֆրանցիսկո յեր, որ յերեխա ժամանակը խոզարած եր ու Ամերիկա գնաց, որ բալքի մեկ բան ճարի։ Ես Փերու ատած յերկրումը հիրավի անչափ վոսկի պատան։ Նրանց յեսիր արած թագավորը անունը Ինկա, խոստացավ, որ թե իրան բաց թողան, մեկ մեծ ոթախա, վոսկով լիքը նրանց բաշխի։ Նա իր ատածը կատարեց, ու ինչ ժամանակ փողը բաժանեցին, ամեն մեկ ասչգաթի քսան հազար մանեթ ընկավ, ամեն մեկ ձիավորի քառասուն հազար մանեթ։ Ասիներների վայը հո անչափ եր ու էլի Սպանիա թագավորին մեկ միլիոն մանեթ ուղարկեցին։ Ես որ լսեցին, ով ասես, գնաց

փերու։ Սպանիացիքը լցվեցին ենաեղ, վոսկին գաւել եր նրանց համար խաղալիք, ու խեղճ ազգին հայվանի պես եյին չարչարում։ Մեկ քաղաք չհնեցին, անունը Լիմա դրին։ Եաեղից չատ չարչարանքով, տանջանքով հասան մինչև Բվիտո առած կողմը ու կորդիլեր առած սարն անցան, վոր շատ բարձր և։

Փերու ու բոլոր նոր գտած յերկրներումը սպանիացիք չատ անկարգություն եյին անում։ Ամպագությունը, մարդասպանությունը վակել եյին նրանց սիրտը ու քարացրել։ Թշնամի, թե բարեկամ, դազանի պես եյին վրա տալիս, թալանում, սպանում։ Ես վոր լսեց Սպանիա Թագավորը, սկսեց յերկիրը կարգ քցել, որենք հաստատել, պլխավորներին արգիլել, վոր իրանցը պլուխ ենպես անօրենություն չգործեյին, ու ինչպես մարդասերն Լաս Քազաս առաջարկել եր, ամերիկացոցը ազատություն տալ։ Առաջին մարդը, վոր ես բանի վրա կարգեցին, լավ ուզում եր, վոր նպես չարությունները վերջացնի, ամա չատ չուտ չատացավ ու իրան բռնեցին, պլխատեցին։ Ես վոր խոսացան, մեկ ուրիշ մարդ ջոկեցին, վոր չատ խելոք եր, անունը Պետրո դե Գասքա։ Սա հոգևորական եր, չատ ուշիմ, արդար ու չափիցը դուս անթամահ։ Նրա հոգևորական կարգը, նրա պատվելի դեմքը ու հաստատ աղնիվ վարքը չուտով ամենի սիրտը գրավեցին ու սկսեցին նրան չատ պատիվ տալ։ Բոլոր սալդաթ ու ազիզներ խոստմունքով ու քաղցրությունով իր կողմը քցեց։ Ինչ որ վոր կռիվը պետք և բաց ըլեր, սալդաթների չատը, թաքուն, թաքուն վախան, նրա կողմն և-կան, ու կռիվը առանց արին թափելու վերջացավ։ Պիցարո, նրանց պլխավորը, յեսիր ընկավ ու պլուխը կորեցին։

Քիչ քիչ ու պտուղությունով սկսեց խոստումն Գասքա հողը ճոթ անել, չունքի չատ ազիզներ ու սալդաթ բոլոր զավթել եյին, իրանցը չինել։ Ճորությունն ել վերցրեց, վոր փերուացոցը ենպես տանջում եր։ Սալդաթները սկիզբը որանջում եյին, բայց նա չատին ուզարկեց, վոր աշխարներ դանին, չատին տեղ բաշխեց ու ես կերպով սիրտներն առավ։ Եսպես մեկ մարդի խելոքությունով ու բարեսրտությունովը մեկ սաղ յերկիրը կարգ ընկավ, զազանի ու անօրենի ձեռիցը պրծավ։ Ինչքան խարջ ու փչաքաչ ել վոր արեց Գասքա, ելի վեց միլիոն մանեթ հետը Թագավորին փիչքաչ բերեց։ Ինչ ժամանակ ես գործը պրծավ, ուզում եր, վոր պրագ քաշվի ու իր համար առանձին կենա, ու են հարուստ յերկրիցը ենպես աղքատ դուս եկավ, ինչպես վոր մտել եր, միլիոններ եր ձեռովն անցկացել, մեկ վոզ իր ջեբը չեր դրել, ես պատճառավ աշխարքի բերանը մնացել եր բաց, ու սրբի տեղ պաշտում եյին նրան, վոր ենպես խելոք ու արդար մարդ եր։ Ենպես մարդին ո՞վ չի պաշտիլ։ Թագավորը մեկ թեմի յեպիսկոպոսությունը նրան տվեց, ուր վոր մինչև մեռնիլը կացավ ու իր պատվական կյանքը վերջացրեց։

Բայց ինչ յերկրներ, վոր Սպանիա Ամերիկումն ունի մինչև ես որ, քանի գնացին խարաբ ելան։ Ջունքի, վոր հենց վոսկու եյին մեն դա-

լիս, վար ու ցանքի ել մտիկ չարին, յերկիրն անպորձ թողին ու եսպես քիչ քիչ խարաբ արին։ Բայի սրանից, սաստիկ զաղաղա յեր, վոր Ֆաբրիկա, գյարխանա չունենան, առուտուր չանեն, վոր ամերիկացիք, ինչ վոր իրանց պետք եր Սպանիացը առնեյին, ուրիշ տեղից բերել չտային։ Սրանից զայրու աշխարը պարապ հոգևորականով լցվել, վոր իրանց վրի զարդն եյին միայն քաշում։ Մենակ Լիմա քաղաքը, վոր վաթսուն հազար հոգի կենող ունի, քառասուն վանք կար մի կողմը, եսը գյորա ել վանքական ու հաց ուտող կըլեր մի կողմներումը։ Դինջություն, իրար պահպանիլ, եհաբար ամենևին չկա, չունքի Սպանիա հետու, ենպես ուզարկած մեծավորների կամքն ինչ ա, են են անում, ամեն հնարքը բանացնում, վոր իրանց ջերը լցնեն, չունքի գիտեն, վոր յերկար չեն մնալու, ու տերությունն ել մեկ պլխավոր յերկար չի թողնում մնա, չունքի վախում և, թե խռովություն կընկնի ու իրանից կապստամբվին, նոր տերություն կհաստատեն։ Բայց անիրավությունը ի՞նչ տեղ կմնա անպատիժ։ Գանի՞ տարի յե, վոր Ամերիկու չատ փայը, տեսնելով, թե ինչպես են հետընթերը կառավարվում սպանիացիքը, խոսքը մին արին, պլխընները թափեցին ու իրանց համար այժմ ջոկ ջոկ թագավորություն ունին ու որըստորե ծաղկում, զորանում, մեծանում են, այժմ սպանիացոցը չեն ել ատում, թե ատված ա ստեղծել։

ՀՆԴՍՏԱՆ ԿԱՄ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդստան Ասիո պեղեցիկ, հարուստ, պտղաբեր աշխարհների մեկն ա ու չատ գետեր, սարեր ունի։ Գետերի յերեսը նավերով լիքն ա։ Ինչ աշխարքից ասես, կարող ես ես նավերումը մարդ գտնիլ, վոր գալիս են կամ վաճառականության կամ տեսնելու խաթեր։ Ես տեսակ գնալը համ հանդիստ և, համ եժան, համ ել ենդուր համար ա լավ, վոր ճամփին առյուծ, գայլան կամ ուրիշ գազաններ քեզ վնաս չեն կարող տալ, վոր ենտեղ լիքն են։ Ճամաքով գնացողներն ել մեկ տեսակ ճոճի պես բան անին, վոր մարդիկ են ուսընեին տանում, բայց հետընները պետք և չատ ձիավոր ունենան ասպատավորված, վոր անվնաս գնան, ու բոլոր ուտելիք, պաչար հետընները վերցնեն, չունքի վոր ենտեղ գոնաղխանա, դուքան չկա։ Հնդկաստան վեց ամիս թաց, գեղ հավա ունի, վեց ամիս՝ չոր։ Ամպրնի պատճառը Մուսոն ասած քամին ա, վոր թացության հետ տաքություն ել ա բերում, առողջությանը չատ վնաս տալիս։

Հնդկաստան կարելի յեր ասել, թե հրաչք կըլեր, թե ենպես չոք չեր եղիլ, վոր յերկինքը ենպես ա վառում, բորբոքում, բոլոր սար ու ձոր չորացնում, խորովում ու ենպես սով առաջ բերում, բազի անգամ, վոր չատ մեր մեկ բուռը ալրի խաթեր վորդիքը ծախում ա, վոր մյուսներին պահի։

Ես տարաբախտությունը հերիք չի, չատ անգամ ենպես ստատիկ բոր-

յաղ ա վեր կենում, ենպես կոշա կարկատա ա գալիս, վոր մալ, ապրանք, հանգ ու տուրս չարդում, վերացնում ա, բայի վախտ անձրևը ենպես սաստիկ ա լըում, վոր գետերը մեծանում, ինչ կա չկա տակումն են անում: Ես գնս փչ ա: Մարեխը ամպի պես չաո վախտ գերկինքը բանում, ոգը- մթացնում ու, գաշաները, արտերը վընչացնում ա: Զգուշ պետք է ման եկած, չի թե խաոների տակին, հանդերումը, անեղումն էլ են ոձերը խմբ կենում: Պատճառն են ա, վոր հնդկացիք ոձին չաո պատիվ են տալիս, չեն սպանում ու ում էլ վոր կծեն, տասծո պատիժ են համարում ու չաո մեղավոր ա, ում ոձը գիպչի:

Տեր աստված, գլուխդ մի բարձրացրու, տես, ի՞նչ խարար է: Մեղավոր մարդիքը Գանգ գետի գերևումն գնում են: Ընչի՞... Ես վոդորմելիքը ենպես են կարծում, թե ես գետը աստը ա, ու իրանց, իրանց մեջն են ընկնում, խեղդվում, վոր իրանց հոգուն փրկութիւն բրի, ու իրանց աստուծո աչքին գոռ ավելի գուր դան, վոր մարդի արեով են կյանում: Մեկ ուրուկ խալիս էլ կան եասեղ, վոր փարի յեն տալում: Ինչպես մեր բոչնքը, ենպես էլ սրանք վընչինչ տեղ պատիվ չունեն, ու ով տես նրանց գաչվում ա: Սրանք էլ չունքի կարոզութիւն չունեն, վոր փետ առնեն ու իրանց մեռելների մարմինն երեն, բերում են, ես ջուրը քցում:

Տենո՞ւմ ես, ես աչքակապն ի՞նչ ա անում: Թուր, գանակ, ենպես ա կուլ տալիս, ինչպես ջուր: Մարիկ ասա, բայց չի վախենում, հենց ես ա, աչքիդ տեսկին ոձը վեր ա քցում, ինքը տապն ածում, ոձը չվոգնում, ծվում, պար ա գալիս: Նա ձեռն ա առնում, ծոցը դնում, բերանն առնում, ելի հանում ու մեկ մնաս ելա չի պատահում, պատճառը, վոր ատամները հանել ա:

Քանի մոտանում ենք, ենքան աչքընկերս նոր բաներ ա տեսնում: Ես ի՞նչ ջանավար ե, վոր ծառնըղուս ցցվել, ձգվել, վերացել ա, ձեռները քուռ մղղուռ պես գոչին կպցրել, աչքերը պեղացրել, յերկինքը քցել, վոչ ձեն ա լսում, վոչ մարդ տեսնում, բաս ի՞նչ ա անում, աստված վոչ գիտի իր գլուխը, աչխարքի վերջն ա մտածում, կամ իր չոր գլուխը լաց լըում: Սրանց փակիր են ասում, եասեղ, վոր դարվէի նման մի գաս են, եքսց, նլբ, մեկ չարաչիկ յեղը, մեկ ամիս, մեկ տարի, չե մեկ քանի տարի, ես չբառարը պետք է ես կերտով, ես մեհենուն տեղումը կանգնած մնա, ուսեր, անձրևի, կարկտի տակին, եսպես քնի, եսպես աչքը բաց անի: Վոչ նստի, վոչ չարժվի, թեկուզ յերևումն թուր էլ խրես, ուրիշ մարդիք են գալիս, նրա բերանը հաց դնում, չորերը փոխում: Ես բոլոր չարչարանքը Աստված համար ա քաշում, վոր իրանց հեթանոսական պրծած վատքին արժանանա ուր վոր ինչ գուշ ասես, ինչ անուշահոտ ծաղիկ, խոտ, ապրյուր, չաղրման ասես, վոր մարդի ջուր ա գուս գալում, մեջը լիքն ա: Հլա մեկ էլ յեղ նայիր, ես էլ մեկ ուրիշ փակիր ա, վոր մեռածի պես բնկած ա, ոտանես էլ, տեղիցը չի չարժվի: Մեկին էլ հրես մեղանից վոդորմութիւն ա խնդրում: Վոդորմելի, ես ո՞վ ա նրա քեմն ու անկաշները կտրել, յերեսը կարտաել,— ինքը, ինքը, վոր գնա դրախտը վայելի: Ես ինչ փեղ ա, կամ պոդ, վոր ես մարդի ոտեն գուռ ա եկել, կամ ջանիցը կախ բնկած մնացել: Ել ի՞նչ կըլի,— ֆակիրի ձեռն ա, կամ վասը, վոր ենքան նա ցից բռնել կանգնել ա, վոր ոտդն ու տեղը չորացնել ա: Բաս տեղը չի՞, վոր մեր խանումներքը լսելիս ասեն, հողեմ ձեր գլուխը, հա՛... Բայց մենք ցավինք սիրեկի, վոր ես վոդորմելիքը դես աստը ավետարանի լիսը չեն առացել, վոր իրանց հոգես չոպանեն:

Հանդիսավոր որ վոր գալիս ա, ասաված հետու տանի: Մենք գինի լինք խմում, քեֆ անում, վոր ելի մեկ բանի նման ե, ես հայվան ֆակիրները իրենց կոբի պատկերը մեկ մեծ սելի վրա բազմացնում, դոռատով, հարայ տալով քուչա, քուչա յեն ընկնում, ու չաոը սելի տակին շինվում, են ել ուրախությունով, վոր մեկ ախ էլ քաշեն, ով գարդ կանի: Եսպես են անում, վոր խալխի աչքը կապեն ու իրանց չաո պատիվ տան: Ես սելը, վոր ասացինք, չեմանաս թե մեր վրացու արաբեն ա, վոր խիմո, խի, կամ հո՛-հո՛ անելով քշում են: Մեկ ահագին տաճարի չափ տուն ա, սկեների վրա դրած: Ամեն մեկ տակը մեկ տան զգար կյա: Սրա վրա բազմացնում են նրանց մոդքը իրանց կուռքը, վոր Բրամի են տալիս, ու խալխիցը տուրք հավաքում: Հազարավոր մարդիք յեռեկից գնում են, ու ինչ տես, վերջաչ անում, չաո էլ՝ ինչպես ասեցինք, իրանց սպանում:

Ես ի՞նչ կենիներ են, վոր հազարներով Գանգ գետի գրպին գրած են: Կարելի յա մտածուն են ծախում, կամ չիլափլավ ուտում: Գուռ վոչ մեռնիս: Ամեն մեկ կճում մեկ բեռը անլմա մեղք կա, վոր հենց ջուրը քցեցին, բերանդ սրբիր, յեղ կանգնիր: Հնդկացին ինչ մեղք արել ա, գնաց, ջրի հետ կորավ: Մեկ եսպես գետ էլ վոր մենք ունենայինք, ինչ լավ կըլեր: Ել վոչ քաչալ կմնար, վոչ քուռ, մեկ կճուճի պես էլ հո գալում ա, ցավդեն ես ա, վոր մեղքը մածուն չի, վոր մեջն ածես, հնդկացիք ի՞նչպես են անում, ասաված գիտե, ով ուզում ա ինքը գնա հարցնի:

Ես ի՞նչ սուբ, չիլան ե, վոր մարդի սիրտ երում, փոքոթում ա: Աստված վոչ չհանց ատ: Մեկ ծեր մարդ սաղ սաղ բերել, գետի ղրաչն են քցել, վոր ընկնի մեջը, խեղդվի: Բերողն ո՞վ ե, իր վորդիքը, իր պատանիները, չունքի մարդ վոր ծերացավ, ել չեն թողում, վոր յերկար ապրի: Աստված վոչ անի թե ել յեղ տուն դնա: Իրանիկքի կտան կոպանեն նրան: Վորքան ղարմանալու յա, չունքի հնդկացոց պես դինչ, խնարհ, գաոը խալխ չի կա աչխարքիս յերեսին, ամա անհավատութիւնն ա նրանց ես տեղը քցել: Վոր սպանես նրան ձեն չի հանիլ, բայց վայ վոր հավատի վրա խոսացիր, գաոը ասլան կդառնա:

Զրից անելով մեր ճամբեն գնանք, յես քեզ հնդկաց հավատը պատմեմ: Նրանց արարիչ աստծո անունը Պարաբրամա յե, մյուս չաստվածները նրանից են գուս եկել: Ես չաստվածների անունովը աշխարհն տաճարներ ունեն չինած, վոր պաղոդ են ասում: Աբի գնանք մեկ պաղոդ, ամա

քերանդ կալ, վոր չծիծաղիս: Ես ի՞նչ չասավածներ ա, վոր եսոնդ քաշել են: Յեզան պատկեր ասես, լծի, լիքն ա, վորը հինգ, վեց ղլուխ ուներ ու ենքան էլ վոտն ու ձեռը, վորի դեմքը ենպես ա, վոր մարդ չի ուղիլ մտիկ տա: Բոլորն էլ այլանդակ են ու զարհուրելի: Նրանց ժամանակագրությունն էլ հենց ես չասավածների լայալ է: Շատ հանդիսավոր որ ենպես անկարգ բաներ են բռնում եսոնդ, վոր ասիլ չի ըլիլ: Մոյդեֆը ժողովում, պար եկող կնանիքը հավաքվում, իրանց հոգևորականների հետ ասճաբումը ինչ ասես, անում են: Ենպես են ասում, թե հնդկացիք իրեք հարյուր յերեսուն միլիոն չասաված ունին, ու չորս դրախտ, վորտեղ վոր իրանց չասավածները կենում են: Լավ ուշ ու միտք պետք է ունենան, վոր եսքան չասավածների անվանքը պահեն: Բայց մի դարմանաք: Հնդկացիք ենպես մտքով պահելու չասաված քիչ ունին: Յեղն ու կովը նրանց բուսոց չաստվածն ա, ագռավը նրանց մարդիս մտէի չասավածն ա: Սպիտակ փիլը նրանց թագավոր չասավածն ա: Ջոկ ամարաթ ունեյին նրա համար չինած, վոսկե ամաններով եյին նրան կերակուր տալիս, վոր ծառեքը բերում, առաջն եյին դնում: Հիմիկ փլի բանը խարաբ է, չունքի էլ չեն պաշտում:

Տեսնում եմ, վոր զարմանում եք: Չի հարկավոր. լսեք պատճառը: Հնդկացիք քրիստոնեյից նման չեն հավատում, թե մարդիս հոգին մեռնելուցը յեղը յերկինքն ա գնում, ու իր բարի կամ չար գործքի փոխարենը առնում. չե, նրանք ենպես են կարծում, թե հոգին մեկ ուրիշ մարմնի մեջ ա մտնում, են էլ մարդիս գործքի դյորա: Եսպես, բարի մարդի հոգին, ելի մեկ բարի մարդի մեջ ա մտնում, կամ մեկ գվաթով չորքոտանու: Վատ մարդինը կամ ճիճվի, խլեզի, ոձի մեջ ա գնում, կամ մեկ ուրիշ դեչ կենդանու: Ես ա պատճառը, վոր հնդկացիք մեկ կենդանի էլ ա չեն սպանիլ, միս բնավ չեն ուտիլ, ու պաղով են իրանց որն անցկացնում: Միայն են փարի խալխը, վոր ասեցինք, վոր սրանց կարգիցը դուս են նրանք են միս ուտում ու ես պատճառավ դհա ավելի աստելի յեն: Հնդկացիք ենպես են քաշվում, վոր թե կենդանու մորթուն էլ ձեռները դիպչի, կդողան, կսարսափեն:

Հնդկացիք բոլոր չորս կարգ են բաժանված ու ենպես սուրբ հասատատ է նրանց միջին ես կարգի բաժանությունը, վոր մարդ, ինչքան էլ վոր սիրտն ուզենա, են կարգամը պետք է ապրի ու մեռնի, ուրիշը վոր ծընվել է: Ուրիշ ժամանակի վոչ վոք իր կարգը չի կարող փոխիլ:

Ես կարգաբաժանությունը նրանց միջին ենպես հասատատ է, վոր թե մեկ մարդի ասես, թե նա մեկ կարգի հետաբում ելա չի, կուզենա քիչ սպանի ու հավիտյան չի մոռանալ: Թե կուզեք իմանալ ես կարգերի անունն ու զրուցքյունը, խնդրեմ անկաչ արեք, ասեմ:

Առաջին ու գլխավոր կարգը՝ նրանց հոգևորականներինն է, վոր բրամին են ասվում: Միս սրանց բերանը բնավ չի պետք է մանի: Կերածները

պտուղ ա: Մենակ սրանք ունին իրավունք, վոր իրանց սուրբ գիրքը կարդան, անունը Եսուր-վիդում, ինչպես մեր Աստվածաշունչը: Թե մեկ ուրիշ մարդ համարձակի են գրքի հենց ցանկին նայի, գլուխը կդառնա յերկու, ինչպես բրամինքը ասում են, ուրեմն լավ ա, վոր մենք էլ՝ պատահելիս, չկարդանք, թե չե յերկու գլուխ, վոր ունեցանք, էլ դավի գտնարի ձեռիցը չենք կարող քնել:

Յերկրորդ կարգը զորականացն ա, վոր յերեխությունից պետք է սովորին: Նրանց ռաջի յեն ասում ու հնդկաց ազնվականքն են: Վորքան հասա ըլի մեկ ռաջի (կնյազ), ենքան ավելի պատիվ ունի, եսուր խաթեր սրանք էլ ինչքան ձեռընդիրցը գալիս ա, իրանց փորի զարդն են քարչում: Սրանց էլ ա միս ուտիլը զադաշա. բաս ի՞նչով են հասատանում, մի հարցնող ըլի: Ա՛յ անաչեն, հալբաթ մեկ դուռը պտել են, ի՞նչ գավի ունիս: Ա՛յ կուպեյին հասատավոր մարդիքը ենտեղ ըլեյին...—հա, իսկույն ազնվության կճարեյին, ախոռս վոր Հնդստան հետու յե, ի՞նչ կա վոր, գնալը գժար չի:

Յերրորդ կարգը. վեսիաֆն են կամ հողագործքն ու վաճառականքը: Զորրորդ կարգը՝ սուդրասքն են կամ վեչաքարքը, մշակքը և այլն:

Սրանից գայրու մեկ կարգ մարդիք էլ կան եսոնդ, վոր կարելի յե անբախտների կարգը անվանիլ: Սատծո փարիճն են, վոր վերևն էլ հիշեցի: Ենպես են կարծում հնդկացիք, թե սրանք մարդի հետաբում չեն: Մեչեքումն են կենում նրանք ու կերածները վայրենի պտուղ ա: Սրտռատով, սարսելով են ենպես տեղերին մոտենում, վորտեղ, վոր մարդիք կան: Տեսնում եք ես մարդը, վոր ենպես վայրենի գազանի պես ծառերի տակն անց ա կենում: Սա մեկ փարի յե: Ցեվրոպացիք նրանց բռնում, նոքարի տեղ բանացնում են, չունքի սրանք միս կարող են ուտիլ: Եսուր համար յեվրոպացիք էլ նրանց աչքին փարի նման մեկ զաղ են: Ֆաղաքներումը բուխարիքն են սրբում ու ծածուկ տեղերը: Տոճարը բնավ չեն կարող մտնիլ: Մտիկ արա, հրես մեկ բրամին գալիս, փարին հանկարծ դիպավ նրան: Ես ինչ կատաղություն ա գալիս նրա յերեսը, ինչ արհամարհումն, ինչ անբարտավան ձեն: Ուզում ա, թե փարիին սաղ սաղ ուտի, սպանի: Փառք աստծո, փարին վախչում, պրծնում է: Ամեն մարդ իրավունք ունի, վոր փարիին սպանի, թե վոր նա բրամինին դիպավ:

Դհա վողորմելի, դհա աչքից ընկած են եսոնդ բոլքը: Գիչերը, աստղերը վոր դուս են գալիս, ինչ զարմանալի ձևով ասես, իրանց իրանց չարժում ու պար են գալիս: Յերեկն էլ, ենպես անասուն, անտեղ թափառում են: Գիչերը ծառերի վրա յեն քնում, ուր վոր իրանց բուն ունին չինած: Հնդկացիք նրանց վայրենի գազանի կարգումն են համարում ու ով հասնի, կարող է նրանց սպանիլ, թե վոր մեկ չինության մոտանան:

Ո՛ւր է վազում ես խալխը: Մեյդանի միջին մեկ մեծ փեսի կիստուկ կա, գիդո՞ւմ եք, ո՞ւմ պետք է երեն. մեկ ջահել, սիրուն կնկա: Հրես նա էլ գալիս, բայց կանղնողներին ընչի՞ յե վիճչաչ գրվում, ընչի՞ նրանց ինչ-

ախան առնում ու Հավիտյան բարով մնա ասում: Ինչ հանդիսավոր կերպարանք ունի, ինչպես ուռած պալիս ա: Նա ինքն ա կրակի վրա վազում, մեջն ընկնում ու բոցը նրան ուտում: Սա վարպետի կին ա, մարդը մեռած, երեցին, ինքն էլ սազ սազ պետք է են կրակումն էրվի: Թե վախենա կամ իր կյանքը խնայի, իր վարպիքը կանիծեն, կամ կոպանն նրբան: Թե ծածկվի էլ, կամ յերեսը կալնի, խալխը պլխին են թուք ու մուրը կածի, վոր ասված հետու առնի: Փառք ասածո, վոր ինդիկները նպես վատ սովորությունքը քիչ քիչ վերջացնում են: Իրանք հնդկացիքն էլ են իմանում, վոր ես լավ բան չի:

Շատ լավ է, ենտեղ գանվիլ, յերբ յերեխեն ծնվում է: Իրամինը ձեռները նրա պլխին պրած, աչքերը յերկինքն ա կիծում, ու աստղերին մոխիկ անելով, ասում է, Թե նրա վերջը ի՞նչ կլնի: Բայց ինքն ինչ պիտի, ես Թոխմախ պլուխը: Վոր հավատում են, ո՞վ ինչ անի, մեղանում բոչեքանցը չեն հավատում: Բայց Թե վոր բոչեն բան պիտենա, ընչի՞ չի իր Թանն իր պլուխը քսում, ու սոված, ծարավ պկռտում ա:

Ինչպես խալխն է կարդ կարդ բաժանած, ենպես էլ մարդ ու կնկա կենցաղավարությունը ու պարտավորությունը: Կնիկամատը հնդկացու աչքին հայվանի նման մի զոռ է ու շատ անքաղաքավարություն ա, Թե վոր նրան հարցնես, կնիկը ինչպես ա: Յեվրոպացումը շան քնքին էլ կարելի ա հարցնել: Կնիկը մարդի անունը չի կարող տալ: Միայն աղա, քազդավոր պետք է ձեն տա: Խոստովանություն մնա, մեր միջումն էլ եսպես է, ամա ուրըշին չասես: Ինչ վոր մարդն անի, կնիկն էլ են պետք է անի, նա ծիծաղելիս, կնիկն էլ պտի ծիծաղի, Թե լաց ըլի, նա էլ հետը պտի լա, Թե ձեծի նրան, պետք է ձեռը համբուրի ու առաջին չոքած Թողություն խնդրի:

Հնդկայ աները քյոդի նման ա ու բամբուկ ծառից ա չինած, ղամչով ու խուրմի տերևով ծածկած: Նրանց կերակուրը բրինձն ա, սիմինդրը ու պտուղ:

Նրանց ռաջիքը կամ իշխանքը ենպես ամարաթներում են կենում, վոր վոսկով զարդարած, հայելիներով ու արըշումե ճոթերով լիքն ա· պնակնը խալիչեքն են ծածկում, վոր շատ Թանկագին են: Հաղարավոր Թուփ ու ծառ, միչտ կանաչ, միչտ ծաղկած, զարդարում են նրանց բնակարանքը: Ինչ անուշահոտ բան ասես, նրանց աներումն են ծխում, չաղրմաններըը կչկչալով ջուրը քսում ու անճրևի պես վեր Թափում: Հաղարավոր նոքար, բնքար վոսրների վրա կանգնած իրանց իրանց են իմանում, Թե ես մահկանացու ասուածքը ի՞նչ են ուզում, ու ենը գլուխ հով են տալիս նրբանց ու զուլում անում: Մոդդեէը պար գալով ու աչք ու յերես ծամուծլով նրանց սիրտը բաց են անում: Ու եսքան հրաչալի տեղերի տերը, են գեղին ու լղար յերեսովը, մարդատյով ու չավահրով ծածկված՝ նեղսնում ա եսքան ուրախության միջին: Հենց վոքը նեղանում են Թե չե, ական Թոխվել՝ մեկ քանի ծառա վրա յեն Թափում, բարձրացնում նրբան, ու պատանիին կամ քնջավի մեջը դնում, վոր ասն պես չինած ա, դաս ճոթերով կախ արած, ու մարդիք են քաշում, ասնում: Եսպես տեղը վոխում են ասանց իմանալու, Թե ինչպես չարժեցան, ասանց վոքը վախենա:

Հնդասանու շատ փայը ինդիկների ձեռին ա: Ամեն տեղ իրանց դասատանատունն ունին ու հնդկաց մեծամեծը հենց անուն ունին միայն: Շատ իշխանություններ մոքով ա, բայց ձեռներին վոչինչ չկա: Զորըրնակ մեծ մոգոլըն, վոր հնդկաց մեծ Թագավորն ա ու Դելի քաղաքումն ա կենում ու աներևույթ է, աչքի չի յերևում, ենտով է միայն բավականանում, վոր նրա անունը, ինչ վոր ինդիկներն անում են, նրբանց ցուցակումն ըլի, վոր ես յերկրի տերը այժմ նրանք են, ու վորը խորամանկությունով, վորը Թրի գոռով իրանց ձեռի տակն են բերել: Նրանց դունչունը հնդկացի չեն ու սիպա յեն ասվում, նրանցով են ինդիկները իրանց բերդերը պահում, ու վորքան զարմանք է, վոր մեկ քանի վաճառական եկած եստեղ, վոր իրանց առըտուրն անեն, ենքան հնարք բանացրին, վոր ես որ, ես ահագին տերությունը, վոր հարյուր քսան միլիան ավերի կենող ունի, իրանց իշխանության տակը բերին: Ինչ տեղ վոր խելք ու միաբանություն կա, ինչը կարող է նրան դիմանալ:

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆ ԿԱՄ ԳԱՆԳ ԳԵՏԻ ԵՍ ԿՈՂՄԸ

Արևմտյան ափերը

Սուրաթ, չատ մեծ, հարուստ ու վաճառականաց քաղաք ա: Գնանք սրանց ճոթի ու արըշումի ֆաբրիկեքը: Մեկ քանի կտոր բան առնինք: Ի՞նչպես զեղեցիկ ա սրանց չինած ճոթը, սաղաֆի ու սև փեսի բաները: Սուրաթիցը մոտ, ներքուդա գետի դրաղին ենպես մեկ ծառ ա դուս գալս, վորի հատը արարած աչխարքումը չկա: Ես ծառի անունը Նուրիքբուն է, ու ասըր ծառ են համարում. նրա քոքի հաստությունը մենակ յերկու հաշյուր ութսուն ու հինգ սաժեն ա: Ո՞վ կհավատա, Թե եսպես հրաչքը տեսած չըլի: Ես ծառի տերևի տակին եր կենում Պուդնա Թագավորը, իր բոլոր պալատական մեծամեծներովը ու յոթը հազար մարդով, վոր նրա պահապանն էլին: Թող սրանով իմանա կարդացողը Թե ջեկ ծառ վորքան մեծ պտի ըլի, վոր եսքան մարդ տակին կարողացել ա կենալ: Ես ծառին շատ պատիվ են տալիս հնդկացիք:

Ես ի՞նչքան նավիր կան Բոմբայի նավահանգստումը, ու ի՞նչ չարժումնք ա քաղաքումն էլ: Գնանք գեբրաց կամ հին պարսից տաճարը, տեսնինք վոր յերկու միլիոն ռուբլի ա նստել չինելը: Ինչ վոր չինություններ վերջացրին ու ուզում էլին, վոր որհնեն, բյուրք բյուրոց բազմություն կար հատեղ:

Սերինգապատում քաղաքը, որ մոնիա, հենց կիմանաս, թե աչքաքի պատքն ու մեծությունը եսուել ա, ենքան հարուստ ու ճոխ եր եսուղանց թագավորությունը. ես թագավորությունը չաս չուտով մեծացավ ու ամենից անց կկենար, եթե ինդկիղները չեյին փչացրել: Գոյ քաղքումն եր, որ փորթուգալցիք ենքան պատք ու մեծություն ունեյին: Եսուել պրեց Վամոյենս բանաստեղծն իր անմահ պիրքը, ուր որ փորթուգալացոց արածը գովում ա:

Արևելյան ափիները

Ինդկիղները իրանց հնարագիտությունովը բոլոր ես կողմերին տիրել էն: Եսուել ա Մադրաս քաղաքը, ուր որ Մադրասու են սիրուն ապկինները զարդում են ու մեկ քանի տուն էլ հայք կան, են հայերից, որ իրանց հոգին ու մարմինը իրանց ազգի համար յեղ են դրած: Պաղոդք, մեկնդք, յեկեղեցիք, աններ, ննդես են իրար հետ խառնված, որ տեսնողը կզարմանա: Մինջներից ծառերն էլ որ չեն պկսները բարձրացնում, մարդի խելք ա գնում:

Գոլկոնդ քաղաքի վոսկու ու ալմազի մասին ա չատ գոված: Հրես նկանք, կալկաթա տասանք, որ ինդկիղների մայրաքաղաքն է: Ես ահագին քաղաքը մեկ միլիոն ավելի բնակիչ ունի ու ինչ ազգ ասես ասիացի, թե յեվրոպացի, հայ, հնդկացի, արաբ, պարսիկ, եսուել տեսնել կարելի յե: Նրա վաճառականությունը ամեն տեղ գնում հասնում է: Դուքան, բազար վոսկով, ջավահրով, պատ ճոթերով հազար ռանկի յեն տալիս: Գինիները մանավանդ են պայծառ յերկնքի տակին կառերները քուչեքը լիքը, որ չեն պես ու ղեն չրջում, աչք պետք է ըլի, որ թամաշ անի: Կալկաթա յե ինդկիղ պկսավորի ամարաթը, որ ինդկիղի թագավորն ա ջահում իրեք տարի ժամանակավ: Եսուել են նմանապես կենում են աթնվական, հայրենասեր հայերը, որ մինչ հսոր ինչ միջոց ասես ավել են, որ մեր ազգին ոգնություն անեն: Դեռ չատ ժամանակ չի անցկացել, որ մեկ եսպես ազգասեր իշխան կամենում եր իր բոլոր կարողությունը առնի, բերի Հայաստան ու ենսեղ վարժարաններ, հիվանդանոցներ ու տպարան սարքի, բայց քանը ուրիշ տեսակ եկավ: Ախտոս որ անունն էլա չգիտեմ, ննդես պահտելի իշխանի, որ եսուել գրեյի ու ամեն մարդ իմանար, մտքումը պահեր:

Հյուսիս

Բենգալիս քաղաքը Հնդստանու գլխուն մարդկանց տեղն ու սուրբ քաղաքն է, ինչպես Թուրքերի Մեքքա: Հազարավոր պաղոդ (կուքաուն) ցիր և ցան չինած կան եսուել: Ամեն տարի միլիոնավոր խալխ է գալիս եսուել ուխտ: Գինանք, Բեզեխուրի տաճարը տեսնինք, որ ցխով լիքն ա: Ով են-

տեղից դուս գա, պետք է սրտով զանգակը խփի, որ ոչուքից կախ ատած կա: Վեց քուչա կա, վեցն էլ ննդես մեծ, հազվագիտան կամարավ վերջը չինած, որ մեղ հանում, տանում են Ագրի քաղաքի մեյդանը: Ագրի մոգոլ թագավորաց մայրաքաղաքն եր ու բոլոր աշխարքումը հատը չուներ: Հիմիկ Դելի քաղաքն ա նրա տեղը բռնել: Ինչ որ մարդիս միտքը կարող եր հնարել, որ վոչ խելք կհասնի, վոչ միտք՝ ես թագավորի ամարաթումը կար: Մուռմուռ, վոսկի, յախուտ, ջավահիր, ալմազ պատ ու ոչոռք բռնած էլին, ու ինքը թագավորը ինչպես արեգակը՝ չալմեն պլխին, չոր, գոտի հագին, յարտուղ կապած՝ բոլորը ակն ու մարգարիտ, ջավահիր, եսպես աթոռի վրա բազմած է: Վոսկե խուրմի ծառերը՝ գլխին չափ են անում, պտղները բրլիանդ են, տերևները՝ զմռուխտ: Լահոր քաղաքումն էլ մեկ հիանալի ամարաթ կա: Գաշմիրի չալն ու ապկինները հայտնի յեն ամենին, թե ինչպես նուրբ ու դեղեցիկ են: Բոլորը լիճի մաղից են գործում, որ եսուել բասլամիչ են անում:

Կզկիճ (Ադա)

Ցեյլան կղզու չորս կողմը անմահով է բռնած: Հլի ու գարշնի մեջերը են անուշ հոտն են ամեն տեղ տարածում, որ մարդի խելք գնում ա: Եսուել էլ են ծովի տակիցը մարգարիտ հանում, հազար տեսակ անուշահոտ ծաղիկ ու պատուղ լիքն ա եսուել: Գնանք Աբամ սարի գլուխը, որ ես կղզումը ամենից բարձր ա: Բուդդայի պաշտող հնդկացիք ամեն տեղից ուխտ են գալիս եսուել: Նայեցեք, թե ինչպես են նրանք ջերմեռանդ սարը վեր ըլում, որ իրանց Բուդդա չատուածի վոտնատեղը համբուրեն, են վոտնատեղը, որ նա յերկինքը գնալիս թողել ա եսուել: Մալդիվա կղզումը մեկ տեսակ խեցի (որուջ) են հանում, որ Հնդկաստան վաղի տեղ բռնացնում են:

Արևելյան Հնդկաստան

Ես աշխարը, որ Ջինգիսջնի ու մյուս Հնդստանի մեջն ա, գոնդան սարերով կտրատված է: Անթիվ գետեր կա մեջումը, որ գարնանը մեծանում, գուս են թափում ու յերկրին չատ պտղաբերություն են տալիս: Խուրմի ծառը, արանոսի ծառը, գանգան տեսակ վարդն ու ուրիշ պտղները մեջի պես են եսուել կանգնած: Ավա քաղաքը, որ Բիրմանու թագավորության թախտն է, չատ մեծ ա ու գեղեցիկ: Սիամն էլ մեծ քաղաք ա: Անթիվ տաճարք, պիրամիդք, ամարաթք ու չինվածք կան մեջումը: Կնանիքը եսուել գարավաչիցն էլ վատ են, մարդը հաց ուտելիս, ներանք պետք է ծառայություն անեն ու չեն կարող հաց ուտիլ, մինչև մարդիկը գուս չի գան:

Բոլոր խալխը գետերի գրաղին հավաքվում մեջընները բրինձ ու պտուղ են ածում: Ես ի՞նչ առատություն ա: Տեսնք՝ թե ինչքան բաներ են

ծովի յերեսին լողում. հենց պիշերն եկավ, թե չե արեգակի տեղակ, ֆանտաններ են կախ անում ամեն տեղ: Սիամացիք ասոր իրանց նոր տարին են առնում, վոր դեկտեմբերի մեկին է լլում: Բախտավոր են մարդն է, վոր ես որ մեկ սիպտակ ֆիլ Թագավորի առաջը կրնրի: Առաջ վոր գլխին վոտի Թագ են դնում, վրա յերկրորդ՝ ենքան յերկիր են տալիս նրան, ինչքան ես ֆիլի ձենը կհասնի:

Ի՞նչ զարմանալի դրություն ունի Մալաբա կղզու ափնեքը: Նրա դաշտերը միշտ ծաղիկներով լիքն են ու նրա լայնատարած մեչքը են հոտն են սիրում ամեն տեղ, վոր մարդ խելքից գնում ա: Ջրերը ինչպես հայելի փայլում են: Կարելի յե, թե արեգակի չորքն ա ես գույնը նրանց տալիս: Հենց լմանաս վոսկի լլի փռած ջրերի յերեսին: Ես պատճառավ եր, վոր հին ազգերը՝ ես աշխարհը վոսկու աշխար էյին կանչում: Մալաքա մեկ քանի Թագավոր կան, վոր ինդլեզների հետ դաշնակից են: Թանձր մեչքը բանան ծառի, ասելբնիի, լիմոնի, կոխինխինացոց ոնների չորս կողմը բռնած են: Ես տեղ ա գուս գալիս քամա ասած անուշահոտ ծառը, վոր չինացիք վոսկու հետ քաշում, առնում են: Տեղիս բնակիչքը բոլոր ասիացոց մեջին ամենիցը հանդարտ են ու խոնարհ: Բայց չուտով են իրանց բնությունը փոխում ու շատ նեղասիրտ են:

ԵՋԵՐ „ՆԱԽԱՇԱՂԻՑ“

ՎՈՏԱՆԱՎՈՐՔ ՋՎԱՐԹՈՒԹԻՔ

ՍԱՏԱՂ ԳԱՌՆ

Մեկ պատիկ դառն ճյունի նման մաքուր, սպիտակ՝
Գնաց մեկ որ՝ իր մոր հետ դաչտն՝ վոր արածէ:
Իր քեֆին սկսեց դես դեն թռչիլ, խոտերի տակն.
Չե՛ր ուզում վոր վոջը ժամանակ հանգիստ նստէ:
Դարվները, զարդուս չափ եր քցում անզգուշութեամբ.
Թե քար, թե փայտ, թե խոտ, թե ձոր բնավ չե՛ր նայում:
«Վորդյա՛կ հա՛նգստաւ», ձայն եր տալի մայրն կսկածմամբ.
«Վորդյակ դլխիդ փորձանք կդա, վոր չե՛ս լսում»:
Բայց դառնուկն հենց ծուլ եր ըլում, խայտում, խաղում.
Յեվ լյառն ի վեր, և լյառն ի վայր մէջտ վազվզում:
Վերջն մոր տասն կատարվեցավ, և անխելք դառն
Իր դժուխյան պատիժն սարի դլխին առավ:
Սարի դլխին մեկ չատ մեծ քար կար վեր ընկած.
Կամեցավ դառն վոր ես քարի վրովը թռչի:
Հենց ծուլ ելավ թե չե՛, վոտքը տակին մնաց
Յեվ ջարդվեցավ: Ել ո՞վ կարեր նրա սիրտն առնի:
Դուք սիրելի յերեխա՛յք իմ, լավ մխաք արեք:
Յեվ ես բանը ձեր սուրբ սրտումը տպավորեցե՛ք:
Ինչ քեֆ վոր մարդ չափիցը դուրս կամի անել,
Հետո նրան ցավ կդառնա և չի պրծնիլ:

ԿԱԹՆԻ ԿՃՈՒՃՆ

Կաթնի կճուճն դլխին դրած,
Գոդնոցն խոտակ դոշին կապած,
Մարթա գնում եր բազարն չտպով,
Վոր իր ապրանքը ծախի լավ գնով:
Բայց չունքի վոր առուտրումը
Աչեն մարդ իր խերն և ուզում,
Եսպես նա է՛լ միտք եր անում:
Թե վոր ծախի, ինչ կըլի դառումն:

«Վնաս չահի հա՛ ամեն մարդ իմ կաթնին կը տա։
Վարովհետև քաղաքումը բոլորը Թանգ ա։
Ցես ես փոքր բնավ չեմ խաբչիլ, ու կրանացնեմ.
Ու ինձ համար, վարքան կը տան, հենց ձու կառնեմ։
Յերեք անգամ Թուխա կդնեմ ձագ կհանեմ։
Մ՛ի՝ ինչ կըլի՛՝ վոր Թե սեռնեմ՝ են վախան հալա.
Ենքան ձագեր իմ առաջին Թրպրտալիս։
Թե մարթ է ապվեան, նրանց կդողանա, կամ կը խեղդի։
Ցերբ մեծանան, կառնեմ բաղարն, Թե լավ սհաթի
Ռատա բերի, Թանգ կը ծախեմ, մեկ խոզ կառնեմ։
Փառք աստուծո, տանը հա՛ Թեվի չես չատ ունիմ,
Կաւտացնեմ, կչաղացնեմ, ելի կծախեմ։
Ու ես վոդովն հետո մեկ լավ կով կդնեմ։
Խոռը տանն է, դարմանն ունինք. ի՞նչն է պակաս։
Աստուծով ել չուտով կը ծընի. հորթ կը բերի։
Հիմիկ հա կա՛ց, ու քեֆ արա՛, տանը նստի՛։
Կաթին ու մածուն, յեղ ու կարագ, ինչ սիրտդ ուզի,
Կե՛ր ու քնի՛ր, ե՛լ մի զարթիր, քեֆիդ նայի՛։
Մ՛ի՝ ինչ կըլի են վախան հալես՝ վոր առաջիս
Մեր դիժ հորթը արածնդ տանի, դես ու դեն վազի»։
Ես ասաց ու ինքն սկսեց արածնդ տանիլ։
Գլուխդ ապրի՛։ Ջուն ել, ձագն ել, խոզն ել, կովն ել,
Հորթի հետ Թռան, ու կամենի կճուճն հետները տարան։

ՇՈՒՇԱՋԻՆ (Ա.ՊԱՆԱՍԳՈՐԾ)

Մեկ չուշաչի դուքանը նստած՝ միտք եր անում.
Գլուխը քորելով՝ իր վիճակից խիստ տրտնջում։
«Եապես չուշա միշտ ծախելով ի՞նչ ողուտ ա.
Ենպես բանի պետք է կըլած՝ վոր ինձ չահ տա։
Շուշա մուչես կը ծախեմ, կերթամ ապրանք կառնեմ.
Կառնեմ Մոսկով, կամ այլ քաղաք խրխդ կանեմ։
Քոռ բաղդն Թե վոր կը հաջողի, յես լավ դիտեմ.
Թե վո՞րքան փող ու խազինա յես կըգտեմ։
Ել ո՞վ է դիժ՝ վոր դուքանում նստի, տանջվի.
Կերթամ մեկ լավ տուն կչինեմ, վոր ով տեսնի,
Ինելքը դընա, ուշ ու միտքը վրեն գմռլի։
Տան առաջին մեկ մեծ այգի ել կը գցեմ,
Ու միջումն մեկ վալ չատրվան դուս կը բերեմ։
Նոքար բեքար, ձի ու կառեթ ինձ համար կը սարքեմ.
Վոր ամենի աչքն ել ինձ վրա մնա պարմացած։
Մեկ լավ տեղից աղջիկ կուզեմ իմ հավանած,

Ցավ կնստիմ, քեֆս կը նայիմ, կուտեմ կը խմեմ։
Աստված չա՛նի՝ Թե մեկ մարդ իմ քեֆին դիպչի,
Ու քուչուման անց կենալիս գտակ չվեր առնի,
Ենպես սիրա կու խլեմ նրան, կամ քացի կտամ,
Վոր սաղ ամիս՝ ել բարձիցը դլուխ չվերցնի»։
Ֆացին չուչի չվաֆին դիպնվ,
Ելած չելած ջախտուրդ ելավ։
Կոշկ ու սարա, նոքար բեքար, ձի ու կառեթ
Բոլոր փչացան մեր չուշաչու չվաֆի հետ։

ԱՌԱՍՊԵԼՔ

ՍՅՍՎ ԱՊՈՒՍՎԻՆ ՅԵՎ ՀՍՎԻՆ

Սյավ ապուսին՝ ապահ գող բնություն ունի,
Ինչ վոր ձեռքն ընկնի, գողանա տանի։
Մեկ եապես ապուսի տաներ ամեն որ, ուր ինքն քներ,
Վոսկի Թե արծաթ, ոսկապ, մարգարիտ բնումը պահեր։
Հավն տեսնելով, «ա՛յ իմ բարեկամ, հարցրեց նրան.
Եապես բաներից, ի՞նչ ողուտ ունիս՝ վոր միշտ ժողովես,
Քեզ գրանք վո՛չ հաց, ջուր և վո՛չ կերակուր, վո՛չ ապրուստ
կուտան»։
«Ախ դու հեր որհնա՛ծ՝ պատասխան ավեց ապուսին, ժպտելով.
Աչքածակ ապուսին ի՞նչ կը հարցնի ողուտ կամ վնաս.
Միտն ե գողանալ, խլել, հավաքակել և տանը պահել,
Թեկուզ փշին ել՝ ես տեսակ բաներ մենք չենք հարցնել։»
Ապահ մարդն ել միշտ ես ապուսվի պես հավաքել կամի.
Բայց վո՛չ մտածե՝ Թե իրան կամ այլոց մեկ ողուտ բերի։

ԳՈՒՅԼ ԵՇՆ Ի ՎԵՐԱ ԱՆՏԱՊԱՐՀԻՆ

Եչն բեզարած իր ճանապարհեցն՝
Յեկավ գետի ափն, տեսավ ես կողմերն,
Վոր լավ խոտ կար ջրի են մյուս դրազումն,
Յեվ փորն ել իրան չատ գոռ եր անում։
Սովի ձեռքից դրեթե մեռնում եր.
Անցնել են կողմը ալարը զալիս եր։
«Ի՛նչ եմ գարդ անում. ես տեղ կու պարկիմ,
Բիկուն առավոտ նրան կու տեսնեմ.
Աչքս կըզմայլի, հոգիս կը մխիթարվի,
Մինչև ես գնան ել հո կը ցամաքի»։
Գնաց, վերկացավ, ել կրկին քնեց,
Ու հաստապլուխը ել միտք չի՛ արեց,

Թե գնալը չի՛ պակսել, ինքը կը սառկի,
Ցեվ խառն իրան ձեռն չկրնաք հասնիլ չի՛:
Եսպես թեքն ընկավ, մինչև մյուս որը
Գնալը չ՚՝ պակսեց, բայց նրա դլուխն ու փորը
Ցետին թեքն չնկան: Կուզեր վոր լոկ սար,
Բայց եվ ջանումքն գործուքյան չկար:
Մեր կյանքն նման է ես ճանապարհին.
Գետն որինակ է ժամանակին:
Չեռի մեզանից փառք և բախտ կենաց.
Պետք է աշխատինք՝ վոր հասնինք նրանց:
Ով իր մանկության վախտը կը կորցնի
Ու կը ծուլանա և ջանք չի՛ անի,
Վերջը ապքատ կը մնա, ու փառքից զրկված,
Մեր հառաղլուխ իչի նման սոված:

ՑԵՐՆԱՒ ՌԱՐԵԿԱՄՔ ՑԵՎ ԱՐՋՆ

Ցերկու բարեկամք դնացին մեչեն,
Վոր իրանց համար վորս անեն անդեն:
Խոտուն մեկ արջ մեչքը դուրս թռավ,
Ցեվ կառաղությամբ նրանց վրա պրծավ:
Մեկըն չտապով մեկ ծառ վեր ելավ.
Մյուսն եվ ճարակառւր դետնի վրա ընկավ:
Շունչն իրան քաշեց, մնաց անշարժ ընկած,
Վոր սեսնողն կը կարծեր՝ թե նա չե մեռած:
Արջ պապն մոտեցավ նրան մրթմրթալով,
Ականջը դեմ ալեց բերնին ուսուլով,
Դես դեն հոտ քաշեց, եվ ականջ դրեց.
Բայց մեր խեղճ վորսկանն ենպես չունչն կարեց,
Վոր արջը ներքան մեռած կարծելով,
Թողեց, հեռացավ՝ բերանը վիզելով:
Ետյին բարեկամն ծառից վեր եկավ.
Ընկերին հարցրեց՝ թե արջն ի՞նչ ասավ:
«Արջն թանբահ արեց՝ վոր չես մյուս անգամ
Ջեղպես վատ մարդի հետ եվ դուս չի գամ,
Վոր եսպես փորձանք եվ չերևես դլխես,
Ինձ վտանգի մեջ թողուս և վախչես»:

ՑԵՐԵՔ՛ ԽՈՒԼ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ ՀԱՒԱՏՔՈՒՆ

Մեկ խուլ մեկ որ վոչխարի տուքուն կորցրեց,
Գնաց՝ վոր գտնի ու հանդուման մեկ մարդ ճանկեց,

Վոր բահը ձեռին ադամ ջրում եր: Ու նրան հարցրեց:
Ես ոլնաքանդըն եվ խուլ ըլկալով, ենպես կարծեց,
Թե ի՞նչ ուզ է ջուրը հասել. ու նրան ցույց ավեց:
Ուշն իր միջումն հենց իմացավ՝ թե են կողմով
Վոչխարները դընացել են. ու դնաց չուռուվ:
Սատանական նա իր տուքուն թամամ գտավ,
Ու մեկ կաղ գառն մյուս խուլին վեչքաչ բերավ:
«Գլխեցս ուռ է՛լ. չես չեմ կտրել դրա վոտը,
Թե չե բահով դլուխդ կը չարդեմ, աներես դո՛ւ»:
— Ինչ հառաղլուխ մարդ ես ելել տո՛, դու ա՛նհամ.
«Տուքուն իմն է. վորը սիրաս ուզի, քեզ են կը տամ.
Իմ քեֆը չե՛ս, վոր քո սըրտի ուզածն անեմ.
Տերը չես եմ. ասդը չե՛մ տալիս, կաղը քեզ բաշխեմ»:
Ուռքերը իրար հատավ, տուր ու դըմբոց լավ չաղացավ,
Մեկին իր բահը, մյուսն վոչխարը ուսին դրած՝ դնացին դեղը:
Վորդեանց վորտեղ՝ դեռ դեղը չի հատած,
Մեկ խուլ պատավ ոտատ եկավ նրանց,
Վոր հարանեիցը խըռովել եր, եվ չե՛ր ուզում,
Վոր չետ գառնա: Ենպես կարծես իրան միջումն,
Թե նրանք խնդրում են՝ վոր բարըչի, ու անատամ
Բևռնուքն սկսեց գալ աս բինդալ անել, գոռալ:
«Դժոխքը կերթամ, նրանց սև չերեսն ինձ մի՛ք ցույց տալ»:
Աչխարքումըս ամեն բան եվ եսպես է ըլում.
Յերբ խուլ մարդիկ մեկմեկու չե՛ն հասկանում:

ԱՌՅՈՒԾՆ, ԱՂՎԵՍՆ ՑԵՎ ԵՇՆ

«Վե՛ր կացեք, դնա՛նք վորս՝ ե՛չ յեղբայր, ա՛ղվես».
Հրամայեց առյուծն թագավորի պես.
Վորան արին չուռուվ, կաչին հանեցին
Ու քերթած միսը մեկ տեղ դասեցին:
Առյուծն մեր իչին ասաց բաժանել,
Ցեվ նա եվ արդար սկսավ ճոթ անել:
«Այ յերկարակա՛նջ դու, հառաղլո՛ւխ՝
Եղ ի՞նչ ես անում», ասաց և նրա դլուխն
Բամբաչեց, չարդեց, իչին սպանեց:
«Այժմ դու բաժանի՛ր». աղվեսին ասեց:
«Ցերկուսս ենք մնացել, եվ դժվար չի՛ ըլել,
Ցեվ ինչպես հարկն է, այժմ բաժին անել»:
Եշն նահատակ ենտեղ եր ընկած.
Ել կարե՞ր աղվեսն բաժանել արդար:
Մեծ բաժին տալով առյուծին՝ ասաց,

«Ինձ չե՛ հարկավոր, վորքան կամիս, ա՛ռ»։
«Այ խորամա՛նկ դու՝ քեզ ո՞վ սովորցրեց
«Եղ խելքն բանացնել»· առյուծն հարցրեց։
— «Մի՞թե վարժապետս եսաեղ ընկած չէ՞,
Վոր յես անխոհեմ քեզ հետ չարժեյի»։
Մի՞թե չատ մարդիկ, վորք խղճմտանք չունեն,
Աղքատ մարդի հետ վո՞չ եսպես չարժեն։

ԱԵՏԱՔԵՆԵՒՆ ՅԵՐԻԵՒԱՑՆ (վոր կամի ամեն բան իմացող)

Մեկ վոքը ապչիկ՝ վոր դեռ հինդ ամաց եր։
Մեկ մեր ուներ, վոր ամենին սիրելի եր։
Գեղումն հանդարտ իրանց տանը կենում էյին։
Մեկ առավոտ մայրը կանուխ տանիցն ելավ
Ու իր զաւակն դուս դնալիս պատվիր տվավ։
«Սի՛րելի իմ, ես սունդուկին դուռ ձեռք չի՛ տաս։
Վոր յես դառնամ, քեզ կբաշխեմ։ լավ իմանա՛ս։
Բանալիքը տատ կիծողում։ բայց չմոռանաս,
Ու սունդուկը առանց ծծմորդ քեզ ու քեզ բանաս»։
«Աչքիս վրա՛, ղլխիս վրա՛, ապչիկն ասաց։
«Ցես քո խոսքը յե՞րբ կը կատարեմ, մխամխա կա՛ց»։
Հենց դուրս դնաց մայրը, թե չե, դուռը փակեց
Ամմիա ապչիկը և սընդուկը խոհուն բացեց։
Են ոսկեն մեկ ապակին միջից թռավ,
Ու թևերը թափ տալիս չուչխն դիպավ։
Ինչ կար չկար ստոլի վրըա դիսի վեր ածեց։
Աման, չաման ի միասին ջարդեց, փշրեց։
Ինքն էլ խոհուն տանիցը դուս թռավ քենքը քոքած,
Շատ էլ հարայ ավեց, գոռաց, ղլուխը ծեծեց
Մեր անհնազանդն։ բայց քնավ վոչինչ չը քաշարեց։
Մայրն ուշացավ, ապակին թռավ, ինքն էլ ոսկած
Մինչ իրիկունն՝ պատիժն առավ վեր ընկավ մնաց։—

ԱՂՎԵՍՆ ՅԵՎ ԱԳՈՒԱՎԻՆ

Խորամանկ աղվեսն սոված չըկելով՝
Տեսավ մեկ ագռավ ծառի վրա նստած։
Մեկ կտոր պանիր կոցին ունելով,
կամել ճաշակել իշտահը քոքած։
Աղվեսի վոսկերքն խոհուն գող ընկան,
Ջոռով պահանջել, կամ խլել չե՛ր հնար։

Տե՛ս վո՞ր հնարյուք չանա անիրավն
Վորպես հիմարին յուր յետին պաշար։
Քնճքնճալով, մնճմնճալով,
Դես ու դեն ծուլ ըլելով,
Մեկ պոչն եր խաղացնում,
Մեկ պլուխն եր չարժում։
Մինչ խեղճ ագռավն իր սովն մոռացած,
Ախուչ կտրեցավ, մնաց զարմացած։
Թե ի՞նչ պետք է ըլի ես նոր թամաշեն,
Վոր իրան որը յերբեք չեր տեսած։
Եսպես կեղծավորն եկավ ծառի տակին.
Ձե՛մ կարող պատմել, թե ինչքան պլուխ տվեց,
Ու գովել սկսավ բյուր հազար տեսակ.
Մինչև նրա պլուխն լավ բարձի յեղեց։
«Ես ի՞նչ եմ տեսնում, հավատա՞մ աչքիս,
Դրախտի՞ցն ես յեկել, Թռչո՛ւն պեղեցիկ.
Աչքերդ քցելիս, լույս ե վեր թափում.
Թևերդ չարժելիս, վոսկի յե վայլում։
Ով կասի՛ թե դու՛ դուշ ես.
Թե դուշ չե՛ս, դու լույս ես։
Ցերբը վոր քեզ տեսի, եվ փառքն աչխարհիս
Աչքս չի գալիս, հավատա խոսքիս։
Ախ թե մեկ այսոր յես լսեմ ձայն, եվ,
Դարձ չի՛ մնալ սրտումս, վոր թե մեռնիմ եվ։»
Հենց հիմար ագռավը լսեց ես բանը
Թե չե, թևերը թափեթափ տալով,
Վիզն յերկարացրեց, վոր տա իր ձայնը։
Մեկ եվ են տեսավ, վոր քաղցը իշտահով
Աղվեսն նրա պանիրը անդ կամաց կամաց
Մշրելով եվ չե՛ր լսում նրա կռավոցն։
«Հերի՛ք ղոզուս՝ յոսար անասո՛ւն.
Գոբտե՛րն եվ լսելիս քո թշվառ ձայնը,
Ջահլաքուշ են ըլում ու ջուրը թափում,
Ինչ ուզում եյիր, ահա՛ ստացար
Ու քո հոր խերին անջախ կչտացար»։
Եվ ի՞նչ կարող եր անբախտ ագռավը
Աղվեսին անիվ, թեկուզ վոր տրաքեր։
Թե մոտ եր յեկել, չար անիրավը
Իրան եվ սաղ սաղ կուտեր, կմարսեր։—
Եսպես եվ և մենք միշտ պետք է անենք,
Ստուտ խոսքից չխաբվենք, մեր չափը ճանաչենք։—

ԾԵՐՈՒՆԻՆ ՅԵՎ ԱԳՈՍՏԻՆ

Ծերունի մի ալեզարդ, վաստակոր,
Յերիարհանդերձ լայնաթև, ծոցավոր,
Մեկ մեծ անբվոզոմյա, մեկ հատու դավատան
Իր ձեռին բռնած, գնայր լուռ, անձայն։
Իր շատ ման գալուց ոտած, բեզարած,
Ագռաւն եւ մի քանի ցորեն եր գտել։
Հենց են եր ուզում, վոր ժողովի նրանց
Ու տանի իրան ճաղերը կերակրել։
Մեկ եւ են տեսաւ, վոր մեր ճամբորդը
Գայլը ամբամբալով, աուս և ծանրաքայլ։
Շորերն յերկար, մորուքն յերկար,
Եւ ի՞նչ պետք է ագռաւն նրանից վախենար։
Ենպես եր գնում մեր աուրը ծերունին,
Վոր խեղճ ագռաւն իր մտքումն ասաց.
Թե հապես իսան աստուձս ճամբին
Մարդի չի՛ վնասել, տեղը մնաց նստած։
Բայց վոտքամելու գլխին են յեկաւ,
Ինչ վոր գալիս է միշտ են մարդկերանց,
Վոր չորսվը խաբվին, ու իրաւ, անիրաւ
Թալլ տան միշտ զրծել տանից խղճմտանաց։—
Հենց մոտեցաւ թե չէ անգութ ծերունին,
Աչքը չի՛ վերցրեց, վոր անդ ի գաշտին
Ագճալի թռչունն անտես իր համար
Կամեր ժողովել տակաւ ինչ պաշար։
Եւ վոչ մերքեցն, վոչ իր լայնցն չի՛ ամաչեցավ.
Ու գնալով կամաց,
Ենպես ոտոտիկ խրեց պինդ գավազանավ,
Վոր ագռաւի վոտն վչուր վչուր ելավ։
Շատ եւ թրպրտաց, ի՞նչ կարեր անել.
Եւ սուգ ու չխման չեր կարող ոգնել։
Լաւն եր, վոր չոմախն թևին չի՛ դիպավ.
Ու մեր ծերունվուն գատաստան տարավ։
Բայց ո՞վ չի՛ գիտի՝ թե շատ ժամանակ
Մեր գատավորաց խելքի բնոճակն
Մեր անբախտութեյունից գատարկ և լրում
Յեվ թե խեղճ մարդիկ ի՞նչ ցավ են քաշում։
Ենպես մեկ քնճռոտ բհիր գատավորի
Պատահեցավ մեր ագռաւն խղճալի։
Շատ եվ վոր խելքին զոռ տվեց ու մտածեց,
Նրա մեկ վոտն եվ կտրել հրամայեց։—

Բայց մեր ագռավի փոքրիկ ղլխուժը
Շատ խելք կար, քանց նրա անտաշ դողրուժը։
Ինչ ոգուտ դրանից ինձ և աշխարհքի,
Թեկուզ վոր դրա մեկ ձեռն եվ կտրվի։

Եվի միամիտ ու անմեղ մարդիկ
Տեսնելով դրա չոլքն, մորուքն ձիվ.
Անպատճառ կխաբվին, ու շատ կվնասվին,
Յեվ ինձ պես վտանգի միշտ կհանդիպվին։

Հրամայի՛ր, վոր քեզ մկրատ մի բերեն,
Դրա յերկար մորուքն խուզեն։
Ա՛ռ դրա գավազանն, ու տերմոդրամյան.
Վոր ամեն տեսնողը սարսին և դողան։

Ու եղ այլի յերկար չորի վոխանակ
Թո՛ղ հագնի թվաւոր ամեն ժամանակ
Կարճ հանդերձ, վոր դրանե ով վոչ վոր տեսնի,
Պահի իր ղլուխը, բայլ տակ չընկնի։

Մեր գատավորի գատարկ վերնատանը
Փոքր տեղ արեն մեր ագռավի բանքը
Եատուր համար նա իսկույն հրամայեց,
Մեր ալեւորի պոչն ու ղլուխն խուզեց,
Եսպես ինչպես մեկ անպոչ կեչեղակ,
Կամ վետրած ագռավ մեր լողլող մղպեին
Ուր վոր գնում եր, մարդիկ թե անբանք
Նրան տեսնելով՝ միշտ հեռանային։
Վա՛յ նրան, վոր չորին հավատ կընծայի։
Ու առաջ մարդի սիրան խմանալ չի։—

ԶՈՐՈՒԹՅԱՆՆ ԳԻՆՎՈ

Գինին՝ գորդ ե՝ բայլ մարդի վնաս և տալիս,
Ու շատի սիրտն աուրը տիճորի հոտն առնելիս,
Դող ե ընկնում, ուշ ու միտքը, խելքը գնում.
Բայց մեղավորն մարդն ե, և վո՛չ աուրը բաժակը,
Վոր չափից դուրս դործ ե ածում աստուձո նվերքը։
Քա՛նի տխուր սիրտ, քա՛նի դարդոտ մարդ
Իրանց դատն որերը միշտ մոռանալով՝
Հենց պռունկն են առնում են քաղցր չարքաշը,
Թե չե, ցավ ու հոգս մոռանում չուտով։
Բայց Մահմադն իրան ազգի բնությունը
Լավ ճանաչելով, ու վինու զորությունը,

Ղուռանի մէջումը սառոիկ արդելեց
Ու ղինի խմողին թուղ պատիժ կարդեց։
Մեկ խան ավելի քեֆին նայելով,
Ու ղուռանի խոսքը սայմիշ չանելով,
Թաղուն ղինու հետ լավ սեր էր քցել,
Շահն լսեց թե չէ, հրամայեց կանչել։
Ամեն իրան դլուխը դորդելու խաթիր
Սկսավ մեկ լավ հնարք դարձ ածել։
Ընկավ քաղաքը պուճախե պուճախ,
Ման եկավ, ճարեց մեկ քոռ ու մեկ կաղ,
Ու ենպես աղքատ, վոր մեկ թել ճղելիս
Հաղար կարիատան հետը դուրս կ'ին դալիս։
Շահի մոտ ենպես սուիրա եր քցած,
Վոր տեսողի աչքը մնում եր սառած,
Ու բերնի ջուրը թափում եր դնում։
Եվ մանջալ կտային քոռն, կաղն և աղքատն,
Վոր եսպես սուիրա իրանց որումըն
Երազումն էլ բնավ դեռ չէյին տեսել։
Իշտահն քոքած, սկսան քեֆ անել,
Շահն էլ մոռացան, իրանց վիճակն էլ։
Գինու հարաբաթն սկսավ նվրդրծել։
Ու նրանց կատարն ենպե՛ս ատքացավ,
Վոր սև ու սպիտակ էլ չէյին ջոկել։
Ես մէջտեղումը մեր քոռ դոնաղը
Թասը վեր առավ, տվեց դինու տակը,
Լցնում եր, վեր ածում, էլ կրկին լցնում,
Միշտ ձայն եր տալիս ու դովասանում։
«Փա՛հ, վա՛հ, վա՛հ ես ի՛նչ աննման դուն ա,
«Լալազար և տո՛, ճչմարիտ, լալազա՛ր»։
Կաղի հերթն ու չիդրն ենպես չարժեցավ,
Վոր քիչ մնաց քոռի դլուխն ուղեց պոկի։
«Ինմում ես, խմի՛ թե չե վեր կկենամ,
Ու դլխիդ ենպես մեկ քացի կտամ,
Վոր դուդդ ու բեյինդ քթովդ դուս կդա»։
Տո՛ւր, հոդին հանի՛, թող դա սառակի։
Ով վոր քեղանից Ջաւիմա կուդի,
Իմ ջանն ըլի սաղ, յես կը վճարեմ,
Ասաց աղքատը, դլխիդ կանդնած եմ։
«Քո մեծությունը, խանը արդ արեց,
Գինու դորությունը այժմ դու լավ տեսար,
Թե ի՞նչպես կաղին նա վոտքը բաչխեց,
Ու քոռ մարդին աչք, աղքատին դրամ.

Եվ մի՛ դնամիչ անիր ծառայիդ,
Վոր չի հնազանդ կենում հրամանիդ։»

Ի ՎԵՐՑ ԴՈՒՐ ՏՍՐՎՈ

Գնաց հին տարին միշտ անդառնալի,
Մոտավ նա ի ծով խոր ժամանակի։
Ինչ վոր մենք տեսանք՝ թե չար թե բարի,
Եվ յետ չեն դառնալ հազար աշխարհի։
Շատ մարդիկ հերու մեծ հույս ունեյին,
Թե չե ես տարի, այլ շատ ժամանակ
Կյանք վայելելին, լավ որ քաշելին.
Այլ կիսատ մնաց նոցա իզձ, փափաք։
Քանի բարեկամք, ծնողք, սիրելիք
Դեռ չան և սպան յուրյանց սիրելիս՝
Մեռյալքն մեռան, այլ քաղցր հիշատակ
Նոցա միայն մնաց անմոռաց աստիս։
Շատ աչքերից և շատ սրտից
Դեռ չե՛ն պակասել արտասուք, կսկիծ։
Աչխարհ ամենայն ուրախ և այսօր,
Բայց նոցա հոդիք տխուր, սդավոր։
Ախ ո՞վ է տեսնում, թե նոր է տարին.
Եվ նույն արեգակն, նույն որն ա ծագել.
Մենք ենք մեծանում, մեր կյանք պակասին,
Բայց լինքն ժամանակն յերբեք չի փոխվիլ.
Ցերազի նման մեր կյանք անցանին,
Թե վաղն լինչ կը գա վո՛չ գիտեմք այսօր։
Այլ նա միայն մնա անմահ հաչխարհիս,
Վոր ես կյանքումը մեկ լավ բան դործեց։
Հայրն յերկնավոր վոդորմելով մեզ՝
Պահպաց զանգին կյանս ձեր ծնողք սիրելիք։
Վորքա՞ն խնդություն և մխիթարություն մեզ,
Վոր ձեր հետ սկսանիմք այժմ նոր տարի։
Անգին ծնողք մեր, այս նոր տարի և որ
Բարի, ընորհավոր լինի ձեզ այսօր,
Շատ տարի այսպես առողջ և անխորճ
Տացե վայելել ձեզ հայրն յերկնավոր։
Ներեցեք՝ թե մեր դործք յերեխական
Ցավ լինչ հասուցին ձեզ բազի անդամ։
Այլ մենք խոստանանք նոր տարվույս սկզբան
Հնազանդ կալ ձեզ միշտ, կատարել զձեր կամս։
Աչք ձեր խնամառատ յերկար ժամանակ

Քաղցը լեցի մեզ վրա, ուրախ և պաշտպան,
Թե զործով վոչ տանք ձեզ ինչ վոխանակ.
Գոհ սրտով լինինք ձեզ միչա որհնարան:

ԾՆՈՂԱՍՏԵՐ Ա.ՂՋԻԿՆ ՑԵՎ ՍՏԵՓԱՆԳԻ ՍՏԵՓԱՆՅՈՒՆՆ

Որն մըմնել ևր, սկսավ հանկարծ
Յերկինքը սևանալ և վայրաստակիլ:
Մարդիկ, թե թռչունք թմրած, ասահատ
Փախչելին ի տուն, կամելին թագչիլ:
Ամպն դուռայր, մռնչեր
Կայծակն վայլեր, թոթափիլր,
Յեվ բոլոր յերկինքն կամեր կոփծանվիլ:
Կատաղի քամին մոլալ ձորամիջն,
Կամեր խորտակել լյառն և անտառ.
Սպրտավ, արհավիրք տիրեր ամեն տեղ,
Յերևեր՝ թե սուդ ևր պատել աշխարհ:
Ծառք ատամնին, ճռընչան.
Վեմք հեծեծեն, դղրդան.
Յեվ բոլոր բնութիյունն սպառնա չարաչար:
Զիավոր մի անդեն, ճամփեն մոլորած,
Մտանե ի ձորն, վոր անճեն պահպանի:
Հաղիվ նա կարաց մեկ քարափի ցած
Թագչիլ, վոր իր ղլուխն վորձանքից պահի:
Հանկարծ լսե ճայն լալս
Աղետալի ի ձորս.
Յեվ սիրտ ոտարին կսկծա մորմոքի:
«Ա՛ռ, տա՛ր ինձ քեզ հետ՝ ղե՛տ դու կատաղի.
Ա՛ռ, ինձ կորցրո՛ւ, տար ինձ հետ ալյացդ:
Դու խլեցիր բոլոր իմ վառքն հաչխարհի,
Դու ինձ զրկեցիր համենայն բարյաց:
Աչխարհքն ինձ համար սուզ ե և խավար:
Իմ կյանքն ինձ համար դառն, անտանելի:
Թո՛զ մահն ինձ տանի, յես մեկ որ առաջ
Վոր թե մեռանիմ, սիրտ իմ դադարի:
Անկո՛ւշտ, անիրա՛վ, ապյան ծարավի.
Անմեղ ծնողք իմ պի՞նչ արարին քեզ:
Հովացա՞ր արդյոք՝ դետ դու ամեհի.
Միթե նրանց արյունն կշտացո՞ւց քեզ:
Բայց ի՞նչ, եմ ասում: Սիրտս հոսանա.
Լսե՞ք դուք արդյոք ձայն հառաչանաց,
Ծնո՛ղք սիրելի՛ք՝ վորք ինձ անինա

Զոհ ամիք ցավոց, դնացիք դուք անդարձ:
Ախ ձեր սիրտ բարի, ձեր դուխ ծնողական
Վոչ չարժի, վոր յես ատա այգքան տանջիմ,
Ընդե՞ր վո՛չ կամիք և ինձ անպաչտպանս
Տանիլ առ ձեզ անդ, ուր յեսն կարոտիմ:

Յերկինքն եմ նայում, դուք վոչ յերևիք,
Յերկրից ինձ համար վաղուց հեռացաք:
Թե դեսն եյ ընկնիմ, կարե՞մ ձեզ հասնիլ,
Վոր ձեզ հետ լինիմ, ինձ չի մոռանայք,
Դու դպաս իմ ցավս յերկինք դիմառատ,
Դու ինձ հետ ցավիս՝ վորպես սեռանեմ:
Այլ ընդե՞ր վոչ դա կայծականց մի չանթ
Խորտիլ դիմ սիրտ, վոր յես դամ առ ձեզ:

Դու դնաս հանդարտ և վոչ պակասիս,
Յեվ իմ արտասուք թաղին անազատ.
Բայց ա՛խ, քո հեզեղք ի ծովն դաղարին,
Այլ իմ լացն սուզ ինձ մաչեն խոպառ»:
Այսպե՛ս հեծեծեր աղջիկն սգավոր.
Յեվ քամին առյալ ճայն լալո նորա,
Տաներ ի քարաւին, ուր եր ձիավորն,
Քաղեր և մաչեր սիրտ հոգի նորա:

Որն սկսավ պարզիլ, լուսանալ,
Ամպք դադարեցան սակավ առ սակավ:
Յեվ յերեկոյան չորն լուսածավալ
Ի ձորն և ի դաչտ կրկին վայլեցավ:
Խոկուն ձիավորն վչտահար սրտով
Գնաց ի պետաւին, ուր դայր ճայն լալուն:
Այլ ինչ նա տեսավ, կարե՞ պատմել ով.
Ո՞ւմ լեզու կարե նրա տեսածն ասել:

Աղջիկ մի անմեղ հրեչտակատեսիլ
Ծնկան վեգրա ընկած և բազկատարած,
Գեղեցիկ աչքերն յերկինքն կպծած,
Այնպես կայր ուղղյալ անխոս և անչունչ:

Իր չատ լալուն ճայն նորա հատյալ,
Աչքերն խորշոմյալ ի դառն արտասվաց.
Հրեչտակի նման անդ լուսավայլյալ՝
Յերևեր նրմա հոգին ավանդած:
Փարացավ ոտարն. մերձենալ կամեր,
Այլ վոտք յուր չդրեր վոր նրան մոտենա:
Ի հեռուստ կանգնյալ՝ մինչ հոգոց հաներ,

Հանկարծ ինչպես քնից ապշին պղատանա,
«Ձայն քո կսկծալի սիրտս իմ ասչորե,
Քաղցր իմ որիորդ՝ ընդե՞ր այդքան լաս։
Թե քեզ աչխարքումն ոդնել ինչ կարե,
Ասա՛, յես իմ կյանքն պատրաստ եմ պոհ տալ։»
— «Աչխարքի բարիք մեռյալ են վասն իմ,
Իմ բարիք և կյանք ահա աստ թաղին։
Թե կա ինձ այլ ճար, յես չուտով կամիմ,
Վոր և իմ վսակիքս աստ դադարին.
Տեսանե՞ս այս դետ վրսիրուն, սիմեհի,
Այս գաժան հեղեղ վակույց իմ վսղջ հույս.
Փոքր ժամանակում աստ մայր և վորդի
Ջնջեցին յուրյանց կենաց ադնիվ լույս.
Դառնապետ կսկիծ մահվան մոր իմո
Աբար խղճալի հայր իմ հուսահատ։
Շուտով միանալ ընդ ամուսնուն յուր
Նա մեզ վորը թողու և սուգանի աստ։
Վորպին հարատատ ցավս այս տեսյալ՝
Յեվ ինքն անկանի ազատել յուր հայր։
Այլ յերկոքին և դի անշնչացյալ՝
Չանյալ ահա կան հայոմ ճորտվայր։»
Ասաց և անշունչ անկյալ ի վերա
Սքալից տապանին կայր անշնչացյալ.
Յեվ լուսափայլուն անմեղ դեմք նորա
Թվեր զջերմ հոգին յերկնից նվեր տալ։
Խղճահար ոտարն կծկյալ ի վերա
Անքաղդ ցավալվույն ապեխարչ սրտիվ,
Գրկե և տանի ի տուն յուր գնա,
Մինչև ժամանակն վարատյալ զցավն,
Մինչև վիրավոր սիրտն սակավ սակավ
Բուժյալ ի վշտացն՝ որիորդին նմա
Լինի վորդեվիր քաղցր և սիրելի։

ՀԱՅԱԶԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՅԵՎ ԹՂԹԵՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԳՐՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեզուն անչուշտ ամենաազնիվ գործիքն է, վորի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, առանց վորի վոչ անհատը, վոչ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չեն մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին: Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, գոլանում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը: Ինչպես առանձին անհատի մոտ տարիքի աճման դեպքում, այնպես էլ յուրաքանչյուր ժողովրդի մոտ նրա հոգևոր զարգացման աճման կամ նվազման հետ միասին լեզուն էլ բոլորովին այլ կերպարանք է առնում: Ո՞վ կարող է ժխտել, վոր մեր ամբողջ հոգեկան զարգացումը, ինչպես և մեր լեզուն, ղեկավորապես կախված են այն պայմաններից, վորոնք մեզ վրա քաղաքական ազդեցություն են ունեցել: Կրթական հիմնարկների և վիճակի հետագոտության բացակայությունը, չվումն այլ ազգերի հետ, ոտար լեզուների իմացությունից գաղած արտաքին ոգուռը,— այս բոլորն առանց այն էլ արդեն բավականաչափ ուժեղ հիմք են, վորոնց պատճառով մենք կարող ենք մեր լեզուն հակամայից անտեսել: Յեվ յերե մի ժողովուրդ քաղաքակրթված պետությունների մեջ յենթակա յե այս ազդեցության, ինչպես ցույց են տալիս հին և նոր ժողովուրդների օրինակները,— չոթլանդացիները՝ անգլիացիների տիրապետության տակ, բոհեմներն ու հրեաները՝ դերմանացիների, սպանացիների, ֆրանսացիները ու անգլիացիները՝ հռոմեացիների և այլն,— ապա այդպես չե բոնապետական յերկրներում, վորտեղ աշխատում են ամեն ոտար և ազգային բան բռնությամբ վոչնչացնել: Յեվ յերբ մի ժողովուրդ դժբախտություն է ունենում իր յերկիրն ու ինքնուրույնությունը կորցնելու և իրեն իր սեփական հայրենիքում վորպես ստրուկ զգալու,— իսկ այս ավելին է ասում, քան այդ ամենը,— այլևս կարո՞ղ է նա ի վիճակի լինել մտահոգվելու նրանով, վոր գրագիտ գրականությամբ ու դիտությամբ, չե՞ վոր գրա հա-

մար անհրաժեշտ է, վորպես հիմնական պայման, ազատագրության, բարեկեցության և անդուլ ինքնակատարելության կոչմից:

Հայաստանի ճակատագիրը հայոնի է ամեն մի կրթված մարդու: Մոլի-բռնապետական պետությունների ծանր լծի հնչման տակ՝ Հայաստանի հայրենազուրկ զավակները վազուց են հետացել իրենց յերկրից և սպասանել համարյա բոլոր աշխարհամասերում: Այս հանգամանքն է յեղել պատճառը, և վոչ թե առևտրական վոգին, ինչպես վոչ բոլորովին իրավացի կերպով կարծում են մի քանի յեվրոպացիներ,— վոր հայերը վտարվել են իրենց յերկրից: Իսկ յերկրում մնացած իրենց յեղբայրակիցներին միայն գուլբի և կյանքի գնով են կարողացել իրենց սուրբ հայրերի անունն ու իրենց կրոնը պատմության բեմի վրա պահպանել: Իսկ նրանց ազգային ինքնուրույնության ու լեզուն հաղարամյակների ասաջ կորել են ամեն ինչ խորտակող ուժեղ հեղաշրջումների հոսքանքի մեջ, վորի նմանը հաղիվ թե մի ազգ աշխարհամասում յեղել է:

Վորքան էլ հին հայերեն լեզուն իր արտակարգ հարստության, իր կատարելության և իր գրական արժեքի կողմից բարձր լինի, այնուամենայնիվ այդ լեզուն և միակ արվելակող պատճառը, վոր հանդ ժողովուրդը մինչև հիմա գուրկ է մնացել գարգացման միջոցներից:

Սակավաթիվ ընտանիքներ, վոր բարեբաստիկ կերպով հայրենիքից հեռացել են, վոխարինում են իրենց կենցաղն ու լեզուն այն ժողովրդի կենցաղով ու լեզվով, վորոնց մոտ ապրում են: Նրանք բոլորովին մոռացել են իրենց մայրենի լեզուն, ինչպես այդ տեսնում ենք Լեհաստանում և Թյուրքիայում, մնալով ասլատել՝ Վրաստանում: Ժողովրդի մեծագույն մասը, վոր մնացել է Հայաստանում՝ գարեր շարունակ Թյուրքական ժողովուրդների ազդեցության տակ լինելու և արտաքին ճնշման տակ կռացած լինելու, ուրեմն և ամենատարբական խմացություններից գրկված լինելու հետևանքով՝ կենցաղի և տարազի հետ միասին ընդունել նաև նրանց լեզվի կառուցվածքը: Այդպիսով, առաջ է յեկել մի բոլորովին ուրիշ բարբառ, վոր ինչպես իր կազմով, այնպես էլ իր ձևով բոլորովին տարբեր է հնից և ամեն բանում նման է թաթարականին: Սովորական խոսակցության ժամանակ ժողովրդի բերանից լսում ես վոչ միայն թուրքերեն բառեր, այլ ամբողջ նախադասություններ ու դարձվածքներ: Մինչդեռ գրքի լեզուն մնացել է վորպես սեփականություն հոգևորականության, վորը— ինչպես նրա գասակիցները մյուս ազգերի մոտ— սկսեց այդ լեզուն եղոխատրոն դարձնել յեղիպտական գաղտնիք, վորպեսզի ժողովրդի աչքում ավելի գերք ու ակնածություն ձեռք բերի:

Զարմից շատ բարձր կարծիք ունենալով իրենց գասի առավելությունների մասին՝ հոգևորականները գրել և մշակել են այնպիսի բաներ, վոր վոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի վոգու հետ: Նրանց ամբողջ հոգևոր գործունեության ուղն ու ծուծը կազմում են աստվածաբանական մաքերը: Նույնիսկ պատմության գրքերում կամ այլ բովանդակության յերկերում նրանք ամեն ինչ վորձում են վերածել աստվածաբանության: Յեվ յեթե տեղ-տեղ տուիթ չեն ունենում յերիտասարդներին գատարկաբանելու, ապա նրանք ամեն կերպ աշխատում են նրանց ճաշակը գրավել մի-այն հոգուտ իրենց չափերի:

Սակայն այս էլ յերկար չտևեց: Յեվ այժմ, նույնիսկ, խոշոր քաղաքներում հանաթ են հանդիպում հոգևորականների, վորոնք հին հայերենից վոչ մի գաղափար չունեն: Յեկեղեցական արարողությունը կատարվում է պրարար լեզվով, աստվածաշունչն ու բոլոր յեկեղեցական գրքերը կարգացվում են գրաբար: Սակայն հարյուրից հազիվ մեկը կարող է այդ լեզուն հասկանալ, ուստի և բնական է, վոր ժողովուրդն սկսեց սիրել այն լեզուն, վորը նա լավ է հասկանում: Զարգացած յեվրոպացիները գարմանում են, վոր հայ ժողովուրդը, վորի ճակատագիրն ու բնակավայրը այդքան նպաստավոր և պահելիքի համար, այնուամենայնիվ այժմ վոչ մի բանաստեղծ չի կարող ցույց տալ: Սակայն ամբողջ գաղտնիքը հետևյալումն է.— հոգևորականությունը ծաղրել և այն ամենը, ինչ բանաստեղծական խմաստ ու գեղագիտություն ունի, վորպես իր գասի համար անվայել և գռեհիկ բան: Ժողովրդի լեզուն մնացել է անմշակ: Թուրքերենը նույնիսկ կանայք և յերեխաներն են հասկանում: Ուստի շատ բնական է, վոր ժողովրդի մեջ ականավոր և իր բնե բանաստեղծական ձիրք ունեցող մարդիկ թաթարերեն բանաստեղծելին և արտասանելին: Մի Քեչխղլի (քահանայի տղա), մի Սալահվելդի (Աստվածատուր) հանճարներ են յեղել, վոր մի ժողովրդի գրական վիճակ ու պատիվ կերերելին: Թաթարները հիանում են գրանց բանաստեղծություններին և յերգերի գեղեցկությամբ· մինչդեռ գրանք հայ են յեղել: Առանձնապես առաջինը, վոր մի քանի տարի առաջ մեռավ, վրաց էր և, չնորհիվ իր արտակարգ բանաստեղծական ճաշակի, թուրքական արքունիքում մեծ հարգանք էր վայելում*):

Չի կարելի ժխտել, վոր բարեկեցիկ ծնողներից վոմանց հաջողվում է իրենց յերեխաներին սովորեցնել գրաբարի գաղտնիքները· սակայն գրաբարի համար անհրաժեշտ է 10—15 տարի, մինչև վոր հնարավոր լինի վորոշ անկատար գիտելիքներ ձեռք բերել: Իսկ գրաբարը գործ է ածվում միայն գրքերում: Նույնիսկ հոգևորականները քարող տալիս խոսում են նոր հայերեն:

Դրան ավելանում է նաև մի հանգամանք.— մեր գպրոցներում ուսուցիչները սիստեմատիկ կրթություն չունեն, ուստի և ուսուցման մեթոդ էլ չունեն· աշակերտները հետ են մնում, և տարիներ են անցնում, մինչև վոր նրանք կարողանում են մի բան հոդվել կամ խոնարհել, սակայն չեն

---

*) Գրականության համար չափազանց արժեքավոր գանձ կլիներ, յեթե մեկը ժամանակ և միջոցներ ունենար հասարակ ժողովրդի բազմազան յերգերը, պատմություններն ու առակները հավաքելու և Յեվրոպայի հասարակությանը ծանոթացնելու: Սակայն այդ գործը կարող է միայն նա կատարել, ով արտաքին հոգսերից բոլորովին ազատ է:

հատկանում, մանավանդ վոր շատ ուրիշ առարկաներ էլ կան, վոր նրանց արտաքին դոյության համար շատ ավելի կարևոր են, քան այդ լեզուն: Հենց այդ հանգամանքն է պատճառը, վոր նույնիսկ շատ բարեկիրթ ընտանիքներ իրենց յերեխաներին չեն տալիս դրսերը սովորելու, այլ իրենց ժամանակն ու ջանքերը նվիրում են այլ՝ յեվրոպական լեզուներ սովորելուն, վոր ավելի ոգտակար է և դործնական: Յեվ խելոք յերիտասարդներն ի՞նչպես կարող են համձուլք սառնալ, յերբ նրանց ճեռքը տալիս են այնպիսի դրքեր, ինչպես սաղմոսը, և՝ այլն, վորոնք թե լեզվով և թե իմաստով անհամապատասխան են այդ յերիտասարդների ըմբռնողության ու հասակին:

Նոր հայերենը դրաբարի հանդեպ վոչ միայն այն առավելության ունի, վոր նա կենդանի ապրում և ժողովրդի բերնում, այլ և այն, վոր նրա քերականությունը վերին աստիճանի հեշտ է: Նա ունի, ընդհակառակը, միայն մի խոնարհում և մի հոլովում, մինչդեռ դրաբարը բազմաթիվ հոլովական ու խոնարհման ձևեր ունի: Ժողովուրդը թեթևարաբանում շատ խոսքեր ու դարձվածքներ է ընդունել և այժմ դործ է ածում: Կարելի յե լեզուն մաքրել դրանցից և լեզվին այնպիսի հատատուն ձև տալ, վոր դրաբարից շատ չհեղվի, սակայն այնպես, վոր հասարակ մարդու համար խոկ հասկանալի մնա:

Հին և նոր լեզուների դլխավոր տարբերությունը թեքման և շարահյուսության մեջ է: Դրաբարում, ինչպես և բոլոր նոր յեվրոպական լեզուներում, վորոշիչները, հատկացուցիչները, բացահայտիչները դրվում են վորոշյալներից, հատկացյալներից և բացահայտյալներից հետո, խոկ նախդիրները՝ առաջ, մինչդեռ նոր հայերենում—թաթարների նման— հակառակն է: Այսպես, որինակ, հին դրաբարում կասեին.—

Առաջի աան իմոյ կայ ծառ մի: Առ պարտիղի դրապիղոյն քոյ հոսի աղբիւր մի: Ես սիրեմ զառաքինութիւն քո: Համեստություն է զարդն երիտասարդության: Վոմանք յաչակերտաց ձերոց են ջանասեր:

Նոր լեզվով ասում են.—

Իմ ատն առաջ մի ծառ կա: Քո դրացու պարտեզի մոտ մի աղբյուր ե հոսում: Քո առաքինությունը սիրում եմ յես: Յերիտասարդության զարդը համեստությունն է: Ձեր աշակերտներից վոմանք ջանասեր են:

Այսպես և նաև թաթարերենում:

Նախքան Յեվրոպա տեսած լինելը, դեռ յերիտասարդ ժամանակ, իմ ջերմ ցանկությունն է յեղել նվիրվելու հայրենի յերիտասարդության դաստիարակության դործին: Ամենաբարի նախախնամությունն իմ նպատակին այնպիսի զարմանալի ձևով է կատար ածել, և մարդասեր կառավարության վողորմածության չնորհիվ իմ կրթության համար այնքան շատ—շատ չվատնած բարիք վայելեցի: Ուրիշ ի՞նչպես պետք է յես իմ յերախտապարտ չնորհակալությունն իշխանավորների և հայրենիքիս հանդեպ արտահայտեի, յեթե յես այս կարևոր հանդամանքը լռությամբ զանց առնե-

յի: Վոչ թե նորմուծության մոլությունը, այլ իմ հայրենակիցների ընդհանուր բախտավորությունն է շահագրգռել ինձ դիմելու այս քայլին: Դեռ յերիտասարդությունից եմ յես զնացել այս փշալից ճանապարհներով, և այժմ իմ կոչումը շատ պարզ ապացույցներ է տալիս դրա համար: Վորպես ղեկավար մի ղպրոցական հիմնարկի, վորտեղ տարեկան 200-ից ավելի յերեխաներ են վստահել ղեկավարությանը, ամեն որ այն տխուր պիտույքն եմ անում, թե այս ծանր դրությունից միայն մի կերպ կարելի յե դուրս դալ.— նոր հայերեն մտցնելով այժմյան դպրոցական հիմնարկները:

Այս դժվարին կացությունը փոփոխել կարենալու համար անհրաժեշտ համարեցի փորձել նոր հայերենի մի տարբերան դիրք կազմելու:

Այստեղ իմ նպատակն է՝ ուսուցիչներին, ինչպես և սովորողներին, տալ ուղեցույց տասնյին տարբերան պարապմունքների համար: Շատ եմ հանդիպել տերտերական կամ այլ դպրոցի աշակերտների, վորոնք տարիներ շարունակ կարդալ են սովորել, բայց յերբ յես նրանց մի դիրք եմ տվել կարդալու, այն դարմանալի պատասխանն եմ ստացել, թե նրանք սաղմոս կամ այլ դիրք են կարդացել, և վոչ թե այդ· իսկ դրել՝ վոչ մի տող չեյին կարող:

Այդպիսով, յես դլխավոր ուշադրությունը դարձրի այն բանի վրա, վոր հենց դրքի սկզբում, Նիմայերի և Սաեֆանիի սկզբունքներով ցուցում տամ կարդալու—դրելու մասին և հնչական մեթոդը ցույց տամ, վոր նախ յես ինքս մի քանի մանավոր աշակերտների վրա փորձել եյի և լավագույն արդյունքի եյի հասել, այնպես վոր աշակերտները տասնաձևերը ճանաչելուց հետո իսկույն կարողանում եյին ամբողջ բառեր ու խոսքեր կազմել և մի քանի որում սկսել հայերեն ու ռուսերեն կարդալ:

Յերեխաների մտածելու և խոսելու ունակությունը դյուրին յեղանակով զարդացնել կարողանալու նպատակով (վորովհետև մեղանում, նույնիսկ բարձր դասերի մոտ, մինչև հիմա էլ յերկտասարդության մեծ համեստությունն և համարվում, յերբ յերեխաները համր չարժմանքով են արտահայտվում, և վոչ թե խոսքերով)՝ յես աշխատում եյի ուսուցիչներին այնպիսի ցուցումներ տալ, վոր կան Նիմայերի, Կամպեյի և Կրաուզե մտավարժությունների մեջ:

Դրքի մնացած մասը պարունակում է ընթերցանության նյութեր, ինչպես՝ պարզ պատմվածքներ, վոտանավորներ, հետաքրքրական յերևույթներ Ֆիզիկայից և բնագատմությունից, բարոյակրթական պատմություններ — մասամբ յեվրոպական դասագրքերից, մասամբ իմ կողմից կազմված: Վորպեսզի մինչ այժմ իշխող դասավանդման սովորությանը շատ դեմ չդնամ, դրքի վերջում դրել եմ դրաբար հատվածներ:

Վորքան ինձ հայտնի յե, վոչ մի հայերեն դիրք չկա իմիս նման՝ թե լեզվի և թե բովանդակության կողմից· այդ յես պարտական եմ դերմաններեն վերցրի իմ իմացությանը:

Այժմ յես նյութեր եմ հավաքել իմ աշխարհաբարի քերականության

հրատարակության համար, վորով հին լեզուն էլ կարելի լինի սովորել ավելի դյուրին և ըմբռնելի լեզանակով: Այս էլ եմ ինքս փորձել փոքր յերեխաների հետ; մյուս ուսուցիչների միջոցով կերևակը եմ ավել դրա հիմունքները և ինձ համար չատ չոյող յուրեր եմ առացել բոլորից, թե փոքրահասակ մանուկներն անգամ մեծ ուրախությամբ ու յեռանդով են կանոնները յուրացնում և որերում այնքան են առաջադիմություն ցույց տալիս, վոր նրանք առաջ սարսնեռում չեյին կարող անել: Յեվ ի՞նչպես կարող եր անհաջողության մատնվել մի պոթ, վոր փարվում է այնպիսի մարդկանց սիրուններով ու հայացքներով, ինչպիսիք են Նիմայերը, Կրաուզեն և Կամպեն, վորոնք մանկավարժական աշխարհի վրա վայրկ առաջնեյն եյին:

Իմ ձրաման նպատակը, ինչպես և հայ ժողովրդի ճակատագիրը, կախված է միայն բարեխնամ կառավարության վճռից: Յեթե ինձ բախտ վիճակվի իմ այս առաջին փորձը կենսագործել, ապա յես իմ բոլոր ուժերը կդործադրեմ ինչպես վերահիշյալ քերականությունը, այնպես և այլ ազգակար դրքեր կազմելու և թեթև դրանով կովկասի ուրիշ ժողովուրդներին համար եյ ոգտակար լինելու: Մեր զպրոցի թեմար ուսուցիչ Միքրա Թաթալի Սխանդովը յուր հայրենակիցների համար արդեն սկսել է այս մեթոդով մի դասագիրք կազմել:

Հույները, նման անհրաժեշտության հետևանքով, թողել են իրենց դեղեցիկ հին լեզուն: Իտալացիք այդպիսի ուժ ունեցող լատիներենը փոխարինեցին իտալերենով: Այդքան չատ տարածված և գարեր շարունակ վորպես կրթական լեզու դործածված գլուխներենը հարկադրված եր տեղի տալ ժամանակի վտանն և պահանջին:

Մի՞թե մեր հայերը պետք է մյուս ազգերից հետ մնան և թողնվեն հոգեկան իսավարի այդպիսի սարսկական կապանքների մեջ: Սակայն սա մի առանձին անձի դործ չե, այլ բարեհաճ ընդհանուր բարերարության մասին այնպես հայրարար հոդացող իշխանության դործն է: Վորքան էլ նախապաշարմունքներն ու անհավատությունները առաջին փորձին վորոշ չափով դեմ դնան, այնուամենայնիվ ճշմարտությունը և այդպիսի բարձր նպատակների ձգտումը կհաղթանակեն յերջանիկ գալիքի համար:

ՆԱԽԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ

Բանը կտրվել ա, ննտել ա՝ դարդակ դարդակ գլխիցը դուս տվել: Ինպես մասապիէը մեր պատուներն էլ գիտեն և այլն: Այսպես պատեցին պատաքննիչք իմ 'ի ձեռն առնուլն անդ գայլ գիր, որոց միտք 'ի ծայրագոյնս և ի վերինս հանապազ օգտապարեն՝ գանց գայնոս արարեալ՝ որ ընտանեն է, բնական և սովորական մտաց և հոգւոյն բանականի: Այլ խոսիլ ընդ մանկանց՝ լեզուաւ մանկական, ածել զնորակիրթս աստիճան առ աստիճան 'ի վեր, նոցա միանգն է յատուկ՝ որոց քաղցր է անմեղ հոգի և թեթև պատաջումն ազգական, որոց յիշողութիւն զեռ կենդանի ունի զանմնան իդձ և ցանկութիւն, դիկերպ դաստղութեան, նա խակ և զեռագս անդամ մանկական իւրեանց հասակի: Որք 'ի փորձոյ ծանեան զմատաղ հոգի ազգոյդ՝ որոց բիւրեցս անդորժելի է զպատմութիւն ինչ լսել հասարակ՝ զերաց սովորական, քան քեռնիլ զմիտս իմն քերթուածովք հեթանոսական:

Ձիդն առնեայն քաջահմուտ դաստիարակի պարտի յոյս սակս գայն միանգ նպատակ 'ի սկզբան ունել առաջի՝ ուքնել բանալ զմիտս աշակերտողն ինքեան՝ յըմբռնումն և ի ճանաչողութիւն առնեայն առ նոսա մատակարարելն ուսմանց, բայց ի՞ւ հնար իցէ 'ի կատար ածել գայս, այն ինչ առնեայն ուսումնական գրեանք Հայկազեանս մեր լեզուի՝ գլխովին թէ տրամադրութեամբ բառից և ոնոյ, և թէ նիւթոցէ գրուածոցն՝ օտար են և անընտել մանդամանց սովորական բարբառոյ, հոգեկան կարողութեանց և բնական ախտրժանաց գեռահաս մանկանց:

Հի՞մ ծանր և գործնի պարտի երևիլ նպատակրժին այն գիրք՝ որոյ տուք մեռանիլք՝ ա՛չինչ իւիք գուարճացուցանեն զմիտս և գերևակայութիւն նորա, ա՛չ իւիք բանան և լուսաւորեն զհոգի նորա: Ուր հարիւրամեայ ալեւոր ամն առաջի առնէ նմա գիւրոյն ցամաքեալ դաղաթան գծնունդ 'ի բարբառս անլուրս 'ի բանս խրթնիմաց, ուր փափուկ սիրտ նորա ա՛չինչ գտանայ ճարակ ինքեան ախորժալուր, այնպիսի գրուանօք ի գիր իւր հաշէ, որպես հայնի սովորաբար մանկունք 'ի խառաբարս ծերունի ոք՝ որ գպրվական բարկութեան 'ի ձեռին կալեալ՝ գրկել կամի գնոսա յանմեղն լուսոյ: Բանի բախտաւոր համարին գինքեանս յաղատանդն նոցա յայսօրինակ բռնութենէ. և եթե ծնող ևս իցէ նոցա, նոքա գմահ առաւել ցանկան ունանել, քան գկերպարանս սոյնօրինակ խառատուն փիլիսոփայի:

Զսոյն ներգործութիւն ունիցի և ամենայն ուսումն՝ որ չէ՛ յարմար բնական ձգտմանց մանկանց: Ամենայն տուք իրրև գիւրաչք ծակոտիքք վիրաւորեսցեն գհոգի նոցա խառն: Այս խակ է պատճառն, գի բազմիցս դեգերեալ նոցա յուսմունս՝ մնան տակաւին անկիրթ, համարին քաջագործութիւն իմն գերօրինակ՝ ընթեռնուլ վարժ, բայց եթե գի՞նչ ընթերցանն՝ չէ՛ ի՛նչ նոցա վայել գիտել: Այլ եթե հաստնացեալք խակ զա՛յն մատեան միայն ընթեռնուն ախորժանօք, զոր հասկանան, քանի՞ ևս առաւել պիտոյ է և գեռահասից բանալ զայս ճանապարհ, որոց ամենայն հոգեկան զօրութիւնք գեռ յաղջամղջի կուրութեան խարխափին, որոց միտք, զաստղութիւն, երևակայութիւն, յիշողութիւն, հանճար՝ պարտին ուսմամբ պարպիլ և լուսաւորիլ, այլ ա՛չ օրըստօրէ նահանջել և խանդարիլ, որպես լինի հասարակօրէն յայս վայր:

Քանի՞ վայելուչ և խմաստալից գպրոց՝ քննութիւն, որ չըջապատի գիտօք: Գործառնութիւնիւ մարդոյ, զոր յամենայն բոպէի տեսանելիք աչքն մեր: Առարկայիւ սովորականք՝ որք չուրջ գիտօք: Իմանալ գանուանս, գձևս, գգոյն, գորպիսութիւն, գնպատակ, գնիւթ, գներգործութիւն ամենայն իրաց, ճանաչել և գտանել գամենայն՝ զոր լսեմք և տեսանեմք, գի՞նչ այլ ևս ծայրագոյն ուսումն հնար իցէ ցանկալ մարդոյն բանականի: Բայց

առաջնորդ ամենեցուն այսոցիկ է լեզուն, առանց որոյ մեռեալք է համայնն վասն մեր և ոչ կարէ ունել ընդդարձութիւն ինչ:

Ո՞ւմ չէ յայտնի՝ թէ ո՛րքան օտարացեալ է գրաբառ մեր լեզու ՚ի հասարակ գործածականէն և քանի՞ ամք հարկաւորին ՚ի լիակատար ճանաչումն կանոնաց նորա: Մինչ ցայն վայր ասնչին մանկունք ողորմելիք: վարժարանն թուի նոցա տանջարան, ուսումն՝ տանջանք և պատիժ սոսկալի, և պատճառ այսոցիկ ամենայնի է խրթնութիւն լեզուին:

Յայս սակս՝ և ո՛չ յանդուգն ձգամամբ առ ՚ի բառնալ զվնասովին զկիրառութիւն վասն լեզուի՝ որպես ոմանք ՚ի բարեմիտ անձանց բողոք բարձին և բառնան զինչն առ պարզամիտս, այլ բուռն եռանդեամբ՝ նպատաս ինչ մատուցանել զիւրընտել՝ մերոցս համապղպղ մանկանց զառաջին անգ մուտս յուսմունս զիտութեանց՝ հարկեցայ պատրաստել զայս ուղեցոյց զիրատարս, որով գո՛նէ՝ գրավարժուքիւն նոցա հասարակ՝ հեշտին իմն եղանակաւ բացցի: Թո՛զ պարտաւադիրք լիցին՝ որք կամինն՝ ինձ. պատրաստեմ զամենայն սիրով ընդունիլ, և յոյս իմ հաստատուն է՝ թէ ձեռնարկութիւն իմ այս որքան նորաձև և տարօրինակ իմն երևեսցի, սիրելի այնուամենայնիւ լիցի այնոցիկ, որոց վասն պատրաստեցան:

Կամք հաւատալ զասացեալս՝ թո՛զ լսս աստուածոյ զաստիարակն՝ նախքան զուսուցանելն զմանուկն՝ ընթերցցի պատմութիւն ինչ կամ ոտանաւոր աստի, և բան ինչ յարդի նկատել սովորական դրեանց, այսինքն ՚ի Շամագրէէ, սաղմոսէ, կտակարանէ և այլն, կամ բացատրեսցէ զնաւանութեանի և զկանոնս քերականութեան նախ քան սովորական ձևոյն, ապա քան այսմ՝ որ ՚ի սմին առանդի, յայնժամ ինքնին վարձիւ ծանիցէ թէ ո՞ր մասեան ցանկալի նկէ երեխային ունել վասն իւր: Փորձն՝ անաչառ դատաւորէ յամենայնի:

Զայս մի ինչ ևս արժան համարիմ ծանուցանել՝ թէ յուսումնարանս, ուր զարդիս ա՛նքան բազմացեալ են աւարկայք դիտութեանց և հապիւ որչին ժամք չորս յընթացս բոլոր շաբաթու յուսումն մերս լեզուի, անհնարին լինի յայնքան սուղ միջոցս տալ զմանուսւոր տեղեկութիւնն ինչ զնմանէ, յայս սակս ուսուցիչն կարէ կիւց ընդ ընթերցանութեան և զեռահաս մանկանց անդամ՝ տալ զհամառօտ ծանօթութիւն ինչ զզլխաւոր կանոնաց լեզուի և զանազան մասանց նորա առանց ցուցանելոյ՝ թէ նորա ուսանին զբերականութիւն (որ անուն՝ մեծահնչիւն իմն երևի լսելեաց առանց ունելոյ զիւր իսկական շահ). և ՚ի ծանօթացուցանելն զնոսա ընդ կանոնաց երկուց լեզուաց մերոց ՚ի վսեմութիւնս բառից, ա՛յն է ՚ի հոլովմունս և ՚ի խոնարհումունս և ՚ի ծանոթութիւնս յաւանդելոյն առաջնոր, ապա կարէ յայնժամ զարձուցանել տալ զմենայն պատմութիւնս, ոտանաւորս, և զնամակս պարունակեալս ՚ի սմին՝ ՚ի գրաբառ լեզու՝ որովք զիւրացեալ և առատացեալ միտք մանկանց՝ ինքնին արձակ համարձակ վարեսցին խնդապատար՝ կատարելագործել զինքեանս ՚ի դիտութիւն հայրենի իւրեանց բարբառոյ, զորմէ և խօսեսցի նոյնպես և յընթացս գործոյս: Ցետ որոյ մարթի է ՚ի ձեռս առնուլ զվանս գրուած ինչ՝ որպիսի է Մահի Աբելի, Տիլեմաք և այլն

և այնքան յաճախ տալ ընթեռնուլ մանկանց, մինչև ինքեանք ևս զօրեսցեն ըստ նոցայն հեղինակութիւն զրել և չարադրել: Յայս միտս պարտին ուսանողք լի բերան առնել զմենայն դասս իւրեանց, յաճախ կրկնել և անգիր զրել, ուր ըստ իմ կարծեաց չէ՛ այլևս հարկաւոր ճարտասանութիւն ինչ: Այսպես կրթեցան առենաբանք, բանաստեղծք, հռետորք Յունաց և Հռոմայեցւոց, զի գործնականութեամբ մանաւանդ՝ քան իմացականութեամբ ուսան զիւրեանց լեզուս: Այսպես բաղումք ՚ի զիւանատունս յաճախ գրութեամբ գամ մի առաւել ևս ուսանին էաց գրել և յայտնել զմիտս իւրեանց, քան զամս տասն ի վարժատունս լոկ արամբութեամբ կանոնաց քերականութեան և ճարտասանութեան:

ՀԱՄԱՌՈՏ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Յերևանի գավառական դպրոցի կացութեան, կազմի և գործունեության մասին:

1845 թ. հոկտեմբերի 24

Ամենայրք չեմ համարում, պարոններ, այս հանդիսին համառոտ հաշիվ ներկայացնել դպրոցիս կազմի, վիճակի և գործունեության մասին, հուսալով, վոր սրանով կկարողանամ ընդհանրապես տեղիս հասարակության ուշադրությունը դարձնել ուսումնարանական գործի վրա Յերևանում:

14 տարի կե, վոր գոյություն ունի տեղիս գավառական դպրոցը: Դրա հիմնարկության նպատակը, ինչպես և Անդրկովկասի բոլոր գավառական դպրոցների, հայտնի կե չատերին: Այդ այն է, վոր բնիկների մեջ տարածենք ռուսական և անհրաժեշտ դիտությունը և նամանավանդ ռուս լեզվի դիտությունը, և դրանով հետզհետե տեղիս ազգերին բարձրացնենք բարոյապես և մտավորապես: Մի չատ բարի նպատակ:

Այդ բարձր նպատակին իրագործելու համար, բարձր իշխանության հոգածությամբ, Անդրկովկասի մյուս դպրոցների նման, և՛ տեղիս դպրոցը բաժանված է յերեք դասարանի, վորոնց մեջ դասավանդվում են հետևյալ առարկաները—կրոն, ռուս լեզու, թվաբանություն, աշխարհագրություն, ընդհանուր և ռուսաց պատմություն, յերկրաչափություն, գեղագրություն, նկարչություն և գծագրություն: Վերջին յերեք առարկաները, այն է՝ յերկրաչափությունը, նկարչությունը և գծագրությունը մեղանում սկսված են նոր միայն:

Անդրկովկասի ուսումնական մասը կառավարում է գլխավոր կառավարության խորհրդի անդամ պ. դենեբալ-մայոր Անդրեյ Ա. Շերամ 2-րդը: Անդրկովկասի դպրոցների վերատեսուչն է արքունի խորհրդական պ. Ի. Գ. Դուլժինսկին:

Տեղիս գավառական դպրոցի պատվավոր տեսուչն է գավառապետ պ. կոլլեժսկի ասեսոր Ն. Վ. Բլավատցկին:

Վերոհիշյալ առարկաները դասավանդում են՝ ռուս լեզուն, աշխարհագրությունը և պատմությունը—տեսչի պաշտոնակատար և ուսուցիչ Ի. Աբովյանը, թվաբանությունը, յերկրաչափությունը, գեղագրությունը, գծագրությունը և նկարչությունը—ուսուցիչ Բանդուրովսկին, դրել-կարդալը ռուսերեն լեզվով և թվաբանության 4 գործողությունները առաջին դա-

սարանում—Ալեքսիովը, Հայոց լեզուն և կրոնը—սարկավագ Տեր-Հովհաննէսյանը, վորի անվը, նրա հիվանդության և քաղաքից հեռացած լինելու պատճառով, բանել է արեղա Դաւթը Տեր-Գևորգյանը, և Թուրք լեզուն ու մուսուլման կրոնը—Միրզա Թագի Մալլա Ահմեդ-ովին: Այս ընթացիկ տարվանից, Անդրկովկասի վոխարքայի կամքով, մացված և նաև ծագկի պատվաստի արվեստի դասատվությունը, վորը պատվանդելու պարտականությունը դրված է դավառական բժշկի վրա:

Աշակերտների թիվը անվս դավառական զպրոցում անցյալ ուսումնական տարում հեղել է 109 հոգի, վորոնցից՝ ազնվական—9, ավազ տարնեի վորդիք—2, քահանայի և բնդերի վորդիք—4, քաղաքացիներ և մյուս տարա դասակարգերի զավակներ—92 և դիվանատան ծառայողների վորդիք—2: Դրանցից՝ ռուս—3, հայ—99, մահմեդական—7:

Բարձր իշխանության անուրիճությամբ վոխադրված և այս տարի Նախիջևանի դավառական զպրոցից մեր զպրոցը Բանդուրովսկին, նախկին ուսուցիչ Հանդուցյալ Միխայիլ Կոստանտինովիչ Իվանովի տեղը:

Ահա 14 տարի է, ինչպես վերևում հիշեցի, գոյություն ունի տեղիս դավառական զպրոցը, իսկ այն որից, ինչը այս հիմնարկության հզոր պաշտպանության ներքո, անցել և արդեն 18 տարի... Հիմք դնելով այստեղ քաղաքում ընդհանուր խաղաղության հաստատությանը հետ միասին և ժողովրդի կրթության ու դաստիարակության գործին: Առանց դրան բնիկները պիտի խորին մնային այն սրբազան կապակցության, վոր միակն է, վոր կարող է մոտեցնել, միացնել այս բազմացեղ ազգերի զանգվածը և դարձնել մի անդրդվելի բարեկամական սիրով կապված ընտանիք... Այդ մի միտումնավոր և ընդհանուր լուսավորության կազ է, վոր գործում է մեր հիասքողի հիմը բռնող պետության մեջ, նրա մի ծայրից մինչև մյուսը միևնույն գործությամբ և միջոցներով, միևնույն հոգով ու ելքով:

Այստեղ, սակայն, խնդիրը և առաջ գալիս, թե կարո՞ղ է արդյոք պետության այդպիսի բարեբար և լեռանդուն գործունեության հանդամանքներում ժողովրդի դիտության և կրթության գործն ընդհանրապես ամեն տեղ էլ նույն առաջադիմությունն ունենալ: Ամեն մի, մինչև իսկ հատարակ, բայց առողջ դատող մարդ, այդ հարցմունքին պետք է բացասական պատասխան տա: Վա՞րքան աշխատանք, ճիգեր և համառություն են պահանջում բարեբար մուտանները մարդուս տակը մաքից, վոր բայ անվն նրանց առաջ իրենց խորհրդավոր գաղանիքների դուռը: Այստեղ գարերն անցնում են իրրև չուտանցուկ բողներ, մինչև վոր, վերջապես, մի վարևի ազգ հասնի իր նպատակին—բոլոր ազգերի պատմությունը դրա ամենահամոզիչ ապացույցն ունենա: Անհողդողդ հավատությունն, հավատություն իր խնամքին հանձնված պատանիների բարոյականության վրա, արթուն հետևողություն նրա ամեն մի քայլին, ամեն մի արարքին, համառություն ու անմոռանչ հետաքրքրություն իր պարտականությունները կատարելու գործում, դասատրակչության սեր, համբերություն և հայրական ներողամտություն պետք է ներմացնեն նրա հոգին, կենդանացնեն նրա գործողությունները, իմիք նա միտք ունի չահավետությամբ և արժանավորությամբ կատարել իր բարձր նպատակը: Հայրական տունը և դերեխայի ամեն մի չերամն իր բոլոր նախկին ընկերների հետ պետք է արդելված, հեռացված լինի նրանից, այն ժամանակ միայն, դուցե, հնարավոր լինի բարեբար աղդեցություն ունենալ նրա վրա՝ բառիս բուն մտքով:

Իսկ զպրոցը կարո՞ղ է արդյոք այդ բոլոր պայմանները կատարել: Ի՞նչ պատկեր ունի մեծամ մասամբ այն պատանին, չեմ ասում մանուկը, վոր բերում են ծնողները ձեզ մոտ ուսման համար—ապուռ, հաճախ ապականված և պատառոտված, արտաքուստ վայրենի, ներքուստ վատ վերաբերմունքի ու վարքի տեր, մտավորապես անզարգացած, սրտով հպարտավոր հոռի սովորություններ ներշնչած, արդեն չափահաս, բայց միանգամայն անընդունակ մտավոր պարապմունքի. նա ուսել է իր հարազատ լեզուն և այլ ֆիզիկական գործողություններ համարյա մի բնազդմամբ, միայն չարությունները և ապիկալից կյանքն է մինչև այդ ժամանակ յեղել նրա սերը և պարապմունքը, և հանկարծ, ինչ հակադրություն. մանկությ զպրոց, նա տեսնում է լսում է ամեն ինչ, վոր խորթ ու անհամապատասխան է իր հասկացողության և կյանքի յեղանակին:

Այն մանուկը, վոր ծնվել է կրթված շրջանում, վոր վայելել է հմուտ դաստիարակի հսկողություն, վոր վորոշ չափով սիստեմատիկաբար ուսել և

պիսակ իր հարազատ լեզուն, քիչ նեղսրտյուն կքաշի ոտար լեզուներ սովորելու և այլ դպրոցական առարկաներ հասկանալու գործում, իսկ այստեղ բնիկ պատանին զրկված լինելով յերկուսից էլ, սկսում է սովորել իրեն միանգամայն անծանոթ լեզվով, և յեթե անվորձ ուսուցիչ էլ պատահի, վոր սոսկալու լինի նրան ամեն բան բերան անելու մեքենայաբար և չազդելով նրա մտքի վրա բնական ճանապարհով, այդ դեպքում առաջ կգա միակը և միայն խաոնաչափություն, քան թե ուսում, յես արդեն չեմ խոսում կրթության մասին, վոր պահանջում է այլ պայմաններ: Արդյոք այդպես չե՞ն վարվում շատ բարիպատուհ դաստիարակները: Գրքերը և մեկտեղ տաճերը միայն ծանրաբեռնում են ուսանողների հիշողությունը, իսկ միտքը, յերևակայությունն ու խելքը ոտկով դեպքերումն են միայն մասնակցում: Ի՞նչպես պետք է վարվել, ուրեմն, այդպիսի հանգամանքներում: Այդ մասին յերկար պետք է խոսել և գրել, վոր այստեղ միանգամայն անկարելի յե, և պետք էլ չե, վորովհետև դրա համար շատ գրքեր կան, վորոնցով մեջտա կարող է զեկավարվել բարեխիղճ դաստիարակը:

Բայց այս դեռ ամենը չե, ինչ պետք է հանդիսանում յերկրիս կրթության գործին, և այսպիսի անհաջող հանգամանքներում հմուտ և յեռանդուն ուսուցիչը կարող էր հնարավորություն և միջոցներ գտնել իր գործն ավելի հաջողությամբ առաջ տանելու համար: Գլխավոր դժվարությունն այն է, վոր տեղիս ուսանողների մեծ մասն ամբողջ տարվա ընթացքում ընդամենը մի ամիս և հաճախում դպրոց, և այս չափազանցություն չե— մերթ ուխտագնացությունը և սրբազան տեղերը յերթևեկելը մի քանի օրերով, մերթ հոկ չարաթներով, մերթ աշակերտի կամ նրա ծնողների մենկի հիվանդությունը, մերթ ել տնային կամ այգու աշխատանքը հաճախ պահում են տանը մի քանի ամիս: Խոսիլ պահանջել, վոր այդ ամենը չլինի, հավասար կլիներ դպրոցը փակելուն, վորովհետև բացատրությունները շատ քիչ են: Սրան պետք է ավելացնել և տան օրերն ու արձակուրդները, և այն ժամանակ հասկանալի կլինի, թե ինչու տեղիս աշակերտներն այդքան քիչ են առաջադիմում մի վորևե բանում:

Բացի սրանից, ուրիշ տեղերում դպրոցը զբաղում է հասարակության իր ուշադրությամբ և աջակցությամբ, վոր տալիս է քաղաքացիական կյանքում: Այնտեղ հավաստյավ և նախորոք հայտնի յե, թե ինչ պայծառ ապագա յե սպասում նրան, ով վոր ձեռք է բերել գիտություն և ունի ընդունակություն: Այդ տեղերում կրթությունը, կարծես, զարձել է հասարակաց կյանքի յերկրորդ հոգին, վորից զրկված մնալ չի կարող ժողովրդի և վոչ մի դաստիարակ:

Այստեղ ել բնիկների համար կա՞ն արդյոք այդպիսի գրավիչ և զրդիչ պատճառներ ու հանգամանքներ: Ի՞նչպես դժվար է ներկայումս գտնել պաշտոնական առյաններում գեթ մի վորևե հասարակ զրաղրի պաշտոն: Սրան պետք է վերագրել այն, վոր ծնողներից շատերն իրենց զավակների ապագայի ապահովության համար մի վորևե հույս չունենալով, ձգտում են որ առաջ հանել իրենց զավակներին դպրոցից, վորտեղ նրանց կրթությունը պահանջում է յերկար ժամանակ, վորպեսզի նրանց իրենց հարազատ լեզվով հարկավոր չափով կարդալ-գրել սովորեցնել տալուց հետո նրանց սովորեցնեն և մի արհեստ:

Նախկին ժամանակները կային դեռ պատճառներ, վորոնցով հնարավոր էր պահպանել ժողովրդի վոգին և գրավել նրան դեպի դպրոցը: Ներկա ցեղակի զավառը, վոր առաջ նահանգ եր, բնականաբար, կարող եր ծառայողների մի մեծ թվի. այստեղ կարող եր սա կամ նա, ով ստացել եր միջնակ կրթություն, իր համար պաշտոն և մի կտոր հաց գտնել, իսկ այժմ այդպիսիները ուրախ կլինեյին ունենալ և գրաղրի պաշտոն, յեթե գտնեյին: Բացի սրանից, առաջ այստեղից աշակերտներ եյին ուղարկվում պետական բարձրագույն դպրոցները, իսկ այժմ այդ արտոնությունը տրվում է միայն ադնվականներին, վորոնցից ամբողջ Յերևանի զավառում հայերի մեջ հազիվ մի յերկու-յերեք ընտանիք լինեն, իսկ թուրքերն այստեղ ել չեն ուզում սովորել: Յեթե այստեղ ել այնքան շատ ադնվականներ լինեյին, ինչպես Անդրկովկասի մյուս զավառներում, տեղիս բնակիչներն ել անհրաժեշտ կհամարեյին ղիմելու դպրոցի տված բարենպաստ ուսման, ապա թե վոչ՝ մարդ չգիտե, թե ի՞նչ միջոցի դիմի, և ինչի՞ց սկսի, վոր կարողանա նրանց մեջ ձգտում առաջ բերել դեպի կրթություն և ուսում:

Վորքան չահավետ կլիներ դպրոցիս և յերկրիս համար, յեթե հնարավոր լիներ ամեն տարի պոնե մի քանի աշակերտ ուղարկել դպրոցից առևտրական, տեխնիկական կամ յերկրագործական դպրոցները, վորով հնարավոր կլիներ ապահովել աշակերտի ապագան և ժամանակի ընթացքում բարձրացնել և յերկրի արդյունաբերությունը, վոր ներկայումս նահապետական վիճակի մեջ է: Յերկրի նորությունը, տեղական հանգամանքները, հասարակաց կրթության պակասությունը, անշուշտ, պահանջում են այդպիսի միջոցների գործադրություն, յեթե մենք կամենում ենք, վոր կրթության նպատակն իրագործված լինի:

Դեռ շատ ու շատ պատճառներ կան, վորոնք արդելք են հանդիսանում այս յերկրի լուսավորության գործի հաջող ընթացքին, վորոնց մասին յես լռում եմ, խոնարհագույն խնդրով դիմելով պատվելի հասարակության, վոր քննության յենթարկի այստեղ բերված վերոհիշյալ բոլոր հանգամանքները և հետո արդեն այդպես լավ և անպայման քննադատի դպրոցիս գործունեությունը, վոր հաճախ հուսահատության յերկյուղով մարդ լռում է մինչև իսկ կրթված անձերից: Ով վոր ցանկություն ունի ուսուցելու, թե ի՛նչպես են պարապում ուսուցիչները, այդպիսիների համար միշտ բաց է դպրոցի դուռը. թող հաճեն գալ, յերբ ցանկանան, և ականատես լինեն, թե ի՛նչ է կատարվում դպրոցում: Այդպիսի ուշադրությունը, նամանավանդ տեղիս կրթված բարձրաստիճան անձերի կողմից, կարող եր վո՛չ պակաս բարերար աղդեցություն ունենալ և՛ բնիկների, և՛ աշակերտների վրա, մի բան, վոր մինչև այսոր տակավին վոչ վոք չի արել:

Պատվելի համաքաղաքացիներ: Ուսա անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես և նրա արյունը, վորով մենք ազատվել ենք ընդմիշտ,

նույնպես սուրբ պետք է լինի և նրա կամքը, վորի ներքո մենք ապրում ենք, կատարելապես պաշտպանված լինելով մեր հավատքի և հայրենիքի բոլոր թշնամիներից: Աչխատենք, ըստ մեր կարողության և հնարավորության, ձեռք բերել ողտավետ դիտություններ, կրթել մեր միտքն ու սիրտը; ձեռք բերել ռուս լեզվի դիտություն և բարի քաղաքացիներ լինել: Սրանով, հենց միակ սրանով, քան մի ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ ազգի հետ, վորի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ ոտարին, սեր և անձնվիրություն. լիննենք դաստիարակված, այդ մի իսկական բախտավորություն է ամեն մարդու համար, իսկ մեր հայդ մի իսկական քահանայությունը և ընդունակությունը և չի թողնիլ առանց պատշաճ ուշադրության ու վարձատրության:

Կեցցե՛ Ռուսաստանը... և այլն:

1847 թ. 25 ապրիլի, № 22

Կ. Ի. ՈՐԼՈՎԻՆ

Հարգելի պարոն Կոստանդին Իվանովիչ.

Ի պատասխան ձերդ բարեծննդության անցյալ 1846 թվի դեկտեմբերի 23-ի № 104 գրության՝ պատիվ ունեմ ձեզ հայտնելու, հարգելի պարոն, վոր դավառական դպրոցը բացվել է Ցերևանում 1831 թվից, սանների թիվը այդ ժամանակից սկսած հասնում է մինչև 550 հոգու, ուսման լրիվ դասընթացը վերջացրել են 10 մարդ, աշակերտների թիվն այժմ 114 է, իսկ ուսուցիչներինը՝ 5. դպրոցում առանձին կաբինետ չկա, իսկ դրադարանում վորպես ուսումնական ձեռնարկներ կան Լոդը-քարտեզներ, երկրաղունդ և ռուսերեն այլ գրքեր՝ բաղկացած մեծ մասամբ լուսավորության մինիստրության պարբերական հրատարակություններից, նույն մինիստրության դպրոցներում գործածվող գրքերից և բնաիսության վերաբերյալ խիստ հեռաքրքիր յերեք առարկաներից, ե՝ 1) մի կտոր որսկիանից, 2) մի կտոր սպիտակ մարմարից, 3) մի վոսկր արկղ ծծումբից, վորը բերված է Արագած լեռից և վորն ստանալու համար դպրոցը պարտական է Ցերևանի դավառապետ Պ. Բլավացկու հոգատարության:

Հաշվի առնելով դպրոցի դոյության այդքան յերկար ժամանակամիջոցը, Ցերևան քաղաքի դավառի ազգաբնակության քանակը և աշակերտների ու դասընթացքն ավարտածների այդքան սահմանափակ թիվը, ստացվում է, իհարկե, խիստ աննպաստ հետևանք, վորով և յուրաքանչյուրը, անծանոթ լինելով տեղական հանդամանքներին, կարող է այդ անհաջողությունը վերագրել դպրոցի անփութության ու անդործունեության. մինչդեռ այստեղ կան ուսուցման ընթացքը կանդնեցնող այլ պատճառներ, վորոնց վերացնելը դպրոցի համար միանգամայն հնարավոր չէ: Վոր այդքան տարիների ընթացքում լրիվ դասընթացը վերջացրել են շատ քչերը, դրա պատճառը 3 դասարանի ուչ բացվելն է, վորը տեղի յե ունեցել 1844 թվին, իսկ ուսուցման անբարենպաստ ընթացքի գլխավոր պատճառները հետևյալներն են.—

1) Ազնվական ծագում ունեցող մարդկանց սակավությունը այստեղի բնակիչների մեջ. մի բան, վոր իրավունք է տալիս սովորողներին ապագայում ծառայության մտնել, վորի պատճառով այլ տեղերում կարդալ ցանկացողների թիվը անհամեմատ ավելի մեծ է, քան այստեղ:

2) Առևտրական հարաբերությունների մեջ ռուսերենի փոքր պահանջը, վորովհետև տեղացիները իրենց փոքրաթիվ գրագրությունները վարում են միշտ իրենց լեզուներով:

3) Պետական գպրոցներում տեղական լեզուների ուսուցման համար նշանակված խիստ սահմանափակ ժամանակը. և մինչև դասի (դաս, վորին պատկանում են բացառապես այստեղի բնակիչները) յերեխաներից պահանջվող ժամանակի ահագին կորուստը, վոր գործ է դրված դպրոցներում ամենգվող դիտությունների ամբողջ դասընթացը վերջացնելու համար. տեղական լեզուները ավանդող ուսուցիչների մեթոդ չիմանալը, ինչպես և նրանց ռուսերեն լեզու չիմանալը, այլապես նրանք կարող կլինեն համեմատական ձևով անցնել իրենց առարկաները աշակերտների հետ և նրանցից պատրաստել լավ թարգմաններ: Այդ պատճառով է, վոր բնակիչների մեծ մասը սովորեցնում է իր յերեխաներին մայրենի լեզու կամ տանը, կամ վորևե ուրիշի մոտ, վորպեսզի ժամանակ չկորցնի նրանց սովորեցնելու այդ լեզուն և մի արհեստ, վորով նրանք պետի ապրեն ապագայում:

4) Աշակերտների անընդհատ բացակայությունը դասարանից ընտանեկան գործերի պատճառով (գործերի, վոր կատարում են այստեղ տեղացիների յերեխաները), մանավանդ այգիների աշխատանքների ժամանակ. ծնողների միանգամայն անհոգ վերաբերմունքը դեպի յերեխաների դաստիարակությունը, ընտանեկան անբավարար հսկողությունը և այլն, այնպես վոր ցուցակներում նշանակված աշակերտների մեծ մասը բոլորովին չի հաճախում գպրոց և դուրս է գալիս այնտեղից, յերբ կամենում է:

5) Յեթե այս ամենին ավելացնենք շատ ուսուցիչների անհոգությունը և մեթոդից ու ցանկությունից զուրկ լինելը, նաև տեղական իշխանության անբավարար ուշադրությունն ու աջակցությունը, այն ժամանակ, իհարկե, շատ բնական է, վոր դպրոցը դեռ յերկար ժամանակ չի կարող հասնել իր նպատակին: Իմ կարծիքով, վորպեսզի կարելի լինի աստիճանաբար հեռացնել ուսման ընթացքը կանդնեցնող այս բոլոր արգելքները և դպրոցը դնել վորոշ բարձրության վրա, անպատճառ հարկավոր է այստեղ էլ մտցնել շատ լուսավոր պետությունների մեջ գոյություն ունեցող վորոշումները.

ա) Վատիկանական իշխանության միջոցով պարտավորական դարձնել յուրաքանչյուր ծնողի համար իր յերեխաներին 7 կամ 8 տարեկանից դպրոց տալ և մինչև 14 տարեկան հասակը վոչ մի դեպքում նրանց դուրս չհանել:

բ) Տեղական լեզուների համար ուսուցիչները կարգել վորձված մարդկանց, վորոնք հիմնավոր կերպով իմանային ռուսաց լեզուն, ինչ դասարկարգի եւ նրանք պատկանելիս լինեն, վորովհետև մինչև այժմ նշանակված հոգևորական անձերը՝ ռուսաց լեզուն չիմանալու պատճառով՝ բոլորովին անպետք են: Ուստի այդ առարկաները ավանդելու համար պետք է նշանակել այնքան ժամանակ, վորքան պահանջվում է ռուսաց լեզվի համար ինչպես մի լեզվից մյուսը թարգմանելու, այնպես եւ յերկու լեզուները հիմնովին իմանալու համար:

գ) Դասավանդել քաղաքացիական դասին պատկանող յերեխաներին եւ 2 դասարաններում ռուսաց լեզուն դործնականապես. իսկ մյուս բոլոր առարկաները՝ կրճատ ձևով. իսկ 3 դասարան թույլ տալ մտնելու միմիայն առաքճանավորների յերեխաներին եւ անցնել նրանց հետ բոլոր առարկաները ավելի ընդարձակ կերպով:

դ) Ինչպես այդ կատարվում է ուրիշ տեղերում, այստեղից եւս, ամեն տարի կայսրության բարձրագույն հաստատություններն ուղարկել լավ առաջադիմություն ունեցող ուսանողներին, անկախ նրանց ծագումից, վորպեսզի դրանով իսկ մյուսներն եւ չհապդրդվեն դիտություններ հաղող ուսումնասիրելու:

ե) Նշանակել դպրոցում հատուկ ուսուցիչ յերկրագործական դործնական պարապմունքների համար եւ ընդհանրապես դործնական տեսության մեջ վորձված մի մարդ,— մի առարկա, վոր այնքան կարևոր է այս կողմերում:

զ) Ունենալ խիստ հսկողություն բոլոր, ինչպես քրիստոնյաների, այնպես եւ մահմեդականների, մասնավոր ուսուցիչների վրա, վոր նրանք առանց հարկավոր թույլտվության (վորը վերապահված է միմիայն ուսումնարանական վարչության) չհամարձակվեն պահել իրենց մոտ մինչև անդամ մեկ աշակերտ:

Ահա առայժմ այն նախնական միջոցները, վորոնցով կարելի յե նպաստել դպրոցական հաստատությունների առաջադիմությանը, հույս ունենալով, վոր նրանք ապագայում ոգուտ կբերեն յերկրին:

Ընդունեցեք հարգանացս հավաստիքը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Աբովյանի գրական ժառանգության այս կողմը մինչև հիմա հարկավոր չափով ուշադրության չի առնվել: Նրա չափածոն հայտնի չէ այն հատ ու կենտ բանաստեղծություններով և բայաթիներով, որոնք բացի «Պարապ վախտի խաղալիքը» հավաքածոյից, տարբեր ժամանակներում լույս են տեսել պարբերական մամուլում: Մինչդեռ Աբովյանի գրական վաստակի մի շատ զգալի մասը չափածո գործեր են, գրաբար և աշխարհաբար լեզուներով գրված բանաստեղծություններ, որոնք մի ստվար հատորի նյութ կարող են կազմել:

Ցե՞րբ է սկսել գրել Աբովյանը, հայտնի չէ: Աբովյանի թղթերի մի մասը թվագրված է, մյուսը վոչ: Բանաստեղծություններից չերկուսը կրում են 1824-ի թվագրությունը: 1824-ից վաղ թվագրություն չկա: Այդ չերկու ամենավաղ թվակիր բանաստեղծությունները ցոտաճ այն ժամանակ, չերբ ժողովածուն արդեն տպագրության էր հանձնված: Նրանցից մեկը հետևյալ խորագիրն ունի «Կարօտութիւն նախնի վայելչութեանց Հայրենեաց իմոց. ասացեալ ի 1824 ամի չերեւան», իսկ մյուսը՝ անխորագիր է (...սրբաճեմ ոտից) ծոնված Անտոն չեպիսկոպոսին, վորը, ինչպես հայտնի չէ, չեղել է Աբովյանի խնամակալը եչմիածնում: Այդ չերկու բանաստեղծությունները ժամանակագրական տեսակետից առաջինները են Աբովյանի վոչ միայն չափածո, այլև ընդհանրապես գրական ժառանգության մեջ: Սակայն չերբեմ մոռացության չպետք է տալ, վոր մենք հիմք ենք ընդունում միայն պահպանված ձեռագրերը: Թերևս չեղել են ուրիշ, ավելի վաղ գրված բանաստեղծություններ, վորոնք, սակայն, չեն պահպանվել: Կա և մի ուրիշ հանգամանք. այդ չերկու բանաստեղծություններն անդրանիկ կարող են համարվել, սակայն, միայն թվագրվածների շարքում: Չե վոր անթվագիր ձեռագրերի մեջ կարող են պահպանված լինել այնպիսիները, վորոնք գրվել են 1824-ից վաղ, բայց հայտնի չեն, վորովհետև հեղինակը չի թվագրել:

Բացի ամենավաղ բանաստեղծությունները լինելու կարևոր փաստից, դրանք, այսինքն, այդ չերկու վոտանավորները հետաքրքրական են նաև ուրիշ տեսակետով: Որինակ. Անտոն չեպիսկոպոսին հասցեյագրված ծոնը ինքնակենսագրական նշանակություն ունի: Սանի և նրա խնամակալի հարաբերությունները վկայող գրեթե միակ աղբյուրը այդ վոտանավորն է: Իսկ մյուսը՝ հայրենիքին նվիրված բանաստեղծությունը հետաքրքրական է Աբովյանի բարոյական մտայնության աստիճանական զարգացումը լուսաբանելու տեսակետից:

«Բանաստեղծություններ» բաժինն ամփոփում է «Տաղեր», «Բայաթիներ» և «Թարգմանություններ» չենթաբաժինները: Բացի աշխարհաբար գործերից, «Տաղեր»-ում նմուշի համար վերցրել ենք նաև մի քանի գրաբարալեզու բանաստեղծություններ:

ԱՂԱՍՈՒ ՍՐՏԻ ՓԱՓԱԳԸ

Առաջին չորս վոտանավորը («Աղասու սրտի վախտը», «Աղասու սրտի տխրությունը», «Աղասու խաղը» և «Աղասու վերջին սուքը») այն չարքից են, վոր Աբովյանը հորինել է սկզբում չափածո, հետո՝ արձակ ձևով Սարդարի ֆարաշների դեմ ըմբոստացած

Աղաստս կյանքը և հերոսությունը պատկերացնելու համար: «Վերքի» մեջ Աբովյանն ոգեշունչ օգտագործել է մխայն «Աղաստս խաղը» և «Աղաստս վերջին սուքը» յերգերը (տես՝ 1939, եջ 167—170):

ԱԶԳԱՍԵՐ ՄԱՐԴԸ…

Այս վոտանավորը նուիրնվես «Պարապ վախտի խաղալիք» հավաքածոյից է, ուր և առաջին անգամ հրապարակվել է (1864): 1879-ին «Լումա»-ում (Ա. դիրք, եջ 133—4) սխալմամբ հրատարակվել է իբրև անտիպ նյութ:

ԻՄ ԲԱՐԵԿԱՄ…

Ինչպես նախորդ դործերը, այնպես էլ այս, «Պարապ վախտի խաղալիք» չարքից է: Այս քնաստեղծության մի այլ տարբերակը Աբովյանն ոգեշնչվել է «Բարեկամի մոտ» արձակ դրվածքում («Անտիպ յերկեր», 1904, եջ 33—35):

Բերում ենք տարբերակն ամբողջությամբ:

ԲԱՐԵԿԱՄԻ ՄՈՏ

Սիրտս լցվել ա ինչպես արյան ծով
Ա՛ռ որ չե՛մ քաշում, բերնիցս՝ վա՛յ տալով
Ես իմ չոր գլխին, իմ սև արևին,
Ջուխտ ձեռով տալիս իմ մեռած դոշին,
Աղի՛ղ բարեկամ՝ ջա անունդ հիշում
Ու քեզ չե՛մ տեսնում, մահվ դուռն հասնում:
Սիրտս էլ, չանս էլ հետն, ուզում ա դուս գա,
Ելի ինձ պահողն՝ ա՛խ՝ ջո սուրբ սերն ա:
Մեկ դոշդ թո՛ղ դոշիս հասներ ու են ասաթն
Տաներ արարչին իր տված ամանաթն:
Ցերար սուրբ հոգիդ քնած ա, թե զարթուն
Ցերար վոր եքուց տաննն ինձ թաքուն,
Են սա՛ն հոգին տան, իմ որս խավարվի,
Էլ ես յերկնքի տակին քեզ չհասնի
Իմ ձենս, խավար աչքս քեզ կարոտ մնա,
Ա՛խ մի կղա՞ս ելա կկանդնես ինձ վրա,
Եդ սուրբ բերնովդ հոգիս կըհիշե՞ս,
Թե դուս էլ սրտիդդ անուս կչունչես:

Աղի՛ղ բարեկամ, ա՛խ քո դուռն վոր գամ,
Ցես ես բոպային կանդնիմ, քարանամ.
Ցերար վոր աչքդ բանաս, ինձ տեսնիս
Էլ չունչ չունենամ, վոր սրտս ասնիս,
Ցերա՞ր մեկ տխուր աչքով ինձ ելա
Կնայես, վոր հոգիս են կողմն իմանա.
Թե ես աչխարքումն ինձ էլ սիրող կար,
Ցես էլի մենակ մեղավորն ու չար,
Վոր վո՛չ քո սերը լավ ճանաչեցի,

Վո՛չ աստուծո տված կյանքն վայելեցի:
Սիրտս ինձ համար կրակ եր դառել,
Աչխարքն ինձ համար վաղուց վերջացել:
Ով իր մեռածի հոգին եր լալիս,
Ցես իմ սաղ գլխին ծեծում, վայ տալիս.
Մահն էլի ուզում, առա, գինջացա.
Բեզ էլի ուզում, մեկ որ չիշտացա:
Հոգիս տալիս էլ՝ յես ձեռս քցել
Բեզ էլի կանչում, վոր տեսնիմ մեկ էլ:
Բայց ա՛խ՝ իմ լերդս չորացած մնաց,
Հասրաթս քեզանից չառա աչքս բաց:

Բարեկա՛մ սիրուն, սիրո՛ւն բարեկամ,
Ինչ կըլի վոր ա՛խ՝ յես մեկ ղուշ դառնամ.
Կանդնիմ յերեսիդ՝ դու չունչ քաշելիս
Բանամ իմ սիրտս՝ վոր մեկ ձենս առնիս.
Կաթի յերկնային աչքիդ լիան ինձ վրա
Երված սրտիս ծուխն, բերնիդ հովին տա:
Պարզի ես խավար միտքս, վոր ինձ մեկ որ
Վո՛չ մահ ե տալիս, վո՛չ կյանքս առնում, վոր
Կորչիմ, ա՛խ սլծնիմ ես դառն աչխարքիցս
Կարվի ես չար չվարքն յեղևիցս.
Հոգիս քեզ պահ տամ, ու մարմինս հողին,
Վոր դու բերես հետդ վերջին ահաթին,
Ու են դինումն էլ թե դժոխքն ինձ տանի.
Ջո սուրբ աղոթքը ինձ մեկ ճար անի.
Թե յես անարժանս են՝ սուրբ արարչի
Պատկերն իմ ձեռովն, ա՛խ՝ խանգարեցի,
Ջո արդար ձեռը, քո սուրբ բերանը
Բալքի ինձ չարա անի են ատյանը:
Դու ըլես ելի իմ հոգուս վրկիչն
Ինչպես ես ահաթին Դու յես իմ մաչիչն:

Աղաջան Վարդանյանը Աբովյանի հետ սովորել է Ներսիսյան դպրոցում: Հայտնի է նաև Աղամալյան և Շերմազանյան ազգանուններով: (Տես՝ «Ի վերա դամբարանի» բանաստեղծության ծանոթության մեջ տպագրված վոտանավորը):

ՈՒՄ ԱՍԵՄ…

Ցերը է գրված, հայտնի չէ: Դժվար է ասել, թե ում է նվիրված— վորևե կոնկրետ անձնավորությա՞ն, վորի անունը մեզ անհայտ է, թե սովորական սիրային զեղումնք է, առանց նկատի ունենալու վորևե մեկին: Այդ տեսակետից անհետաքրքրական չի լինի «Ջանումս Ջան չի մնաց» բանաստեղծությունը և նրա հետաքրքրական ծանոթությունը:

«Ջանումս Ջան չի մնաց» դրվածքն իր պատմությունն ունի: Այս յերգի մի ուշնյակը առաջին անգամ հրապարակել է Ն. Տեր-Կարապետյանը իր աչխատության մեջ («Ակաֆուր Աբովյան», Տփխիս, 1897, եջ 75): Շատ տարիներ հետո Ցե. Շահազիզը նույն վոտանավորը դտնելով այն տետրում, վոր Աբովյանը Բոդենշտետի խնդրով հավաքել ու

ղրի յե առել ժողովրդական յերգեր, ընդունել և այն իրը ֆոլկլորային գործ, վոր Աբովյանը ղրի յե առած յեղել Բոդենշտեռնին ուղարկելու համար («Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտությյան և Արվեստի», 1928, № 3, էջ 144—6) և իրրև այդպիսին ել հրատարակել*):

Աբովյանի արխիվում պահպանվել ե մի փոքրիկ տետր հետևյալ վերնագրով. «Ոտանաւոր յաչխարհաբառ լեզու, ըստ խնդրանաց պարոն Եղնակին կամսարական արտագրեցի ի Պետերբուրգ 1834 դեկ· 22»:

Ջանումբս ջան չի՛ մնաց, վոր իմ ահվալն քեզ ասեմ.
Բերանս խոսք չի՛ գալիս, վոր իմ խնայն քեզ ասեմ.
Թոմ ու թոփխանա յես սարքել, քանդեցիր բարճ ու բաղանըս.
Ցարի պես բհամ յեկար, կերար, մաշեցիր իմ ջանըս,
Դարդիմանդ ես մե փիքր արա՛ ինչպես ըլի ես իմ բանըս,
Ոչովեմին ումդուդ չունեմ, դուն ես ճարն ու դարմանըս,
Թե ուզում ես զիխունիմին դուն ըլիս իմ սերն ու ջանըս,
Ցարուքյար տուր ես բանին, վոր սիտեմ լավիցն ասեմ:

Ախավոտուն ծերն տալիս փոփրալով դյուլ ջհանըդ
Բաց ես անում ալ տերևով դյուլի սարահի մամանդ
Ցախուին ասեմ, գմուին ասեմ թե են վղիդ չար մարջանըդ,
Վոր տեսնողն մա՛թ ե մնում, դովում ե քո յարադանըդ,
Վոսկեթել մազերիդ չարքն հուսկլով քո սիրուն նանըդ
. . . . . .
Ցարաբ խեղճս բուլբուդ կըլի մոտիդ նստած եդ բերանըդ
Բացվի ու ինձ հետ խոսա, վոր իմ խնայն քեզ ասեմ:

Վարդի պես դուրս ես եկել հովն հրալիս բաց ես ըլում,
Ցերկնքի յողն յերեսիդ չաղակոլալ թաց ես ըլում.
Զարս կուռդ դիշեր ցերեկ միշտ վշով պատած ես ըլում.
Բլրուլիս սիրան մեռած տեսնելիս հեչ չես լաց ըլում.
[Մին ու մին վոր քեզ եմ տեսել, մոքիցս անմոռաց ես ըլում,
Ինչ անեմ, վոր դուն ինձ լսես, ել միշտ քո դովքդ ասեմ]:

Ախտածոգիս դեմն արջևիդ բանակ ֆարմանա [՞]
Դվորն վոր գաս չուս կըզաս, հետդ յերեան կըզարձնա[՞]
Հենց բանինք թե արեգակ ես, են ելես դուլուդ դարնա [՞]
Ինչ կըլի վոր բազի քյարա, չողդ ինձի ռահմ անա
Վոր են լուսուն կարաս [սիրաս] մխիթարվի ու հավանա,
Լուսնի պես յես լույս տամ [ու քո վառք ու պատիվն ասեմ]:

*) Բոդենշտեդտի տետրից Ցե. Շահազիզը քաղել և չորս հայերեն յերգ· ա) «Ջանումս ջան չի՛ մնաց», բ) «Գերեզմանդ ուխտ եմ յեկել», գ) «Ենքան սիրովդ» և դ) «Ախավոտուն ծերն տալիս»): Առաջին իսկ համեմատությունը ցույց տվեց, վոր կամսարականի տետրից ծերն տալիս»): Առաջին իսկ համեմատությունը ցույց տվեց, վոր կամսարականի տետրից քերվածը սեպագիր ե, Շահազիզի հրապարակածը մեր մեջբերածի մշակված օրինակն ե: Բացի այդ, Շահազիզի հրապարակած չորս յերգից առաջինը և վերջինը վոչ թե տարբեր ղրվածքներ են, ինչպես ղրի յե առնված Բոդենշտեդտի տետրում, այլ միևնույն բանաստեղծության սկիզբը և վերջը: Մի ուրիշ դիտողություն ևս. այդ ղրվածքի սեպագրի և մշակվածի տողերը նույն հաջորդականություն չունեն: Սեպագրի կիսատ մնացած տողերը հնարավորության սահմաններում վերականգնել ենք, հիմք ընդունելով Բոդենշտեդտի տետրը, առնելով այն ուղիղ փակագծերի մեջ:

Անատաված, մե փիքր արա՛, ես ինչ անիրավ դիվանա
Տված յարիքդ ամեն մեկն արել ե ինձ սալիք դիավանա
Ինչ մարդի յես դուրը դնամ, վոր իմ դարդիս դարման չանա
Ես բանիս անելին յեսև քո ոսուն քեզ մնա.
Քանի ասված որ ա տվել [արի յես քո քարիֆն ասեմ]:

Նույն այս տետրում գտնվում է մի ծանոթություն, վորը մեկընդմիշտ պարզում է, թե այդ յերգի իսկական հեղինակն ով է. Ժողովո՞ւրդը, թե Աբովյանը:

Ահա այդ ծանոթությունը·

«Ինչքան ցավեմ, պատվելի բարեկամ, վոր տասներկու տուն վոտանավորից միայն ես քանի մի կտորն ա մնացել: Ամեն տուն այնքան չարք ուներ, ինչչես առաջինը: Մանավանդ մեկ տան վրա չատ ցավում եմ, չունքի ենտեղ իմ սրտի դարդս իմ անանուն սիրուհույն լալով պատմելով, նրան հաթաթա յեմ տալիս, թե նա աչխարհքուռմս կարճ կյանք ունի, նրա դեղեցկությունը չուտով անց կկենա. թե վոր նա ինձ ենպես չատ չարչարես յե, են դատաստանի որը, [անընթ·] վրեժխնդիր կլինեմ նրա արածի համար: Ցես ուրիշ տեղ խոպեր ել ունեյի չինած, այժմ չատը մոռացել եմ: Դու մի՛ համարիր, սիրելիս, թե մեկ հատուկ սիրուհի Ցերևանումը ունեցել եմ, քավ լիցի· յես կանանց հետ ի մանկությենե սեր ունեյի, և այժմ ել անչափ ունեմ, այլ այնպես սեր, վոր յես նրանց տեսնեմ, նրանց սիրուն ու չահմուր յերեսովը մխիթարվեմ: Մեկ որ նրանցից պակասելիս, սիրտս ուզում ա պատռել: Բայց հավատա ինձ ենպես արդար սերը միայն սրտով եմ ուզում, ուրիշ բան ինձ պետք չի: Թե ինձ ասված որ կուա, յես իմ Ցերևանու ալվան աղջկերանց վայելչությունը, ազնվությունը, առաքինությունը, սիրունությունը միտք ունեմ ենպես զովելու թեկուզ վոր աչխարքս ել չմանեմ: Ցես գիտեմ, վոր նրանք պարկեչ են և ամոթխած և մեկ պաչ ելա չեն տա, բայց ինձ համար ցավ ե. Ցեվրոպայումն թագուհիք իրանց համար վատք են համարում իրանց բանաստեղծի սրտի ուզածը կատարել: Ցես գիտեմ՝ վոր մեր ազգը դեռ եդ տեղը չի հասել: Ենքանն ել ինձ համար մեծ վատք ա, թե մեր ազնիվ խանումները, թե մեր դեղեցիկ աղջիկները իմ բանը լսեն, ինձ իրանց մտքումը մեկ տեղ տան, թե իրանց սրտումը չեն կամենում: Ես իմ վոտանավորը ղրեցի և ավելցի Քանաքեռումը մեկ տղայի· կարելի յե թե նրանից կրկին առանամ, չեթե ինձ ել չատ ցանկալի յե են ժամանակիա արածս բաները հիմիկվանի հետ համեմատել»:

Այս ծանոթությունը հրատարակել է Ն· Տեր–Կարապետյանը (տես՝ նրա գիրքը, 1897, էջ 75—6): Ն· Տեր–Կարապետյանը այդ ծանոթությունը հրատարակել է ամենայն վոտանավորի տեքստից, չհիշելով, վոր այն վերաբերում է այդ վոտանավորին և բացի այդ՝ կրճատումներով և մասնատված:

Նկատենք նաև հետևյալը· 1834–ին Աբովյանը Դորպատումն եր, յերբ վեճ ծագեց Պարրոտի ուղեգրության չուրջը և կասկածի տակ առնվեց նրա կատարած վերելքը դեպի Արարատ: Այդ տարիվ Աբովյանը ստիպված է լինում Պետերբուրգ գնալ վկայություն տալու և մամուլում հանդես գալ Պարրոտի պաշտպանությամբ: Ինչպես յերևում է, հենց այդ ժամանակ ել Աբովյանը հանդիպում է Ցեղնակ կամսարականին, վորի խնդրով տետրում արտագրում և բանաստեղծությունների մի շարք, վորոնց թվում նաև «Ջանումս Ջան չի մնաց»–ը:

Բացի այն կարևոր հանգամանքից, վոր «Ջանումս ջան չի մնաց»–ը լուսս է սփռում Աբովյանի ընդհանրապես սիրային բանաստեղծությունների բնավորության, ինչպես և իր՝ Աբովյանի հոգեբանության վրա, այդ յերգը հետաքրքրական է այն տեսակետով, վոր Աբովյանը մինչև Դորպատ մեկնելն ել աչխարհարար գրելու փորձեր է արել: Ծանոթության վերջին հատվածը, ուր ասված է՝ «Ես իմ վոտանավորը ղրեցի և ավելցի Քանաքեռումը մի տղայի», ուղղակի վկայություններ են այդ մասին:

«Ում ասեմ»–ի ձեռագիրը պահպանվել է: Տեքստը առաջին անգամ հրատարակվել է «Գրական թերթ»–ում (1939, № 5), Ռ· Զարյանի կողմից:

ԱՇԽԱՐՔՈՒՄ ՈՎ Ա ՄՆԱՑԵԼ...
ԽԱՂ ԲԱԺԱՆՎԵԼՈՒ ՎՐԱ...

Այս յերկու վոտանավորը «Խաչատուր Աբովյանի յերկու նորագյուտ բանաստեղծությունները» վերնագրով հրապարակվել են «Գրական թերթ»-ում (1935 11/VII), Ս. Սարգսյանի կողմից: Յերկու բանաստեղծությունն էլ պահպանված են մի ձեռագիր տետրում, վոր դոնվել է Մելիք-Ազամալյանների արխիվում:

Մելիք-Ազամալյանների հետ Աբովյանը կապված է յեղել մերձավոր ծանոթությամբ: Յերևան գալիս նա մեծ մասամբ իջևանել է նրանց մոտ: Ինչպես բանաստեղծությունների թվագրություններն են ցույց տալիս, Աբովյանը 1842-ի ոգոստոսի սկզբներին Յերևան է յեկել և հյուրընկալվել Մելիք-Ազամալյանների կողմից: Թիֆլիս մեկնելիս Աբովյանը թողել է նրանց այդ բանաստեղծությունները հետևյալ ընծայականով.

Ձեզ 'ի սիրս մնասցէ նչան
Իմ գրօսանաց սակաւ այս բան:
Ես և ի վայրս օտարութեան
Միշտ պաշտեցից զաւուրք Հայաստան:

1842, օգոստոսի 3-ին
Երևան

«Աչխարքումս ով ա մնացել» բանաստեղծությունը գրել է ոգոստոսի 3-ին, յերկրորդը՝ «Ինչ բաժանվելու վրա» վոտանավորը նույն ամսի 4-ին:

Բանաստեղծության մեջ հիշված Սահակ աղան իր ժամանակի Յերևանի անվանի մարդկանցից է. նրա մասին հիշատակություն կա բարոն Հաքստհաուզենի ուղեգրության մեջ: Սահակ աղան նշանակալից դեմք է յեղել նաև ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: Աբովյանը նրան մի քանի անգամ հիշում է «Վերք Հայաստանի»-ի մեջ:

ՈՂՔ Ի ՎԵՐԱՅ...

Վալաեերը Աբովյանի գործատան պրոֆեսորներից է: Նրա յեղբայրը Դորպատում աոաջիններից է յեղել, վոր Աբովյանին աշխատել և ներշնչել աշխարհաբար լեզվով գրականություն ստեղծելու անհրաժեշտության գաղափարը: Նա համոզում էր Աբովյանին աշխարհաբար թարգմանել «Աստվածաշունչը»: Այդ և ընդհանրապես Վալաեերների մասին հետաքրքիր վկայություններ կան դորպատյան որագրերում: Վալաեերը Դորպատի համալսարանի աստվածաբանության պրոֆեսորն է յեղել: «Զհայկեանն բարբառ մեր ուսանի աստ պրոֆեսոր մի աստուածաբանութեան Վալտէր անուն»— գրում է Աբովյանը Դորպատ ճանկնելու հաջորդ տարին, 1831-ին պատկանյան յեղբայրներին հասցեագրված նամակում:

Այս բանաստեղծությունը գրվել է 1831-ի սեպտեմբերի 14-ի դիշերը, սիրելի պրոֆեսորի դագաղի մոտ պահակելուց հետո, տանը:

«Սուտ 'ի վերայ մահուան սիրելւոյն իմոյ և ուսուցչի Վալտէրի: Ի դիշերին, ուր ես պահապան եղէ նմա ի սենեկի իւրում»— այսպես է վերնագրել հեղինակը նույն բանաստեղծության մի այլ ձեռագիրը:

Պահպանվել է մի քանի ձեռագիր: Տպագրվում է առաջին անգամ:

ՅԵՏ ՓՈՒՐ ԻՆՁ...

1834-ին վախճանվեց Հարություն Աբովյանը: Հայրենի դյուղից հետու, ոտարության մեջ գտնվող ղազյան Աբովյանի վրա անասելի ծանր ազդեց այդ լուրը: Դորպատյան հիշատակարաններում Աբովյանը նկարագրել է այն խոր ախորժությունը, վոր ապրել և ինքը

Հարազատի մահվան լուրն առնելուց հետո և այն անորինակ հոգատարությունը, վոր հանդես են բերել դորպատյան բարեկամները նրա վիշտն ամոքելու համար:

Ահա հիշատակարանի այդ հատվածը.

«Լուր մահուան հօր իմոյ և Ազաջանի առանամ յայսմիկ աւուրս. զաւուրս ինչ մնամ 'ի տան և 'ի սուգ. 'ի նեղութեան ճանաչէի բարեկամն, յայնմ աւուր, յոր ես լուայ, անկեալ զանկողնի, մնամ անմխիթար. Գորլով սենեկակիցն իմ զայ և համբուրէ զիս, և մխիթարէ. յերեկոյին զա բարեբարբն իմ. լի տրամութեամբ կացեալ առ անկողնով իմով «ծանր են, ասէ, վէրք ձեր, այլ գմտաւ ածէ՛ք զվիճակ ամենայն մահկանացուաց». և խրատէ զիս մի՛ մոռանալ զնպատակ իմ, միշտ զրկելով զիս: Ցետ նորա զայ ազնուամիտ պատօրք Գիհէզի. և ո՛չ մոռացայց զժամն, ուր պատուելի այրս բացեալ զհոգելից բերան իւր, չանայր խիթարել զիս աւետարանական բանիւք և սահմանօք կրօնի, յուշ ածելով ինձ զառաքելն Թեսաղոնիկեցւոց հօր իմոյ և կրկնելով քէ բոլոր ընտանիք նորա են 'ի սուգ:

Առաւօտուն զայ պրօֆեսսոր Ֆրիդլենդեր և նա նուինպէս առեալ զձեռս իմ ո՛չ սակաւ մխիթարէ զիս. նորեկն մեծ մխիթարութիւն էր յայսոսիկ աւուրս. ո՛չ յելանէր իմ քանիցս եկն առ իս բարերարն և սակաւ զո՛նե ճաշել, զի մի՛ անօթ մնացից. և զուցէ հիւանդացայց. յետ ասան աւուր, այն ինչ զառաջինն զնամ 'ի տուն նորա, կին նորա տրամութեամբ կալեալ զձեռս իմ Ջանայ յուսադրել զիս: Այլ հավիտեան ո՛չ մոռացայց զվայրկեանն, այն ինչ զառաջինն տեսի զկինն Ֆրիդլենդերի. հազիւ մտեալ 'ի տուն նորա, ելանէ նա ընդառաջ իմ և կալեալ զձեռս իմ, արտասուէ զառնագին, պատ լինձ այնպէս ձեռս 'ի ձեռին, երեխայք նորա չրջապատեն զմեօք և արտասուեն բարձր ձայնիւ և ո՛չ դադարեն, մինչև իմ հանդուցեալ սակաւ ինչ, ասեմ նոցա, պարտ է հանդչիլ. նոքա դան և մտանեն 'ի դուզ իմ. և այնպէս նստեալ առ սեղանով, Ջանայ հրեշտակահոգի կինն բանիւք յոգմօք սփոփել զսիրտ իմ: Ցելանելն իմ նուինպէս ձեռն տուեալ զնոյնն խնդրէ, ո՛հ, այս ձեռնտուութիւն, այս քաղցրութիւն և կարեկցութիւն իրրև բալասան բժշկեցին սակաւ առ սակաւ զվէրս իմ. նուինպէս Գիհէվվէի կինն, նուինպէս Իչհոլց և ամենեքեան Ջանային յոյս հետէ սիրով սփոփել զիս»:

«Ցետ փոքր ինչ» գրվածքը, վոր Աբովյանը գրել է Դորպատում, հետաքրքրական է նաև այն իմաստով, վոր ինքնակենսագրական նշանակություն ունի: Այն հազվագյուտ տղյություններից է այս բանաստեղծությունը, վորից կարելի յե նյութ քաղել նրա մանկական տարիների մասին: Ախիթից ոգտվում ենք հրապարակելու մանկությանը նվիրված Աբովյանի մի արձակ բանաստեղծությունը, վորի առաջին մասը տպագրվել է («Գրական թերթ», 1939, № 17):

***

Ո՞վ նախանձելի, ոսկեղեն ժամանակ մանկության իմոյ, դու անցեր և անցանես քաղցրությամբ, խաղաղությամբ և յանհոգության: Աւուրք իմ երջանիկ, ուր դեռ անծանօթ էին տրամութիւն և հոգք ծերության և աչխարհի:

Ջի՞րդ քաղցր էր ինձ ամենայն ինչ, սիրտ իմ միայն զգայր զուրախութիւնս, ես ո՛չ ունէի և ո՛չ գիտէի զրկոն տրամութեան և հոգւոյ: Միմիայն խաղք և զուարճութիւնք էին ընկերք իմ:

Երկին և երկիր, ընտանիք և բարեկամք սիրելի էին ինձ միշտ. ծնողք սիրէին և ուսուցանէին ինձ զբարի մտածմունս: Տուն ծնօղացս իմոց էր բոլոր աչխարհ իմ, դրախտ և երջանկութիւն: Եղբարք և քոյր մխիթարէին զիս, միմիայն զրարիս կամէին և ցանկային ինձ:

Ո՞ւր ես դու բախտաւոր ժամանակ, ո՛հ այլ ո՛չ երբէք զարձցի՞ս. զայ ծերութիւն և ամենայն ինչ վոխի, ամենայն ինչ լինի դժուարին: Առանց աչխատանաց ո՛չ կարեմք ապրիլ. յայնժամ միայն ճանաչեմք զդին բախտի մերոյ. երբ նա կորնչի:

Մանկունք բախտաւորք, լուարուք բարի խրատուց ծնողաց և ուսուցչաց. զայ ժամանակ և դուք ինքնին խնդրէք զդեղեցիկ, նախանձելի, խաղաղական ժամանակ մանկութեան ձերոյ, այլ ո՛չ գտանէք յայնժամ:

Նոքա իրրև լուր անցին, և այլ ո՛չ ևս գառնան. կորուսեալ ժամանակն, կորուսեալ

բախան, կորուսեալ ուրախութիւն և զուարճութիւն միմիայն ցաւք և հոգք մնացին, միմիայն առաքինութիւն [անընթ.] կացուցանէ զերջանկութիւն, վիճակի մերոյ, կենաց մերոց, սրտի և հոգւոյ մերոյ:

Սկիզբն ամենայն ցաւոց և տրամութեանց սկսանի 'ի ծերութեան, յիմարն մոռանայ զայս ամենայն, այլ իմաստունն և բանական ևս ևս պահէ 'ի միտս:

Որ ինչ 'ի մանկութեան սերմանեմք· զայն ժողովեմք ի ծերութեան: Ժամանակ ծերութեան է բեռն դժուարին:

Ուսուցիչն սիրէ զաշակերտն, որպէս հայր զորդի:

Ժրաջան աշակերտք լիութիւնք են վարժապետաց և ծնօղաց: Ինդաց հոգի իմ, զի տեսի ես զձեզ ի բարւոք ողջութեան:

Ոչ ամենայն դիպուած է բարեյաջող:

Զիք ներդործութիւն առանց պատճառի:

Ի բախտ չո՛ւնեմք դժուս և դհոգս, միմիայն յանբախտութեան զդամք զդին բարեկամաց:

Արարի՛չ իմ, դի՞նչ է մարդն առանց առաքինութեան, առանց գիզ և առանց բարեկամաց:

Մտածմունք իմ և կեանք այդպէս անցանեն, քաղցր դեռ, մաքուր աղբիւր, որպէս զուք անզգաստ անցանիք:

Սահակ մանուկ, հայեա՛ց 'ի զեղեցիկ ժամանակ քո, ուսի՛ր, լե՛ր բարի, արի, քանզի դեռ ո՛չինչ ապրիլ զուարթութիւնս քո: Երկնաւոր հայրն մեր տեսանէ զամենայն, զոչ ընդէ՞ր ցաւիս:

Ո՞վ ծաղիկք և եղանակ զարնան, դիա՞րդ զեղեցիկ են նոքա: Ամենայն առաքինին է անմահ յաշխարհի և յերկինս: Աստուած հայի 'ի սիրտս, այլ մարդն յերեսս:

Բացի այդ, «Ձեռ վոքը ինչ...» բանաստեղծութիւնը ցույց և տալիս այն բացառիկ սէրը, վորով կապված է յեղել բանաստեղծը հորեղբոր հետ:

«Ձեռ վոքը ինչ» բանաստեղծութիւնն ամբողջութեամբ տպագրվում է առաջին անդամ: Մի շարք բառյակներ հրապարակված են Ն. Տեր-Կարապետյանի կողմից (տես նրա դիրքը, էջ 9—12): Այս դրվածքից յերեք քառատող (Ղեմին այն խրճիթ...) ինքնուրույն և ամբողջական բանաստեղծութեան նշանակութիւն և սացել (տես Ա. Արովյանի «Ձեռկերը», 1897, էջ 426):

Ի ՎԵՐԱ ԴԱՄԲԱՐԱՆԻ...

Հարութիւն Ալամդարյանը և Արովյանը ծանոթացել են Թիֆլիսում, Ներսէսյան դպրոցում, յերբ առաջինը վերջինիս ուսուցիչն եր: 1834-ին Նոր Նախիջևանում ավազակները սպանում են Ալամդարյանին: Ալամդարյանի մահվան մասին Արովյանին հայտնում է Մսեր Մսերյանը*):

Ահա ինչ է գրել Արովյանն այդ մասին իր դորպատյան հիշատակարանում.

«Ցարութիւն վարդապետ Ալամդարեան իմ բազմերախտ վարժապետի յանկարծական մահուան գառն լուրն՝ որ 'ի 21-ին նոյեմբերի 1834-ին ստացա, այնպէս տրամեցոյց, չվոթեաց իմ սիրտը, որ ես անհանդիստ դոլով մէկ բանի էլա չէի կարողանում ձեռք տալ: Ա՛խ, նրանով մեր աղբի չատ երիտասարդք կորցրին լրանց բախտը: Նա չատին էրբէր լուսաւորիչ լինել: Թէև նա իմ աշակերտութեան ժամանակը լնճ գառն աչքով էր մարիկ տալիս և չատ վէրք հասցրեց, բայց և այնպես մտածելով նորա ջանքը, դիտութիւնը սիրտս այրվում էր և վոթոթվում»:

*) Մսերյանի նամակը լույս է տեսել «Լույս» որաթերթում, 1905-ին:

Մսերյանի ուղարկած հոդվածը Ալամդարյանի մասին նա թարգմանում է դերմաներեն և տպագրել է տալիս դորպատյան թերթերից մեկում, «որ օտարականք ևս իմանան թէ ինչ անթաղդութիւն հասել ա մեր ազգին և ա՛րյոկի արժանաւոր անձն կորցրել ենք մենք»: Բացի այդ, ինչպես պարզվում է հիշատակարանից, Արովյանը ռուսերեն լեզվով մի հոդված է գրել Ալամդարյանի մասին: Այդ հոդվածը նա մտադրություն է ունեցել տպագրել «Северная пчела»-ում, վորի խմբագիրը Ֆ. Բուլգարինն է յեղել: Այդ կապակցութեամբ Արովյանն ընդհարում է ունենում Բուլգարինի հետ, վորի մեջ նա տեսնում է արհամարհական վերաբերմունք դեպի իր անձը և իր ժողովրդի արժանահիշատակ գործերը: 1834-ին, Դորպատում, Արովյանը զրաբար լեզվով մի վոտանավոր է հորինում, ձոնելով այն իր հորեղբոր, Ալամդարյանի և Ագաջանի հիշատակին: Դա մի յերկաբաչունչ բանաստեղծություն է, վոր հեղինակը կոչել է հետևյալ ձևով. «Ողբերգութիւն 'ի վերայ մահուան բազմերախտ ուսուցչին իմոյ Ցարութիւն վարդապետի Ալամդարեանց, ազնիւ բարեկամին իմոյ Ագաջանայ Շերմազանեանի, և գաղջք հօր իմոյ Ցարութիւնի Արովեանց, զորոց գերեզման ա լուրն 'ի միում չարաթոչ առացա ի լինելն իմ ի Դերպտ 1834/21 նոյեմբերի»:

Բերում ենք «Վողբերգութիւն» տեքստն ամբողջութեամբ:

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՑ ՄԱՀՈՒԱՆ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՈՒՍՈՒՑՉԻՆ ԻՄՈՅ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ, ԱԶՆԻՒ ԲԱՐԵԿԱՄԻՆ ԻՄՈՅ ԱՂԱՋԱՆԱՅ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆԻ, ՅԵՎ ԳՂՋՑ ՀՕՐ ԻՄՈՅ ՑԱՐՈՒԹԻՒՆԻ ԱՐՈՎԵԱՆՑ, ԶՈՐՈՑ ԶԲԱԹԱՎՈՒՐՆ Ի ՄԻՈՒՄ ՇԱԲԱԹՈՋ ՍՏԱՑԱ Ի ԼԻՆԵԼՆ ԻՄ Ի ԴԵՐՊՏ 1834/21 ՆՈՅԵՄԲԵՐԻ

Ի կողմանց տարածիդ, ի վայրաց հայրենեաց
Հնչի հողմն գժնդակ, մոլեխառնճ երկիր՝ կործան,
Նա գոռայ, կատաղի, արշաւէ սրընթաց
Թօթափիլ անխնայ ըզպատմաց անդին կեանս.
Խորտակին բլուրք, պատառին վէմք,
Գալարին պաշտք, խարշատին սեղք.
Եւ անդունդք փախս առեալ դառնագոչ ղղրդան:

=

Լան ծնօղք, մորմոքին անախորժ, աղէխարշ—
Ընտանիք և որդիք աչխարհին մենացեալք
Բարեկամք բողոքեն զայս գուժան հողեքարշ
Ի ծով արեան դեղերին, ծփան ողիք ցաւագնեալք,
Գուժէ Հայաստան, վայլատակին ամպք,
Սարսափին երկինք, սասանի երկիր
Լերինք, ձորք, քարանձաւք հեզեղէն զայրագնեալք.

=

Ողբս առեալ արտասուեմ զիմ օրհաս գժնդակ
Աւաղեմ անբուժան զայս կորուստ թանկագին
Ի վայրկս պանդխտեան զրկելոյս աղազակ
Թաւաղոչ ցնորին, խակ զումեք հասանին.
Ընկճին բարեկամք, անկանիք ծնօղն
Կոծեն աղղականք, հառաչեն մանկունք
Այլ ձայն իմ ցնդի յօդս, կորնչի աստանն:

=

Ո՞ր սահման, ո՞ր զարման ես եղէց իմ վերայ,
Որք մաշեն աղեսանջ, զիս անխիղճ, անմխիթար,
Ո՛հ յումմէ՞ սատոյ զձեր սէր երկնամբարձ,

Զօրս յիշեալ կոչիցեմ և ասացից չարաչար.
Անօգնական գիս անտէրունջ
Անայցելու անապաւէն.
Դուք թողիք գիս միայնակ յայս աշխարհ դառնավայրս:

=

Ելանէք, անցանիք չրջանէ ի չրջան.
Ուր խորին, պարառեալ երկնազունդք հրեղինաց,
Վերճեմիք լուսափայլ ի թևս ամպոց յայն կայան.
Ուր հրճուին դմայլին, հոգեհոյլք հրեշտակաց.
Դու չաղմերախտ դատախարակ
Ինքո՛ւշ իմ հայր. քաղցր բարեկամ.
Դուք անուն ծանելիք յաւիտեան անմոռաց:

=

Իմ ոսկերք, իմ երակք, հոգի, սիրտ. զգայարան
Ձեօք չարժին, ձեօք խորհիմ ի յիմում մարմնի աստ.
Միննդուստն, միննդսէր, միւսն զարիւն կենդանական
Որովք, ընչեմ, կամ գործեմ, ներգործեմ յերկիր աստ.
Դուք հեղիք ի յիս պատճառք իմ կենաց
Դուք եատուք ինձ կեալ հոգւոյս սիրելագլուխ:
Եւ կրկին դուք տանիք գայնս ընդ ձեզ անանջատ:

=

Քայքային իմ կազմուածք՝ իմ աղիք գալարին,
Մինչ զգամ զայս աղէտ, դառնաթոր զայս հարուած.
Ի կրծոցս թխպակերպ հառաչանք կուտակին
Մլեն միայն յավիշտակն զառարկայս յիմ աչաց,
Ես փակեմ զիմ դէմս, ծածկեմ զիմ գլուխ
Անկանիմ ի վայր անձայն, անչշունչ,
Այլ իմ կսկիծք, տաչորմունք յաւին ինձ մերձակաց:

=

Երկնաթռիչ վերելեալ ի թեթև թևս մտաց
Տարերեիմ ես ընդ ձեզ ընդ ոլորս ամենայն,
Զեզ հանդիսաս, օթևան, կամ տեղի ամրակաց
Ես չուրեք զտանեմ յարարչութիւնս համայն.
Աստեղք լուսինք միլիոնաւորք
Աչխարհք կայանք, բիւր անհամարք
Կեանք օտար և չարժուման և չրջան տարաձայն.

=

Անեղը, անսահման, անկչիռ, անբանակ.
Զի՛ք աստ վեր, զառ ի վայր, չի՛ք աստ կէտ, չիք աստ ափ
Ո՛չ միտ, ո՛չ հոգի, ոչինչ թիւ, ոչինչ չափ
Զգօրէն հասանել, տալ սրտի զիւր վախճ
Բարձունք վերին անդունդք ստորին
Պարպատեն աստ գոյացութեամբք
Այլ թէ ո՞ւր ձեր ժողով, կարկամիմ ուշաթափ:

=

Ուր հայիմ ես զրդեալ ի ցաւոց, ի կրից
Ուր մատչիմ չօշափել զէթ միայն մտածմամբ.
Սայթաքիմ, սուզանիմ բռնաճիգ յարկածից
Որք զասլատամբս ի խորխորատ զայրացմամբ.

Ատա կերպարանք սարսափելիք
Շարժօղ, չարժինք անմատչելիք
Ուր յատիմ չքոտիս, խորատակիմ խարխափմամբ:

=

Ատա մտայլ միպատատ, գժոխատատ գիս պատէ.
Արհաւիրք, տատանմունք, գժնդակք, այլանդակ
Սրատամն, խելացնոր յածիմ պատ ի պատէ
Դանդաչիմ անդադար իրր անել զընդատնափակ.
Ատա վիհ, դիհեան խաւարամած
Տանջարանք անդերձ անլուրք,
Քատմնիմ, տատայիմ հոգետպատ յայս դիպակ:

=

Գտանել զիմախտատ չիք ինձ ատա ապրուրիք
Ճողոպրիլ, դերծանիլ ո՛չ կամիմ ո՛չ իշխեմ.
Թէև հուք լսվեսցէ զիմ ոսկերս ատա անխիղճ
Ես զձեզ սրսնեմ ձեր անուն հառաչեմ:
Մերձեսցի մուխն. քացցի տարտարոսն
Ատուսցին այտք, կլցէ գիս անդունդ
Այլ և անդ ես հանդիպայց, ի տեսիլ ձեր անախնդձ:

=

Լերուք ինձ այցելու դուք որդիք լուսածին
Դէթ քիթիթ մի վայրկեան ինձ կացէք յանդիման
Տո՛ւք սրտիս գիւրք կարօտ, որ հաչի թախծալին
Եւ աչօք մի՛ հայիլ ես եղեց բաւական.
Ատատր կամ մուխ, վիշտ ազազակ
Եւ վարանմունք այս հոգետանջք
Փոխեն ինձ ի խրախոյս, դարձցին ի լոյս տունջեան.

=

Ի հեռուտակ անդ թնդայ ահագոչ ինձ բարբառ
Նա ընդ երակս էակաց դղրդայ հրաչագին,
Նոքա գան, նոքա գան, ո՛վ հրաչիցս այս անճառ.
Լուսապղեակ պճնազարդ, սիպաքայլ մերձենան.
Լուսացնցուղ դէմք, անհամար անհատք
Ծանօթք, անծանօթք մի հայլ ի մի խումբ,
Պակուցեալ տատանիմ յանտովք այս Ատեան:

=

Դուք կանգնիք կենդանի առաջի իմ աչաց,
Բարբառիք ինձ սփոփ, խօսիք ինձ մխիթար
Մինն գրկէ, մինն փարիւ. միւսն սրբէ զարտասուս.
Զիս կանգնել ի յատին ջանայք դուք սիրահար:
Հի՞մ օտար ձայն, գի՞նչ կերպ անլո՛ւր.
Զե՛ք դուք մարմին, չե՛ք երկրածին.
Տարտափիմ ձեզ հայել դուք հոգիք լուսամառ:

=

Բացափայլ ընթանայ ճարտատանն այն չքեղ
Դէմք նորա հրատան թօթափեն հուր կայծակք
Աղատնակերպ ոստոստայ պատանին այն համեղ
Փաղաքչէ, գպղմէ իւր ձայնիւ քաղցրանուագ,
Ձեվատնէ ածէն զայն ծեր

Որ ի յերկինից գետ իջանէ.
Առնուլ զիմափակ իւր հայրենիս, օրհնել զկարօտ անթարգ զաւակ։

=

Ծերկնցան բազում ամք և պայման վերջացան.
Ցորս զաւ զալ առ մեզ՝ ուխտեցեր» ասէ ցիս.
Հեռացար աչաց լոյս, թողեր զմեզ ի վարանման
Մաչեցայ ծերունիս, յուշ ածել զյոյսդ սրտիս.
Մատի՛ր առ իս հոգւոյս խնդանք,
Թո՛ղ զիս փարիլ զպարանոցաւդ.
Արտասուք եղերերդ այլ չօղնեա՛ քեզ յատիս»։

=

Սոյն երեք անմարմինք չբջարկեալ ատտ գինեւ
Հային յիս վարդապետ, սիրակաթ իւր տեսլեամբք,
Զեռնեղեալ յիմ վերայ տարտղն ակներն
Միաձայն միաչունչ երկինտուտ իւր հնչմամբք.
«Լե՛ր հայրենեաց հաւատարիմ,
Լե՛ր ազգակցաց զաւակ օրհնեալ.
Հովանի մեր լիցի քեզ պաշտպան անդ ի յամպս»։

=

Ալացե՛ք սաւառնեալ անարատ գուք հոգիք,
Մի՛ թողուք զիս զրկեալս՝ անտէրունչ յաշխարհի,
Զերախտիս, զձեր սէր, զհայրութիւն յերկրի տատ
Օրհնեցից յարաժամ օրքան եմ կենդանի.
Այնմհետ՝ ի հոգիս անմահ ի միտս իմ
Անմոռաց պահեմ զքանքարս անկորուստ
Եւ զանուն, զյիշատակ, զձեր տապան պաշտելի։

=

Ո՞վ կարաց անհնոյն դնել կարդ կամ օրէն.
Նա միայն քննէ զիւր վճիռ, զիւր հրամանն.
Նա ի միտս ակնթարթ հատանէ զթել ատէն
Բովանդակ ստեղծուածոց՝ որք նովաւ գոյացան.
Ակն նորա աչաց և թեւք մի ոտին
Կամ չարժ մի մատանց կամ ծղուտ չբմանց
Փչբեսցէ, մանրեսցէ զտիեզերս ի մի վայրկեան։

=

Գետնամած անկանիմ ես վոչիս ատտ ի դուռ
Գրկահամբոյր ծնրադրեմ առ նորա պատուանդան.
Փառատրեմ ներբողեմ զզարծ նորա անարատունչ
Ջնոր անուն ատնելի՝ որում է հնարական
Զիս վրկել, ազատել, սփոփել, զարմանել,
Իմ վիրաց, իմ ցաւոց սպեղանիս պատրաստել.
Ի բանդէ զիս հանել և զգուել հայրանման.

=

Սփիւռք համայն ծովածփին, տարփողին զնորա խնամ.
Եւ անչունչք չե՛ն զրկեալ ի մատանց նո՛ր բարեաց.
Ես միա՞յն մնացից անհազորդ կամ ատրատամ—
Ես զաւակս սնուցեալ ի նորա դաստակաց.

Ամուր հաւատով, անխարդախ յուսով
Դիմեմ ի հայրենի ծոց նոր զթալից
Եւ օրհնեմ յաւիտան զանազարտ դէզ կամացն։

=

Այս քանաստեղծութիւնը արժէք է ներկայացնում նաև բանասիրական տեսակետից։ Այս գրվածքի խորագրում Աբովյանը հիշում է իր հոր անունը (Ողբերգութիւն ի վերայ մահուան... քաղցր հօր իմոյ Հարությունի Աբովյանց...), մի փաստ, վոր մինչև հիմա անհայտ է յեղել և կարող է վորոշ իմաստով ոգուտակար լինել լուծելու այն հարցը, թե Աբովյանի հոր անունն ինչ է յեղել Հարությո՞ւն, թե Ավետիս։

Աբեխիայի նոր ավյալների հիման վրա այժմ հաստատապես կարելի յե պնդել, վոր Աբովյանի հոր անունը յեղել է Ավետիս։ «Վոդրերգութեան»... մեջ հիշված Հարությունը նրա հորեղբայրն է։ ՀՍՍՀ Գրական թանգարանում Աբովյանի դորպատյան նամակների չարքում պահվում է 1831-ի փետր. 20-ին նրան հասցեագրված ծնողների նամակը, վորի տակ առաջարկել են թե՛ Հարությունը, թե Ավետիսը, վերջինը երբեմ հայր, առաջինը՝ հորեղբայր։ Նամակն առարաղրված և հետևյալ ձևով՝ «Հօրեղբայր քո Հարութիւն և հայր Աւետիս Աբովեանց»։ Իսկ այն հարցը, թե ինչու յե նա «Ողբերգութեան»... մեջ հորեղբորը հայր անվանել (վորի հիման վրա յել 1-ին հատորի կենսագրական ակնարկում մենք Աբովյանի հորը կոչել ենք Հարություն) պետք է լուծվի հետևյալ ձևով. Աբովյանի առհասարակ Հարությունը, վերջին Աբովից հետո, յեղել է ամենատարեցը և համաձայն նահապետական ընտանիքների սովորության, բոլորը նրան հայր են կոչել։

Ինչպես հայտնի յե, 1836-ի գարնանը Աբովյանը Դորպատից վերադարձավ հայրենիք։ Վերադարձին նա կանգ է առնում Նոր Նախիջևանում և մայիսի 15-ին այցելության է գնում «բազմելարխատ ուսուցչի» հիմնին և, ինչպես հիմա յե պարզվում, մի ճառ ասում Ալամդարյանի մասին նախիջևանցիների համար, ապա՝ գրում «Ի վերայ դամբարանի» բանաստեղծությունը։

Ձեռագիրը պահպանվել է։ Տեքստն առաջին անգամ հրատարակվել է «Սորհրդային գրականություն» հանդիսում (1939, № 5—6, էջ 38—40), Ռ. Զարյանի կողմից։

ԲԱՑԱԹԻՆԵՐ

Աբովյանի չափածոյի սիրած ժանրերից։ Հ. Թումանյանի քառյակների հեռավոր նախատիպն են։ Աբովյանի բայաթիների արձագանքը կարելի յե դանել նաև Իսահակյանի ստեղծագործության մեջ (տես Ավ. Իսահակյան, «Ընտիր յերկեր», հատ. 1, 1939, էջ 115)։ Բայաթիներից մի քանիսը անպարման ֆոլկլորային ծագում ունեն։ Իսկ մեծ մասը, պետք է յենթադրել, հորինված է ժողովրդական ստեղծագործության ոգով, ինչպես Հ. Հովհաննիսյանի «Արագը» և այլն։

«Բայաթիների» վրա ընդհմարելի յե ազգբնջանական բայաթիների ազդեցությունը, վորանց օրինակով Աբովյանը կամեցել է ստեղծել հայկականը*)։ Աբովյանն ասում է հետևյալը. «Բայաթիքը են մտքով եմ դրել, վոր չունքի մեջտում, հայի վրա թուրքերեվար են եսպես բաներ ասում, լավ հայը հայերեվար ասի, վոր քիչ քիչ լեզուն քաղցրանա, չունքի վոչինչ բան լեզուն ևնքան չի քաղցրացնիլ, վորքան խաղն ու տաղը»։

Աբովյանը դրել է մոտ 70 բայաթի։ Միայն 34 հատ նա տեղավորել է «Պարապ վախտի խաղալիք» դրքում՝ «Բայաթիք» ընդհանուր վերնագրի տակ։ Մնացած բայաթիներից, վոր մինչև վերջին ժամանակները անտիպ եյին, թվով տասնմեկ հատ**), հրատարակվե-

---

*) Տես «Ազգբնջանական բայաթիներ» հավաքածուն, Ա. Գրաչու թարգմանությամբ, (Ազգբնջներ, Բաքու, 1940)։

**) Տասնմեկ բայաթիներից ութը նախապես հրատարակվել է «Սորհրդային գրականություն» հանդիսում (1939, № 2, էջ 37—8)։

ցեն հների հետ «Բայաթիների» համընտիր ժողովածույում (Պետհրատ, Ցեղեան, 1939)։ Այս ժողովածույում հրատարակվում են թվով 19 նոր բայաթի։

Չհրատարակվի բայաթիներից մի քանիսը յեղածների տարբերակներն են։ Որինակ·

Ախ, մեկ յերնող բա՛ց, յե՛ռ տաբ,
Ցերը ուղնաս, հոգիս ա՛ռ·
Թող յես մեկ հողը մանիմ
Են վախան քո սերն ել յես տաբ։

կամ

Ով հասցրեց քեզ չարի,
Ինքը վոխ գնաց քո չարի,
Ինձ ինքան ո՞ւր ես կրում,
Ի՞նչ տանցիր, վոր չարի։

Ամեհղդ չենք համարում այստեղ բերել Բոզենյանտեղի համար գրի առած հայկական, տղրբենջանական և քրդական ժողովրդական յերգերի տարբից յերկու քառյակ, վոր գտնվում են «Ջանումա Ջան չի մնաց» և ուրիշ յերգերի հետ «Հայ ժողովրդական յերգեր» մի ընդհանուր խորագրի տակ։

Գերեզմանդ ուխտ եմ յեկել,
Աչքս քարի վրա գցել,
Ի՞նչ կրլի մի հետ բացվի,
Գամ պատկեմ կչոփդ յես ել։

Եսքան սիրտդ վոր մեռնում եմ,
Անունդ տալով վոր երվում՝ եմ,
Ուշ, միաք, հոգի յես պեն դրած,
Գիշեր ցերեկ վոր առնջվում եմ։

Այս յերկու քառատողը թե՛ նշույթով, թե՛ դրելու ձևով նույնն են, ինչ վոր Աբովյանի ձյուս բայաթիները։ Նկատի առնելով, վոր Աբովյանը նույն տետրում «Ջանումա Ջան չի մնաց» իր հավրնած բանաստեղծությանը Բոզենյանտեղի համար գրի յե առել ժողովրդական առեղծագործության անվան տակ, մենք իրավունք ունենք կասկածի տակ առնելու վերոգրյալ յերկու բայաթիների հեղինակի հարցը։ «Ջանումա Ջան չի մնաց»-ի վրաստր մեզ թույլ և տալիս կարծելու, վոր այս բայաթիները նույնպես պատկանում են Աբովյանի գրչին, բայց գրված են ժողովրդական յերգերի վոճով։ Ցևթե անգամ հետագա ուսումնասիրությունները հակառակն ապացուցեն, այսինքն, վոր ինչպես «Ջանումա Ջան չի մնացը», այնպես ել այս բայաթիները Աբովյանինը չեն, այլ ժողովրդական են, ապա դա մի նոր և ավելորդ ապացույցը կլինի այն բանի, վոր բայաթիների մի մասը իրոք ֆոլկլորային ծագում ունի։

Բայաթիները յերկու ինքնագիր ունեն. մեկը «Պարապ վախտի խաղալիք» գրքի ամբողջական ձեռագրերն են, մյուսը՝ սեպագրությունների տետր, ուր գրի յեն առնված բոլոր բայաթիները։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրրև թարգմանիչ Աբովյանը շատ քիչ է հայտնի, կամ ավելի ճիշտ՝ բոլորովին հայտնի չէ։ Մինչդեռ հետագոտողը Աբովյանի ձեռագրերի մեջ կհանդիպի բավական շատ թարգմանական էջերի։ Այն մասին, վոր ինքը թարգմանություններ է կատարել, Աբովյանը խոսում է «Վերքի» առաջարանում (1939, էջ 6—7)։

Աբովյանի չափածո թարգմանությունները ճնշող մեծամասնությամբ պրոզայով լեզվով են կատարված։ Նմուշի համար բերել ենք թարգմանությունների մի փոքրիկ չորք, վորով Աբովյանը պետք է ճանաչվի Գյոթեյի, Շիլլերի, Կարամզինի և դուցե նաև Հոմերոսի*) առաջին թարգմանիչը հայ գրականության մեջ։ Այս թարգմանությունները նա կատարել է Դորպատում։

*) Հոմերոսի ամենահին թարգմանիչները համարվում են Թումանյանը և Բագրատունին. առաջինի թարգմանությունը լույս է տեսել 1843 (կամ 47)-ին, իսկ յերկրորդինը՝ 1864-ին։

Աբովյանը շատ լեզուներ գիտեր — գերմաներեն, ֆրանսերեն, լատիներեն, ռուսերեն, պարսկերեն, տղրբեջաներեն և, մեզ թվում է, վրացերեն ու քրդերեն։ Բնականաբար այս բոլոր գրվածքները նա պետք է թարգմանած լինի բնագրերից։ Թվում է թե բոլորի մեջ բացառություն է կազմում «Իլիական»-ից թարգմանված հատվածը։ «Իլիական»-ը նա պետք է, ինչպես յերևում է, կա՛մ լատիներենից, կա՛մ գերմաներենից թարգմանած լինի։

Գյոթեյի «Անտաոի արքան» Աբովյանը թարգմանել է 1831-ին, այսինքն Դորպատ մեկնելուց հազիվ մի տարի անց (Աբովյանը Դորպատ է հասել 1830-ի սեպտեմբերի 4-ին)։ Այս թարգմանությունը մի նոր վկայություն է այն մասին, թե Աբովյանը ինչպիսի արագությամբ և հմտացել գերմաներենին, վոր հաջողությամբ բնագրից թարգմանել է մի այդպիսի բարդ գործ։

ՅԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյանի բազմաժանր ստեղծագործության մեջ յերգիծական գրվածքներն իրենց տեղն ունեն։ Բացի առակներից, վոր հայտնի յեն «Պարապ վախտի խաղալիք» գրքով, Աբովյանը նորինել է յերգիծական պոեմներ և բանաստեղծություններ։ Ինչպես առակները, այնպես ել մյուս յերգիծական գործերը Աբովյանը ծառայեցրել է մի նպատակի— իր լուսավորչական ծրագրին, աճխնա ծաղրի առարկա դարձնելով ամեն խուր և արգելք։

«Յերգիծաբանությունը» բաժանված է յերկու մասի, գլխավոր յերգիծական գործերի անունով·

ա) Պարապ վախտի խաղալիք

բ) Հազարփեշեն

վերջին բաժնում գետեղված են արխիվից հանված, մինչև այժմ անհայտ ,նոր նյութեր։

ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ

1864-ին Թիֆլիսում, Հ. Ենգիբարյանի և ընկերության տպարանից լույս տեսավ Աբովյանի յերրորդ գիրքը*) հետևյալ խորագրով· «Պարապ վախտի խաղալիք, պարապ մարդու առնու միաք»։

Այդ ժողովածուն կազմել և պատրաստել էր, կամ ինչպես ինքն է ասում՝ «հինել և տպագրել» էր տպագրության համար ինքը, Աբովյանը, դեռ Թիֆլիսում յեղած ժամանակը, 1841-ին։ Ժողովածուն Աբովյանի օրով լույս չտեսավ**)։ Ինչպես յերևում է, ժողովածուի ձեռագրերն ընկնում և «Կնունքի» հանդիսի խմբագրության կամ նրան մոտ կանգնած աշխատակիցների ձեռքը և նրանք հրատարակում են այն։

*) Առաջինը «Վերք Հայաստանի» (1858), յերկրորդը՝ «Նախաշավիղը» (1862)։

**) Քամալյանը Աբովյանի մասին նրա աշակերտների պատմածը գրի առնելով, ասում է, վոր այդ ժողովածուն լույս է տեսել 1843-ին։ Այս միակ վրասը չէ, վոր Քամալյանի հաղորդում անճշտություն է և կասկածավոր աղբյուրից առնված, վորպիսի հանգամանքը մի վորոշ անվստահություն է ներշնչում նրա կողմից գրի առնված հիշողությունների նկատմամբ։ Այս չի նշանակում, սակայն, վոր Քամալյանի բոլոր ասածները կասկածի տակ պետք է առնել։ Գրի առնելով Աբովյանի աշակերտների հայտնած հատ ու կենտ և կցկտուր տեղեկությունները, նա կատարել է, ինչպես յերևում է, հիշողություններն ավելի շատ ներկայացնել։ Այդ նպատակով նա օգտվել է գրական աղբյուրներից, վորոնք, սակայն, իհարկե, վոչ բոլորը, հետևաբար նման, անհիմն և իրականությանը չհամապատասխանող դուրս կգան։

Այն նյութերը, վորոնցից Աբովյանը կազմել է իր այդ ժողովածուն, միատարը չեն։ Ժողովածուի մեջ բավական մեծ քանակությամբ յեղած առակների հետ տեղ են գտել նրա լիրիկական չափածո գործերը, բայաթիները, Աղասուն նվիրված վառաշավորների չարքը, ուրիշ բանաստեղծություններ և, վերջապես, «Ճևոզորա կամ վորդիական սեր» դրամատիկական գործը։ Ներկա հրատարակության մեջ «Պարապ վախտի խաղալիքը» իրը մի լրիվ ամբողջություն, ինչպես կազմել եր հեղինակը, չեր կարող տեղ գտնել, վորովհետև ներկա ժողովածուի նյութերը համախմբված են ըստ ժանրերի։ Դրա հետևանքով էլ «Ճևոզորան» տեղ գտավ ներկա հրատարակության առաջին հատորում, ուր ընթերցողը կգտնի գրամատիկական գործերի բաժինը, իսկ մյուս նյութերը, բայաթիները և վառաշավորները գտնվում են այս հատորի զանազան բաժիններում, ըստ ժանրային պատկանելության։ Աբովյանի ժողովածուի վերնագիրը— «Պարապ վախտի խաղալիք» պահպանում ենք մեր առակների համար, վորոնք կազմում են նրա 1864-ի ժողովածուի վերջնող բաժինը։

Բերում ենք ամբողջությամբ «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի «Հառաջաբանը»։

Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Շատ անգամ պարապ ժամանակս մեր էլի անում, ինչպես մի բան գրեմ, վոր մեր խալխի սրտովն ըլի, բայց չեմի գիտում, թե ի՞նչ լեզվով գրեմ։ Մեր գրաբառ լեզուն անդին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ վոր գիտեմ, մեզին էլա՝ են համր, են քաղցրությունը, են ճոխությունը չունի։ բայց մեր վառ բախտիցը՝ հազարիցը մեկը չի հասկանում, ի՞նչ պետք է արած։ Ցերանի են սհաթին, վոր մեր ազգը քիչ քիչ կարոզանա ես կրած դանճը գրանել, ու իր լեզուն սովորել, իմանալ։ Բայց ո՞վ չի գիտի, վոր սրան շատ ժամանակ կուզի։ ու մինչև են ժամանակը մնալ։ ո՞վ գիտի, մարդ աո՞ղ կմնա, թե չե։

Ես մտածելով՝ ուզում եյի, վոր գրած բանս ամենի մարդ հասկանա, ու ինդուր համար աշխարհարար գրեցի։ Թող գիտուն մարդիկը ինձանից չնեղանան. նրանք շատ գիրք են կարդում, իրանց սիրտը մխիթարում. ամա հասարակ մարդը մեկին ելա չունի, վոր նա էլ նրանով իր պարապ վախտը՝ ժամանակին անց կացնի։

Շատ մարդ է դանդատ անում, թե մեր խալխը գիրք կարդալ, ուսումն չի սիրում. ախր ի՞նչպես սիրի մարդ, վոր գրքություն չի հասկանում։ կարելի չե՞, ես սխալում եմ, բայց բնական է, մարդ միշտ են բանը կսիրի, վոր իր սրտովն ըլի։ Ցավրոպացոց մուղիկեն շատ հիանալի չե, խոսք չունիմ, ամա մեր սաղն ու զուռնեն մեր ականջին ավելի ա դիր գալիս, չունքի երեխությունից ենդուր ենք սովոր։

Շատ բաներ եսպես գրել, հազիր եյի արել աշխարհարար, բայց էլի սիրտ չեյի անում, վոր լիս գեմ։ Վախենում եյի, թե ժամանակս, փողս կորչի, գիրքս էլ մեկ տեղ թողումը վեր ընկած մնա, վխի։ Բարեկամ մարդիկը վոր վախտ վախտ տեսան, խորհուրդ տվին ինձ, թե շատ լավ կըլի, վոր տպել տամ։ Իրավ՝ թե վոր մուրդս տեղ հասնի ու գրածս տպվին գիր գա, վորքան բախտավոր կըլիմ։ են ժամանակը ջանք կանեմ, վոր գնա լավ բան գրեմ, թող ես առաջինն եսպես ըլի։

Կարդացողը ինքն էլ լավ կիմանա, վոր ես գրած բաները ավելի ուրախության համար են, են պատճառով բոլորը մեր խալխի խոսացած բաներն եմ հավաքել. թարգմանածնեբս էլ՝ նեղես եմ դուս բերել, վոր մեր խալխի սրտովն ըլի։ Բայաթիքը են մրտքով եմ գրել, վոր չունքի մեջտեղ, հացի վրա թութքեվար են եսպես բաներ ասում։ լավ հայը հայհավար ասի, վոր քիչ քիչ լեզուն փաղցրանա, չունքի վոչինչ բան լեզուն ենքան չի փաղցրացնիլ, վորքան խաղ ու տաղը։ Հույս ունիմ, վոր ուրիշ մարդիկը գնա լավը չինեն։

Աղասու մեկ քանի խաղը, վոր եսպես մեջ եմ բերել, կարելի չե՝ թե՛ շատ մարդ

չիմանա, թե նա ո՞վ եր։ Ազասին մեկ ջահել, ոսկիզ քանաքեռցի հայ եր։ Ղզլարչի ժամանակին սովորություն կար, վոր աղչիկ եյին քաշում։ Մեկ որ եսպես աղչիկ քաշելիս՝ կարճ Ազասին դուս եկավ, մեկ յերկու թութքի սպանեց ու փախավ Փամբակ։ Ղզնի հորեքմարը Ցերանու բերդումը չորացրին. ինքն էլ՝ Ռուսը վոր Ցերևան առավ, գնաց, վոր հարն ազատի, իրան էլ հոր վրա տվին, սպանեցին։ Ես խաղերը են փախած ժամանակին ասել։ Սրա պատմությունը շատ յերկար ա, մեկ մեծ գիրք ա, վոր գրած՝ մոտիս հազիր ունիմ ու նրանով կարելի յե իմանալ են ժամանակվա մեր աշխարքի հալը։ Գրքի անունն ա. ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՈՂՔ ՀԱՅԲՐՆԱՒՈՐԻ։ Ենպես էլ շատ զվարճալի պատմություններ աշխարհարառ գրած՝ մոտիս հազիր ունիմ։ Ով գիտի՝ բալքի թե մեկ ատավածասեր մարդ իր հոգուս խաթեր տպել տա։ Ցես չկարացի բոլորը ի միասին գրել, չունքի խարջը շատ կըլեր։

Թե գիտաես, խելոք մարդիկ ինձ պախարակին, գուս էլա ինձ պահիր՝ սիրելի ազգ, չունքի իմ ուզածս են ա, վոր գեղ ծառայիմ, գեղ իմ կյանքս տամ, քանի չունչս քերնումս ա։

1841—Թվին. Թիֆլիզ։

Ինչպես «Հառաջաբանից» էլ յերևում է, Աբովյանն իր առակների մի մասը թարգմանել և փոխադրել է։ Որինակ. «Խանը» («Барон»), «Քոռերը» («Слепцы»), «Անքաղաքավարի եշը» («Осел невежа»), «Ծառը» («Дерево»)— խեմիդների, «Արտուտը իր ձագերով ու յերկրագործը» («Жаворонок с детьми и земледелец»)— Դմիտրիևի, «Աբռաքեքը» («Овод»), «Ձիդնավորն ու արջը» («Пустынник и медведь»), «Անցվորականքն ու շունը» («Прохожие и собака»), «Աշտարակը փորս անելիս» («Заяц на ловле»), «Զռաքի շունը և Ֆիլը» («Слон и Моська»), «Գելն ու գառը» («Волк и ягненок»), «Առյուծն ու մոծակը» («Лев и комар»), Կռիլովի առակների թարգմանություններն են։

Հ Ա Զ Ա Ր Փ Ե Շ Ե Ն

Ցերքե է գրել, հայտնի չե։ Թվում է թե պետք է գրված լինի այն տարիներին, յերբ Աբովյանը Թիֆլիսումն եր, այսինքն մինչև 1843-ը։

Առաջին անգամ տպագրվել է «Մեղու Հայաստանի»-ում, հետո էլ առանձին գրքով (1912, Թիֆլիս)։

Զեռագիրը, վոր գտնվում է Աբովյանի արխիվում, հետևյալ խորագիրն է կրում. «Հազարփեշեն։ Ցերգիծարանություն են լարի անձանց վրա, վոր մեր խալխին փուչն են դնում։ Պաչ. Աբովյան»։

Պահին Աբովյանը կցել է հետևյալ յերկտողը.

ԵՍ Վ.ՈՏԱՆԱՎՈՐԻ ԳՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

Ո՞վ չի գիտի, վոր տեղիցը վեր կենողը հենց մեր խեղճ խալխի վրա ա վոռը բարձացնում։ Գիտուն մարդը նա յե, վոր պակասություն տեսնելիս, սիրտը ցավի, ձեռից նիհածը չհնայի ու պակասավորին ուղղի, չի՛ թե վրեն ծիծաղի, գրով, լեզվով խայտառակ անի։ Ամեն ապր լավության հետ վատություն էլ ունի՝ ենչպես մեկ ծառ, վոր սառչ պաղի հետ չատան էլ ա բերում։ Ցեթե անուսում մարդը պակասություն տեսնենա, չի՛ գործանալու, այլ նեբելու, ցավն ես ա, վոր մեկ մարդ համ լուսավոր ըլի, համ պակասավոր, բայց իր ծկը թողած՝ այլոց գերանը քննի։ Թե ասեմած կա՝ մեր ասիացիք էլ փիչ համեմատիլ, յես մեր հազարփեշեն մեջ բերի։ Կարելի ա՝ թե չատ բառ չատ խոսք իրանց վրա բերան բաց անի։

Կամենալով մեր խալխի բնությունը ինչպես իմաստուն մարդկանց բնության հետ մի փիչ համեմատիլ, ես մեր հազարփեշեն մեջ բերի։ Կարելի ա՝ թե չատ բառ, չատ խոսք փիչ մի ծանր թվի, բայց այլ ձևով հնար չի կար, չունքի բանն ենպես պետք է չինած,

դրած, վոր կարդացողի սրտովն ըլի: Շատ մութը լեզվով գրել՝ ինձես եմ կարծում, թե մեր խալխին դիր չի՛ գալ:

ՀԱՒԵՐՄԱԶԻ ԳՈՎԸՐ

Գրել է Թիֆլիսում, 1843–ի սպտեմբի 9–ին, այսինքն Ցերևան մեկնելու նախընչին: Ինչպես յերևում է, Աբովյանի պանսիոնի աշակերտներից մեկի հայրը, մի գնուց ապա, պատգել է ժամանակին և լրիվ վճարելու Աբովյանին իր վարդու ուսումնառության և տեղի տվել մի սուբ նամակի, վորը վերջանում է հավերժական հացկեն ուղղված գովքով:

Ահա այդ նամակը.

ՆԱՄԱԿ ՀԱՒԵՐՄԱԶԻՆ

Ա. Գ. Ա.

Ցես տեսնում եմ, վոր թևկուզ իմ գիրը ձեզ համար, թևկուզ կամիսան քամին: վոչ պատասխան կա, վոչ կատարումն: Ամեսա իմ ժամանակին, ամեսա իմ բերնին, վոր նհամ տեղը բանում եմ: Եվ վոչի հետարի մասին չեմ գրում ես անգամ: Ներեկնիկ մեկ յերկու խոսք եվ ասեմ, հետո եղուց, եղոր վոր գնամ, վոչ գուռ կարծես քո մարտիվ, թե յես հիմար եյի, բան չեյի հասկանում, վոչ իմ սրտովը գրդ մնա, թե խոսքն բնիկած տեղը՝ չասեցի: Գուռ մի կարծիր, թե վոր յես քեզ նման չատ փող չունեմ, ևն ա աչքս ծակ՝ վոր խարեբայությունով այլոց փողը ուտեմ: Իմ մինն ուտել ինձ համար լավ և, քանց եղ բանը: Աղքատ եմ եկել աշխարհ, աղքատ ել կերթամ, ամա հարամ բան վոչ բանել եմ մինչև եսօր, վոչ ել կբռնեմ: Ցես քո, կամ այլոց մեկ քանի մուսուլման մանեքի խոթեք՝ իմ պատիվը, իմ խոսքը գնանվը չեմ տա, լավ իմանաք: Եսոսվ չսրս անդամ և, վոր գուք իմ գառն աշխատանքով գտած փողը կարում եք: Հայտնի բան և, վոչ թուր ունեմ, վոչ թամսուկ, վոր իրավունք դանեմ: Ցես կցանկանայի, վոր գուք մի աղքատ եյիք յերդել ու ձեր վորդու պես շնորհալի անդման վարդի ունեցել, յես նրան անխով ուսուցանեյի, վոր իմանայիք, թե իմ գարդը փողը չի, այլ մարդի մարդասեր չդգեցն և: Մեկ ասած ազդ վոր ելել եյի, ես չեյիք անել: Ավալի աքթա վոր մեծ վորդուդ ինձ ավիր, խոստացար տալին ուֆ թուման: Տարի ու կես անցկացավ, փոքր վորդիդ ել բերիր, կես տարի ել նա եր ինձ մոտ, հետո բոլորի համար մեկ թուման ավիր: Ել փոդի համար չեր, 3–ին մեկ անգամ դուս արի, չունքի կես տարին լրանում եր, փողն ուղեյով բերանս հասնեց: Վերջը ելի վոր կրկին նա ինձ մոտ մտավ, անպատմելին եր, չունքի գրած ունեյի, յերկու տրեսի փողը կարդին ավիր— հետո ասեյիք, թե մեր վագին նոյեմբերին և սկսում: Հիմիկ նոյեմբերին ու դեկտեմբերին եմ ուզում, տասում եք ավել եմ: Հապա ես ոթար ամսվա հախիցը չխոսանք, վոր մեկ կապեկ չեմ տացել: Այդ կնչանակի, վոր յես տասա եմ տասում, քո վրդն ուզում եմ ուսել: Թե հասես ըլի, անեծք տալը պատահի գրծ և, բայց վոր մարդուս ճարը կտրվում ա, սրտի գարդը անեծքով և դուս բերում: Թե յես եմ տուա տասում, տասված են միակ վարդուս խերն չտա, նրանից գարտակ մնամ, թե չե ամենարարին արարչէը ես ապրտա վարժապետիս զրկանքը ննգես՝ քո առաջը բերի, վոր քանի մտածես, ննգան ցավես ու երվես... մարդ տասծո՝ ասենք դատաստան, որնոք խղճմտանք քեզ չեն ներգործում: Վարդվոց, գավակի տեր ես, սրտը նրանց ելա խևդ արի, ինձ վոր եղ ես անում, վոր աչքի լիս ու կյանք եմ փչացրել, բաս ուրիշին ի՞նչ չես անել: Եղպես մեր հետարը պրծանք, քեզ բաշխեցի բոլորն ել, վոր գնա հարատանաս: Բայց արդարության, անմեղության կանչն՝ Ազա, լավ իմաց ըլիր: Մենակ դուք չեք ես քաշաբանքը իմ հախը կարել, բոլորին ել՝ ես ճամփի արհնության կտամ իմ սրտումս, քանի չունչ ունեմ, վոր ինձանից փող կարդը իր կյանքին ու տանջեցը խերվի, գավակին չեմ ասել, չունքի անմեղ գավակը ինչ դյունահ ունի:

Ուշեցա ես գիրը, ինչպես առաջ, վախիմ ու ինձես ուղարկեմ քեզ մոտ, առանի աչքը քոռանա, մուտցա կարելի ա չերիցս վեր ընկնի, ուրիշ մարդ վերցնի, կարդա մեր սրան իմանա, են ժամանակին չցավես, հախի մասին դատաստան կերթաս, են ժամանակ վեքսիլ չունեյի, գիրս ել բիրտի գժվեց, վռոը գեմ ավեց, վոր հախվերմազ մարդի մոտ չեմ գնալ, չեմ գնալ: Ելի ինձ կճգի, դեն կգցի, յես հարկավորությունը չեմ գնալ, չեմ գնալ, յա պատիր ինձ, յա ծոցդ գիր, պահիր. կարելի ե՝ թե բազարովն անց կենալես, չունչդ ըլի գրպան, գիրս վախու ծոցիս թռան: Զարկանաս առածո խաթեք»:

ԱՉԻՒ ԼՈՒՅՍ ՋԱՆ...

Այս բանաստեղծությունն ուղղված է մի մարդու դեմ, վորի գրագմունքը, ինչպես յերևում է, վաճառականությունն է յեղել: Թե ո՞վ է այդ վաճառականը և ինչ գիրքվածով է նա Աբովյանի յերգիծանքի առարկան գարձել, գժվար է ասել: Կարելի յե միայն վորոշ յենթադրություններ անել: Իր աշակերտներին գրած նամակներում Աբովյանը բացահայտ արհամարհանքով է խոսում թիֆլիսաբնակ վաճառականների Մանդինովների, Խերոդինովների, Թայիրովների մասին: Թերևս և սրանցից մեկին ու մեկին է նկատի ունեցել Աբովյանը: Այս յենթադրությունը առավել հավանականություն է ձեռք բերում նրանով, վոր բանաստեղծության մեջ արված է ինչ-վոր Գարրիելի անուն, վորը, սակայն, հետազոտում հեղինակը չկրել և գրել է՝ «աչքի լույս Ջան», հարկավ, հեղնանքով: Թայիրով յեղբայրներից մեկի անունը յեղել է Գարրիել: Հավանաբար Աբովյանի յերգիծանքի հերոսը յեղել է հենց այդ Գարրիել Թայիրովը: Ի միջի այլոց նկատենք, վոր զարմանալի զուգադիպությամբ, Աբովյանի վաղեմի ընկերներից Սա. Նազարյանն ել բարոյական ծանր հարված հասցրեց Ալեքսանդր Թայիրովին, վորը հոդարարձու յեր Ներսիսյան գպրոցում:

Յոթերին անգամ հրատարակվել է 1939–ին «Գրական Թերթ»–ում (№ 5), Ռ. Զարյանի կողմից:

ԱՓԱՌ ԿՐՈՂԻ ԵՇՆ...

Ցերը ե գրել, հայտնի չե: Տպագրվում է առաջին անգամ:

ՍՈՎԱՄԱՏ ՇՈՒՆՆ...

Նույնը:

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մանկավարժությունը Աբովյանի լուսավորական գործունեության մի շատ կարևոր մասն է: Լինելով արևմտյան մանկավարժության առաջավոր սկզբունքների հետևող, նա փորձեց իր մանկավարժական գործունեությամբ բարեշրջել դպրոցական կյանքը, իսկ ճառերում, նամակներում, իր կազմած ձեռնարկների առաջաբաններում և գրվածքներում արծարծել իր մանկավարժական ըմբռնումները:

Նկատենք, վոր Աբովյանը Պարրոտի խորհրդով Դորպատում ընդհանուր գիտելիքներ ձեռք բերեց, այսինքն, այն, ինչ պետք եր մի ժողովրդական ուսուցչի, մի մարդու վորն իրեն նպատակ եր դրել լուսավորել ժողովուրդը: Սկզբում Թիֆլիսում, ապա Ցերևանում նա շուրջ տասներկու տարի մանկավարժական գործունեությամբ է զբաղվել*): Խրիստիան

*) Աբովյանի աբխիվում գանվեց մի վաստաթուղթ, վորը պարզում է Աբովյանի կենսագրության մեջ մինչև վերջին ժամանակները միանգամայն անհայտ տեղեկություն այն մասին, վոր նա մանկավարժական գործով սկսել է զբաղվել ավելի վաղ, նույնիսկ մինչև Ներսիսյան գպրոցում սովորելը, 1824–ին:

Ահա այդ վաստաթուղթը.

Ցրենին գ-ած նամակներից, ինչպես և «վերքի» առաջաբանից յերևում է, թե վորքան սիրելի յե յեղել նրա համար մանուկների աշխարհը:

Ձեվրոպացի ճանապարհորդներից վազները և կոխը հետաքրքիր վկայություններ են թողել Աբովյանի մասին իրեև մանկավարժի: վազները հաղորդում է Աբովյանի դպրոցից ու նրա աշակերտներից ստացած իր հարուստ ապավորությունները, համարելով իր տեսածը մի հանելի անակնկալ յուրաքանչյուր յեվրոպացու համար: Իսկ կոխը Աբովյանը մասին գրում է. «Հետաքրքիր է, վոր այս կամ այն հարցում նա շեղվում է ժողովրդական կրթության բնագավառում պետության նախագծած ուղիից, բայց վոր արտաքին ձևականությունները չեն գոհացնում նրա՝ դեպի վեր սավառնող հոգին. հետաքրքիր է նաև. վոր նա հս գործել է զանազան սայքաֆուններ, բայց անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, վորը նման սիրով և այնպիսի գոհաբերությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես վոր Աբովյանն է... Սակայն, դժբախտաբար, Աբովյանին ցույց չեն տալիս արժանի վերաբերմունք: Զինովնիկների հեղսպտությունը հանախ ու շատ է խանգարում նրան առաջ տանելու իր ազնիվ ու բուռն ձգտումները... Յերբ Աբովյանը վորպես Յերևանի գավառային դպրոցի տեսուչ մնալ կարողանա իր գործունեության ներկա շրջանի մեջ, յերբ նրան գործոն աջակցություն ցույց տան իրեն յենթակա պաշտոնյաները, այլև պահանջված չափով գնահատեն նրան, սպասելի յե, վոր Յերևանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մոռացված, դաբեթով վոստնահարված հայ ժողովրդի համար»:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ

Յերբ և դրել, հայտնի չե: Թվում է թե պետք է գրած լինի Յերևանում, կյանքի վերջին տարիներին: Յենթադրության մեկ հիմքը գրվածքի լեզուն է: Աբովյանի գրվածքների լեզվական համեմատությունը ցույց է տալիս, վոր այս գործը պետք է գրված լինի «Վերքից» հետո, յերե, Լուսակն, հատատա համարվի այն ատենվանական գործությամբ, վոր գավառաբարբառից դեպի գրականը տարել է Աբովյանի լեզուն (տես՝ «Խաչափղինը» կցված առաջաբանը, էջ է—ժա):

Այս գրվածքը մեկն վերջին ժամանակները հայտնի գարձավ: Յերկար տարիներ լույսի մեջ մոռացվելուց հետո միայն 1939-ին (№ 9) և 1940-ին (№ 24) առանձին հատվածներ հրատարակվեցին «Գրական Թերթ»-ում և Լենինականի «Բանվոր»-ում (№ 222): Ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ:

Ինչպես ըմբռնումների, այնպես էլ գրվածքի ձևի վրա նկատելի յե ժան ժակ Ռուսոյի «Եմիլ կամ դաստիարակության» յերկի ազդեցությունը: Ռուսոյի նման, Աբովյանն էլ իր տեսական սկզբունքները արծարծել և գրվածքում, դարս բերելով գործող անձեր և նրանց շուրջը զարգացնելով զանազան դեպքեր և գործողություն: Թե վորքան ուժեղ և յեղել Աբովյանի մեջ հետաքրքրությունը դեպի Ռուսոն, ցույց և տալիս նրա «Նոր Ելիսը» գրվածքի թարգմանության փորձը, մի բան, վոր, ամեն, դժբախտաբար անավարտ և մնացել: Մինչև այժմ հայտնաբերված և հրատարակված գրվածքների մեջ «Նոր Ելիսի»

«Ցորէ յորմէհետէ եմուտ առ մեզ Քաչառուր գպիրն Աստուածատուր ի 1824 ամին և հոգ. ամաոյ առանձն ըսկսաւ, յիրաւի որպէս արժան էր իւր պաշտոնի հոգևորականութեան այնպէս հաւատարմապէս եկաց թէ առ մեզ և թէ առ սուրբ եկեղեցին ոչ կացեալ երբէք հակառակ իւրոյ եկեղեցական պաշտօնակատարութեան և հաւատարմութեան, ուսուցանելով և ըստ կարեաց իւրոց զաստէն եղեալ մանկանցն, որոյ շնորհակալութեան փոխարէն տամք նմա զայս Քարոզ միաժառութեամբ զիմաբարութեամբ և հարազատ հնգագրութեամբ, զի գիտասցէ որ տեսանիցէ թէև ոչ երբէք եղև մեզ անհատատարիմ: Սրբոյ վանացն Սանահնայ Առաջնորդ Առաքել Արքեպիսկոպոս»:

Այս փաստաթուղթը արվել է Աբովյանին 1828-ի ապրիլի 8-ին, Սանահնում:

թարգմանությունը մեկն է, վոր գրված է մաքուր գրական լեզվով և հանդիսանում է, մեր կարծիքով, Աբովյանի գրական լեզվի ստեղծման վերջին և կատարյալ ատաձանը: Այդ առաակից Ռուսոյի վեպի առաջին էջերի թարգմանությունը կրկնակի հետաքրքրություն և արժեք է ստանում, վորը և նկատի ունենալով, բերում ենք այստեղ:

ԺՈՒԼԻ ԿԱՄ ՆՈՐ ԵԼՈՒԶԱ

Ն ա մ ա կ ա ռ ա ջ ի ն

Դե Սանկրեն առ Ժուլի

Գե՛տք է քեզանից հեռանամ, դչխա պատվական, իմ սիրտս լավ զգում է: Պետք է քեզանից կամ միանգամայն հույս կտրեմ կամ ավելի լավ է՝ վոր քեզ յերբեք չտեսնեմ, բայց ի՞նչ անեմ այժմ. ի՞նչպես համբերեմ: Դու ինձ քո բարեկամությունը խոստացել ես. քննիր իմ զառն վիճակը և խորհուրդ տո՛ւր ինձ:

Դու գիտես՝ վոր յես ձեր տունը չե՛մ մտնել, յեթե քո մայրը ինձ շեր հրավիրել: Իմանալով թե յես վորը չնորհք եմ ստացել, նա տչպես եր կարծում, թե իմ շնորհքը անոգուտ չեն մնալու (յեթե) վոր ինձ քեզ վարժապետ չիներ, քեզ վոր յուր աչքի լուսի պես պաշտում է և սիրում: Ցես ել իմ միջոցս ինձ մեծ փառք համարելով՝ վոր քեզ պես աննման անձի վորը ինչ չանք բերեմ, համառամասնեցա հանձն առնելու ես դաժը լուծը առանց մտածելու թե գրանից ինչքան վտանգ կգա կամ գոնե ոչ յերկյուղ քաշելի: Ցես քեզ վոչինչ չեմ ասել, թե յես այժմ սկսել եմ իմ հանդգնության պատուղը քաղել: Ցես հույս ունեմ, թե քեզ մինչև այսօր են չնորհքը, են խրատն եմ ավել՝ վոր քո անմեղ հոգույդ կպատահանները, և վորքան իմ ձեռքից կկաթ, քո ազնիվ բարքը, քո բնավորությունը, և մանավանդ քո ազգի արժանավորությունը և քո անձին պատվականությունը, միշտ պատրաստ եմ պահպանել: Հիրավի յես, յես այժմ տանջվում և մաշվում եմ, բայց գոնե իմ մխիթարությունս այն է, վոր յես միայն եմ տանջվում և յես չեմ ուզում այժմ են բախտը՝ վոր կարող և քոնը վոչնչացնել:

Այնուամենայնիվ քեզ ամեն որ տեսնում եմ, և նկատում եմ, վոր դու ինքդ առանց իմանալու ինձ անմեղությամբ են կսկիծն ես հայտնում, են ցավերն ես իմ սրտումը չարժում՝ վորոնց համար քեզ չե կարելի խորտակել՝ վորովհետև քո հոգին դեռ անմեղ է և արդար: Ճշմարիտ է, իմ սիրտս դրա ճարն ել լավ գտնում է, վոր հույսը պահպանելիս՝ պետք է խոհեմություն գործ դնել, և յես կարող եմ ջանք անել, համբերել, յեթե հնար լինի ինձ հասկան միջոցումը խոհեմությունը յերախտապարտության հետ միավորել: Բայց ինչպես կարեմ հանդիսա հոգով են տանիցը ձեռք վերցնել՝ վորս տանտիկինն ինքն արժան տեսավ ինձ մատնել, ուր նա ինձ այնքան մարդասիրություն ցույց տվեց, ուր ինքն կարծեց՝ թե յես վորը ինչ սլատակար կարեմ լինել են անձին, վորիցն աչխարհի յերեսին ել վոչինչ թանկագին չունի: Եզպես քաղցրասիրտ մայրը յես ինչպես զրկեմ են ուրախությունից, վոր յուր մարդուն ունի՝ վոր մեկ որ հորդ քո առաջադիմությամբը զարմացնի, վոր և ես զրաամվորությամբը մինչև ցայսօր թագցնում է նրանից: Կարելի չե այնքան տմարդի լինել, և նրան վոչինչ չասել: Արժան և նորան իմ հեռանալու պատճառը հայտնել: Ցեվ յեթե իմ սրտի խորհուրդը նորան հայտնեմ, նա չի՛ վիրավորվիլ՝ վոր ինձ պես մարդը, վոր վո՛չ յերեևելի ազգից եմ, վոչ բախտավոր, ցանկանում է՝ վոր յուր հոգին քո հոգույդ հետ միավորվի):

---

*) «Նոր Ելսիզի» թարգմանությունը հրատարակվել է «Խորհրդ. գրականություն» հանդեսում (1939, № 7, էջ 83—4), Հ. Մուրադյանի կողմից:

ԱՄԵՐԻԿՈՒ ԼԻՑ ՓՅԻԼԸ

Գրութեան թիվը հայտնի չէ: Գրված է, ինչպես կրնամ է, իրրև ձեռնարկ իր աշակերտներուն համար, յիշեխանեներին աշխարհագրութեան սովրեցնելու նպատակով: 1935–ին մի հատված տպագրվել է «Գրական թերթ»–ում (1935, 30 X): Ամբողջութեամբ հրատարակվում է առաջին անգամ:

ԵՋԵՐ «ՆԱԽԱՇԱՎՂԻՑ»

«Նախաշավիղը» մշակելիս նոր հրատարակութեան համար Աբովեանը գրել է մի շարք մանկական վտանավորներ և առակներ: Առակներից մի յերկուսը համընկնում են «Գարնան վարսի խազալիքի» մեջ մտած առակների հետ («Զարմանալի մարդիկը», «Մուկը մասրապղնի պղինձը»):

«Նախաշավիղի» մասին տես «Դիտողութիւնների» հատորը գրված ծանոթութիւնը:

ԱՅԼ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԹՂԹԵՐ

Այս քնդհանուր խորագրի տակ հավաքված են այն նառերը, նամակներն ու առաջադրանքները, որոնցից լույս են սփռում Աբովեանի մանկավարժական գործունեության այս կամ այն կողմի վրա:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հայտնի է, 1837–ից Աբովեանը հատատված է Թիֆլիսի պատանական ուսումնարանի տեսչի պաշտոնակատար: Մի առ ժամանակից, չհանելով իր պաշտոնակիցների հետ ամուսնութիւնը, բարեընկերներն ու հալածանքը, վարժվում և տեղափոխվել մի ուրիշ տեղ: Աբովեանը տկարամիտ Արիանոս Ֆրենին մի նամակով խնդրում է իր համար հարմար պաշտոն գտնել Պետերբուրգում: Ֆրենը Աբովեանին ոգնելու նպատակով հարց է հարուցում ժողովրդական լուսավորութեան մինիստերութեան առաջ՝ Ղազանի համալսարանում հայոց լեզվի և գրականութեան ամբիոն բանալ և Աբովեանին էլ հրավիրել պրոֆեսորի պաշտոնով ամբիոնը վարելու համար: Ֆրենի առաջարկն ընդունվում է: Աբովեանը բավական մեծ ուշացումով իմանում է, որ պետք է դիտական չարագրանք, այսինքն՝ դիսերտացիա ներկայացնել այդ ամբիոնի պրոֆեսորութեանը ձեռք բերելու համար: Անհույս լինելով, որ սահմանված ժամկետին կարող է վրան նոր աշխատութիւն հասցնել, Աբովեանը 1839–ի հոկտեմբեր ամսին ուղարկում է յերկու զրծնական ձեռնարկ, որ նա կազմել էր ուսումնական նպատակներով: Մեկը՝ «Տարեբեր արդի հայերենի», մյուսը՝ «Հնուս տեսական և գործնական քերականութեան հայերեն լեզվով ըստ Տապղի»: Աբովեանի ուղարկած աշխատութիւնների գրախոս է նշանակվում ակադեմիկ Մարիյ Բրոսեն): Աբովեանի յերկերը հավանութիւն չեն տանում և Ղազանի համալսարանի հայոց լեզվի և գրականութեան ամբիոնի պրոֆեսորութեան նոր թեկնածուներ են առաջադրվում, սակրում՝ Աբովեանի ծանոթներից մեկը, դերմանացի հայկարան Պետերմանը, վորը, ասկայն, պաշտոնին չհանցած հրաժարվում է, հետապայում Աբովեանի գործակիցն ու մոտ ընկերը՝ Սո. Նազարյանը:*

Ֆրենին գրած 1839–ի հոկտեմբերի 9–ի նամակից յերևում է, որ Աբովեանը մտադրութիւն է ունեցել Գիտութիւնների Ակադեմիային ուղարկած «Նախաշավղին» մի բացատրական կցել դերմաներեն լեզվով: Մինչև վերջին ժամանակները այդ բացատրականը անհայտ էր: Միակ ապրյուրը, վորից դազափար կարելի յեր կազմել գերմանագիրը բացատրական բովանդակութեան և նրանում արտահայտված հարցերի մասին, Բրոսեյի գրախոսութիւնն էր:

Այդ կարևոր փաստաթուղթը Արովեանի արխիվից հայտնաբերվեց և առաջին անգամ հրատարակվեց «Նախաշավղի» լուսատիպ նմանահանութեանը կցված «Նյութեր «Նախաշավղի» պատմութեան համար» հետազոտութեան մեջ, Ռ. Զաբյանի կողմից:

Գերմաներեն բնագիրը պահվում է ձեռագրերում: Գերմաներենից հայերենի թարգմանել և Հակոբ Հարությունյանը:

ՆԱԽԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ

Աբովեանը ժամանդության և թողել յերկու «Նախաշավիղ»· մեկը լույս է տեսել Աբովեանի կենդանության որով և արգելվել, մյուսը՝ 1862–ին, Ենֆիաճյանի կողմից: Առաջինից ձեռագիր չի մնացել, պահպանվել է միայն մի սրինակ լույս տեսած գրքից, այն էլ թե՛ սկզրից, թե՛ վերջից պատռ վիճակում: Իսկ յերկրորդ «Նախաշավղի» ձեռագիրը պահպանվել է: Պահպանված ձեռագրի մեջ է այս «Նախազգեցութիւնը», վոր Ենֆիաճյանը «Նախաշավիղը» հրատարակելիս գործ է թողել: Մեր յենթադրութեամբ «Նախազգեցութիւնը» յեղել է Աբովեանի կենդանության որով լույս տեսած «Նախաշավղի» ընթերցողներին ուղղված առաջաբանը, վորը, ինչպես յերևում է, կորավել է լույս տեսած «Նախաշավղի» պոկված էջերի հետ:

«Նախազգեցութիւնը» առաջին անգամ հրատարակվել է 1940–ին, «Նախաշավղի» խորհրդային հրատարակութեան մեջ:

Պահպանվել է յերկու ընդնագիր:

ՀԱՄԱՌՈՏ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս հաշվետու զեկուցումը հետաքրքրական է մի քանի տեսակետից: Բացի այն տեղեկութիւններից, վոր հետաքրքիր կարող են լինել Աբովեանի կենսագիրների համար Յելիզավանի գավառական ուսումնարանում նրա անցկացրած տարիների ուսումնասիրելու տեսակետից, զեկուցումը գաղափար է տալիս այն հայացքի մասին, վոր ունեցել է Աբովեանը հայ իրականութեան մասվոր և բարոյական վիճակի վրա: Յեվ, վերջապես, այս փաստաթուղթը ցույց է տալիս Աբովեանի վերաբերմունքը դեպի ռուս ժողովուրդն ու նրա կուլտուրան:

Այս հաշվետու զեկուցումը կարդացվել է 1845/46 ուսումնական տարվա սկզրին, հոկտեմբերի 24–ին: Այս ձեով, ինչպես վոր փաստաթուղթը բերված է, Աբովեանը իր հաշվետու զեկուցումը ներկայացրել է դպրոցի դիրեկտոր Ի. Կուլժինսկուն, նրա համաձայնությունը ստանալու համար: Կուլժինսկին տվել է իր համաձայնությունը, Աբովեանի ձեռագրի վրա մակագրելով հետևյալը· «Можно читать, сообразно сделанным поправкам и замечаниям моим. Директор И. Кулжинский. 24 окт. 1845 г.»: Բացի այդ, արխիվային ձեռագիր սրինակի վրա, 11 էջից «Спрашивается, однакож» բառերից (վերջին վեց տող) և 14 էջից (էջի առաջին մասը), վերջացրած հետևյալ բառերով՝ «К сожалению по сию пору никто еще не удостоивал должного внимания» կա ընդամ, արված, ինչպես յերևում է, նույն Կուլժինսկու կողմից, վորը լուսանցքում մակագրել է հետևյալը· «Ric— это прекрасно написано и справедливо, но некоторые этого не поймут, а те, которые поймут, могут оскорбиться, а потому прошу все выпустить».

Ձեռագիրը պահվում է ՀՄԱՀ Պետական կենտրոնական արխիվում: Տպագրվում է վորոշ կրճատումներով: Փաստաթուղթը թարգմանել է ռուսերենից հայերենի Ցե. Շահազիզը, վորը «Դիվան Խաչատուր Աբովյանի» ժողովածուի համար պատրաստել և հրատա-

---

*) *Բրոսեյի գրախոսութիւնը Աբովեանի աշխատութիւնների մասին և ընդհանրապես այդ գործի մանրամասները տես «Նախաշավղի» մեր հրատարակութեան ծանոթութիւններում:*

բախտի Յերևանի գավառական ուսումնարանի բոլոր այն թղթերը, որոնք գրվել են Աբովյանի կողմից: Յե. Շահազիզի թարգմանությունները առանձին մատյանով պահվում են Գրական թանգարանում:

К. И. ОРЛОВСКИЙ

1846-ի դեկտեմբերի 23-ին Յերևանի գաստավոր Կ. Ի. Որլովսկին Աբովյանին ուղարկեց հետևյալ նամակը.

«23 декабря 1846 г.

Милостивый Государь
Христофор Артемьевич,

При поверке и дополнении статистических сведений Эриванского уезда мне необходимо знать: с которого времени открыто в Эривани училище, сколько с этого времени было в нем учеников, сколько таковых окончило положенный курс наук, как велико в настоящее время число учеников и сколько при училище преподавателей?

Сверх того необходимы сведения и о том, имеет ли училище какие либо учебные пособия, собранные в особых при оном кабинетах и нет-ли библиотеки, об'яснив, что кабинеты в себе заключают и из каких книг библиотека составлена?

Обо всем этом, согласно распоряжения Г. Наместника Кавказского, честь имею покорнейше просить Ваше Высокоблагородие почтить меня уведомлением в возможной подробности.

Примите уверение в совершенном моем.

К. И. ОРЛОВСКИЙ

Որլովսկու նամակին Աբովյանը պատասխանեց բավական ուշ, 1847-ի ապրիլի 25-ին: Աբովյանի այս նամակը նշանակալից է առանձնապես այն առաջարկներով, որոնցով նա կամենում էր բարեշրջել կրթական գործը Հայաստանում:

Ինչպես Ա.—Դոյլ («Նոր հոսանք», 1914, № 5, էջ 764—768), այնպես էլ Յե. Շահազիզի («Տեղեկագիր գիտության և արվեստի ընտանեաց», 1928, № 3, էջ 131—2*) կողմից թարգմանաբար հրապարակվել է և ոչտպագրվել Աբովյանի կենսագիրների կողմից:*

Ինչպես նախորդ փաստաթղթի, այնպես էլ սրա ձեռագիրը պահվում է ՀՍՍՀ Գիտական կենտրոնական արխիվում: Տպագրվում է Յե. Շահազիզի թարգմանությամբ:

ՀՍՍՀ-ՍՕՊ

Ց Ա Ն Կ

ՆԱԽԱԲԱՆԻ ՆՈՎՄԲԵՐԻՆ 9

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ . . . . . 11—72

ա) Տարիր . . . . . 13—42
բ) Պայքարներ . . . . . 43—56
գ) Թարգմանություններ . . . . . 57—72

ԵՐԳԵՐԾԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . . 73—172

ա) Պարապ վախտի խաղալիք . . . . . 75—150
բ) Հազարիեսեն . . . . . 151—172

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ . . . . . 173—372

ա) Պատմություն Տիգրանի . . . . . 175—295
բ) Ամերիկու ին էգիը . . . . . 297—338
գ) Օրեր «նախաշավղից» . . . . . 339—354
դ) Զանազան գրություններ յեվ թղթեր . . . 355—372

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ 373- 398

ա) Բանասիրություն . . . . . 375—389
բ) Երգիծաբանություն . . . . . 389—393
գ) Մանկավարժություն . . . . . 393—398

Կազմը, ֆորզացը, անվանաթիերինը, շմուց-տիտուլները, գլխազարդերը
Ցկ. Կ. Տիրատուրյանի

Տեխ.-խմբագիր՝
Ստ. Ալթունյան
սրբագրիչներ՝
Վ. Ավագյան, Հ. Մանուկյան
կոնտրոլ սրբագրիչ՝
Լ. Աբովյան

Վ/Ֆ 2679, հրատ. 5095, պատվեր 887, տիրաժ 4,000.
Թուղթ 72×110, տպագրական 25 մամ.
Հանձնված է արտադրության 11 դեկտ. 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 23 սեպտ. 1940 թ.

Պետհրատի տպարան, Երևան, Լենինի 65.

ՀՀ Ազգային գրադարան
NL0321231